




839

U III-5







Մ Ո Ւ Ր Ք

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, յԵԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 1 1895

Յ Ո Ւ Ն Ի Ա Ր

1895 № 1

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

	երես
1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, ԱԻՆՏԻՔ. . .	1 Ուղիղ ճանապարհ:
2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . .	9 Հիասթափութեան էլեգիա (բան.).
3 ԳԵՕՔԷ՛ՆՑ ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ.	10 Հերման և Կորոթէա (վէպ):
4 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԷՔՍԱՆԴՐ . . .	36 Իմ օրագրից (Բանաստ.).
5 ՇԱՆԹ	38 Նրազ օրեր (վիշառակարանից):
6 ԱԳԱՄԵԱՆ Պ. Հ.	66 Բարեաւ մնաք իմ ցնորքներ:
7 ԱՐԾՐՈՒՆԻ ԲԺՇԿ. Վ.	71 Բնական հիպնոտիամ:
8 ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ	80 Քուրդի զուլին (բանաստ.).
9 ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, ՅՈՎՀԱՆՆԷՍ	83 Քաղաքակրթութեան պատմութիւնը ուսուցման մէջ:
10 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . .	92 Դպրոցական նամակներ VII:
11 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՐԱՅԷԼ . .	97 Խոշոր ինդիստրիալի զարգացումը:
12 ԱՐՍԷՆ, Խ.	111 Վերջին խօսք (բանաստ.):
13 ՍԷՅԼԱՆ	112 Սասուն (պատմական ճիւղեր):
14 Յ. Տ.-ՄԻՐԱՔ.	122 «Ներս. զպր. սաների ճանապարհ.»
15 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, ԱԻՆՏԻՔ . . .	125 Ժամանակակից Տեսութիւն—Հայկա- կան խնդրի նորագոյն զարգացումը (Իրերի դրութիւնը. Տաճիկ կառա- վարութեան գործողութիւնները. Քն- նիչ լանճնաժողով. Գլադստոնի մի- ջամտութիւնը. Հայկական խնդիրը ներկայումս):
16 ԽՄԲ.	175 Չանաղան լուրեր:


ՏԵՂԵԿԱՏՈՒ և ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типография М. Д. Ротиняна, Гол. пр., д. № 41.

1895



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 1 1895

Յ Ո Ւ Ն Ի Ա Ր

1895 № 1

ԿՕՐԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр. д. № 41.

1895

Дозволено цензурою. Тифлисъ, 21 Января, 1895 г.

VII SURԻ „ՄՈՒՐՃ“ SURԻ VII

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1895 ԹԻԱԿ. ՀԱՄԱՐ ԲԱՅԻԱՄ Է

«ՄՈՒՐՃ» ամսագիրը 1895 թվականին կը հրատարակի նոյն ծրագրով և նոյն գիրքով, որպէս և նախկին վեց տարիներում:

«ՄՈՒՐՃ»-ը, որպէս անցեալում, նոյնպէս և ապագայում կը բովանդակի՝

- I. Յօդաւածներ մեր կեանքի հիմնական պայմանների մասին:
- II. Վէպեր և պատմաւածքներ:
- III. Ոտանաւոր-բանաստեղծութիւններ:
- IV. Նկարագրական-ճամբորդական:
- V. Գիտական հանրամատչելի յօդաւածներ:
- VI. Հետազօտութիւններ տնտեսական, սոցիալական, պատմական:
- VII. Գրական քննադատութիւն:
- VIII. Գրախօսութիւն նոր լոյս տեսած գրքերի:
- IX. Ժամանակակից Տեսութիւն մեր կեանքի ընթացիկ խնդիրների և այլ յօդաւածներ մեր ժամանակակից ներքին կեանքից:
- X. Գաւառական նամակներ:
- XI. Թղթակցութիւններ Ռուսաստանից և Արտասահմանից:
- XII. Քաղաքական տեսութիւն:
- XIII. Զանազան լուրեր:
- XIV. Յայտարարութիւններ և տեղեկատուներ:

«ՄՈՒՐՃ»-Ի ԳՐԱԿԱՆ ՄԱՍԸ ապահոված է բազմաթիւ աշխատակից-ներով, որոնց կազմը ուժեղանում է նորերի նպաստներով:

Անցեալ 1894 թւականին աշխատակ-ցել են «Մուրճ»-ին հետեւեալ անձերը՝ որոնց անունները զասաւորում ենք ըստ աշխատակցութեան հնութեան.

- | | |
|--|--------------------------|
| 1 Արախանեանց, Ա. | 21 Վաղբաշեան, Յար. |
| 2 Մանուէլեանց, Լեոն | 22 Յակոբեան, Յակոբ |
| 3 Վարդանեանց, Գր. | 23 Խանդաղեան, Խորէն քահ. |
| 4 Ծատուրեան, Ալ. | 24 Աստածատրեանց, Դէորդ |
| 5 Մխիթարեան, Արշալոյս
(նույնը և Արգահատեան) | 25 Ազէլեան, Ա. |
| 6 Ղազարեան, Նրւանդ | 26 Բահաթրեան, Սարգիս |
| 7 Արծրունի, բժ. Վահան
(նույնը և Ֆելիքս) | 27 Ղլտճեան, Արսէն վարդ. |
| 8 Խաժակեան, Գ. | 28 Մարդանեան, Ֆրիդոն |
| 9 Նաւասարդեան, Մկրտ. | 29 Տէր-Մարտիրոսեան, Միք. |
| 10 Փափաղեան, Վ. | 30 Յովհաննիսեան, Միք. |
| 11 Վանցեան, Գր. | 31 Միրիմանեան, Յար. |
| 12 Մնացականեան, Գաբր. | 32 Մեղքումեան, Մ. |
| 13 Բաշինջաղեան, Դէորդ | 33 Դուրբախեան, Յովհ. |
| 14 Մուրադեան, Յակոբ | 34 Տէրեան, Ստ. |
| 15 Ղարաջեան, Դէորդ | 35 Սողոմոնեան, Բ. |
| 16 Աթանասեան, Աշոտ | 36 Մէդնիկեան, Յովհ. |
| 17 Բալաղեան, Սամուէլ | 37 Գնունի, Յովհ. |
| 18 Զաքարեան, բժ. Թադէոս | 38 Տէր Մկրտչեան, Մ. |
| 19 Աղալեան, Ղազարոս | 39 Մինասեան, Նրւ. |
| 20 Վրոյր | 40 Դեմիրճեան, Դերենիկ |
| | 41 Բահաթրեան, Լեոն |
| | 42 Սէլւան |

Բաժանորդ գրեւելու համար պէտք է գիմել՝

Խմբագրատունը—Тифлисъ, въ редакцію „МУРЧЪ“

Արտասահմանից—Tiflis, Rédaction „MOURTCH“:

Կամ մեր գործակալութիւններին (տես կազմի վերջին երեսը):

ՔԱՍԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 10 ռուբլի տարեկան:

Ուսուցիչները և ուսանողները վճարում են 8 ռուբլի:

ՎՃԱՐԸ կարելի է հատուցանել նաև մաս-մաս՝ 5 ռ. (կամ 4 ռ.) սկզբում, մնացածը մինչ առաջին կիսամեակի լրանալը:

ՈՒՂԻՂ ՔԱՆԱՊԱՐԶ

«Մուրճ»-ը այս համարով ոտք է կոխում իւր եօթներորդ տարեշրջանը: Անցեալ տարի նոյն այս ժամանակ մենք յիշեցնում էինք հայ ընթերցող հասարակութեանը, որ ռուսահայերիս մէջ դեռ. ևս ոչ մի ամսագիր չի հրատարակել անընդհատ կերպով հինգ տարւանից աւելի և որ անցեալում եղածներից միայն մէկը կարողացաւ վեց տարի գոյութիւն ունենալ, բայց մի տարւայ ընդմիջումով: Այժմ, երբ «Մուրճ»-ը մտնում է իւր եօթներորդ տարին, մենք կարող ենք ասել որ այդ՝ իւր նմանը չունեցող երևոյթ է ռուսահայոց ամսագրութեան պատմութեան մէջ:

«Մուրճ»-ը անցել է վեց ծանր տարիներ և, սակայն, նա ունի դեռ ևս ծանր տարիներ անցնելու, բայց գնալով՝ այդ աշխատանքը թեթեւանում է այն գիտակցութեան պատճառով թէ «Մուրճ»-ի ապագայի համար հետաքրքրողների թիւը տարեցտարի բազմանում է և որ այժմ զոքա աւելի որոշ գոյն են ստացել և, իբր շրջաններ, մի որոշ հասարակական ոյժ են ներկայացնում: Այդ անհատները և շրջանները ներկայացնում են մեր ընթերցող հասարակութեան այն մասը, որի մէջ ամենից շատ շեշտւած է գրականական յառաջադիմութեան ձգտումը կից հասարակական լաւագոյն իդէալների պահանջի հետ: Այդ ձգտումներին և պահանջներին «Մուրճ»-ը կոչւած է բաւարարութիւն տալու, և քանի դրնում՝ այնքան աւելի որոշուած է որ մեր հասարակութեան այդ մասի ձգտումներին և պահանջներին «Մուրճ»-ը գէթ այնքանով է բաւարարութիւն տալիս, որ նորա բարեկամների թիւը աստիճա-

նաբար սուարանում է և նորա կանոնաւոր ընթերցումը աւելի ևս պաշտօնում մի անհրաժեշտ կարիք հասարակական լայն խաւերի մէջ: Այդ նրանից է որ հասարակութիւնը աւելի ու աւելի համոզուում է որ «Մուրճ»-ը ղեկավարւում է մաքուր հասարակական զգացումներով, նա համոզուում է որ այդ զգացումների հետ միասին «Մուրճ»-ին գործակից է ժողովուրդը լուսաւորելու գործը յաջողցնելու համար անհրաժեշտ ջանքը՝ կանգնած լինել ժամանակի բարձրութեան վրայ, և նա համոզուում է, վերջապէս, որ «Մուրճ»-ը մեր յառաջդիմութեան համար մի անհրաժեշտ գործիք է:

Մենք մեր կողմից կարող ենք ասել որ «Մուրճ»-ը անսպաշար առաջ կը տանել աշն ու զղութեամբ, ինչպէս այդ ճանաչում են «Մուրճ»-ի մշտական ընթերցողները. կէտ նպատակի ունենալով ազգային յառաջդիմութիւնը՝ մենք ոչ միայն մեր ոյժերը կը ծառայեցնենք այդ նպատակին, այլ և կ'աշխատենք, որքան այդ միայն մեզնից կարող է կախւած լինել, զարթնեցնել և ոյժեղացնել եղած զրական ոյժերի մէջ եռանդ և զգացմունք դեպի շիտակ ծառայութիւնը ազգային պէտքերին, հրահանգելով այն ամենով, ինչ լաւագոյնն է մեր ժամանակակից մարդկութեան մէջ:

Իսկ այդ լաւագոյնը ժամանակակից մարդկութեան նորա ջանքերն են՝ ազատ կացուցանելով խաւարիկ աշկանդումներին՝ կապել մարդկային միտքը այն դրական հետեանքների հետ, որ տւել են ազատ հետազոտութիւնները գիտութեան զանազան ճիւղերում, և այդպիսով մեր հայեացքները անհատի, հասարակութիւնների և ազգերի ընտանեկան, սոցիալական և քաղաքական կեանքի մասին բարեփոխել այնպէս, որ իրական կեանքի և իդէալի մէջ տարբերութիւնը քանի զնայ՝ այնքան աւելի նւազի, միշտ աշխատելով ստկայն այդ իդէալի բովանդակութիւնը հարստացնել:

Իրական կեանքը անշուշտ մասն ունի իդէալի մէջ: Այն ինչ իդէալ է մի ժամանակի համար, ամբողջապէս նոր չէ, այլ նոր է իւր որ և է մասով, և նոր է նոյն այդ ժամանակի և նոյն այդ սերունդի համար: Եւ հէնց այդ պատճառով էլ իրականանալու հնարաւորութիւն ունեն միայն այն իդէալները, որոնք իրանց այս ու այն կողմով, այս ու այն մասներով գէթ մասամբ զոյգութիւն ունեն իրական կեանքի մէջ: Ահա թէ ինչու իդէալի ձգտողները շատ

յաճախ մեծ ճանաչողներ են իրական կեանքի, թէ անցեալի և թէ ներկայի, և ահա ինչու անաջող իդէալիստներ են նորա, որոնք իրանց մոքում ներկայացրած պատկերից զուրս են մղում ամեն ինչ, որ իրական կեանքն է յիշեցնում: Ահա թէ ինչու միևնոյն ժամանակ շատ իդէալիստներ նաև լաւագոյն գործողներ են հանդիսանում իրական կեանքում, և, փոխադարձապէս, ահա թէ ինչու լաւ գործելու մի անհրաժեշտ պայմանը՝ իդէալականութիւնն է:

Այս խորհրդածութիւնը մեզ համար մի ղեկավարող հրահանգ է եղած: Ուրիշների վկայելու գործն է ասել թէ որքան նա կարողացել է արտայայտել «Մուրճ»-ի մէջ իւր վեցամեայ գոյութեան ընթացքում: Մենք աշխատել ենք «Մուրճ»-ի մէջ արտացոլացնել իրական կեանքը, առանց նորա գերին լինելու. մենք աշխատել ենք իդէալը ըմբռնել, բայց միայն այն մօտաւոր իդէալը, որը պէտքէ զարգանայ ներկայիս կեանքից: Կրիտիկան անհրաժեշտ է թէ կեանքը ուսումնասիրելու և թէ իդէալ ստեղծելու և ձևակերպելու համար, և մենք կարծում ենք թէ քննադատական ոգին «Մուրճ»-ի մէջ զգալի չափով շեշտւած է:

Ունենալով մի սերունդ՝ քաջ տեղեակ կեանքի իրականութեան, գիտութեան ճրագը ձեռին և ձգտող դէպի իդէալականը,—ահա թէ ինչը կարող է լինել ազգի յառաջագիմութիւնն երաշխաւորողը: «Մուրճ»-ը ծառայ է այդ գաղափարին, և այն ի ութիւնը, որ «Մուրճ»-ը գնալով աւելի ու աւելի համակրող շրջ ններ է ստեղծում, այդ մի կողմից ցոյց է տալիս թէ «Մուրճ» ը աւելի ու աւելի է հասկացւում ներկայիս հասարակութիւնից, իսկ միւս կողմից դա այն միտքարական վկայութիւնն է տալիս, որ մեր հասարակութեան մէջ կան սողմեր ապագայ յառաջագիմութեան:

Մամուլը ընդհանրապէս ունի պարտականութիւններ, իսկ ամսագիրը, և այն մեր մէջ, հայերիս մէջ, մանաւանդ երբ նա միակն է իւր տեսալուծ, մի առանձին դեր է կատարում, և հասարակութիւնը ինքը այդպէս է նայում և առանձին պահանջներ է դնում նորան:

Զօրեղ այդ գիտակցութիւնով, մենք առաջ կը տանենք սկսած գործը, յուսալով որ ամսագրի բարոյական արժանաւորութիւնները

կը յաղթեն նիւթական անապահովութեան դժւարութիւններին, և որ «Մուրճ»-ը, օգնութեամբ իւր համակրողներին, այդ դժւարութիւններին միջից անվտանգ դուրս կը լողայ:

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ:

ՀԻԱՍԹԱՓՈՒԹԵԱՆ ԷԼԵԳԻԱ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Ե՛տ տուր, ետ տուր ինձ իմ այն փայլուն յոյսերը,
Որ տըգէտի ծաղրով դու ջարդ ու փշուր արիր!
Ետ տուր իմ յոյսերը, ետ տուր ինձ իմ սէրը,
Որ դու վայրենաբար քո ոտի տակ տըւիր!

Օ՛, եթէ միայն կայ կեանք և յետ մահւան,
Երբ մարդ պիտի յիշէ աշխարհային գործերը,
Գիտցիր, քո դէմ կանգնած դարձեալ պիտի գոռամ՝
Ե՛տ տուր ինձ իմ սէրը, ետ տուր իմ յոյսերը!

1894 թ. Վաղարշապատ:

ՀԵՐՄԱՆ ԵՒ ԴՈՐՈԹԷԱ

ԻՈՂԱՆ ՎՈՒՅԳԱՆԳ ՖՈՆ ԳԵՐԹԷ՛Ի

Թարգմանութիւն Բժ. Լևոն Տիգրանեանցի

Կ Ա Լ Լ Ի Ո Պ Է 1)

ՎԻՃԱԿ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Երբէք չեմ տեսել, որ հրապարակը և փողոցներն այսպէս դատարկ լինէին: Կարծես թէ քաղաքը փոխուել է, մարդիկ մեռել են և մեր քաղաքի բնակիչներից յիսունն էլ չեն մնացել: Ի՛նչ չի անում հետաքրքրութիւնը, ամեն ոք վազում է նայելու խեղճ աքաորւածների տխուր չւին. մինչև արքայազնները կը հասնեն թմբած ճանապարհին՝ առ նւազն կը տուի մէկ ժամ: Մերոնք բոլորն էլ վազում են դէպի այդ ճանապարհը կէս օրւան տաքութեան և փոշու միջով:

Նստեղիցս էլ չէի շարժուել տեսնելու այդ հալածւած բարի մարդկանց թշուառութիւնը, որոնք թողնելով Հռենոսի գեղեցիկ յայնկոյսներն, իրենց փրկած կաշքը վերցրած գալիս են մեր կող-

1) Այս վէպի ինքը գլուխները Կեօթէն անւանում է ինքը մուսաների անուանւում:

Կալիփոպէն գեղեցկաձալն մուսան է: Մուսաների մէջ զիւցաղնական բանաստեղծութեան ներկայացուցիչն է: Որիէոսի, Լինուսի, Ֆէզոսի և Հիմէնէուսի, սիրէնների մայրն է: Սովորաբար սրան նկարում են մեղրախորիւսը և քարեգրիչը ձեռքին:

մերը և անցնում են մեր պաղաքեր ձորի ամենագեղեցիկ անկիւնով և թափառում են ոլոր-մոլոր ճանապարհներով:

Շատ լաւ արեցիր, սիրելի կին, որ, ողորմելով թշւառ գաղթականներին, մեր որդուն ուղարկեցիր մատակարարելու նրանց կտակեղէն, ուտելիք և ըմպելիք, որովհետեւ հարուստը պէտք է տալ աղքատին:

Բայց ինչպէս մեր աղան լաւ կառավարում է և ինչպէս զըստում է յովառակներին: Մեր նոր կառքը շատ գեղեցիկ է երևում: Չորս մարդ ազատ կը նստեն մէջը և հինգերորդը կառապանի տեղում: Այս անգամ նա միայնակ գնաց: Ինչպէս կառքը հեշտութեամբ շրջում է անկիւնը: Հաճոյքով այսպէս էր խօսում իր կնոջ հետ «Ոսկէ տուրի» պանդոկատում, նստած իրենց տան դրան տաւջ, որ բացում էր դէպի հրապարակը:

Մոռահնա, պատասխանեց խելօք ու հասկացող տանտիկինը, ես հեշտութեամբ չեմ նւիրում ուրիշներին մեր մաշած կտակեղէնը, որ անակնկալ գործածութեան համար երբեմն փողով էլ դժւար է լինում գնել: Բայց այսօր ուրախութեամբ տեցի մի քանի լաւ վերմակներ և շապիկներ, որովհետեւ բոլորից էլ լսում էի, որ գաղթող երեխաները և ծերունիները մերկ են: Արներես ինձ արդեօք, որ ես քո դարանն էլ կողոպտեցի, մանաւանդ որ տեցի հնդկական ծաղիկաջ քնազգեստդ, որ թէև լաւ բամբակից է ու նուրբ աստառ ունի, բայց բարակ ու հին է և նորաձեւ էլ չէ:

Պատուական տանտէրը ժպտալով պատասխանեց.— Թէպէտ այլ ևս չէի հազնում, այնուամենայնիւ ափսոսում եմ բամբակէ հին քնազգեստիս, որ բուն հնդկական կերպասից էր. դրանից այլ ևս չի կարելի գտնել: Հիմա՞ պահանջում են, որ աղամարդը հազնի թիկնոց ու կօշիկներ, այժմ ո՛չ հողաթափ են գործածում և ո՛չ էլ գիշերւան գտակ:

Տես, ասաց կինը, զաղթականների չին նայելու գնացողները ահա վերադառնում են, չուն անցած պիտի լինի արդէն: Տես, ինչպէս նրանց կօշիկները փոշոտել են, ինչպէս երեսները կարմրել են և ամեն մէկը թաշկինակով սրբում է իր ճակատի քրտինքը: Այդ շողին ես երբէք այդքան տեղ չէի գնալ և տանջւիլ միայն նրա համար, որ այդ բանը տեսնէի: Յիրաւի, բաւական է՝ ինչ որ լսել եմք:

Բարի տանտէրը շեշտելով վրայ բերեց, առատութեան ժամանակ այսպիսի եղանակ շատ սակաւ է պատահել: Մենք տուն կը կրենք պտուղները՝ ինչպէս խոտն ենք կրել: Երկինքը պարզ է, մի ամպ էլ չի երևում և վաղանից կը փչի զուրեկան հովը: Ահա այս է աւական եղանակը, ցորենն էլ արդէն հասել է, էգուցւանից կը սկսենք հնձել այդ առատ բերքը:

Երբ տանտէրը այսպէս խօսում էր, հետզհետէ աւելանում էին կանանց և տղամարդկանց խմբերը, որոնք հրապարակով տուն էին վերադառնում:

Այդ միջոցին հրապարակի միւս կողմով, բաց կառքում նստած, արագութեամբ իր նորոգած տունն էր վերադառնում պանդոկապետի հարուստ դրացին, տեղական հարուստ վաճառականը՝ իր դուստրների հետ: Փողոցներն սկսեցին կենդանանալ, որովհետեւ քաղաքը բազմամարդ էր, ուր ծաղկում էին զանազան գործարաններ և արւեստներ:

Ամուսինները դրան առջև նստած զւարճանում էին անցնողների վրայ նկատողութիւններ անելով:

Վերջապէս պատուարժան տանտիկինն ասեց, նայիր, ահա գալիս է քահանան և նրա հետ մեր դրացի զեղազործը: Նրանք մեզ ամեն բան կը պատմեն, ինչ որ տեսել են, բայց նրանց տեսածը չի կարող ուրախութիւն պատճառել:

Քահանան և զեղազործը բարեկամաբար մօտենալով բարենցին այր և կնոջ և թափաւրով ոտների փոշին՝ նստեցին դրան մօտ, փայտի աթուռների վրայ ու սկսեցին թաշկինակով հովհաբել իրենց:

Միմեանց բարեկեց յետոյ, զեղազործը զժգոհութեամբ ասեց, ահա, այդպէս են մարդիկ, մէկը միւսին է նման, ամենքն էլ բերանը բաց ուրախութեամբ նայում են, երբ մօտիկ մարդկանց մի անբաղդութիւն է հանդիպում: Ամենքն էլ վաղում են այն բոցը տեսնելու, որ ամեն բան ոչնչացնելով բարձրանում է: Ամենքն էլ շատպուժ են տեսնել խեղճ շարագործին, որ մահւան է դատապարտւած: Քաղաքից բոլորն էլ գնացել են նայելու խեղճ աքսորւածների թշուառութեանը և ոչոք չի մտածում, որ ինքն էլ վաղ թէ ուշ կարող է նոյնանման ճակատագրի հանդիպել: Իմ կարծի-

քով ալդ թեթևամտութիւնն աններելի է, սակայն մարդուն յատուկ է:

Քաղաքի զարդ, երիտասարդ, խոհական քահանան, որ մօտենում էր աշրական հասակին, ճանաչում էր կեանքը և իր ունկընդիրների պիտոյքը. նա հասկացել էր սուրբ գրքի բարձր արժէքը, որ պարզում է մարդկութեան ճակատագիրը և խորհուրդը: Նրան նոյն չափով ծանօթ էին ևս աշխարհական ամենալաւ գրեալները. նա այսպէս խօսեց. ես շատ էլ չեմ պարսաւում, որ մայր բնութիւնը մարդուն տւել է անմեղ ձգտումներ. ինչ որ չեն կարող անել խելքը և կորովամտութիւնը՝ կարող է կատարել մի յաջող հակումն, որ անդիմադրելի կերպիւ մեզ առաջնորդում է: Հետաքրքրութիւնը չէր, որ խիստ գրգռելով մարդու ցանկութիւնը, հրապուրեց նրան. ասացէք, մարդ երբեւիցէ արդեօք լսել է թէ աշխարհային գործերը ինչ դեղեցիկ յարաբերութիւն ունին միմեանց հետ: Մարդս նախևառաջ պահանջում է նորութիւն, որի մէջ պէտք է անխոնջ կերպիւ պտուէք ինչ որ օգտուէտ է: Վերջապէս նա պահանջում է ինչ որ բարի է, որ մարդուն բարձրացնում է և յարգանքը դէպի նա աւելացնում: Երիտասարդութեան ժամանակ նրան զւարթութեամբ ընկերակցում է թեթևամտութիւնը, որ թազցնում է նրանից վտանգը, յետոյ շուտով անհետացնում է ցաւալի չարիքի հետքերը: Անշուշտ պէտք է դիմել տղամարդին, որ, այդ զւարթ կեանքից յետոյ, հասակն առնելով, նրա խելքը հասունանում է, որ բախտի և դժբախտութեան ժամանակ եռանդով և ուժով գործում է, առաջացնում է բարին և երիտասարդութեան ժամանակ կրած փնասն անհետացնում է:

Այդ խօսքերից յետոյ, անհամբեր տանտիկինը հեզութեամբ ասեց՝ պատմեցէք մեզ ինչ որ դուք տեսել էք, շատ հետաքրքիր է:

Դեղագործը շեշտելով պատասխանեց՝ — ինձ համար ուրախանալը դժար պիտի լինի ան դէպքից յետոյ, որ ես տեսայ: Ո՞վ կարող է լաւ նկարագրել այդ բազմատեսակ տառապանքը: Դեռ արօտները չիջած՝ հեռուից տեսանք փոշին: Փաղթականները գալիս էին հեռուից բլուրների վրայով և չէր կարելի լաւ տեսնել նրանց: Բայց երբ հասանք այնտեղ, ուր ճանապարհը կարելով անցնում է ձորը, տեսանք որ մեծ էր փաղթականների և կառքերի

խառնաշփոթութիւնն ու աղմուկը: Երկար ժամանակ ցաւելով նայում էինք այդ դժբախտների ընթացքին և կարողացանք միայն թռուցիկ կերպով իմանալ, թէ ինչպէս տառապեցուցիչ է եղել փախուստը և ինչպէս ուրախալի է եղել, որ կարողացել են կեանքները փրկել: Տխրալի էր տեսնել լիքը տան բազմատեսակ կայքը, որ տնտես մարդը գործածութեան համար պատրաստ է ունեցել. կան տնտեսութեան մէջ չնչին իրեղէններ, որոնք կարևոր են և օգտաւէտ: Այդ բոլորը տեսանք զանազան կառքերի և սալերի վրայ, որ խառը բարձել էին շուտափոյթ փախստի միջոցին: Դարանի վրայ դրած էր մաղը և բրդէ վերմակը, խմորի տաշտի մէջ մահիճը և կտաւի սաւանով ծածկած էր հացելին: Ախ, վտանգի ժամանակ մարդ շշկւում է, ինչպէս հրդեհի ժամանակ մենք ինքներս քսան տարի սրանից առաջ տեսանք, վերցնում է չնչին իրերն, իսկ թանկագինները թողնում է: Դրանք էլ ամեն հոգատարութեամբ տանում էին անպէտք իրեր, ծանրաբեռնելով եղներներին և ձիերին, հին տախտակներ ու տակառներ, սագանոցն ու վանդակը. կանայք և երեխայք շնչառապա լինելով տանում էին կապոցներ, քթոցներ, պտուկներ՝ անպէտք բաներով լցրած: Յատնի է, որ մարդ միայն ակամայ է թողնում իր կայքը: Այդպէս խառն ընթացքն անցնում էր փոշու միջով անկարգ և շշկւած: Թոյլ անասունների տէրը կամենում էր կամաց գնալ, իսկ միւսները շտապում էին: Այդ միջոցին բարձրացաւ ձմւած կանանց և երեխաների սաստիկ աղաղակը, անասունների բառաշուփն, դրանց հետ խառնեց շների հաջոցը և ալեորների ու տկարների վշտալի ձայները, որոնք բեռնաւորած կառքերի բարձրութեան վրայ նստած՝ օրօրւում էին: Մի կառք, ամբոխից քշւած, ճոճաւով շեղւեց ճանապարհից դէպի խճուղու եզրը, տատանւեց և յանկարծ ընկաւ, գլուխը փոսը, վրայի նստած մարդիկ ճչալով վազը ընկան, բաց անջնաս մնացին: Յետոյ արկղները թափւեցին կառքի շուրջը: Արդարեւ, ով որ այդ ընկնելը տեսնէր, կը կարծէր թէ մարդիկ արկղների և դարանների տակ կը մնան և կը ջարդւին: Կառքը ջարդւած ընկած էր, մարդիկ անօգնական մնացին, որովհետեւ մնացածները ընթացքից ստիպւած և հոգալով միայն իրենց մասին՝ շտապով անցնում էին: Մենք իսկոյն վազեցինք օգնելու,

գտանք գետնի վրայ հիւանդներին ու ծերերին, որոնք իրենց տանը և անկողնում հազիւ կը գիմանային իրենց երկարատև ցաւերին: Դրանք վիրաւորւած հեծում, հառաչում ու տանջում էին տաքութիւնից և փոշու ալիքներից:

Այդ լսելուց յետոյ, մարդասէր տանտէրն յուզւած ասեց. երանի Հերմանը պատահէր դրանց, կազդուրէր և հազուաւ տար: Ես չէի կամենայ նրանց տեսնել, ինձ սարսափեցնում է թշւառութեան այդ տեսարանը:

Այդ սաստիկ թշւառութեան առաջին լուրն առնելով, շտապեցինք ուղարկել մեր լուման, որ մի քանիսին կարող էր կազդուրել, և հանդստացանք: Աւելի լաւ է այդ վշտալի պատկերներն աչք ևս չգիշենք, որովհետեւ երկիւղը շատ է մոնում մարդու սրտի մէջ, իսկ հոգատարութիւնն ինձ համար աւելի անտանելի է քան դժբախտութիւնը: Գնանք մեր զով հիւրասենեակը, ուր երբէք արեւի ընկնում և երբէք տաք օդը չի անցնում հաստ պատերի միջով: Ամուսինս կը բերի մեզ համար մի քանի բաժակ պատւական գինի, որ մենք վանենք մեզնից մեզ անհանգստացնող մտքերը: Այստեղ խմելը դուրեկան չի լինի, ձանձերը բզզում են բաժակների շուրջը: Եւ նրանք գնացին հիւրասենեակը զովանալու:

Տանտիկինը ողորկած շիշով, անագիւայ մատուցարանի վրայ դրած, խնամքով բերեց պարզ և պատւական գինուց, Հռէնոսի դիւնուն պատկանեալ կանաչադոշն բաժակների հետ:

Երեքով նստեցինք կոկած փաշլուն և ամրոտ սեղանի շուրջը, տանտէրն ու քահանան ուրախ չիկացրեցին իրանց բաժակները, իսկ ղեղադործը մտածման մէջ ընկած՝ անշարժ բռնել էր իր բաժակը: Տանտէրը քաղցրութեամբ ասեց նրան. դէհ, սիրելի դրացի, խմիր, Աստուած ողորմութեամբ պահպանել է մեզ դժբախտութիւնից, ապագայումն էլ կը պահպանի: Ա՛վ չգիտէ, որ Աստուած սարսափելի հրդեհից յետոյ, որով նա մեզ սաստիկ պատժեց, շարունակ մեզ ուրախացրել և պահպանել է՝ ինչպէս մարդ պահպանում է իր աչքի պտուղը, որ բոլոր զգայարաններից թանկագինն է: Միթէ սրանից յետոյ աչք ևս նա մեզ չի պաշտպանի և օգնի: Մենք այժմ լաւ տեսնում ենք, թէ նա ինչեր կարող է անել վտանգի ժամանակ: Մեր ծաղկած քաղաքը, որ նա աշխատասէր քաղաքացիների ձեռ-

ներով մոխրի միջից նորոգեց և յետոյ առատութեամբ պարգևեց, մի՞թէ կրկին կ'աւերի և մեր բոլոր աշխատանքը կ'ոչնչացնի:

Սրան բարի քահանան բերկրութեամբ պատասխանեց հետեւեալ խօսքերով. հաստատ պահեցէք ձեր հաւատը և այդ համոզմունքը, որովհետեւ բախտի ժամանակ հաւատը ներշնչում է կորովամտութիւն և հաստատակամութիւն, իսկ դժբախտութեան միջոցին մխիթարում և խնամում է գերագոյն յոյսը:

Տանտէրը այրական կորովամտութեամբ ասեց. ես չաճախ հիացմամբ ողջունել եմ Հռէնոսի ալիքներին, երբ ծանապարհորդութիւնիցս վերադառնալով՝ կրկին մօտեցել եմ նրանց: Հռէնոսը մեծ է եղել միշտ իմ աչքում և վսեմացրել է զգացմունքներս ու սիրտս. բայց չէի կարող կարծել, որ նրա զեղեցիկ ափերը պէտք է պատնէշ դառնան Փրանսիացիներին դիմադրելու համար և նրա լայնատարած խորքը՝ մի արգելող փոս: Տեսէք, այդպէս պաշտպանում է մեզ բնութիւնը, այդպէս պաշտպանում են քաջ գերմանացիք, և այդպէս պաշտպանում է մեզ Ասուած: Ով կարող է չիմարաբար վհատուի: Պատերազմողներն արդէն յոգնել են և խաղաղութիւնը գուշակելի է. երբ մեր եկեղեցում կը կատարւի ցանկալի տօնախմբութիւնը, զանգակի հնչիւնը կը խառնուի երգեհոնի ձայնի հետ, և երբ փողերը «զֆեզ Ասուածը» կը նւագեն՝ երանի, այն օրը, իմ Հէրմանը, տէր-հայր, իր հարսի հետ սեղանի մօտ, ձեր առջևը կանգնած լինի: Երբ կը կատարւի ամբողջ երկրում բախտաւոր տօնը և իմ գերդաստանական ուրախութիւնն՝ այդ ինձ համար կը լինի մի ցնծալի տարեդարձ: Ես աչնքան էլ ուրախութեամբ չեմ նայում զաւակիս վրայ, երբ նա տանը եռանդով գործում է, իսկ դուրսը դանդաղ է և ամաչկոտ: Նա չի սիրում մարդամէջ մօտել, խորշում է նոյնպէս օրիորդների հասարակութիւնից և ուրախալի պարից, որ բոլոր երիտասարդների համար սիրելի է:

Այս ասելու ժամանակ նա ականջ դրեց և լսեց հեռւից մօտեցող ձիերի տրոփը, եկող կառքի զղրղիւնը և նրա արագութեամբ բազ մօնելը:

Տ Է Ր Պ Ս Ի Խ Օ Ր Է ¹⁾

Հ Է Ր Մ Ա Ն

Երբ բարեկազմ տղան մտաւ սենեակը, քահանան սուր հայեացք զցելով նրա վրայ՝ զննեց նրա կազմածքն ու շարժածքը աչնպիսի քննողական աչքով, որ հեշտութեամբ թափանցում է մարդու միտքը, և մտերմաբար ժպտալով ասեց նրան՝—դուք բոլորովին կերպարանափոխուել էք, ես ձեզ երբէք այդպէս կայտառ և այդպէս վառվռուն հայեացքով չեմ տեսել: Դուք ուրախ և զւարթ էք, երևի նւէրներ բաժանելով աղքատներին՝ ընդունել էք նրանց օրհնութիւնը:

Երիտասարդը լրջութեամբ և ծանրաբարոյ կերպով ասեց. չգիտեմ կատարածս զովեւի է թէ ոչ, բայց իմ սիրտս պատուիրեց ինձ վարեւել աչնպէս, ինչպէս ահա պատմելու եմ: Մայր, դու ամեն ինչ տակնուվրայ անելով որոնում էիր և ընտրում հին շորեր, բայց կապոցն ուշ պատրաստեցիր, զինին ու գարնջուրը կամաց և զգուշութեամբ փաթաթեցիր: Երբ ես վերջապէս դռնից դուրս եկաջ փողոց՝ քաղաքացւոց խմբերը կանանց և երեխայոց հետ վերադառնում էին և աքսորւածների չուն արդէն հեռացել էր: Ես արագ քշեցի դէպի աջն գիւղը, ուր, ինչպէս լսեցի, պէտք է կանդ առնէին նրանք ու գիշերէին: Երբ նոր փողոցով վերև քշեցի, տեսայ հաստ և ամուր փայտերից շինած մի կառք, որ քաշում էին երկու մեծ և զօրեղ արտասահմանեան եղջեր: Կառքի հետ հաստաւ քայլերով գնում էր մի աղջիկ, որ երկար փայտը ձեռքին առաջնորդում էր այդ երկու հզօր անասուններին, երբեմն քշում էր, երբեմն կանգնեցնում, մի խօսքով կառավարում էր իմաստութեամբ: Այդ աղջիկը երբ տեսաւ ինձ՝ մօտեցաւ զգօն ձիերիս ու ասեց. մենք միշտ այսպէս թշւառ չենք եղել, ինչպէս դուք այսօր տեսնում էք մեզ այս ճանապարհի վրայ: Ես սովոր չեմ օտարից նպաստ խնդրելու, որ նա շատ անգամ դժկամակութեամբ է տալիս, որպէս զի ազատուի աղքատներից, բայց ինձ կարիքն է ստիպում խօսելու: Այստեղ յարդի վրայ պարկած է հարուստ կալւածատիրոջ նորա-

¹⁾ Տէրպսիխօրէն է պարելու արւեստի և խմբերգի մուսան:

ծնունդ կինը, որը հազիւ կենդանի մնաց և որին այս եզների ու կառքի օգնութեամբ հազիւ կարողացայ փրկել: Դժւարութեամբ ենք կարողանում հետևել միւսներին: Ահա պարկած է ծննդականը, մերկ երեխան ձեռքին և երբ հասնենք մերոնց, որոնք մօտակայ գիւղում մտադիր են կանգ առնել, շատ քիչ բանով պիտի կարողանանք օգնել նրան: Բայց վախենում եմ, որ նրանք այդ գիւղից անցած լինին: Եթէ դուք այս շրջակայքիցն էք և եթէ աւելորդ կտաւեղէն ունէք՝ բարեսրտութեամբ աղքատներին ընծայեցէք:

Երբ աղջիկն այսպէս խօսում էր, գունատուած ծննդկանը չարդի վրայից կիսով չափ բարձրանալով նայեց ինձ: Ես պատասխանեցի աղջկան: Իրաւ, յաճախ բարի մարդկանց չորհորում է մի երկնային ոգի և նրանք զգում են այն կարիքը, որին ենթարկւած են լինում իրենց աղքատ եղբայրները: Ահա, մայրս առաջուց զգալով ձեր թշաւութիւնը, տուց ինձ մի կապոց, որ տամ մերկ կարօտեալներին: Ես անմիջապէս բաց արեցի կապոցը և տուցի հօրս քնազգեստը, մի քանի շապիկ ու կոսւ:

Աղջիկը գոհունակութեամբ շնորհակալութիւն յայտնելով՝ ասեց. բախտաւոր մարդը չի կարծում, որ դեռ հրաշքներ կարող են կատարուել, միայն թշաւութեան ժամանակ նկատում ենք, որ Աստուծոյ աջը մեր վրայ է, որ բարի մարդկանց առաջնորդում է դէպի բարին: Ինչ որ նա ձեր միջնորդութեամբ մեզ համար արեց, թող ձեզ էլ փոխարէնն անի: Այդ ժամանակ ես տեսայ, որ ծննդականը հաճոյքով շօշափում էր կտաւեղէնը, մանաւանդ քնազգեստի փափուկ ասուեակը:

Շտապեմք, ասում էր օրիորդը ծննդկանին, դէպի այն գիւղը, ուր մերոնք հանգստանում են և գիշերելու են: Այնտեղ իսկոյն կը հոգամ երեխային պէտք եղած շորերը: Ինձ մնաս բարեւ ասելով սրտանց շնորհակալութիւն յայտնեց, եզները քշեց և կառքը տեղից շարժեց: Ես մնացի տարակուսութեան մէջ, չգիտէի պէտք է արդեօք քշեմ արագաքայլ ձիերս դէպի գիւղը և բաժանեմ միւս տառապեալներին ուտելիք, թէ տամ այդ աղջկան, որ ինքը բաժանի: Ես այդ հարցը մոքումս վճռեցի և հանդարտ քշեցի նրա չեռերից, շուտով հասայ նրան և ասացի. բարի աղջիկ, մայրս ինձ տուց ոչ միայն կտաւեղէն մերկերին ընծայելու, այլ և ուտելիք և զանա-

զան ըմպելիք տւեց, որոնցից կառքիս արկղում շատ կայ, այդ ես կը կամենայի յանձնել քեզ՝ բաժանելու համար, որովհետեւ մօրս յանձնարարութիւնը շատ լաւ կատարած կը լինեմ եւ դու պահանջին համաձայն կը բաժանես, իսկ ես բաժանելիս կարող եմ սխալուել:

Աղջիկը պատասխանեց, ձեր ընծաները ես կը բաժանեմ ամենայն հաւատարմութեամբ, կարօտութիւն ունեցողը դրանցով կ'ուրախանայ: Այդ լսելուց յետոյ՝ կառքիս արկղը շուտ բացարեցի, հանեցի խոզի ապուխտը, հացը, գինու եւ զարեջրի շիշերը եւ տւեցի նրան. ուրախութեամբ տւելի եւս կը տայի, բայց արկղը դատարկւեց: Այդ բոլորը դրեց ծննդկանի ոտների մօտ եւ շարունակեց իր ճանապարհը: Ես շտապեցի վերադառնալ քաղաք:

Երբ Հերմանը վերջացրեց իր խօսքը՝ շատախօս դրացին իսկոյն բարձրաձայն ասեց. երջանիկ է, այն մարդը, որ այդ փախուստի եւ խտնակութեան ժամանակ իր տանը միայն է ապրում եւ երկիւղով չեն կաշոււմ նրա փէշից ոչ կիներ եւ ոչ էլ երեխաները: Ես ինձ բախտաւոր եմ զգում, ամենեւին չէի կամենալ այսօր հայր լինել եւ անհանգստանալ կնոջ եւ երեխաների համար: Ես շատ անդամ մտածել եմ փախուստի մասին եւ ժողովել եմ ամենաթանկագին իրերս, հին փողերս եւ իմ հանգուցեալ մօր շղթաները, որոնցից դեռ ունիմ ծախած չէ: Ի հարկէ շատ բան էլ կը մնար, որ անկարելի կը լինէր հեշտութեամբ կրկին ձեռք բերել: Նաեւ բանջարեղէնը, որ դժւարութեամբ եկք ժողովել, չէի թողնի, թէպէտեւ մեծ արժէք չունի: Եթէ դորձակատարս կը մնայ՝ ես տանից անվրդով դուրս կը գնամ: Եթէ կայքս եւ իմ անձս փրկեմ, ամեն բան փրկած կը լինեմ: Միայնակ մարդը հեշտ կարող է փախչել:

Հարեան, ազդու կերպով պատասխանեց նրան երիտասարդ Հերմանը, ես երբէք չեմ կարող Ձեր նման մտածել եւ Ձեր ասածին չեմ հաւանում: Միթէ յարգելի է այն մարդը, որ ուրիշների բախտի եւ դժբախտութեան ժամանակ՝ միայն իր մասին է մտածում, չի կարողանում մասնակցել այլոց դժբախտութեանը եւ ուրախութեանը եւ այդ միջոցին նրա սիրտը չի բաբախում: Հէնց աւելի այսօր, քան թէ մի որեւէ անգամ, պատրաստ եմ հաստատապէս որոշել պսակւելու, որովհետեւ լաւ աղջիկը կարօտ է տղա-

մարդի պաշտպանութեանը, իսկ տղամարդին հարկաւոր է մի զւարթ կիւն, երբ նրան մի չարիք է սպառնում:

Հայրը խնդալով ասեց. ուրախութեամբ լսեցի քեզ, այդպէս խելօք շատ սակաւ ես խօսել:

Մայրն իսկոյն վրայ բերեց. որդի, դու իրաւացի ես, մենք, քո ծնողներդ, օրինակ ենք քեզ համար, որովհետեւ մենք մի:մեանց չենք ընտրել ուրախ օրերում, այլ մեզ միացրել է մի տխրալի ժամ: Երկուշաբթի առաւօտ էր, լաւ միտս է, որովհետեւ մէկ օր առաջ էր պատահել այն սարսափելի հրդեհը, որ մոխիր դարձրեց մեր փոքրիկ քաղաքը, ահա այժմ քսան տարի է անցել: Հրդեհի օրը այս օրւան նման կիւրակի էր: Եղանակը շոգ, չոր էր ու ջուրը սակաւ: Մեր քաղաքացիք զարգարւած գնացել էին զբօսնելու, ոմանք գիւղերում, ոմանք էլ ջրաղացներում ու գինեաներուէմն էին: Հրդեհն սկսեց քաղաքի ծայրում, կրակն արագութեամբ անցաւ փողոցներով՝ առաջացնելով քամի: Յորենով լիքը շտեմարանները կրակի ճարակ դարձան, փողոցները մինչև հրապարակն՝ այրւեցին, այրւեց նոյնպէս և իմ հօր տունը: Մեզանից միայն մի քանիսը փախան: Այդ ամբողջ աղետալի գիշերը ես նստած էի քաղաքից դուրս գտնւած արօտատեղում, պահպանելով մեր արկղներն ու մահիճները: Վերջապէս քունս տարել էր և երբ առաւօտեան սասն օդը ինձ դարթեցրեց, տեսայ ծուխ, բոց և լոկ պատեր: Սիրտս սեղմեց: Արեգակը սփռեց իր պայծառ լոյսը և տեղ ինձ սիրտ ու հոգի: Ես շուտ վերկացայ տեղիցս, գնացի դէպի քաղաք, որ նայեմ մեր բնակարանի տեղը ու տեսնեմ՝ փրկւած են իմ սիրած հաւերը թէ ոչ: Իմ բնակարանութիւնս դեռ երեսնայական էր: Երբ բարձրացայ տան փլատակների վրայ, որոնք դեռ ծխում էին՝ մեր բնակարանը քանդւած տեսայ, դու միւս կողմից եկար և խուղարկում էիր այդ վայրերը:

Քո գոմի աւերակների տակ մի ձի էր մնացել, վրան ընկած էր մի հրավառ գերան և ամբողջովին ծածկւած էր հողով: Մենք կանգնած էինք միմեանց հանդէպ՝ տխուր մտածմունքի մէջ ընկըղմւած: Փանդւած էր այն պատը, որ բաժանում էր մեր բաղերը: Այդ միջոցին դու ձեռքս բռնելով ասեցիր. Վիդիւն, ինչու եկար այստեղ: Հեռացիր, թէ չէ՝ ոտներդ կ'այրես, հողը շատ է տաքա-

ցիւ, իմ հաստ կօշիկներս համարեա խանձուում են: Ի՞նչ ինձ խա-
տեցիր և ձեր բազով դուրս տարար: Ձեր տան դուռը իր կամարով
անփնաս էր մնացել և կանգնած էր ինչպէս այժմ, ամբողջ տնից
միայն այդ էր մնացել: Ի՞նչ ցած գրիր, համբուրեցիր և ես
ընդդիմացա: Յետոյ քաղցրութեամբ ասեցիր, տես, իմ տունը
քանդակել է: Մնաց այստեղ և օգնիր, որ շինեմ, իսկ ես կ'օգնեմ
քո հօրը իր տունը շինելիս: Բայց ես այն ժամանակ միտքդ չըհաս-
կացայ, մինչև այն օրը, որ մօրդ ուղարկեցիր հօրս մօտ, և մեր
պսակի քաղցր ուխտը կատարեց:

Մինչև այսօր ուրախութեամբ եմ յիշում այրած գերանները
և այժմ էլ տեսնում ե արեգակի այն պայծառ լուսաւորու-
թիւնը, որովհետև այդ օրը տեց ինձ ամուսին և քաղաքի քայ-
քայման աւաջին օրերը պարգևեցին ինձ մի զաւակ:

Այդ պատճառով էլ գովում եմ քեզ, Հէրման, որ դու այս
պատերազմի տխուր միջոցին վստահութեամբ վճռել ես մի հարս-
նացու զանեկ քեզ համար:

Հայրն աշխոյժով ասեց, խորհուրդդ գովելի է, սիրելիս, պատ-
մածդ էլ ճշմարիտ, ամեն բան այդպէս է եղել: Ինչ որ յաջողում է,
լաւ է լինում, բայց ամեն մարդու չի յաջողում: Հէնց սկզբից
տուն տեղ գնելը: Թող ամեն մարդ շտանջւի մեզ և ուրիշ շա-
տերի նման: Ո՛հ, ինչպէս բաղդաւոր է այն տղան, որ իր ծնող-
ներից ստանում է սարքած տուն և ինքը յաջողութեամբ դարմա-
րում է: Ամեն բանի սկիզբն է դժւար, բայց ամենից դժ-
ւարն է տնարարութեան հիմք գնելը:

Մարդուն շատ բաներ են հարկաւոր լինում և օրէցօր ամեն
բանի գինը թանկանում է, այդ պատճառով էլ պէտք է մարդ
ջանաց աւելի փող աշխատելու: Ես յոյս ունիմ, իմ սիրելի Հէրման,
որ դու շուտով լաւ բաժինքով հարս տուն կը բերես, որովհետև
ամեն մի քաջ մարդ արժանի է լաւ օժիտով աղջկայ և բացի այդ՝
հաճոյական է՝ երբ ցանկալի աղջկայ հետ տուն են բերում օգտա-
ւէտ իրերով լցրած զամբիւղներ և արկղներ: Մայրերն իզուր չեն
պատրաստում տարիներ շարունակ նուրբ ամուր շորեղէն իրենց
դուստրների համար: Կնքահայրը իզուր չէ պատրաստում հարսի
համար արծաթեղէն, իսկ հայրը իզուր չէ ետ ձգում իր արկղում:

ռսկէդրամներ, որովհետեւ աղջիկը պարտաւոր է ուրախացնել իր կաջքով ու պարգեւներով այն երիտասարդին, որը նրան ընտրել է: Այո, ես գիտեմ, թէ ինչքան անգործ է իր տան մէջ մի կին, երբ իր սեպհական սպասները տեսնում է իր խոհանոցում և սենեակներում մահիճն ինքն է պատրաստում և սփռոցն ինքն է դնում: Ես կը կամենայի օժիտով հարս տեսնել իմ տանը, որովհետեւ աղքատ աղջկան իր ամուսինը վերջապէս կ'արհամարհի և կը պահի որսէս աղախին, որ միայն մի կապոցով է տուն կկել:

Անարգար են դառնում աչրերն, երբ սիրոյ առաջին ժամերն անցնում են: Այո, իմ սիրելի Հերման, ծերութեանս ժամանակ ինձ շատ կ'ուրախացնէիր, եթէ շատով դրացիներիցդ մի հարս տուն բերէիր, այն էլ այն կանաչ անից: Եւ իրաւոր այդ մարդը հարուստ է, նրա առեւտուրն ու գործարանները օրէցօր աւելի ու աւելի հարստացնում են նրան, վաճառականն է, որ ամեն գործում աշխատում է:

Այնտեղ երեք աղջիկներ կան, նրանց է միայն պատկանում ամբողջ կաջքը: Ես գիտեմ, որ մեծն արդէն նշանւած է, բայց մնացած երկուսն էլ երկար չեն մնալ տանը: Եթէ ես քո տեղը լինէի՝ չէի տատանւիլ, դրանցից մէկին տուն կը բերէի, ինչպէս ես մայրիկիդ տուն բերեցի:

Ամաչկոտ երիտասարդը այսպէս պատասխանեց ցուցմունքներով ստիպող հօրը. իսկպէս իմ էլ ցանկութիւնն էր մեր դրացու աղջիկներից մէկը հարսնացնել ինձ: Մենք միասին ենք մեծացել, մի ժամանակ հրապարակի աղբիւրի մօտ խաղացել ենք, նրանց շատ անգամ ես պաշտպանել եմ աղաների վաճրենի վարքից, բայց դրանից յետոյ շատ ժամանակ է անցել: Երբ սկսեցին մեծանալ, նրանց պահեցին տանը, այլ ևս չէին մասնակցում աղաների վաճրենի խաղերին: Իրաւ որ նրանք բարեկիրթ են: Ձեր ցանկութեամբ ես մի օր գնացի նրանց մօտ, որպէս հին բարեկամ, բայց նրանց հասարակութեան մէջ ես չկարողացայ ուրախ ժամանակ անցկացնել: Ինձ պարտաւոր էին, որ թիկնօցս երկար է, հաստ կտորից է, վատ գոցն ունի, մազերս գանգրած և սիրուն սանդղած չեն, ես այդ բոլորը համբերութեամբ պէտքէ տանէի: Վերջապէս ես մոտոծեցի զարգարւել այն վաճառականների որդւոց նման, որոնք ամե-

նաչն կիւրակի նրանց մօտ են լինում և ամառն հազնում են մեաաքսեայ շորեր:

Բայց շատ վաղ նկատեցի, որ ինձ միշտ ծաղրում էին, ես զգում էի այդ, որ ինձ համար վիրաւորական էր, և աւելի վիրաւորում էի անցն պատճառով, որ իմ բարեկամութիւնը չէին գնահատում, մանաւանդ կրտսերը—Մինխէնը: Վերջին անգամ նրանց մօտ էի զատկին: Հագած ունէի նոր սև զգեստս, որ այժմ դարանումը կախած է, մազերս սանրել էի միւսների նման: Երբ ներս մտայ՝ սկսեցին զողտուկ ծիծաղել, բայց ես ինձ վրայ չընդունեցի: Մինխէնը դաշնամուրի մօտ էր, նրանց հայրն էլ ներկայ էր, լըսելով դստեր երգը՝ հիացած էր և լաւ տրամադրւած: Երգից մի քանի բան հասկացայ, լսեցի շատ անգամ Պամինա և մի քանի անգամ Տամինօ ¹⁾ անուանները: Երգը վերջացրին, չկամենալով լուռ նստել, հարցրեցի երգի բովանդակութեան մասին և վերոյիշեալ խօսքերի նշանակութիւնը: Բոլորը լուցին ու ժպտացին, իսկ հայրն ասեց, այնպէս չէ, սիրելի բարեկամ, դուք երևի ճանաչում էք միայն Ադամին և Եւային: Այլևս ոչ ոք չկարողացաւ իրեն զսպիլ, բոլոր աղջիկքն ու տղաները սկսեցին բարձրաձայն ծիծաղել, իսկ հայրն էլ իր փորը բռնած ծիծաղում էր: Շփոթութիւնից գտակս ձեռքիցս վայր ընկաւ ու զողտուկ ծիծաղը շարունակւում էր՝ քանի երգում ու խաղում էին: Ես ամաչած ու դժգոհ շտապեցի տուն, կախեցի սև զգեստս դարանում, մազերս քաշեցի ճակատիս վրայ և երգեցի էլ երբէք նրանց տուն ոտք չդնել: Եւ ես իրաւացի եմ, նրանք մեծամիտ են և անգութ, ես լսում եմ, որ նրանք իմ անունս Տամինօ են դրել:

Հէրման, ասեց մայրը, այդքան երկար չպէտքէ դու բարկացած մնաս երեսնաների վրայ, նրանք դեռ երեսնաներ են: Մինխէնն իրաւ որ բարի է և քեզ միշտ համակրել է, նորերումն էլ հարցընում էր քո մասին, այ, զրան պէտքէ առնես:

Որդին խորհրդաւոր կերպով ասեց. չգիտեմ, բայց այն դժգոհութիւնն այնպէս խորը տպաւորւել է իմ մէջ, որ ես երբէք չէի

¹⁾ Գերմանական մի գուսաներգութեան անձեր են, որի երաժշտութիւնը Մոցարտն է չօրինել: Ման. թարգմ.

կամենայ նրան դաշնամուրի մօտ տեսնել և նրա երգը լսել:

Հայրը բարկանալով պատասխանեց, դու ինձ շատ քիչ ուրախութիւն ես պատճառում: Ես միշտ ասում էի, որ դու սիրելեա ձիեր և հողագործութիւնը: Դու կատարում ես այն, ինչ որ անում է մի հարուստ կալաճատիրոջ ծառան: Այժմ հայրը պէտքէ հրաժարւի իր որդուց, որ, իբրեւ պատիւ իր հօրը, քաղաքացիների առջևն էլ իր ինչ լինելը ցոյց է տւել: Մայրդ մոլորեցնում էր ինձ զուր յոյսերով, երբ ուսումնարանում քեզ այնքան էլ չէր յաջողում կարդալ, գրելն ու սովորելը, ինչպէս ուրիշներին և միշտ վերջին աշակերտն էիր: Ի հարկէ այդ նրանից է, որ երիտասարդը չի ունենում պատւի զգացմունք և չի կամենում առաջ գնալ: Եթէ հայրս իմ մասին հոգար այնպէս, ինչպէս ես քո մասին եմ հոգացել, ինձ ուսումնարան ուղարկէր և վարժապետներ վարձէր, ես մի ուրիշ մարդ կը լինէի քան թէ ճիւղի առիւծի պանդոկատէս:

Տղան լուռ վերկացաւ և հանդարտութեամբ մօտեցաւ դրանը, սակայն հայրը բարկացած՝ յետևից գողաց, դէհ, գնան, ճանաչում եմ այդ յամառիդ, գնան, տար անարարութիւնն այնպէս որ ես չբարկանամ: Միայն չկարծես, որ կարողես տուն բերել մի գիւղացու աղքատիկ աղջիկ որպէս հարս:

Ես շատ եմ ապրել և գիտեմ թէ մարդկանց հետ ինչպէս պէտք է վարուի, գիտեմ այնպէս հիւրներկալել պարոններին և տիկիններին, որ ինձանից բաւական լինեն, գիտեմ թէ ինչպէս պէտք է հաճոյաբար փաղաքշեմ օտարներին: Ինձ այնպիսի մի հարս է հարկաւոր, որ կարողանայ իմ ծանր աշխատանքը քաղցրացնել, պէտքէ գիտենայ դաշնամուրի վրայ ամէլ այնպէս, որ քաղաքի ամենագեղեցիկ և ամենալաւ մարդիկ ուրախութեամբ ժողովեն մեզ մօտ, ինչպէս կիւրակի օրերը հաւաքւում են մեր դրացու տանը: Այդ խօսքերը լսելով՝ տղան մեղմ ձնշեց դրան մղձակը և սենեակից դուրս գնաց:

Թ Ա Լ Ի Ա 1)

Բ Ա Ղ Ա Ք Ա Յ Ի Ք

Համեստ երիտասարդը խոցա աւեց հօր խիստ խօսւածքից: Քացց հայրը շարունակում էր նոյն կերպով՝ ինչպէս որ սկսել էր. երբ մի մարդու մէջ բան չկայ՝ նա ոչինչ չի կարող դուրս գալ և դժւար թէ սրտիս խորհուրդը մի որևէ անգամ կատարւի, այն է որ որդիս ինձնից աւելի լինի: Ինչ կը լինի տունը, քաղաքը, եթէ ամեն մարդ ուրախութեամբ չաշխատէր պահպանելու, նորոգելու և բարւոգելու, ինչպէս ժամանակը և այլ երկիրները պահանջում են: Միթէ մարդը սունկի նման գետնից է բուսնում, որ փթի նոյն տեղում և կեանքի ոչ մի հետք չթողնի: Տան վրայ նայելով, պարզ երևում է, թէ տէրն ինչ խելքի մարդ է, ինչպէս և քաղաք մօտ ժամանակ՝ կառավարիչներին ես դատում: Արտեղ աշտարակները և պատերը քանդւած են, փոսերն աղբով են լցրած, փողոցները կեղտոտ են, որտեղ քարերը ամրացրած տեղից պոկւած են, և տեղը գնող չկայ, որտեղ ղեւանը փթում է և տունն իրար տեղը նեցուկի է սպասում:՝ կը նշանակէ կառավարիչ չկայ: Եթէ վերեւից չեն հրամայում կարգ և մաքրութիւն պահպանել, այնտեղ քաղաքացիք հեշտութեամբ սովորում են անհոգութեան, ինչպէս և աղքատը սովորում է ցնցոտիներէ: Հէնց այդ պատճառով ես մտադիր եմ, որ Հէրմանը գնաց ճանապարհորդութիւններ անի և գոնէ տեսնի Ստրասբուրգը, Ֆրանկֆուրտը և դեղեցիկ Մանհէյմը, որ միևնոյն ժամանակ ուրախ տեսք ունի: Այլ որ մեծ և մաքուր քաղաքներ է տեսել, չի հանգստանալ մինչև որ իր փոքրիկ բնակավայրը չղարդարի: Զի՞ դովում արդեօք օտարը մեր քաղաքի նորոգած դռները, սպիտակացրած աշտարակը և նորոգած եկեղեցին: Միթէ ամեն մէկս չենք պարծենում, որ լաւ սալաշատակ ունինք, որ ունինք ջրառատ, ծածկած, կանոնաւոր բաժանած ջրմուղներ, որոնք թէ օգտուէա են և թէ կարող են հրդեհը հէնց ծաղած ժամանակ դադարեցնել: Եւ այդ բոլորը շինել ենք այն սարսափելի հրդեհից յետոյ: Խորհրդի ատենում վեց անգամ՝ ճարտարա-

1) Փալլան թատրոնի պահապան մասն է:

պետի պաշտոն եմ կատարել, բոլորից էլ հաւանութիւն եմ գտել և պատւական քաղաքացիներից սրտանց շնորհակալութեան արժանացել: Ինչ որ առաջարկել եմ՝ անյապաղ կատարել են և մեր ուղղամիտ քաղաքացիներից անկատար թողած քաղաքացին շինութիւնները վերջացրի և խորհրդի բոլոր անդամներն էլ ուրախացան: Այժմ բոլորն էլ հաստատ վճռել են խճուղի շինել և քաղաքը միացնել մեծ ճանապարհի հետ: Բայց ես վախենում եմ, որ երիտասարդներն այդպէս չհոգան, որովհետև մի քանիսը մտածում են ուրախութեան և զարդարանքի մասին, իսկ միւսները տանը նստած՝ տաքանում են հնոցի առջև. ես վախենում եմ, որ Հէրմանը դրանց նման դուրս չգալ:

Խելացի մայրն իսկոյն ասեց. այնուամենայնիւ դու որդուդ վերաբերմամբ միշտ անարդար ես, այդպիսով քո բարի ցանկութիւնը չի կատարւի: Մենք չենք կարող երեխաներին այնպէս փոխել ինչպէս մեզ ցանկալի է:

Ինչպէս նրանց. Ասուած մեզ պարգեւել է, այնպէս էլ պէտքէ պահենք և սիրենք, լաւ կրթենք և ամեն մեկին թողնենք իր բնութեան համաձայն, որովհետև ամեն մէկը մի առանձին ընդունակութեան տէր է: Ամեն մէկը իր տեսակ է գործադրում իր խելքը և իւրաքանչիւրն իր տեսակ բարի է և երջանիկ: Ես չեմ թողնի, որ Հէրմանիս յանդիմանես, որովհետև գիտեմ, որ նա արժանի է այն կայքին, որ նա ժառանգելու է, լաւ տնարար է, նա օրինակ կարող է լինել քաղաքացիների և գիւղացիների համար և զուշակում եմ, որ խորհրդի ատենում վերջինը չի լինելու: Բայց այս օրւան նման և ամեն օր էլ մեղադրելով, բարկանալով՝ ճնշումես նրա ամբողջ աշխոյժը: Այս առելով իսկոյն դուրս եկաւ սենեակից և գնաց որդու յետևից, որ նրան մի օրե է տեղ գտնի և գուրգուրելով ուրախացնի, որովհետև այդ պատւական տղան արժանի էր գուրգուրանքի:

Երբ որ արդէն դուրս էր գնացել՝ հայրը ծիծաղելով ասեց. կանայք երեխաների նման զարմանալի արարածներ են, ամէն մեկը ապրում է իր հաճոյքին համաձայն և յետոյ պահանջում է, որ նրան գովեն ու փաշտալեն: Ուղիղ է ասում մեր հին առածը թէ՛ և՛ որ առաջ չի գնաց՝ յետ կը գնաց: Այդ փաստ է:

Գեղազորքը ծանրութեամբ պատասխանեց. ես համաձայն եմ քեզ հետ, պարոն. զրացի, և ինքս էլ միշտ լաւն եմ սիրել, և թէ միայն թանկ չէ և նոր է: Բայց ինչ անեմք, երբ բաւականաւով փող չկայ և, առանց շտապելու աշխատելով, այնուամենայնիւ պարտաւոր ենք ներսից ու զրսից բարւոքել: Քաղաքացու զործու-նէութիւնը շատ է սահմանափակւած: Աւա բանը չի կարող կատարել, չնայելով, որ լաւը ճանաչում է, որովհետեւ ծրագիրը մեծ է, իսկ փողը սակաւ և բացի այդ՝ նրան միշտ արգելք են լինում: Աս շատ բան կ'անէի, բայց փոփոխութիւններ անելու համար ո՞վ չի վախենում ծախսից, մանաւանդ այսպէս դժւար ժամանակներում: Երկար ժամանակ ժպտում էր ինձ իմ տան հնացած տեսքը, երկար փայլում էին նրա կամարածիգ լուսամուտների տախտակ-ները, բայց ո՞վ կարող է հետեւել վաճառականին, որ կարողութիւն ունենալով՝ զիտէ լիք ինչ բան թրտեղ պէտք է գնել: Նայեցիք այն տանը. կանաչ դաշտի մէջ ինչ սիրուն տեսք ունեն նրա սպի-տակ ծեփքի գայելուց զճահիւսակները, լուսամուտները մեծ են, ապակիները փայլուն ու ցոլուն: Նրա առաջ նսեմանում են հրա-պարակի բոլոր տները: Սակայն մեր տները, օրինակ, իմ «Հրեշ-տակի զեղատունը», նոյնպէս և քո «Ոսկէ աւելածը» հրդեհից յետոյ ամենազեղեցիկն էին: Իմ պարտեզս յայտնի էր շրջակայքում, ամեն մի ճանապարհորդ կանգնում նայում էր կարմիր ցանկի միջով քարից շինած աղբաւաններին և զանազան գոյներով ներկած քարէ թզուկներին: Ում որ սուրճ էի խմեցնում իմ հիանալի քար-այրի մէջ, որ այժմ փոշոտած քանդած է՝ նա հրապուրւում էր բազմագոյն լուսով, որ արտափայլում էին այրի գեղեցկազարդ խեցիները, հասկացողները կախարդած հայեացքով նայում էին ծծմբակապարի և բուստի վրայ: Նոյնպէս զարմանում էին սրահի նկարների վրայ, իսկ զարդարւած պարոններն ու կանայք պար-տիզում զթօսներու ժամանակ՝ իրենց գեղեցիկ մատներով ծաղիկներ էին քաղում և միմեանց ընծայում: Այժմ էլ ո՞վ է նրանց մասին հոգում: Աս սենեակիցս էլ դժւարութեամբ եմ դուրս գնում, այն ինչ բոլորն էլ ուրիշ կերպ և լաւ ճաշակով պէտքէ լինէր, ինչպէս հարկն է, և սպիտակ ներկած լինէին ցանկերն ու փայտի նստա-րանները, բայց բոլորն էլ ողորկ է ու հասարակ: Այժմ չեն սիրում

փայտաքանդակ կամ ոսկեզօծած իրեր, մանաւանդ որ օտարերկրեաց փայտը շատ թանկ է: Ե՛հ, ես բաւական կը լինէի՝ եթէ մի նոր բան ձեռք բերէի, պատրաստ եմ նաեւ ժամանակի հետ գնալ, տան սարքը փոփոխել, բայց մարդ վախենում է մի չնչին բան տեղից շարժել, որովհետեւ այժմ դժուար է նաեւ բանւորների վարձ վճարելը: Նորերումս մտածեցի, ինչպէս և գեղարւեստը պահանջում է, նորից ոսկեզօծել տալ զեղատանս նշանակը «Միքայէլ հրեշտակը» և այն զարհուրելի վիշապը, որ նրա ոտների տակն է, բայց թողեցի ինչպէս որ կար, ես վախեցայ պահանջքից:

Ե Ո Ւ Տ Ե Ր Պ Ե ¹⁾

ՄԱՅՐ ԵՒ ՈՐՊԻ

Այսպէս խօսակցում էին տղամարդիկ միմեանց հետ, երբ մայրը գնաց որդուն որոնելու տան առջև, ուր նա սովորութիւն ունէր հանգստանալ քարէ նստարանի վերայ: Նրան այդտեղ չպատահելով՝ գնաց գոմը, կարծելով, որ որդին գնացած կը լինի ձիերի և յովատակների մասին հոգալու, որոնց նա առել էր քուռակ ժամանակ և ոչ ոքի չէր վստահանում, այլ միշտ ինքն էր խնամում: Շառան յայտնեց նրան, որ Հէրմանը գնացել է պարտեզը: Մայրն արագութեամբ անցաւ իրենց երկու բազերը, անցաւ նաեւ գոմերի, շտեմարանների մօտով և մտաւ պարտեզ, որ տարածւում էր մինչև քաղաքի պատը: Պարտիզով անցնելու ժամանակ նա ամեն մի ծառ տեսնելով ուրախանում էր, ծանրաբեռնւած խնձորենու և զեղձենու ճիւղերի տակ նեցուկ էր դնում, կաղամբների վրայից վերցնում էր թրթուրը: Գործոն կինն իզուր տեղը ոչ մի քայլ չի անում: Արդէն հասել էր պարտիզի ծայրը և այն հովանոցը, որ պատած էր այծատերևներով, այդտեղ էլ չգտաւ որդուն: Նա կիսաբաց տեսաւ այն դուռը, որ պտուղի քաղաքատեղը, առանձին համակրութիւն ունենալով դէպի Հէրմանի պապը, թոյլ էր տւել բանալ քաղաքի պարսպի մէջ: Անցաւ չոր խրամով և բարձրացաւ:

¹⁾ Կառէրպէ՛ն է Յէլի և Մնէմոզինէ՛ի աղջիկը: Սրա անունը նախելով, հին ներկայացումների ժամանակ, զանազան տեսակ էին ձևացնում սրան: Շան. թարգմ.

այն նեղ զառիվայր ճանապարհով, որ անցնում է ցանցապատ այգու մօտով, հրճւում էր՝ երբ տեսնում էր, որ խաղողի որթերը առատ բերք են խոտտանում: Միջի դրասանգը խիտ ծածկւած և հով էր, կախ էին ընկած սորիկը և մշկախաղողը, դրանց մօտ կարմիրը, որ հազւագիւտ մեծութիւն ունէր: Այդ պատւական խաղողների որթերը զիտմամբ տնկած էին հիւրերի սեղանը զարդարելու համար: Պարտիզի մնացած մասում տնկած էին մանր խաղողի որթեր, որոնցից ստանում էին պատւական գինի: Անցնելիս նրան հիացնում էր աշնան եղանակը և նա ուրախանում էր, որ շրջակայքում խաղողը քաղում, տրորում էին և խազմովը տակառներն էին տծում: Գիշեր ժամանակ ամեն տեղ հրախալութիւն էին կատարում և դրանով պատւում էին այգեքաղը: Վերջապէս ականց անհանգստանալ, երբ երկու երեք անգամ որդուն կանչելուց յետոյ՝ լսեց իր ձայնի արձագանքը, որ անդրադառնում էր քաղաքի աշտարակներից: Որդուն պոռելը նրան թւում էր շատ օտարօտի, որովհետև նա երբէք տանից շատ չէր հեռանում, հակառակ դէպքում լայնում էր, որպէս զի իր սիրելի մօրը անհանգստութիւն չպատճառի և նա չմտածի, որ մի դժբախտութիւն կարող է պատահած լինել: Մայրն այնուամենայնիւ կարծում էր, որ որդուն կը գտնի ճանապարհին, որովհետև այգու վերևի և ներքևի դռները բաց էին: Այսպէս մտածելով անցաւ դաշտը, որ գտնւում էր բոլորի միւս կողմը: Նա շարունակում էր թափառել իրենց սեպհական հողերի վրայ, ուրախութեամբ նայելով իրենց ցանքսերի և օրօրող ոսկենման ցորենի վրայ: Անցաւ շաւղի մօտից արտերի միջով, շարունակ նայելով մեծ տանձենուն, որ կանգնած էր բլուրի վրայ՝ իրենց դաշտերի սահմանում: Յայտնի չէր, թէ ով էր տնկել այդ տանձենին, որ շրջակայքում չշանաւոր էր թէ իր մեծութեամբ և թէ իր պողով: Սովորաբար դրա տակ ձաշում էին հնձորները և սուերում՝ կանաչի վրայ զովանում էին հովիւները, ուր քարի նստարաններ էլ կային: Նա չսխալեց, այդտեղ Հէրմանը թիկնուած, հանդարտ նստած էր թիկունքը դէպի մայրը դարձրած և նայում էր դէպի լեռները: Մարդը զգուշութեամբ մօտեցաւ որդուն և ձեռքը դրեց նրա ուսի վրայ: Հէրման յանկարծ յետ նայեց և մայրը նրա աչքերում արտասուք տեսաւ:

Ազնիւ երիտասարդն արտասուքը սրբեց և պատկառանքով ասեց. մայր իմ, դու ինձ զարմացնում ես: Այդ ի՞նչ է, որդեակ, դու լալիս ես, ասեց մայրն ապշած: Ես քեզ այդպէս չէի ճանաչում, ես չգիտէի, որ դու կարող ես լալ: Ասա, ի՞նչն է սիրադ ճնշում, ինչո՞ւ ես միացնակ նստած այս տանձենու աակ և ինչո՞ւ ես արցունք թափում:

Ազնիւ երիտասարդը սիրտը պնդացնելով ասաց. արգարև սիրտ չկայ այն կրծքում, որ այժմ չի զգում աքսորւածների վիճակը: Խելք չունի այն մարդը, որ այսպիսի օրերում իր և իր հայրենիքի բարօրութեան մասին չէ մտածում: Ինչ որ ես այսօր տեսայ ու լսեցի, մարդու սիրտ կը ճմլի: Քաղաքից դուրս գնացի, տեսայ հիւնալի, լացնատարած դաշտեր, որոնք շրջապատում են մեզ իրանց պողատու բլուրներով, տեսայ ոսկենման հասկերի խուրձեր և գեղեցիկ մրգեր, որոնք պէտք է լցնեն մեր շտեմարանները: Բայց, անորքան մօտիկ է թշնամին, Նոէնոսի ալիքները հազիւ կարողանան պաշտպանել մեզ, ինչ նշանակութիւն ունին ալիքները և լեռները այն ահարկու ժողովրդի համար, որ մրկի նման գալիս է դէպի մեր կողմերը: Նրանք ամեն կողմից ժողովում են երիտասարդներին և ծերերին, առաջ են գալիս: Այդ ամբօխը մահից չի վախենում, խմբերից յետոյ գալիս են նոր խմբեր: Այս, իսկ գերմանացիին համարձակում է ամենը մնալ, միթէ յոյս ունի փրկւել այդ սպառնալի չարիքից: Սիրելի մայր, ահա քեզ յայտնում եմ, որ դու այսօրւան օրս ինձ դժգոհութիւն ես պատճառել, չթողնելով ինձ միանալ պատերազմ գնացող քաղաքացիներին: Իրաւ է, ես ձեր միակ որդին եմ, մեր տնտեսութիւնը մեծ է, մեր արհեստը գլխաւար, բայց աւելի պիտանի չէր լինի, եթէ սահմանի վրայ զինուորէի թշնամիներին, քան թէ այստեղ ենթարկւած լինէի տառապանքի և ստրկութեան: Այո, այդպէս ինձ ոգին հրաման է տւել և կրծքումս քաջութիւն ու ցանկութիւն եմ զգում հայրենիքիս համար ապրել և մեռնել, իսկ ուրիշների համար բարի օրինակ դառնալ: Եւ իրաւ, եթէ գերմանական երիտասարդութեան ոյժերը սահմանի վրայ միացած լինէին՝ մենք օտարին տեղի չէինք տալ, այն ժամանակ նա չէր յանդգնիլ ոտք դնել մեր հրաշալի երկիրը, մեր աչքի առջև մեր երկրի բերքերը փչացնել, հրամայել մեր

ողամարդկանց, յափշտակել մեր կանանց և աղջկանց:

Ահա, մայրիկ, ես սրտումս վճռել եմ անյապաղ կատարել այն, ինչ որ ես իրաւացի եմ համարում, որովհետեւ ով որ երկար է մտածում, նա միշտ լաւագոյնը չի ընտրում: Իմացէք, որ ես այստեղից տուն վերադառնալու չեմ: Այստեղից կը գնամ քաղաք և կամաւորներին կը նւիրեմ այս բազուկը և այս սիրտը: Մեր հայրենիքին ծառայեցնելու համար: Թող այնուհետեւ դարձեալ հայրս ասէ, թէ ես պատւի զգացմունք չունիմ, թէ ես չեմ կոմենում յառաջադիմել:

Բարեսիրտ և խելացի մայրն անձայն արտասւելով և ծանրութեամբ ասեց. Որդեակ, ինչո՞ւ ես այդպէս փոխել, մօրդ հետ ազատ, համարձակ չես խօսում ինչպէս երեկ և անցեալ օրերը, որոշ չես յայտնում ցանկութիւնդ: Ն[թ]է մի ուրիշը լսէր քո խօսքերը՝ քեզ, ի հարկէ, շատ կը գովէր և հրապուրւելով քո խօսքերիցդ խելացի բանախօսութիւնիցդ՝ կը գնահատէր որոշումդ, որպէս ամենաազնիւ գործ, բայց ես պախարակում եմ, որովհետեւ ես քեզ աւելի լաւ եմ ճանաչում, դու սիրտդ չես բացանում ու ծածուկ մտքեր ունիս: Ես գիտեմ, որ քեզ չէ հրապուրում թմբուկը, դու չես էլ փափագում աղջիկների առջև երեւալ զինւորական հագուստ հագած: Թէպէտ և դու քաջ և առաքինի ես, բայց քո պարտաւորութիւնն է տունը պահպանել և խաղաղութեամբ մեր դաշտերի մասին հոգալ: Համարձակ խօսիր, ինչն է ստիպում քեզ այդ վճռականութեանը դիմել:

Որդին ծանրութեամբ պատասխանեց մօրը. դու սխալում ես, մայրիկ: Մէկ օրը միւսին նման չէ: Նրիտասարդը հասակն առնելով ողամարդ է դառնում: Նրբեմն խաղաղ ապրելով, նա աւելի լաւ է պատրաստուում մի գործի համար՝ քան թէ աղմկալի և վայրենի կեանք վարելով, որ շատ երիտասարդների կործանել է:

Թէպէտ ես միշտ հանդարտ բնավորութիւն եմ ունեցել, բայց այս տեղ, իմ կրճքումս, կազմել է մի սիրտ, որ ասում է՝ ինչ որ անարդար է և անիրաւ և ես շատ լաւ կարողանում եմ զանազանել միմեանցից աշխարհային գործերը, մարմնաւոր աշխատանքն էլ շատ ամրացրել է կռներս ու ոտներս: Ես համարձակ կարող եմ ասել, որ ամեն բան շատ լաւ հասկանում և զգում եմ, այնուամենայնիւ

քո պարսաւանքը իրաւացի է, մայրիկ, իմ կիսով չափ արդարացի մտքերիս և կեղծաւորութեանս յանկարծակի բերելով, բռնեցիք ինձ: Ես խոստովանվում եմ, մօտակայ վտանգը չէ, որ կոչում է ինձ իմ հայրենական տնից և ոչ էլ հայրենիքիս օգնելու բարձր գաղափարը և խշնամիներն վրայ սարսափ տարածելը: Դրանք միայն լոկ խօսքեր էին, որ ես արտասանեցի: Դու պէտքէ միայն հասկանալի իմ զգացմունքներս, որոնք սիրտս կտրատում են: Մայր, հանդիսութող ինձ: Եւ որովհետեւ սրտումս ունիմ ապարդիւն ցանկութիւններ՝ թող կեանքս էլ ապարդիւն անցնի: Ես հաստատ գիտեմ, որ անհատը իրեն անձնւթրութեան տալով՝ ինքն իրեն է վնասում, երբ բազմութիւնը չի մասնակցում:

Յայտնիր, ինչ որ կամենում ես, ասեց խելացի մայրը, ես գիտեմ, որ աղամարդիկ կրակոտ են և միշտ գիմում են վերջին միջոցին. արգելքն առանց յժարութեան մղում է նրանց ճանապարհից դուրս, իսկ կ'ինարմատը ճարպիկութեամբ միջոցներ է գտնում և անուղղակի ճանապարհներով հասնում է իր նպատակին: Դէհ, ուրեմն, ասա, ինչո՞ւ ես այնպէս վրդովւած, ինչպէս եսքեղ երբէք չեմ տեսել, ինչո՞ւ արիւնը գլուխդ է տել և ակամայ արցունք ես թափում:

Բարեսիրտ երիտասարդը չկարողացաւ իրեն զսպել և տեղի տալով իր վշտերին, գլուխը չենած մօր կրծքին՝ սկսեց բարձրաձայն լալ և վերջապէս մեղմութեամբ ասեց. ուղիղն ասած՝ հօրս խօսքերն այսօր ինձ սաստիկ վիրաւորեցին, որոնց ոչ այսօր և ոչ էլ մի ալլ անգամ արժանի չեմ եղել, քանի որ ծնողներիս պատեւելն միշտ եղել է իմ ամենամեծ բաղձանքն և նրանցից խելօք և խմատուն ոչ ոքի չեմ ճանաչել, որովհետեւ երեխայութեանս ժամանակից զգօնութեամբ կրթել են ինձ: Իմ ընկերներից շատ բան եմ համբերութեամբ տարել, երբ նրանք իմ բարեսրտութիւնս ի չարն էին գործ դնում, նրանք ինձ շատ անգամ քաշքշիւ և հարւածել են, բայց եթէ ծաղրում էին հօրս, երբ նա կիւրակի օրը ծանր քայլերով տուն էր վերադառնում, և եթէ ծաղրում էին նրա դգակի ժապատէնը, ծաղկազարդ քնազգեստը, որ նա վայելչութեամբ հաքնում էր, այն ժամանակ բռնեցքներս կծկւում էին, սոսկալի կատաղութեամբ չարձակւում էի նրանց վրայ և առանց նայելու

զարկում էի ուր որ պատահում էր, նորանք արիւնոտած քթերով լալիս էին և հազիւ էին կարողանում ազատել ոտներիս և բռնեցքներիս հարւածներից: Այդպէս մեծանում էի ես, որ հօրիցս վիրաւորանքներ կրեմ, որ ուրիշների փոխարէն յաճախ ինձ վերայ բարկանայ, խորհրդի ատենում նրան զժգոհութիւն պատճառելուս, պէտք է նրա ընկերների նենգութեանց և վիճաբանութեանց պատիժը քս կրեմ: Շատ անգամ զու ինքդ ինձ ցաւակցելես, որովհետեւ ես ստիպւած եմ եղել վիրաւորանք կրել, միշտ աչքի առաջ ունենալով ծնողներիս բարեւարութիւնը, որ նրանք միայն մոռածում են իրենց ունեցածն աւելացնել և ինձ համար կայք յետ գցել: Բայց ան, ոչ միայն խնայողութիւնն է երջանկացնում, որ յետոյ որդիքը պէտք է վայելեն, զանձը, կայքը միայն չեն բախտաւորում, թէպէտեւ հարստութիւնը շատ հաճելի է: Բայց հայրը կը ծերանայ, նրա հետ էլ որդիքը, առանց սովորական ուրախութիւններ վայելելու և առանց ապագայի հոգսը հոգալու: Նայիր այնտեղ, ինչպէս գեղեցիկ և հիանալի են պողաւէտ դաշտերը և և ներքեւում այգին ու պարտէզները և յետոյ՝ շտեմարանները, զոմերը, դրանք բաւականաչափ կայքեր են: Ահա, այնտեղ էլ երևում է յետեւի տունը, որի վերելի չարկում երևում է իմ սենեակի լուսամուտը. յիշում եմ, ինչպէս անցեալ ժամանակներում այնտեղ գիշեր ժամանակ սպասում էի լուսնեակի դուրս գալուն և առաւօտեան՝ ժամերին արեգակի ծագմանը, երբ մի քանի ժամեաց առողջարար քունս բաւարար էր լինում: Այն, ինձ դատարկ են թւում թէ սենեակս, թէ բազը, թէ պարտէզները և թէ հիանալի դաշտը, որ բլուրների վրայով տարածւում է դէպի միւս կողմը: Այդ բոլորն էլ ինձ ամացի է երևում, որովհետեւ ամուսինն չունիմ:

Որդեակ, ծնողներդ քեզանից աւելի են փափագում, որ հարս բերես, որ գիշերը կեանքիդ գեղեցիկ մասը լինի, որ աշխատանքդ թեթեւանայ և սեպհական լինի քեզ: Կենք միշտ քեզ յորդորել ենք, նաև ստիպել ենք՝ ընտրել քեզ համար մի աղջիկ: Բայց ինձ յայտնի է և այժմ սիրտս է վկայում, որ երբ պատեհ ժամը հասած չի լինում և երբ ցանկալի աղջիկն չարմար բոլպ էին չի յայտնւում, ընտրութիւնը յետաձգում է, այդ ժամանակ յառաջանում է անտեղի երկիւղ:

Որդեակս, դու, կարծեմ, արդէն ընտրել ես: Սիրտդ գտել է և փափկել է: Համարձակ յայտնիր, հոգիս արդէն վկայում է, որ դու ընտրած պէտք է լինես այն արքայուն աղջկան:

Սիրելի մայրիկ, դու հասկացել ես, աշխոյժով ասեց որդին: Այո, հէնց նա է: Եթէ նրան այսօր տուն չբերեմ և նա գնաց ու պատերազմական այս խառը ժամանակներում ստիպւած լինի թափառել՝ այն ժամանակ ես նրան կը կորցնեմ: Այն ժամանակ, մայրիկ, իզուր է ապագայ տարիների արգասանդութիւնը: Այն ժամանակ ատելի կը լինեն ինձ համար տունն ու պարտէզները, աւանդ, մօրս սէրն էլ չի կարող մխիթարել ինձ, որովհետեւ ես զգում եմ, որ երբ սէրը իր կապերն է կցում՝ քանդում է միւս բոլոր հանգուցները:

Միայն աղջիկը չէ, որ թողնում է հօրն ու մօրը և հեռւում է իր ընտրածին, երիտասարդն էլ է մոռանում մօրն ու հօրը, երբ տեսնում է, որ նրա սիրած աղջիկը հեռանում է: Ուրեմն՝ թողէք գնամ, ուր տանելու է ինձ յուսահատութիւնս: Հայրս յայտնեց իր վերջնական կամքը, և նրա տունն այլ ևս իմը չէ կարող լինել, եթէ նա չընդունի այն աղջկան, որ ես ցանկանում եմ տուն բերել:

Բարեսիրտ և խելացի մայրն արագութեամբ վրայ բերեց. երկու աղամարդիկդ հօ երկու ժայռեր չէք միմեանց դէմ կանգնած, որ անշարժ ու հպարտ լինէք և չկարողանաք միմեանց մօտենալ և սրտանց խօսել: Չնայելով, որ այդ աղջիկն աղքատ է և հայրդ յայտնեց, որ աղքատ հարս չի կամենում ունենալ, այնուամենայնիւ ես յոյսս չեմ կորցնում, հայրդ կը նշանի քեզ նրա հետ, եթէ նա առաքինի և արթուն աղջիկ լինի: Հայրդ երբեմն բարկանալով մի որ և է բան մերժում է, բայց երբեք չի ջամատում և ջաճախ մերժածը կրկին ընդունում է: Նա պահանջում է խոնարհութիւն և այդ իրաւունքն էլ նա ունի, որովհետեւ հայր է նա: Լաւ յայտնի է, որ նա միայն ճաշերից յետոյ է բարկացած լինում, զա նշանակութիւն չունի, որովհետեւ այդ միջոցին նա տաքացած է խօսում և ուրիշների պատճառաբանութիւններին նշանակութիւն չի տալիս: Գինին զրգուում է նրա բոլոր ոցժը և նրա անզուսպ կամքը, այդ ժամանակ նա չի լսում ուրիշի խօսքերը և միայն իրանն է լսում:

Քայց երեկոյեան պահուն, երբ գինու զօրութիւնն անցած է լինում
և երբ զրուցել է իր բարեկամների հետ, նա շատ է մեղմացած
լինում, այն ժամանակ նա զգում է իր սխալը: Արի, զնանք, մենք
խեղճն կը փորձենք, միայն անյապաղ դործն է յաջողում:
Մեզ հարկաւոր են նոյնպէս մեր բարեկամները, որոնք հէնց այժմ
նստած են նրա մօտ: Շատ կ'օգնէ մեզ մեր պատական քահանան:

Այսպիսի ճարպիկ խօսքերից յետոյ, ինքը տեղիցը բարձրացաւ
և քաշեց, վեր կացրեց որդուն քարի վրայից. և երկունն էլ զնացին,
մտածելով այդ դործի մասին:

(Շարունակելի)

ԻՄ ՕՐԱԳՐԻՅ

ԱԼԵԿՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

I

Աստ ինձ, մանուկ, չքնաղ արարած,
Որ այս կախարդիչ, լուսնեակ գիշերին
Սիրավառ կրճքիս գլուխդ խոնարհած՝
Ականջ ես դնում իմ ջերմ երգերին, —

Արդեօք իմ ձայնը քո մատաղ սրտում
Գտնում է սիրոյ քաղցր արձագանք.
Թէ երգըս անուես ցնդում է օդում,
Որ վաղն ինձ բերէ նոր ցաւ ու տանջանք...

II

Գեղեցիկ աչեր, սևորակ աչեր,
Որ սիրած կուսիս նազելի դէմքին
Նոդում էք, որպէս վառվռուն աստղեր —
Դուք կախարդեցիք իմ ազատ հոգին!

Եւ ահա, որպէս ձեր հըլու գերին,
Ես ձեզ եմ, աչեր, երգում ու գովում.
Ա՛խ, եթէ ե՛՛ս ձեր չքնաղ տիրուհին
Երգըս փայփայէր իւր մատաղ կրճքում...

III

Քո վարդ շրթունքից ջերմ համբույր քաղած,
 Կուրծքըս ալեկոծ ոսկի՛ շոյսերով,
 Ահա, իմ հոգեակ, ուրախ, սըրտաբաց
 Նորից նեռում եմ ես ինձ կեանքի ծով...

Թող գոռ ալիքներ իմ շուրջըս եռան.
 Միշտ անյաղթ կը մնայ իմ սիրող հոգին!
 Միայն այդ ծովում, փարոսի նման,
 Դու լուսաւորիր իմ մռայլ ուղին...

1894 թ. Մոսկւա:

ԵՐԱՋ ՕՐԵՐ

(Գիշերօթիկի մը յուշատետրէն)

Շ Ա Ն Թ Ի

(Շարունակութիւն 1)

Յուլիս 2

Շաբաթւան մը չափ է սկսած ենք մեր աշխատութիւնը: Օրիորդն ալ, ես ալ մեծ եռանդով ենք զործին յարած. նոր փափագ է:

Ամեն օր որոշեալ ժամին մեծ անհամբերութեամբ կը վազեմ օրիորդենց պարտէզը, ուր իրենց սուերոտ հովանոցին տակ զբաղւելու կը նստենք: Այդ տեղը օրիորդը ընտրեց՝ յիսանգարւելու համար: Ես գրքերէս զատեցի «Դաւիթ բէգը»:

Արդէն քանի մը գլուխ կարկացած ենք: Օրիորդի ընթերցանութիւնը գէշ է. նոր բառերը քիչ մը կը կըզէ: Ջարմանալի յիշողութիւն ունի: Սնյաղօրէն կը լսէ, թէ լեզւին, թէ մեր կեանքէն, թէ տեղական և թէ պատմական բացատրութիւններս, որ անդադար տոխաւած եմ ընելու ընթերցման ատեն. երբեմն այնքան լուրջ ու մտախոհ, որ նոր սկսած ատեննիս կը կարծէի թէ ուշ չի վարձներ: Օր օրի զարմանքս կ'ածի. իր հարցերը հոգեկան ծածուկ խորհրդածութիւններ, կասկածներ, զժողովութիւններ կը մատենէ:

1) Տես «Մուրճ» 1894 թ. № 11—12.

Ես ինչ սխալ դադափար էի կազմած այդ աղջկան վրայ երեւոյթէն դատելով: Ան ինձի համար զւարթ, անհոգ, պատրաստաբան, գեղեցիկ, հոգեկան նուրբ զգացմունքներէ զուրկ, ամեն քիշատ լուրջ հարց է յորանջող Պզրուհի մըն էր. իսկ հիմն, հիմա իր տպաւորութիւնը անոր համար աւելի մեծ է, որ բնաւ չէի սպասեր: Հիմա ինքնիրենս կը հարցնեմ. միթէ այդ սիրուն, աշխարհիկ կեղեկն տակ խորունկ հոգի մը կար պահւած. և շիտակը չգիտեմ ինչ պատասխանեմ. վերջին երկու շաբաթւան մէջ այնքան արագ ու իրար ետեւ սկսան կրած տպաւորութիւններս փոխել, որ հաստատ բան մը ըսելու այլ ևս չեմ համարձակիր:

Այսչափը մենակ ինձի համար պարզ է, որ մեր այս նոր աշխատութիւններէն չափազանց դո՛հ եմ ու ոգևորւած:

Ձևականութիւնները շատ շուտով վերջացան մեր մէջէն. ոչ միայն իմ և օրիորդի, այլ և մեր երկու ընտանիքներու մէջէն: Ամարանոցի մենութիւնն ու ազատութիւնը, երկու դարեկից տիկիններու սրտակցութիւնը, երիտասարդներուս իրարու հետ կապւելը՝ պատճառ եղաւ մեր ընտանիքներու աւելի սերտ ջարտբերութեան:

Տիկինները շուտ-շուտ իրարու կ'այցելեն. պ. Կարապետը զրեթէ ամեն օր ճաշէն վերջը մեզի է. պ. Մկրտիչի հետ նարտ կը խաղայ:

Գալով ինձի՝ ամեն օր ճաշէն առաջ արդէն անոնց եմ. իսկ ճաշէն վերջն ալ երթալու ամենեւին զժւարտութիւն չունեմ. մեր զբաղումները իմ ազատ անցագիրս է:

Եւ Զ.-երու տանը զբաւած դիրքս նախանձելի կրնայ համարւիր: Պր. Կարապետը բացարձակապէս ինձի կը համակրէ, քանի որ լիակատար միջոց կու տամ իրեն նկարչութեան վրայ խօսելու. ան բնաւ քրոջը գործին չի խառնւիր, բնաւ: Օրիորդիս մայրը ինձի սիրեց առաջին օրէն: Թէև կը վախնայ, որ մտաւոր աշխատութիւնը իր աղջիկը կը յոգնեցնէ, բայց և այնպէս մեր պարապմունքներուն արգելք չէ. մանաւանդ որ օրիորդը տան մէջ բոլորովին անկախ դիրք մը ունի, դեռ քիչ մըն ալ տիրապետող: Վեցամեայ Կատեան վրաս կը խնեթանայ. երթալուս պէս թւերուս ու ծունկերուս վրայ է: Նոյն իսկ բաց-դեղին մագերով, կապուտաւի ռուս

սպասուհին առանձին փութկոտութիւն մը ունի դէպի ինծի ու միշտ ժպիտ մը իր շրթունքին:

Յուլիս 7

Քանի առեն է սովորութիւն եմ ըրած, երբ ցորեկէն տաքը քիչ մը կը կոտորի՝ կ'առնեմ զրքերս ու կ'երթամ լեռան լանջն ի վեր՝ անտառակը, որ մեր տան ետևօքն է:

Արածաչր գաւազանիս յեց՝ կը բարձրանամ մինչև հոն, ուր խումբ մը ծառեր իրար զրկելով բաւական սիրուն բնական հովանոց մը կազմած են, թէև շրջակայքը ընդհանրապէս անտառութենէ ելած է արդէն:

Կը նետուիմ գետին ու կը կարգամ:

Երբ մի յոգնեմ, կը նետեմ գիրքս՝ խոտերուն մէջ ու կը փռւեմ կռնակիս վրայ: Հովանոցի ծակերուն մէջէն կը դիտեմ երկնքի մաքուր բաց-կապույտը, ուր հազիւ երբեմն ամպի փռեկտումներ, մշտափոփոխ երազական էակներու նման, հանդարտիկ կը լողան:

Եւ ես կը թաղւեմ այդ կապույտին մէջ մտքերս ցրիւ, զգացումներս անորոշ, կէս արթուն, կէս անրջոտ... մինչև իրիկւան դէմ արթնցող հովը շարժէ հովանոցիս կանաչ գմբէթը ու ես սթափիմ:

Այդ սթափման վայրկեաններուն յաճախ կը մտածեմ մեր առաւօտեան պարապմունքներուն վրայ, մեր ընթերցման վրայ: Այդ աշխատութիւնը արդէն կեանքիս մէջ մեծ տեղ մը դրաւած է հիմա. անդադար նոր ծրագիրներ կը պատրաստեմ. յաջորդ օրուն կարդալիքնիս աչքէ կանցնեմ. խօսելու էական հարցերը կ'որոշեմ. շարագրութեան նիւթ կը փնտռեմ. կամ չիշողութեանս մէջ կը վերադարձանք մտաւարտեան խնդիրները, վէճերը, աղջկան ընթերցումը, ձայնը, դիրքը, իր ժպիտը, նայւածքը:

Այս իրիկուն նոյն այդ դիրքին մէջ կը երազէի, երբ տարօրինակ հարց մը ծնունդ առաւ ուղեղիս մէջ. եթէ Վարդուհին տեղ ուրիշ մը լինէր այսպէս պիտի աշխատէի: Բաւական խորհեցայ որոշ պատասխան մը տալու վարանելով: Բաց կ'ըզգամ, որ ոչ պիտի խոստովանիմ. դիմացինիս աղջիկ մը լինելը ոգևորութեանս վրայ մեծ ազդեցութիւն ունի. մանաւանդ այս տեսակ աղջիկ մը,

որ որքան տարօրինակ է, այնքան ալ սիրուն: Ես արդէն սկսած եմ գիտակցել, որ մեր պարապմունքները ինծի համար պարզ զբաղում մը լինելէն առաջ անփոխարինելի հաճոյք մըն է: Հաճոյք, այո՛. նստած դէմդէմի հովասուն բազեղներուն տակ, յենւած մարմարէ կլոր ու նեղ սեղանի մը, այնքան նեղ, որ երբ երկուքս ալ քիչ մը հակինք՝ մազերնիս իրար կը շօցեն. անուշ, ներզաշնակ կանացի ձայն մը, որը կը թրթռաց իրեն յատուկ աղւոր շեշտերով. և գինիի պէս կը զինովցնէ ինծի ու կ'ոգեւորէ: Ես այդ ոգեւորութեան կը պարտեմ տւած սրտալիր բացատրութիւններս, որոնք երբեմն շատ հեռունները կ'երթան ու վերքեր կը ծնեն. ա՛յ, այդ վերքերը, ձայներնիս իրարու կը հիւսւին. և աղջիկը իր մէկ հրապուրիչ սովորութեամբը ինծի լռեցնելու կամ առարկութիւնս արգելելու համար՝ անդադար ձեռքս կը բռնէ. երբ իր քնքուշ մատներուն տակ դաստակիս սեղմելը կ'ըզգամ՝ սարսուռ մը կ'անցնի մարմնէս. է, աղջիկ մըն է վերջապէս:

Յուլիս 11

Այսօր վերջացուցինք վէպի առաջին մասը. թարմ տպաւորութեան տակ սկսանք խօսել այդ մասի գեղարւեստական թերութիւններու ու գեղեցիկ կտորներու վրայ: Այս զբաղումը մեզի այնպէս կրանած էր, որ ժամանակի անցնիլը բնաւ չնկատեցինք: Այն ատեն միայն ուշքի եկանք, երբ սպասուհին հովանոց մտնելով մեզի ճաշի հրաւիրեց: Ես ուղեցի մեկնիմ, բայց տիկնոջ ու պ. Կարապետի միահամառ ստիպումներու առջև տեղի տալու հարկադրեցայ:

Պ. Կարապետը ճաշէն վերջը ինծի իր աշխատանոցը առաջնորդեց, ուր մինչև հիմա գրէթէ շնորհքով չէի մտած:

— Իրաւ, թէև ցոյց տալու բան մը չունիմ, աղւոր կտորներս Թիֆլիս եմ ձգած, ըսաւ պարոնը նախապէս. բայց և այնպէս, գիտե՞ք, մարդ միշտ հաճոյք կը զգայ իր աշխատութիւնը ուրիշի մը ցուցնելով:

Եւ պարոնը բնաւ այդ հաճոյքը չզլացաւ իրեն՝ ի հաշիւ իմ ձանձրոյթիս: Ժամերով ինծի մէկ կիսատ ներկերու մէջ թաթախած կտաւի առջևէն միւսին առջևը կը քաշէր. անդադար խօսե-

լով, մեկնելով, բացադրելով նկարներուն նիւթը, իր նկարելու եղանակը, փաստեր կը բերէր նկարիչներուն խօսքերէն ու կեանքէն:

Ես անքաղաքավարի ու տղէտ շերենալու համար մէջէմէջ բան մը կ'ըսէի կամ կը հարցընէի, թէն իր այդ շատախօսութիւնը ինծի այնքան հետաքրքրական էր, որքան իր նկարելիք պատկերներուն ուրազները:

Վերջապէս դարձանք սենեակ:

Տիկինը առաջարկեց աղջկանը բան մը նւագել դաշնակի վրայ:

Օրիորդը սովորական չկը ձանձրացնեմ և այլն դարձածներէն վերջը՝ բացաւ դաշնակը ու աթոռակին վրայ նստելով՝

— Ի՛նչ կուզէք, հարցուց ինծի.

— Ի՛նչ որ կը կամենաք:

Ժողտեցաւ՝ չգիտեմ ինչու. վարկեան մը եղունկները դիտեց. արագութեամբ դուրս քաշեց ձայնատետրերու կոյտէն մէկը ու սկսաւ թխտատել. այնպէս արագ, որ հազիւ կրցայ տետրակի երեսին Մենդելսոնի անունը կարդալ:

Նւագել սկսաւ:

Ես դաշնակի քովը կեցած՝ կը դիտէի իր երկար, ձկուն բարակ մատները, որոնք դաշնակի մատներուն վրայ կը վազէին. իր կարճ կորած մազերը, որոնք ամեն ցնցման ուսերուն վրայ կը դողդաջին, իր նուրբ ու պինդ կծկած շրթունքները, իր ձայնատետրին չառած-զամած վառ աչքերը. և այդ բոլորը չափազանց հմայիչ կը թուէր ինծի երաժշտական ալիքներուն միջէն:

Քիչ մը վերջը կ'անջատուէի. ու խոհուն դէմքով՝ փոխանակ տուն երթալու՝ իջայ շիտակ ձորը ու կրթնեցայ մամուռ ժայռի մը, որու վրայ անճոռնի, ծուռ ու մուռ ուռի մը սուեր կը ձգեր:

Անշարժ կէսնստած, կէսցենած ականջ կը դնէի երկար դետի աղմուկին ու կը դիտէի անոր բիւրաւոր դալարութիւնն ու ոլորուն պտոյտները:

Ժամերը կը թռչէին՝ դիտէի. բայց չէի ուզեր տեղէն երեւրամ. տեսակ մը մեղկութիւն տիրած էր վրաս: Կը ցանկաջի այդպէս մնամ անշարժ, այդ աղմուկին մէջ անվերջ խոհուն... բայց ինչ կը խոհէի. ոչինչ. կամ գրէթէ ոչինչ. երազի պէս բան մը էր այն. երանգ, ուր դաշնակ մը կար և որու վրայ Վարդուհիի մատները կը վազէին...

Յաւիս 17

Իմ սրդի բոլոր մտածումներս կեդրոնացած են միայն մեր միասին պարապման ժամերուն վրայ: Առաւօտները անբնական անհամբերութեամբ որոշեալ ատենին կը սպասեմ. ու միշտ տեսակ մը անհանգիստ ուրախութեամբ կը վազեմ Զ. երու տունը, ուր սովորաբար պատշգամբի վրայ կը հանդպիմ օրիորդին, որ նոյն անհամբերութեամբ կարծես ինծի կըսպասէ:

Ան ալ բոլորովին ոգևորւած է հիմա մեր զբաղումներէն: Գրքին մէջ նկարագրւած այդ հայ կեանքը, այդ հայ տիպարները բուն հայկական հողին վրայ, այդ մեր լեռնական պզտիկ անցեալը մեր հիանալի լեռներուն վրայ, օրիորդին համար բոլորովին նոր այդ աշխարհը հիմա սաստիկ կը հետաքրքրէ անոր հոգին ու կը ջուղէ: Եւ երբ կը մտածեմ, թէ իմ ներշնչման ջերմութեան տակ փթթեցաւ այդ թարմ ու նոր զգացումներու ծաղիկը՝ կուրծքս հպարտութեամբ կ'ուռի:

Յաճախ կը պատմեմ անոր մեր կեանքէն, գաւառէն, մեր բնութեան գեղեցկութիւններէն, ժողովրդի դառնութիւններէն. կը նկարեմ անոր երազներս, այդ հողին վրայ ծլելիք ապագայ քաղաքակրթութիւնը. կը գծեմ անոր մեր բոլորիս պարտքը եղող աշխատանքը այդ երազական ապագային մերձեցմանը քայլ մը աւելի ընելու համար:

Աղջիկը կը լսէ ինծի՝ աչքերը աչքերուս:

Կամ աղջիկը ինքը կը պատմէ ինծի իր կեանքէն, կը դժգոհանայ մեր հասարակական կաշկանդող պայմաններէն, կը նկարագրէ Բորժոմ անցուցած նախորդ ամառը, իր մանկական յիշատակներէն, իր դպրոցական կեանքէն. մանր ու խոշոր, հետաքրքիր ու երկրորդական անվերջ նիւթեր, որոնք սակայն անհուն ուշադրութեամբ մը կ'ունկնդրեմ:

Ու հետզհետէ մեր գաղափարները կը նոյնանան, մեր ձգտումները իրարու կը մօտենան, մեր իդէալները, մեր անուրջները իրարմէ գոյն ու ձև փոխ կ'առնեն:

Եւ մենք այդ կըզգանք. փոխադարձաբար, ու ալ աւելի իրարու կը մօտենանք:

Անտարակոյս այդ է պատճառը, որ ես ալ օր օրի աւելի
կը զբաղւիմ իրմով:

Երէկ առաւօտ կեանքիս մէջ առաջին անգամ աղջկան մը
վրայ խորհելով քունէս արթնցայ:

Այս բոլորը ինծի համար նոր է, բայց չեմ զարմանար: Այս
աստիճանի մտերմութիւն ու շփում ոչ մէկ աղջկան հետ չեմ ու-
նեցած. պարզ է, որ դէպի ոչ մէկն ալ այս աստիճանի հետաքրք-
րութիւն չի տածէի:

Քանի օր է սովորութիւն դարձուցի՝ ընթերցանութենէն վերջը
միշտ բան մը նւագել կուտամ օրիորդին մեկնելէս առաջ:

Եղանակի մը ներդաշնակութեան մէջէն աղջիկը վրաս տարօ-
րինակ հաճելի տպաւորութիւն մը կ'ընէ:

Եւ կարծեմ անպիտանը արդէն նկատած է այդ:

Այսօր երբ կարդացած գլուխը վերջացուց, գոցեց դիրքը ու
աչքերը նշանակիչ կերպով մը կը ծկելով՝

— Արդեօք չէք ուզեր, որ նորէն բան մը նւագեմ, պ. Երւանդ.
հարցուց ինծի չարամիտ շեշտով մը:

Ու ժպտեցաւ շեշտուկ աչքերուս խորը նայելով:

Զգիտեմ ինչու դողացի այդ ժպիտէն ու այդ նայւածքէն:

Դեռ չէի պատասխանած, որ աղջիկը քաշեց ձեռքէս, (սնդաց,
մազերը քակտէն ետ նետեց ու ներս սլացաւ:

Ես ալ ետէն:

Դաշնակը կը թնդար:

Տարբեր ոգևորութեամբ մը կը նւագէր այսօր. զանգը կը դող-
դղար, մազերը կը ցատկուտէին, այտերը վարդ էին կտրէր, աչքերը
կը վառէին ու թարթիչները արագ կը թարթէր. շրթունքները
շուտ-շուտ կը կռկէին ջղաձգօրէն ու դաստակները կ'ոտոտտէին
անդադար:

Եւ այս բոլորը իրարմէ յանդուգն, իրարմէ ներդաշնակ, իրարմէ
կայտաւուն շեշտեր դուրս կը ցայտեցնէր եղանակի թաւալման մէջէն:

Ու ես յուզւած կ'երազէի, թէ լսածս եղանակ մը չէր, այլ
չարածճի աղջկան եթերային մարմին մը, որ աչքերուս դէմ արագ
կը դառնար արեւելեան պատի մը բոլոր քմահաճոյքներովը, և այդ
եթերէ մարմինը, ան, ինքը Վարդուհին էր այդ...

Յանկարծ դաշնակը վերջին թօն մըն ալ ժայթքեց ու նւագը դադրեցաւ.

—Սթափեցայ...

Վարդուհին բուռն շարժումով մը դարձաւ իր փոքրիկ, կլոր աթուակին վրայ ու իր սիրուն ժպիտը շրթունքին.

—Գոհ էք, ըսաւ:

Նրեւի դէմքիս վրայ նկարւած էր յափըշտակութիւնս. և աղջիկը հըպարտ իր ազդեցութենէն,

—Ձէք պատասխաններ, կրկնեց դէպի ինծի գալով:

—Հիանալի է, շնորհակալ եմ, բացականչեցի ես, ցատկեցի ոտքի, սեղմեցի ձեռքը. ու այլ ևս չէի ուզել ձգեմ. անալ իմս կը սեղմէր...

Տուն հանդիպեցայ միայն. և առանց ճաշելու՝ պատրւակով մը իջայ ձոր:

Սկսալ գետի ափովը վար քալել, ցատկելով քարերու վրայէն, բնաւ ուշ չգնելով, որ կէս օրւան արեւը դուրսս կ'այրէր:

Ոչինչ չէի մտածեր. ուրախ էի, ուրախ էի, թէ տրտումս ինքս ալ չգիտեմ. բայց ուզեղս սաստիկ զբաղւած էր:

Յանկարծ զգացի, որ սաստիկ յոգնած եմ. կանգ առի ծառի մը տակ.

—Այս ինչ է, Աստուած իմ. ես ինչ կ'ընեմ, հարցուցի բարձրաձայն:

«Զինի անց է սիրահարելը» անցաւ մտքէս փայլակի պէս. ու սաստիկ կարմրեցայ:

Նորէն սկսալ արագ արագ վար վազել գետի ընթացքով, կարծես ետեւէս կը վազէին: Յանկարծ նշմարեցի, որ առջևս թանձր ծուխ մը կար, դիտեցի՝ գետնէն կը ելնէր. հասկըցայ, թէ ինչ էր. թումբի մը ետեւէն մարդու պէս բաներ դուրս ելան՝ սև-սև, թոթաւեցի ինքզինքս ու հասկըցայ. ածուխ կը շինէին:

Գլուխս կը դառնար, նստեցայ քարի մը վրայ. նստելուս պէս առաւութեամբ արիւն սկսաւ գալ քիթէս. արեւը գլխուս զարկեր էր:

Դրէթէ ամբողջովին թրջւած էի, որ վերջապէս արխնը կտրեցաւ:

Զգացի, որ անօթի եմ. անխաղործները ինծի երկու կտոր

սեցած լաւաշ ու պանիրի պէս բան մը տւին, որ անբացադրելի ախորժակով ուտել սկսայ:

Ժամանակը ուշ էր. իսկ ես բաւական հեռացած էի Նիլիջանէն: Ելայ արքունի ճանապարհը. արեւ չի կար հոն, վրաս լեռան սուերն էր: Կռնակէս անուշ հով մը կը փչէր:

Գլուխս բոլորովին հանդարդած էր արդէն. ու սկսայ կանոնաւորապէս մտածել անցած դարձածը:

«Սիրահարւած եմ» նորէն անցաւ մտքէս: Ժպտեցայ: Ի՞նչ խենթութիւն: Անթի էի, արեւը գլուխս զարկած էր ու մանաւանդ նւագի ալ բուռն ազդեցութեան տակ. ահա բոլորը: Սիրահարւած. ա՛յ, ի՞նչ միամիտ եմ չեմ. աղջկան մը հետ չորս-հինգ օր տեսնեցայ, հետը քանի մը երես վէպ կարդացի ու արդէն կը կարծեմ, թէ սիրահարւած եմ:

Յուլիս 18

Երէկան զէպքէն իվեր Վարդուհիին հանգիպելու զժկամակութիւն մը կար մէջս: Ուրախութիւնս անչափ եղաւ, երբ պառաւը ներս մտնելով յայտնեց երիտասարդի մը ինծի փընտուլը և երբ զուրս վազելով Սիբայելի հետ ճակատ ճակատի գըտնուեցայ.

—Միքայէլ:

—Երւանդ:

Ու խոշոր ուսանողական համբոյր մը:

—Վերջապէս, եղբայր. անհամբեր քեզի կը սպասէի. Նիլիջան եկար, որ քեզի պտոցնեմ, կըսէիր. եկայ ու դուն չիկաս. անչա՛ս խոստումդ:

—Կեցիր. իմ խօսքս խօսք է. ի՞նչ գիտենացի, որ գալու էիր: Միւս կողմէն ալ Միսակը նամակ նամակի վրայ կը գրէր, որ անպատճառ քանի մը շաբաթ Նոր-Բաջազիդ իրենց երթամ:

—Ո՞ր Միսակը. մեր ընկեր:

—Այո՛:

—Իրաւ. ի՞նչպէս է, ի՞նչ կ'ընէ:

—Ի՞նչ պիտի ընէ. աօտուները ոտանաւոր կը թիւէ, ցորէկները ձկնորսութիւն կ'ընէ, իրիկուններն ալ սիրահարութիւն:

—Որո՞ւ հետ:

—Երեսնէն ընասնիք մը եկած է. մէջը սիրուն աղջիկ մը կայ. բայց հիանալի, լուսին:

—Է՛, լուսնի պէս աղջիկը ես չեմ սիրեր. շատ պաղ է:

—Թող լինի արեգակ. տաքցան:

—Այդ ուրիշ խնդիր:

—Ի՛նչ կըսէի. հա՛. աղջկան աչքը խածեր է. քանի մը նայաւ, քանի մը ձեռքի սեղմումներ, մէկ-երկու ոտանաւոր ու գործը եփեր են: Մեր Միսակը գիտես ա՛. հիմա թռչունի պէս կեանք կը վարէ. գիրք-միրք բոլորը գտեր է: Բայց դուն ի՛նչ կընես:

«Միսակի ըրածը՝ անցաւ մոքէս չգիտեմ ինչու. ու թեթեւ կարմրութիւնս ժպիտի մը մէջ խեղդելով՝ ըսի.

—Կը կարգամ՝ ու կը պալլտիմ. ո՛հ, եղբայր, աղէկ որ եկար. ամուսն մը չափ է եկած եմ, դեռ չորս կողմս ինչ լինելը չգիտեմ. միտքս դրել էի ձի մը վարձեմ՝ ու շրջակայքը պալլտելու ելնեմ. գիտես որքան կը սիրեմ:

—Լա՛ւ ես մտածեր. մենակ ձի վարձելդ այլ ևս աւելորդ է. եթէ անպէտք ստակ ունիս՝ դուն ինծի տուր. ես ծախսելու տեղը գիտեմ: Մեր ախոռը երկու սիրուն ձի կայ. մէկը քեզի, մէկը ինձի. մէկը իմս է, միւսը եղբորս. եղբորս ձին դուն չես կրնար սանձեր. այն ես կ'առնեմ ու իմս քեզի կուտամ: Բայց ո՛ր երթալ կ'ուզես:

—Սար, ձոր, անտառ, աւերակ, գիւղ:

—Լա՛ւ. կը յաջողցնենք. բայց ինծի նայէ՛. կեցի՛ր. աղէկ միտքս եկաւ. վաղը փոքրիկ ճանքօրդութիւն մը ընել կ'ուզեմ:

—Այսինքն:

—Հոսկէ հինգ-վեց ժամ հետո անտառին մէջ փոքրիկ գիւղ մը կայ. գիւղի Տէրութիւն հետ եղբայրս գործ ունի. վաղը երթալ պիտի. ինծի առաջարկեց իրեն ընկերանալ՝ մերժեցի. քանի մը անգամ գացած եմ. հիմա եթէ կ'ուզես երկուքով կը միանանք անոր. որքան շատ, այնքան լաւ. ճանապարհը քիչ մը ապահով է:

—Ո՛հ, ամենայն սիրով. բացականչեցի ես՝ ուրախութիւնէս Միքայելի ձեռքը սեղմելով:

—Աղէկ, աղէկ. ես այս գիշեր գործը կարգի կը դնեմ. վաղ առտու կանուխ պատրաստ եղի՛ր. քեզի կ'առնինք ու կը մեկնենք:

Այս գրածդ ինչ է. հարցուց յանկարծ սեղանիս վրայի բաց տետրակը թերթերով:

— «Նախընթաց իրիկունը» կը թարգմանեմ:

— Իրաւ, Ասուած քեզի համբերութիւն տայ. չէ, ես չեմ կրնար. կարգալը ձմեռը նորէն բան մըն է. այն ալ կարգալը, ոչ թէ գրելը. այն ալ զպրոցին մէջ, երբ չորս կողմէ՞ ուսուցիչները վրադ հաս-հասի պէս կեցած են: Հա, ուսուցիչ ըսի՝ միտքս եկաւ. գիտեմ. Օ.-եան Բայազէդ է:

— Է է:

— Առանց է-ի:

— Ի՞նչ կրնէ:

— Ինչ պիտի ընէ. սիրուն կնիկը թեւ առեր կը շրջի. ու ձմեռան միջի տալիք շարադրութիւնները կը որոճայ: Իրաւ. ամառնային շարադրութիւնդ գրած ես:

— Դեռ վրան ալ չ'եմ նայած:

— Կեցցէ՛ ուսանողութիւնը. տեսար մի'. այդպէս ընկեր լինելու է. եղբայր, ինծի այնպէս երկար-բարակ բան մը տւեր է, որ եթէ ամբողջ ամառը շարչարւիմ, տակէն չեմ կրնար ելներ. ես ալ մտածեցի՝ բնաւ տակը չմոնեմ. ինչ կըսես տրամաբանութեանս:

— Հիանալի է:

Պահ մը լռեց ու սկսաւ չորս կողմը աչք ածել:

— Օհ, գիտնական ես զարձեր գլխուս. որ կողմ դառնաս գիրք ու պատկեր. ամենեւին մարդու շնորհք չի կայ. փտտիս պիտի, եղբայր: Այս աղջիկը ո՞վ է. աւելցուց յանկարծ՝ հայելիին անցուցած լուսանկարի մը առջև կենալով:

— Մեր դերասանուհիներէն մէկը:

— Ի՞նչ սիրուն է շունշանորդին: Բայց կատակը մէկ դի. այս ի՞նչ է. պատկեր, զարդեր, ծաղիկներ, աղջկան սենեակ. մարդ երկու օր հոս ապրի թուլամորթ բան մը կը դառնայ. է, դուն ժողովրդի մարդ չես. հասկցայ՝ բանի պէտք պիտի չի գաս: Վաղը... հա, վաղը չլինիր. օր մը քեզի սենեակս տանիմ, մարդու սենեակ տեսնիս. պատէն կախած է եղբօրս հրացանը, իմ ատրճառակս, ձիուս սանձը, տեսնելու ես ինչ սիրուն է. միհատիկ պատկերս պզտիկ պատուհանս է, ուրկէ ամբողջ ձորն ու ձորի միւս ափը կը երևայ:

Թէև սեղանիս վրայ ջրի փարչեն ու սանդրիս քովիկը, երկու տետրակ ու երեք գիրք կայ, բայց մինակ զարդի համար, եթէ չես հաւատար՝ վրայի փոշին չափէ:

Մեզի ճաշի կանչեցին: Ընկերս ներկայացուցի: Միքէն ամբողջ ճաշի ատեն շատ քիչ խօսեցաւ. ճնշած կը երևար. ու հազիւ քանի մը պատառ բան կերաւ:

Ճաշէն վերջը նորէն առանձնացանք. ու երկար խօսեցանք, կամ աւելի ճիշտ՝ խօսեցաւ: Պատմեց Միսակի հետ անցուցած երեք շաբաթը. Թէ ինչպէս անգամ մը Սեանի վրայ նաւարկած ատեննին պիտի ընկղմեն եղեր, Թէ ինչպէս լեռը շրջած ատեննին քիւրդ հովիւներուն հետ կռիւ են բռնուեր, Թէ ինչպէս ուրիշ անգամ մը զինուորական ձեռնալով խեղճերուն հետ խաղի են ելել, և այլն:

Ուշ ատեն գնաց, վաղ առաւօտ կանուխ պատրաստ լինես վերստին պատուիրելով:

Ընկերոջս երևիլը վրաս շատ աղէկ ազդեց. կարծես լեռնական հով մը դէմքս պարուրեց. Թարմ, առողջ լեռնական հով մը:

Յուլիս 10

Նոր էի հագուեր, արևն ալ նոր էր ծագեր, որ եկան: Դիմաւորեցի: Միքայէլը ինծի իր եղբօրը ծանօթացուց: Կարճահասակ մարդ մը, ջղուտ, մեծ գլխով, խճուճ մագերով. խոշոր, կենդանի աչքեր, հայու քիթ. ճիշտ իր եղբայրը. երեսուն տարեկան կը լինի: Երկու եղբայր ալ հագած էին տեղական կտորէ տաբաղներ, ոտքերնին չուշա, գլուխնին մէկ-մէկ ուսական ճերմակ գլխարկ, մէջքերնին մի-մի դանակ և ուսերնին հրացան:

— Պատրաստ ես. հարցուց Միքէն՝ վերէն վար հայեացք մը ձգելով վրաս՝ կարծես իր հարցը ստուգելու համար: Նախ այդ ժամացոյցդ վրայէդ հանէ. քիւրդ հովիւներուն տխորժակը կը գրգռես:

Հնազանդեցայ ու պառաւին տւի ժամացոյցս:

Ուղեքսակիդ մէջը ի՞նչ կայ. հարցուց կրկին ուշադրութեամբ վրան նայելով:

— Մանր-մունր բաներ:

— Այդ մանր-մունր բաներն ալ հանէ. այդ չիմար տոպրակի

փոխարէն մուտք տրածանակա կախէ. ըսաւ՝ իր վիզէն ատրճանակի տուփը հանելով:

— Ես ալիկէ ունիմ. ըսի հանդերձիս տակէն փոքրիկ շրջահարս ցոյց տալով:

— Ա՛յ, ադոր հաւնեցայ. եթէ այդպէս է, մուտք հրացանս. վերջապէս երեցող զարդ մը վրայդ պէտք է:

Առի այդ զարդը, նետեցի ուսս:

— Հանէ տեսնիմ՝ այդ աղջկան կօշիկներդ, շարունակեց կատարեալ անտարբերութեամբ:

— Ինձի բոբիկ պիտի ձգես:

— Ե՛ղբայր, դուն իմ շորձիս մի՛ խառնիր. քեզի հանէ կըսեմ. քու ինչ գործդ է: Զուշտերը չիտմս, դարձաւ եղբօրը ծիծաղելի հպարտութեամբ մը:

— Նոր էի առեր ու դեռ չեմ հագեր. ինչ և է. ալ քեզի կը նւիրեմ. աղւոր է. աւելցուց՝ քիթիս բերնիս դեմ բերելով ծայրերը վեր դարձած զոյգ մը զարաբաղի շուշու:

Ես տղայական ուրախութեամբ խլեցի ու Միքէի օգնութեամբ անցուցի ոտքս ու կապիքները կապեցինք:

— Տէս, հիմա կարգի եկար. չարդէ գլխարկդ աղէկ է. հեծի՛ր, հրամայեց:

Յատկեցի ինծի սահմանաւ ձիուս մէջքը:

Երկու եղբայր վրաս նայեցան քննող նայւածքով մը. ես վէս դիրք մը բռնեցի ձիուս վրայ:

— Ա՛յ, ա՛յ, ա՛յ. հիմա մարդ եղար. տեսա՞ր մի. շնորհք եկաւ վրայդ. բացականչեց Միքէն:

Ու ձիերը մորակեցինք:

Հով, գեղեցիկ առաւօտ մըն էր:

Ձիերը կը քշէինք, որ տաքը չկոխած անտառ մտնէինք:

Այս ընթացքով խօսել չէինք կրնար:

Ես ուրախ, դո՛հ ու չափշտակւած հոգեկան զրութեան մը մէջ էի, երբ յանկարծ մեր ճամբուն վրայ երկու կին տեսայ մեզմէ ոչ այնքան հեռու: Իսկոյն ճանչցայ: Վարդուհին էր, իր սպասուհիին հետ, որ անշուշտ վարը լացուելու էին գացած, ինչպէս երբեմն կընէին: Սիրաս սկսաւ նետել:

Մագերը խոնաւ ու գլխու ճերմակ պուռնուզի տակէն կէս մը ուսերուն թափւած. աչտերուն թարմ կարմիր մը. ինքը ամբողջ սպիտակ, անխնամ շրջագդեստի մը մէջ. այդ անխնամութեան մէջ աւելի սիրուն, աւելի գրաւիչ:

Երբ մօտեցանք՝ բարեկցի:

—Վայ, Պ. Վէեանն է. բացականչեց զարմացած սպասուհին:

Վարդուհին ինծի կը դիտէր: Անշուշտ հեռուէն ճանչցած էր ու կը զարմանար այսպէս կանուխ, այս դիրքի մէջ ու այդ նոր ընկերներու հետ ինծի հանդիպելուն:

—Այս ուր. այս ինչ այլակերպութիւն. հարցուց բարեւ առնելով:

—Փոքրիկ պոռչաւ մը անտառին մէջ. պատասխանեցի ես:

Զիս կեցուցած էի. ընկերներս կամաց-կամաց կ'սրթալին:

—Այսպէս յանկարծ, առանց ինծի բան մը ըսելու. շնորհակալ եմ. երէկ ալ այնչափ սպասեցի. ինչո՞ւ չեկաք. հարցուց սիրուն աչքերը անուշութեամբ մը դէմքիս յառելով:

—Ներեցէք, օրիորդ. ընկերս եկաւ յանկարծ. խեղքս գլուխս չէր. մոռցայ ձեզի իմաց տալու:

—Մոռցա՞ք, կրկնեց երկարելով ու գլխու թեթեւ շարժումով մը: Ինչ և է, երթաք բարով, աւելցուց իսյոյն:

Զիւս վրայէն ծռեցայ ու ձեռքս երկնցուցի. բռնեց ու վաճրկեան մը վրաս նայեցաւ:

—Անշուշտ իրիկունը պիտի դառնա՞ք:

—Անշուշտ.

—Բարի ծանապարհ, ըսաւ դժգոհ դէմքով մը ու ետ քաշւեցաւ ձիուս քովէն, որ կը թօփէր:

Անգամ մըն ալ գլխով բարեկցի ու խթեցի ձիս:

Ընկերներուս հասածիս պէս՝

—Է՛, Երւանդ, հասկցածդ չես, հա՛, պողաց Միքայէլը. այդ աղջիկը ուրիշ էս ճանկեր:

—Դրացիս է, պատասխանեցի անտարբեր ձայնով մը:

—Ըսէ աղւոր ժամանակ կը անցնես, ինչ ըսեմ, մեր բաղդէն է այդ տեսակ դրացիներու չենք պատահիր. ինչ ալ սիրուն էր:

Միքայէլը ետ նայեցաւ ու անմիջապէս կցեց.

—Տղայ, դեռ ետեւդ կը նայի:

Ես ալ մեքենաբար ետ դարձայ. ու գլխարկով բարե մըն ալ տւի: Սրիորդը ձեռքի լաթը շարժեց:

—Յճօ, ասոնք ապուրը եփերեն, կրկնեց Միքայէլը:

Ու երկու եղբայր խնդապին:

—Վերադարձիս ինծի այդ աղջկան պիտի ծանօթացնես, շարունակեց ան ձին ձիուս մօտեցնելով:

—Ի՞նչ պիտի ընեմ, հարցուցի:

—Ինչ պիտի ընեմ. աղւոր աղջկան մը հետ ի՞նչ կընեն. դուն ի՞նչ կընես. թէ կը նախանձիս: Զէ, եղբայր, ընկերոջս ձեռքէն ես բան չեմ խլեր. գիտես, ա՛, իմ սկզբունքներս. ըսենք չեմ ալ կրնար. քու դեղձան մազերուդ, խոշոր անուշ աչքերուդ ու ճենթըլմէնական կազմաճքիդ հետ մրցիլը քիչ մը դժւար խնդիր է: Ես սկսայ կոկորդալիս խնդալ:

—Զէ, բրաւօ, աղէկ ճաշակ ունիս եղեր. պատուական աղջիկ է, աւելցուց. և հազիւ նախադասութիւնը աւարտած, իր բարձր լեռնցիի ձայնովը հնչեցուց սովորական երգի մը վերջին կտորը.

«Բայց իմ սիրածը, սրտիս ընտրածը հրեշտակի է նման:

Երգի վերջին հետ լռութիւնը տիրեց:

Զիերը ընթացք առին:

Ընկերոջս գալը ու մեր այս արշաւանքի գաղափարը պահ մը մթաքներ էին ուղեղիս մէջ Վարդուհին, երբ հիմական հանդիպումն ինծի սթափեցուց: Զգացի որ այդ աղջկան հետ ալ բացարձակապէս կապւած էի. երեւի սովորութիւնը արդէն բնութիւն էր դարձեր: Վարդուհին այլ ևս շարունակ աչքերուս դէմն էր իր առաւօտեան անխնամ հագուստով, իր թաց ու կէս թափած մազերով. ձիուս միակերպ ու չափաւոր ցնցումը գաղափարիս նոյն նիւթի շուրջը դառնալուն կը նպաստէր:

Արդէն խճուղին ձգած էինք և քիչ մը վերջը կողմնակի արահետով մը անսառ մօտնք:

Արահետը հեռոյհեռէ նեղնալով նեղուկ կածանի մը վերածւեցաւ, որ ծառերու բուններուն խուռթկան միջէն դեղին ժապաւէնի մը պէս կը օճապտուակէր: Այդ բաները հազարաւոր սիւներու պէս գեանէն վեր կը վազէին բռնելու համար, ծաղկանկար կեր-

պատի մը նման մեր գլխուն վրայ փռուող այն կանաչութիւնը, որ արևի ճառագայթները կը ասեղնագործէին:

Շուրջս զով էր, հոտաւէտ ու խորհրդաւոր:

Աննշմարելի հով մը ծառերու ամենաբարձր ոստերուն հետ կը խաղար, տերևներուն նրբին դող մը կու տար ու թռչունները աւելի կը գրգռէր, որոնք կը սիրերգէին իրենց դալար առադաստներու շուրջը թևածելով:

Հագիս լեցուն էր տեսակ մը անորոշ, ճշող և ուրախ զգացումով: Բանի մը պակասը կարծես կը զգայի. ոչ, ընդհակառակը. բանիմը յորդումը, զեղումը կարծես:

Ձիերը իրարու ետեւէ կը երթային, թափւած տերևներու խշրտուն գորգին վրայէն: Առջևէն Միքէի եղբայրը հրացանը պատրաստ. արջերէ կը զգուշանար. ետեւէն Միքէն, նմանապէս զէնքը ձեռքը. ես միջէն կը երթայի՝ իբրև պաշտպանեալ:

Բաւական ատեն էր բոլորովին լուռ էինք. ես անգամ մը ետիս դարձայ: Միքէն գլուխը կախեր՝ կը մտածէր:

—Այդպէս խորունկ ինչ կը մտածես. հարցուցի:

—Է՛, անշնորհք, խանգարեցիր. պոռաց դժգոհութեամբ:

—Ի՞նչը:

—Երևակացութիւնս: Գիտեմ, Երւանդ, ինչ կը մտածէի: Կը խորհէի, թէ իբրև դուն Սիւնեաց իշխանին զաւակն ես:

—Հէ. ուրկէ՞ ուր.

—Համբերէ. ասկէ ալ ճիշտ հազար տարի առաջ: Եւ այս հողերը, որ կը կոխենք, այս անտառը ամբողջ Գուգարաց բզեշխանն է:

Ես ապշած իրեն նայեցայ: Ան աչքերը հեռուն ծառերու խորութեան մէջ թաղած կը շարունակէր:

—Այն ձորը, ուր մենք կ'երթանք, այս աշխարհի ամենէն հովասուն վայրն է. և հոն են զարկած իշխանական փառաւոր վրանները, ուր Գուգարաց տէրը կ'անցնէ իր ամառան ջերմ օրերը:

—Ի՞նչ գաղափար: Դուն ալ վախենում Գուգարաց բզեշխանն ես. կամ գուցէ նոյն իսկ Սիւնեաց տէրը:

—Ներեցէք, արնափնփայլ սեպուհ, ես ժողովուրդի զաւակ եմ և իմ ծագմանս չեմ դաւանանք, յանկարծ պոռաց ոգևորւած:

Ո՛հ. ձերի ազնւափայլութեան խոնարհ թիկնապահը լինելը իմ ամենէն մեծ պատիւն է: Արդէն զիտէք, որ ձեր վսեմափայլ հայրը ձեզի իմ խնամքներուս է յանձնած. և ես անհնազանդ համարձակիր աչքերս վերնելու ձեր գլխի այդ ոսկեծոպ փաթոյթէն, ձեր աչդ զինւորական ոսկերի: Վարապանակէն, ձեր Սիւնեաց մեծ նախարարութեան զինապրոշմը կրող գէնքերէն, ձեր...

— Բռաւճ. հիանալի է. պռաւցի ես բոլորովին զարմացած:

— Ե՛, ինչ կեանք է այս. բացականչեց թամբին վրայ շրուկընելով: Երեւակայէ, որ մենք Գուգարաց բլեշխին մօտ կ'երթանք դաշինքի մը կամ նիզակակցութեան մը համար: Երեւակայէ, նետուս ձիուդ կանակը, իջնաս լեռ ու ձոր, ձիւնին-բուքին. գործ մը տեսնելու դիտակցութիւնը գլխուդ մէջ, ուժիդ զղացումը կրճիդ տակ, գաղափարով մը ոգևորւած. է, մե'ղք որ այն ատենները ծնած չենք:

Ու նորէն թաղեցաւ իր խորհրդածութիւններու մէջ:

Ես ալ պահ մը սկսայ այդ անուրջով զբաղել. բայց շուտով նորէն Վարդուհին ինկաւ միտքս. վայրկեան մը միտքս այդ երկու նիւթին մէջ տատանեցաւ և յանկարծ երկուքը իրարու ձուլեց: Ես սկսայ ամբողջ վէպ մը հիւսել մոռիս մէջ. կը խօսէի, կը պատմէի զանգիս տակ բոլորովին ինքզինքս մոռցած:

Իբրեւ թէ թիկնապահս էր, որ ինծի՝ Սիւնեաց Սեպուհին կ'ըսէր.

— Այո, աչքս ձեր վրան է, ազնւափայլ Սեպուհ, աչդ է ձեր վսեմ հօր կամքը, իմ պարտքս: Եւ, փնռք Աստրծու, անհ երկու շաբաթ է կը ծանօթորդենք խորունկ ձորերէն, սուերախիտ անտառներէն, անցանք գետերէն ու լեռներէն, և ձեր ազնւափայլութիւնը գարնան առաւօտեան պէս զլարթ է, լեռնական օդին պէս առողջ, ու ձեր հեծած արաբական նժոյգին պէս առոյգ: Միայն թախծութեան այն թեթեւ ամպը, որ ձեր դէմքի զլարթութեան վրայ աղւոր շուք մը կը նետէ, գիտեմ, տէր իմ, ձեր անհամբերութիւնն է: Եւ կ'ըմբռնեմ, որ կատարելապէս իրաւունք ունիք անհամբեր լինելու. թող տէրս ինծի ներէ, եթէ ըսեմ, թէ կեանքիս մէջ Գուգարաց օրիորդին պէս աղջիկ չեմ տեսած. ա, օրիորդ Վարդուհին. ինչ բարդիի հասակ է այն, ինչ Աստղիկի աչքեր, ինչ Ժիրկաթի ձակատ. հապա իր ուսերուն թափւած կարճ մագերը, որուն վրայ առաւօտեան ցողը մարգարիտ շարելու չի համարձակիր և

անտառներու կոյս հովիկը շոյելու կը վախենայ. ա, նախանձոտ էք դուք...

Յանկարծ ահագին դամբաններու կատաղի խումբ մը սոսկալի հաչիւնով անըջանքս ընդհատեցին:

—Շուտ իջէք ձիերէն ու ետէս էկէք, պոռաց Միքէի եղբայրը՝ ձիէն ծառի մը տակ ցատկելով:

Հետեցանք իրեն:

Ետենիս ծառն էր ու ձիերնուս սմբակները. ես ու Միքէն ծառին կրթնած. առջևնիս ալ եղբայրը, որ հրացանը անդադար կէս շրջանաձև պտըտցնելով շուները պատշաճ հեռաւորութեան վրայ կենսւոյ կը հարկադրէր:

Բարեբաղտաբար պաշարումը երկար չուեց:

Երեցաւ հովիւը. երկայնահասակ, լայնաթիկունք, հուժկու մարմին մը. գլուխը ահագին մորթէ փափսիս մը դրած, լայն դաշոյնով ու ատրճանակով մը զինւած. ձեռքն ալ խոշոր ձոկուն մը:

Ազատեց մեզի շներու ձեռքէն ու առաջնորդեց իր հօտին քով:

Ծառերը իրարմէ հեռանալով պզտիկ հրապարակ մը բացեր էին, ուր հօտը խռնած իրար գլխու կը որոճար:

Հովիւը հրաւիրեց մեզի իր ծառին տակը, ուր կուժ մը ջուր, քանի մը կոոր հաց և մէկ-երկու լաթի կոոր կար:

Նստեցանք, հովիւն ալ. ու իր ոտքերուն տակն ալ շները:

Քիչ մը խօսեցաւ Միքէի եղբօրը հետ, մինչև որ հոգնութիւննիս առինք. մեզի կաթ կթեց ու հրամցուց: Երբ ելնել կուզէինք նորէն շուները վրանիս յարձակեցան: Տէրը զսպեց. շնորհակալութիւն յայտնեցինք ու հեռացանք:

—Պ. Երւանդ, նկատեցիք, որ հովւի աչքը ձեր հրացանի վրան մնաց, ըսաւ Միքէի եղբայրը. շունչանորդին. վախեցա՛յ որ կ'ուզէ:

—Եթէ ուզէր:

—Շէնք-շնորհք կուի պիտի բռնէինք:

—Այդ հաշուփ, եթէ մօտը ընկեր մը ունենար երեք թաս կաթի փոխարէն հրացաննիս վրայ տուած պիտի լինէինք:

—Քիչ մը զօռ. պատասխանեց հպարտութեամբ:

Կէս ժամ չանցած գիւղն էինք:

Տէրաէրը մեզի սիրով հիւրասիրեց:

Միջալելի հետ ելանք գիւղն ու շուրջը պըտըտելու, մինչև որ եղրայրը իր գործերը աւարտեց ու անմիջապէս ետ ճանապարհնկանք:

Արդէն ժամանակը ուշ էր:

Զիերը կը տանջէինք արևը մայր չի մտած անտառէն ելնելու համար:

Անտառին մէջ սուերները խոտացեր, թանձրացեր էին: Երբ անտառէն ելնելու մօտ էինք արդէն ներսը խոր խաւար էր. և դուրսի աշխարհի լոյսը մեր ուղիղ դժով ձգւած նեղ կաճանի ծայրը լուսաւոր շրջանակի մը պէս կը երևնար. կարծես պառկած հորի մը մէջն էինք:

Ուշ ատեն տուն հասանք. սրունքներս թամիէն ցաւած, յոգնած ու չարչրւած:

Յուլիսի 20

Խոր գիշեր է. Խումբ մը մանգլաւիկներ Գուգարաց բլեղխի վրանէն ինձի իմ վրանս կը առաջնորդեն:

Բազմաթիւ ոսկեզոծ ջահերն ու աշտանակները կախարդական լոյս մը կը թափեն վրանի պատերէն կախւած հնդկական քաշմիրներուն վրայ ու բիւրաւոր ցոլցումներով կը խաղան սենեակի արծաթէ սպասներուն ու կախւած արծաթազամ ղէնքերուն հետ: Անգիսը կանգնած է ահագին զրահ մը նիզակներուն կրթնած. ու վրան խոշոր վհան մը դուգարաց զինանշանը կրող: Եւ զրահի ոտքը փափուկ գորկերով ծածկւած բազմոցն է՝ կարմիր, կակուղ, արևելեան բարձրու շրջանակին մէջ:

Ա՛, ինչպէս յոգնած եմ:

Մանկլաւիկները կը հեռանան վրանէն խոր գլուխ տալով: Եւ անմիջապէս կը մտնեն գունդ մը սպասուհիներ. ջուր, օձան անձեռնոց ձեռքերնուն: կը լւան ինձի: Եւ ես կը զգամ անոնց գիրգ մատներուն վզիս ու աչտերուս վրայ սահիլը, ու դող մը կը անցնի մարմնէս:

Եւ նորէն մենակ կը մնամ մտածումներուս հետ: Յուզւած եմ, կարծես բանի մը կը սպասեմ:

Յանկարծ վրանին թանձր վարագոյրները լաչն կը բացւին ու սենեակը կը լեցւի բարակ անուշահոտութեամբ մը: Պալատական կիներու խումբ մը արշալուսին պէս վարդազգեստ ու ադամանդ աստղերով զարդարուն հանդարտ կը մոնեն ներս դուռնէն մինչև ինծի ծեմելիք մը կազմեն: Վրանը կը պաշտօնանայ, «կանանց աչքերն ու զարդերը կը առկայծեն շուրջ՝ հովէն ճարճաթող կայծերու նման: Եւ այդ փողփողուն վարդերանդ անցքին մէջէն նուրբ, քնքուշ, շուշանի բաժակին պէս ձերմակ էակ մը կը նշմարեմ, որ կ'առաջանայ, կարծես ամպէ կարապ մը, որ վերջալուսի եթերին մէջ կը լողայ. ու վրանը կը լեցւի շուշանի բուրումով մը:

Ես կամաց ոտքի կ'ենեմ: սիրտս կը զարնէ:

Էսկը կը մոտենայ. պարզ անխնամ շրջազգեստ մը հագած է, մազերը կէս մը թաց ուսերուն կը թափին ու աչքերը սլաքներու պէս դէմքիս է շեշտած:

Մէկէն աչքերէս քօղը կը պատուի, ամբողջ մարմնովս կը ցնցւիմ:

—Սիւնեաց օրիորդը, Վարդուհի, կը մըմնջեն շրթունքներս:

Եւ այդ թեթեւ շունչէս բոլոր մոմերը մէկէն կը մարեն: Միակ ջահը վրանի կետրոնէն կէս-լոյս մը կը ձգէ Վարդուհիի դէմքին վրայ ու կը խաղայ:

Մինակ ենք:

Առաջ կը նստւիմ: ինծի կը նաչի օրիորդը դիւթիչ Ժպիտը շրթունքին: Կը դողդղամ, կը վարանիմ ու մէկէն կը սեղմեմ կրծքիս իր ձկուն, նուրբ, քնքուշ իրանը ու խենթի պէս կը համբուրեմ կէս խոնաւ գանդուրները, թարմ աչակերը, որ կը բռնկին, շրթունքները, որ հեշտանք կը շնջեն:

Աւ շրթունքներուս վրայ իրեններուն կծկումը կը զգամ. կը զգամ ի մարմնող համբոյրը, աչրող, դըպւող, խենթեցնող...

Հաճօքի անհուն դող մը ամուր ցնցում մը կուտայ մարմնիս. ու ես կը արթննամ երկու ձեռքով պինդ սիրտս սեղմած:

Անծիր բերկրանք մը, փափուկ հեշտութիւն մը, մոռցւած երազի մը պէս անորոշ յուզում մը կ'ողողէ զգացումներս:

Եւ ես անկողինս մէջ կէս նստած բաց պատահանէն անկողնիս վրայ առատութեամբ թափւող լուսնի լոյսը կը գիտեմ չամառ.

հայացքով մը: Ու շրթունքներս ակամայ անձնատուր եղողի մը անուժութեամբ, «կը սիրեմ, կը սիրեմ» կը կրկնեն:

Այդ դիրքով, այդ առաջին գաղտուկ խոստովանութեանս թըրթռուն զգացումին տակ, այդ անուշ դիտակցութեանս արբեցման մէջ՝ մնացի երկար առանց շարժումի, ամենաթեթեւ շարժումէս անըջանքիս բիւրնդէ հաճոյքը կոտորելու երկիւղով:

Արթուն էի մինչև առաւօտ: Յիշեցի բոլոր անցած-դարձածը իմ ու Վարդուհիին մէջ պատահած ամենաշնչին դէպքերը. և ըմբռնեցի, որ ես այդ աղջիկը սիրած էի նոյն իսկ առաջին հանդիպումէս. դոնէ ինծի այդպէս կը թւէր այն վայրկեանին, երբ լոյսի ծագելուն սպասելով մէկ կողմէս միւսի վրայ կը նետուէր բոցերու մէջ:

Նախաճաշէն վերջը՝ խոր ուրախութեամբ մը լեցուն, տեսակ մը վախով, սրտի ճնշւած անհանգստութեամբ ոտքս Չ-երու սեմէն ներս դրի՝ սովորականէն բաւական կանուխ:

Երբ ինծի նշմարեցին՝ Տիկինն ու պ. Կարապետը միաբերան բացականչեցին:

—Օ՛, այս ո՛ւր էք երկու օր է, Պարոն Երւանդ:

—Ընկերս եկած էր...

—Քոյրս ըսաւ, որ պտոյտի էք ելեր. ճշմարիտ է:

—Այո՛, պզտիկ շրջան մը:

Ես անոնց առաջարկին վրայ պատմեցի տեսած ու կրած տպաւորութիւններս:

Երբ զբաղւելու համար օրիորդին հետ առանձին մնացինք՝ անսովոր յուզում մը ինծի պատեց. յուզում մը, որ յուզումս չափանելու վախէն կը առաջանար:

—Երէկ ինչպէս անցուցիք, հարցուցի խօսք սկսելու համար:

—Շատ լաւ. ճաշէն առաջ քիչ մը Գերեցէն կարդացի. ճաշէն վերջը պտոյտի էի եղած:

—Ուրախ եմ. պատասխանեցի ես:

Բայց սիրտս դառնացաւ. «է, ես իրեն համար ոչինչ եմ» անցաւ մտքէս. ու ակամայ սկսայ մտածել:

—Ի՞նչ կը մտածէք:

—Ա՛, ոչինչ. սկսե՛նք:

Աղջիկը դարձանցած երեսս նայեց. բայց առանց պատասխանելու բացաւ զիրքը:

Կը կարդար:

Ես անհանգիստ էի ու կը դիտէի աղջիկը, որ անդարար աչքը գրքէն վրաս կը նետէր:

—Բայց այսօր շատ ցուած էք դուք. կարծես տխուր. ի՞նչ ունիք. հարցուց ընթերցումը ընդհատելով ու ինծի մօտենալով:

—Ոչինչ, օրիորդ. քեզի այնպէս կը թւի, պատասխանեցի ժպտել ջանալով:

—Ո՛չ, դուք բան մը ունիք, կրկնեց կարեկից շեշտով մը. ու համակրանքի անուշ նայածք մը դէմքս գրկեց:

«Արդեօք», անցաւ մտքէս. ու աչքերս իրմէն չէի կրնար բաժնէր:

—Բայց ի՞նչ կայ, կը հարցնէր:

—Ա՛յ, ոչինչ. կարդացէք, խնդրեմ:

Զգիտեմ ինչ կար շեշտիս թէ աչքերուս մէջ. աղջիկը յանկարծ կարմրեց, նստեց կրկին իր տեղը ու սկսաւ կարդալ:

Ես ալ զսպեցի ինքզինքս. ու ընթերցանութեան հետեւելու կ'աշխատէի:

Յուլիս 23

Ուրախ եմ, տարօրինակ ուրախ:

Տունը, դուրսը կ'երգեմ, կը ցատկեմ ու անվերջ կը շաղակրատեմ. ամենքը կը զարմանան ճաշերէն վերջը մինչև իրիկուն Միքէի հետ պտոյտի կ'ենենք. կ'ոտոտենք քարէ քար, կը մագլցեմ ծառերն ի վեր, կը վազեմ ձորէն վար, վեր. Միքայէլի հետ կ'իջնամ. կ'երգենք:

Արդէն չորրորդ օրն է այս:

Արթննալուս պէս խելքս Զ.-երուն է. քանի պարապման ժամը կը մօտենայ, աչքան յուզումն կ'աւելնայ:

Աղջիկն ալ միշտ յուզւած է. աւելի կայտառուն, աւելի ժիր ու ժպտուն:

Զեմ համարձակիր իր վճիտ-զւարթ աչքերուն մէջը շիտակ նայելու, որոնք կարծես մինչև որտիս խորը թափանցել կ'ուզեն:

Ա՛, եթէ կարողանային թափանցել ու ան յանկարծ ըմբռնէր, թէ ի՛նչ կը գառնայ մէջս այս արտաքին անփոյթ զիրքիս հակառակ:

Ա՛, եթէ որոշ գիտնայի, թէ ի՛նչ կ'անցնի իր մէջը:

Այս իրիկուն Միքայէլի հետ մեր պտուղէն վերադարձին արքունի ծանապարհին վրայ հանդիպեցանք օրիորդին ու իր եղբորը: Միքէն ծանօթացուցի ու սկսանք խօսել:

Միքէն ու պ. Կարապետը իրար գտան. մէկը ժողովրդական, անտաշ, խելացի երիտասարդ մը, միւսը ազնւական, նրբամիտ նկարիչ մը:

Խօսակցութիւնը շատ շուտով տաքցաւ:

Միքէն առանց այլեւայլութեան սկսաւ պ. Կարապետի ծաշահազիտական նրբութիւններուն հակառակիլ, որուն պ. Կարապետը ազնւական արհամարհանքով մը կը պատասխանէր:

Խօսքի թելը նկարչութենէն սիրոյ ու սիրոյ տեականութեանը անցած էր:

— Սիրելի բարեկամ, կ'ըսէր պ. Կարապետը զործը գիտցողի հաստատ շեշտով մը. սէրը մարդուս համար այնքան անհրաժեշտ պէտք մըն է, որքան և հաց ուտելը: Բայց որքան որ անհեթեթ է շարունակ միևնոյն կերակուրը ուտելը, այնքան ալ անհեթեթ է սիրոյ տեականութիւնը պնդելը. ընդհակառակը, որքան շատ ուտելիք փոխես՝ այնքան օգտակար է ու հաճոյալից:

— Այլ չափազանցէք, կը հակառակէր Միքէն. եթէ շատ կ'ուզէք սիրելը համեմատել ուտելիքի հետ, զէթ պտուղի հետ համեմատեցէք. նախ որ սէրը պտուղի չափ միայն անհրաժեշտութիւն է և երկրորդ ալ գոնէ տարւան եղանակներուն հետ կը փոխի և ոչ ամեն օր:

Բոլորս ալ սկսանք խնդալ:

— Իսկ ձեր կարծիքը ի՛նչ է. դարձաւ օրիորդը ինծի:

— Յս շիտակ սէրը ոչ կերակրի հետ կրնամ համեմատուի, ոչ պտուղի. ես այդ խնդիրը քիչ մը բանաստեղծօրէն կ'ըմբռնեմ: Ինծի համար ալ սէրը անհրաժեշտութիւն է. միայն երբ ես սէր կ'ըսեմ՝ կ'ըմբռնեմ զգացում մը, որ մարդուս ամբողջ էութիւնը, բովանդակ կենսունակութիւնը կ'սպառէ, որով ինքնին ուրիշ սիրոյ հնարաւորութիւնը կ'ոչնչանայ: Եթէ ես երբ և իցէ սիրեմ՝ կուգեմ

սիրեմ բոլոր ըղձերովս, բոլոր հոգեկան ուժովս. այդ միակ ու լիա-
ծարժ բոցին մէջն ալ ցամքի սրտիս այդ աղբիւրը ու այդ բոցին
հետ բովանդակ եռանդս մարի: Եւ այդ միակ սիրուս ատեն ծծեմ
սիրած աղջկանս ամբողջ կենսունակութիւնը, արբենամ իր հու-
թեամբը, իր կեանքովը. և երբ սթափւեմ, որ ան ալ, ես ալ
թողմամբ ենք արդէն. ճիշտ ծաղկի մը պէս, որ արդէն տւած է
իր պտուղը ու չորնալէ զատ պաշտօն մը չունի:

—Այն ժամանակ ինչ տարբերութիւն կ'ունենանք ծաղիկէն.
նկատեց պարոն Կարապետ:

—Եւ ինչո՞ւ կը կարծէք, թէ անպատճառ տարբերութիւն
պիտի ունենանք. վրայ բերի ես: Մաղիկն ալ, ես ալ նոյն գործա-
րանական էակներն ենք, երկուքս ալ նոյն բնութեան, նոյն օրէնք-
ներուն ենթակայ. միայն տարբեր ընտանիքներէ, ուրիշ ոչինչ:

—Սիրելիս, երկու երեք տարի վերջը ձեզի ալ կը տեսնեմ.
պատասխանեց պ. Կարապետը գլխու կ'ասկածոտ շարժումով մը:
Երբ երրորդ սէրդ մոռնալով չորրորդ աղջիկ մը սիրեմ՝ ինծի յիշէ,
աւելցուց մարգարէական շեշտով մը, որ վրաս շատ գէշ ազդեց:

—Բայց այդ մարգարէութիւննիդ անտեղի է, ըսի ես գրեթէ
զայրացած:

—Այս մարգարէութիւն չէ, այլ պարզ փորձառութիւն, ըսաւ
կամաց ձայնով մը դէպի ականջս հակած:

Ուսերս թոթւեցի, ու ալ չի պատասխանեցի:

Յրիորդը, որ վէճի ատեն շարունակ ինծի կը դիտէր, գաղտնի
բաժնեկու պահուս ձեռքս բռնեց ու սկսաւ բան մը մտածել կար-
ծես: Վերջապէս ձգեց ու եղբօրը հետ ներս գնաց:

—Ինծի նայէ, աղջիկդ հիանալի է. բարով վայելես, ըսաւ
Միքէն, երբ առանձին մնացինք:

—Տափակ-տափակ մի՛ խօսիր, զայրացայ ես:

—Ձեմ ուզեր, գրպանս դիւր. պատասխանեց հեգնօրէն ու ծի-
ծաղելով հեռացաւ:

Յուլիս 26

Երեկոյեան ուշ ատեն գեղէն տուն կը դառնայի մենակ, երբ
Չ. ներու դրան առաջ տեսայ Վարդուհին, որ քրոջը հետ պարան

կը ցատկէր: Ինծի տեսնելուն պէս, պարանը նետեց ու վազեց դէպի ինծի ցատկոտելով, կարմրած ու շնչառ:

— Հա, աղէկ հանդիպեցաք. ձեզի բան մը պիտի հարցնէի, մոռցայ:

Ու սկսաւ երկու երեք խնդրի մասին միանգամայն խօսել՝ բոլորը իրար խառնելով. առաջ ուզեցի բան մը պատասխանեմ. բայց պատասխանի չէր սպասիր. կը խօսէր մեքենայի պէս, աչքերը վրաս զամած, անդադար ժամացոյցիս շղթան, կոճակներս ու ձեռքերս քաշքշելով:

Ես նախ իւր խօսքին հետեւել կը փորձէի, բայց անկարելի եղաւ. այնքան անկապ էր, և կամաց կամաց իմ բոլոր ուշքս միայն իր վրայ կենդրոնացաւ:

Գիշերւան առաջին սուերները ինկեր էին իր այտերուն վրայ. շրթունքները կ'երեւային անդադար ներդաշնակ ձայն մը արտահոսելով, որ ջիզերս կը թմրեցնէր, իր զիրգ զատակները օդին մէջ հազար ձևեր կը գծէին, թովիչի գաւազանին պէս. լի կուրծքը անդուլ խօսելէն բարձր ու անհաւասար կ'ելլէջէր. դէմքին թափւած մազերը իրեն զեղարւեստական զեղեցկութիւն մը կուտային. իսկ իր գլխի ու իրանի քիչ մը դէպի ձախ հակումը մարմնին արձանային բան մը կ'աւելցնէր: Այդ դիրքով այնքան զեղեցիկ էր, որ վայրկեան մը յափշտակած շուրջս ամեն բան մոռցայ:

— Հէ, ինչ կըսէք, հարցուց յանկարծ ձեռքս սեղմելով:

Սթափեցայ. չգիտէի ինչ պատասխանեմ. շարեացայ, կարմրեցայ ու խնդացի:

— Բայց դուք ինծի չէք լսեր. ակն արդէն ձանձրացուցի ձեզի, ըսաւ մտնկակմն պծրանքով մը ու շինծու վշտացած ձայնով մը: Լռեց. քիչ մըն ալ դէպի ինծի հակեցաւ. ու մոռթին մէջ վաչրկեան մը սուր, խորին հայեացքով աչքերուս մէջ նայեց. վերջը բարձրաձայն սկսաւ խնդալ, բոլոր ուժովը ձեռքս սեղմեց ու խնդալով ներս փախաւ:

Պահ մը քարացած մնացի:

Ետքը ծանր-ծանր քայլերով սկսայ տուն երթալ: Կուրծքս սաստիկ կը սեղմէր. լալ կ'ուզէի կուրծքս թեթևցնել: Նոյն ծանրութեամբ ելայ մեր սանդուղքներէն, մտայ սենեակս, դուռը դո-

ցեցի, նստեցայ բաղկաթուխ մէջ ու արմուկներս սեղանին կըրթնցնելով դէմքս ձեռքերովս ծածկեցի...

Երկար, շատ երկար նստած էի այդպէս, մոթին մէջ, անշարժ. կրծքիս տակ ճնշող հեշտութիւն մը: Սիրտս արագ-արագ կը բաբախէր ու անհաւասար շնչառութիւնը կուրծքս կ'ուռեցնէր: «Վարդուհին. հծծեցի վերջապէս հազիւ լսելի ձայնով:

Եւ իմ՝ ձայնէս սարսօեցայ:

Յանկարծ ջգտձգական բուռն ցնցումով մը ու բոլոր ուժերուս առանձգականութեամբը երկու ձեռքերովս դէմքս սեղմեցի. արագ մօտեցուցի բերանս դաստակիս, խածի պինդ մը...

Աւթուլցած, ամբողջ արիւնս գլուխս զարկած, խոր արտաշնչելով՝ ինկայ աթուխ թիկունքին:

Յուլիս 31

Թէեւ մեր պարապմունքի ժամերը իրենց սովորական ընթացքովը կը սահեն ըստ երեւոյթին, թէեւ մեր չարաբերութիւնը սովորական հոսանքովը կը շարունակուի կարծես, սակայն էսպէս ամենքան փոխւած է արդէն:

Մէջերնիս ամեն ինչ սէր կը հոսի. մեր հայեացքը, մեր անտեղի ժպիտները, կարմրելը, նոյն իսկ շարժումնիս, խօսելնիս, բռնորը, բոլորը:

Երկուքնիս ալ կ'ըզգանք փոխադարձաբար, որ կապւած ենք իրարու: Բայց միայն կ'ըզգանք. և ոչ իսկ բախ մը այդ արտայայտելու համար:

Մեր չարաբերութիւնը օր օրի տարօրինակ կը դառնայ:

Ես քանի մը անգամ մտածեցի կերպով մը ակնարկութիւն ընեմ. բայց ժամանակը եկածին պէս ամեն անգամ չաջորդ օրւան կը ձգեմ:

Ես առաջ կը կարծէի, թէ միայն հպարտութիւնս է լեզուս կապողը. սակայն քիչ քիչ կ'ըմբռնեմ, որ իր հրապոյցի բոցերուն դէմ իմ հպարտութիւնս կը հալի:

Մի գուցէ ծաղրւելէ կը կասկածեմ. թէ իր զգացումներուն վրայ դեռ վստահ չեմ. կարելի է և առաջին քայլի դժւարութիւնն է այս: Գուցէ այս բոլորն ալ՝ ո՞վ գիտէ:

Սակայն ասոնցմէ զատ ուրիշ բան մըն ալ կայ կարծես. կարծես վախ մը. անորոշ, տարտամ վախ մը բան մը կորսնցնելու, բանէ մը զրկւելու. բիւրեղէ նուրբ դեղարւեստական անօթի մը զիպշելու տարակոյսը, որ մի գուցէ կոտրես:

Ա՛յ, իրաւ որ դեռ տղայ եմ ես:

Այսօրւան դէպքը որքան ծիծաղելի, այնքան բնորոշ է:

Իրիկան դէմ մեր երկու ընտանիքներուն հետ բոլորովս իջանք մեզնէ ոչ այնչափ հեռու գետի ափը տնկած բանջարանոցները:

Գեղեցիկ իրիկուն մըն էր:

Բայց, սրտի լացնացում տուող երկինք մը. ժպտուն, դէմքի ժպիտ պարզեող վերջալոյս մը. ու վառ-բոսորով արիւնոտած ամպերու ցիրցան դէզ մը:

Ամենքս ալ ուրախ էինք:

Վարդուհիի բերկրանքին չափ չի կար. երեխայ էր դարձեր. ըսենք՝ մենք ալ. իրար ձեռքէ պտուղ կը խլէինք, կը պռուպէինք. ձայներնիս աշխարհք էր բռնէր:

Մութը կոխած էր, որ տուն ճամբայ ելանք:

Ես ու օրիորդը ետ մնացինք. կարծես պատահմամբ եղաւ այդ. Հազիւ քանի մը քաջ ըրեր էինք միասին դէպի ձորէն վեր, որ աղջիկը խոր շունչ մը առնելով՝

—Ա՛յ, ինչպէս յոգնեցայ. ըսաւ:

—Շատ վաղեցինք՝ անկէ է, պատասխանեցի միամտութեամբ:

Աղջիկը լռեց. ես ալ լռեցի. մէկ ալ չանկարծ կանգ առաւ ու շիտակ երեսս նայելով.

—Գիտէք, պարոն, զուր բնաւ պիտի չսիրւիք, ըսաւ ամուր ձայնով մը:

Մարմնէս սարսուռ անցաւ. այս տեսակ խօսք բնաւ չէի սպասեր:

—Շատ կարելի է. բայց ուրկէ կ'ենթադրէք, ըսի ես կեղծ ծիծաղով մը:

—Փիլիսոփայ լինելու հարկ չի կայ. շատ պարզ է. որովհետեւ կնոջ հաճոյանալու ամենեւին փութկոտութիւն չունիք:

—Իրաւ:

—Միթէ ինքներդ չէք զգար. այսքան ատեն է միասին ենք, դեռ ամենապարզ հաճոյախօսութիւն մը, ամենատարրական հա-

ճոյակատարութիւն մը ձեր կողմէն չտեսայ. այն օրինակ. այսքան ատեն է ձեզի հետ առանձին շրջագայելու առիթներ ունեցեր եմ, դեռ ոչ իսկ անգամ մը թւերնիդ ինծի չառաջարկեցիք. թէև, կը յիշէք, քանիցս դիտմամբ այոգնած եմ՝ ըսած եմ:

—Ներեցէք, օրինորդ. կը խոստովանիմ, որ ըսածս անքաղաքավարութիւն է. սակայն յանցանքը տգիտութիւնս է. չեմ երևակայած, որ ձեր այոգնած եմ-ը «թւերնիդ տւէք» ըսել է:

—Այդ բոլորը ես օրինակի համար ըսի միայն. սակայն արդէն այդ շերակայելնիդ նշան է, թէ ինչ աստիճանի անփոյթ էք:

—Եւ հետևաբար կը կարծէք, թէ սիրոյ մէջ երբէք չաջողութիւն պիտի չունենամ:

—Անտարակոյս. միայն եթէ չփոխուիք:

—Եթէ այդպէս է, պէտք է որ փոխւիմ եւ նոյն իսկ այս վայրկեանէս. ըսի ես ժպտալով ու անմիջապէս աւելցուցի. օրինորդ, արդեօք կը հաճիք թեւս մտնելու:

Խնդաց ու մինչև արմուկը մերկ դաստակը կամաց մը թեւս անցուց:

Բարակ շապիկ մը միայն մեր բազուկները իրարմէ կը զատէր. քիչ մը վերջը զգացի, որ թւերնուս իրար կցած կէտը սաստիկ տաքցած էր ու շապիկիս այդ մասը թեթեւ մը թրջած:

Մէկէն անհուն փափագ մը ունեցայ ինծի անձնատուր այդ մերկ դաստակը կրծքիս սեղմելու. եւ թեւս փոքրիկ կծկում մը ըրաւ. բացց անմիջապէս ինծի զսպեցի ու թուլցուցի:

Այլ ես ինչ խօսելու չեմ գիտեր. թէև շարունակ կը շաղակրատէինք ու կը խնդայինք:

Այդ նոյն միջոցին պաշտար մը կը դառնար գլխուս մէջ՝ «Սեղմէ՛, յիմնը. իրան որ ապուշ ես» կը դրդէր մէկը. «Քեզի մի՛ մոռնար. զգո՛յշ» կը կրկնէր ուրիշ մը: Եւ ուղեղս այդ երկու հրամաններուն մէջ տարուբեր՝ կը վարաներ դեռ, երբ մեր դռան առջևը հասանք.

Այլ ես ուշ էր:

(Շարունակելի)

ԲԱՐԵԱՒԻ ՄՆԱՔ ԻՄ ՑՆՈՐՔՆԵՐ ¹⁾

ԳՐԵԱԼ ՀԵՏԵԻՈՂՈՒԹԵԱՍՐ ՄԱՆՍՖԷԼԴԻ

(Նւէր տիկ. Մարի-Զաքէլ)

Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆԻ

ՄԱՐԻ (զւարթ դուրս ելլելով քուլիսներէց)

Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ Ձեզանից, մօրքուրիկ.

Այս ձեր ընծան թանկագին է, իմ գանձն է սա մէկ հատիկ
(որոն ելով) Բայց, Տէր Աստուած, ուր եմ զրած, արդեօք գետինն
եմ գցել.

Գուցէ մի տեղ պահ տեցի, և ալժամ ալ ևս մոռացել:

(Գօտիին մէջ գտնելով) Բայց ոչ. ո՛չ ո՛չ, անհ գտաչ, ախ, տէր
Աստուած, բիւր փառք քեզ,

Ձի քիչ մնաց որ արտասուք պիտ վազէին աչքերէս:

(Թղթեալին) Ձէ իմ գանձիկ, սիրուն թղթիկ, աչքէս կատակ
մի անիր,

Ես հաւատալ որ աչքէս հեշտ քեզ ձեռքիցս չեմ հանիր՝

Մօրեղբայրս ալժամ ինձ ասաց որ այս թուղթը փող արժէ,

Մէծ, շատ մէծ փող. չգիտեմ քանի հազարների թիրաժ է,
եւ վաղն աստու պիտի տանի և անպատճառ բանք դնէ՝

Որ փրօցէնթով ամեն տարի նորա արժէքն աւելցնէ:

(Ձևեր գոհունակութեամբ)

Երկու երեք տարուց չիտոյ չանկարծ հարուստ կը լինեմ,

¹⁾ Այս կտորը տպուած ենք իբր չուելած «Ազամեանի նամակների»
որ տպւեցին «Մուրճ»-ի 1894 թ. համարներում: Ման. Խմբ.

Կեղեցիկ չոր և հարսնացուի ճոխ օթիւներ կը դիզեմ:
 Մէկ էլ տեսնես տղամարդիկդ, սիրուն, տղեղ, ծեր, մատաղ,
 Հէնց որ փողին հօտը առնեն, չուրջս ման գան, քաշեն ան...
 Իսկ ես լռիկ քթի տակից կը ծիծաղեմ նոցա վրայ,
 Թաշկինակս դիտմամբ պցեմ, որ մինը ծուխ և ինձ տալ:
 Նրբեմն ուզեմ մի բաժակ ջուր, լիմոն, քանֆէթ, հովահար,
 Աչք պարոններն ծածուկելով կամքս լրջարար,
 Մէկը միւսից առաջ վաղէ որ ինձ լինի հաճելի,
 Այն էլ չէ մի որ օգուտ է, էլ ինչ վարձք տալ ծառայի:
 (Մի ծաղիկ) . . .

Բալց ոչ, ոչ ոչ, աչքպէս լաւ չէ, զի ամենալն մարդ տղետ
 Կասկածանօք վրաս նաչի, կարծելով ինձ մի քոքէթ,
 Չեն մտածէր որ աչք վարմունք, մեր տարիքին է պահանջ,
 Ինչպէս ամեն շոր ծլած ծաղիկ, երբ դու նուրբ է և կանանչ,
 Պէտք է նազով ծուխ, օրօրւի, մինչ իսկ թեթև կողմերից,
 Իւր ընկերաց և երկնքին ցոյց տալ ծիծաղն իւր ամբիծ:
 (Խորհուրդ) Աւելի լաւ լինի կարծեմ, երբ դառնամ շատ
 հարուստ,

Նոր գլխարկներ չինել կը տամ, ժանեակներով ճոխ հագուստ,
 Մօրքուրիկս էլ կը համոզեմ, որ գնէ մի կառք երկրձի,
 Նրա հետ ման գամ, չիք օրն ի բուն, նման տիկնոջ մեր դրացի,
 Որ շատ քիչ օր տանը նստի, ման գալ խանութ և կրպակ,
 Այս կը գնէ, կամ աչք առնէ՝ մինչ որ պարպւի իւր քսակ:
 Բալց չէ, նրա պէս փող չեմ մխէր. միալն Մուշթալիօ կը գնամ,
 Մօրքրիկիս հետ չալ կը խմեմ, ծառուղեաց մէջ ման կը գամ,
 Ո՛չ ոքի վրայ չեմ էլ նաչիր, ես ինձ շատ ծանր կը ծախեմ,
 Եթէ սիրտս էլ շատ բան ուզէ՝ ցանկութիւններս կը զսպեմ:
 Այլ թէ լինի ցանկարժ մինը, բարձրահասակ և մատաղ,
 Կուռատ դէմքով, սև աչքերով, որ կը նաչի ինձ խաղաղ,
 Եւ վերջապէս թէ աչք օտարն ի դէպ իս նշմանի:
 Բնաւ ցոյց չեմ տար որ սիրուն է և հաւանում եմ իրեն,
 Ընդհակառակն, երես դարձնեմ, փախչեմ նորա աչքերէն,
 Անտարակոյս թէ ինձ սիրէ, ետեիցս պիտի գալ,
 Ամենաչն տեղ նա էլ երթալ, ուր որ լինեմ ես ներկայ,
 Օրերով և ամիսներով նա իմ հետքիս հետևի,
 Չլանդգրներով մինչև անգամ որ բարեկէ կամ խօսի:
 Հոգովս ուրախ, ալ գէմքով յուրջ, տեսնեմ նորա վարմունքներ:
 Սրտիս աչքով, ուր ամեն օր աւելանան թիք-թաքներ,
 Խղճմտանքս էլ կամաց-կամաց անշուշտ սկսի ինձ տանջել,

Ճար մտածեմ աչդ խեղճուկին մի կերպիւ ինձ մօտ կանչել
Եւ միջոցն էլ իսկոյն գտնեմ: Մօրքորիկիս հետ երբ ման գամ,

Ոտքս քարի խփել կեղծեմ, ու ճչալով վաչր կ'իջնամ,
Անշուշտ նա էլ, եթէ քար չէ, եթէ մարդ է, քաւալիւն,
Եւ ինձ համար եթէ զգաց ճշմարիտ և խորին սէր,

Ոչ թէ միայն պէտք է վաղէ, շուտ ինձ գետնից վերցնելու,
Ալ մինչև իսկ պիտի ցանկալ գրկած էլ տուն տանելու.

Այն ատեն ես, անշուշտ գրաւանց, կը մերժեմ իւր առաջարկ,
Մօրքորիկս էլ չնորհակալեօք կասէ «փոլթ չէ, ունենք կառք»,
Ես համարձակ ձեռքս սեղմեմ, ինչան իմ երախտեաց.

Մօրքորիկիս և նորա հետ կ'անցնեմ միջոյն ծառուղեաց,
Նա ինձ հարցնէ անուշ ձախով (ձեռքս ելով ձալն) «արդեօք
չստ էք ցաւ զգում,

Ես փոխարէն բացակտնչեմ, ինչի համար. ոչ... ինչում...
Հրճանքիցս մոռանալով, որ քիչ առաջ վաչր ընկալ,

Որպէս զի նրան մի առիթ տամ, որ վերջապէս մօտս գալ:
Իսկ նա կրկին ինձ հարցնէ (ձեռքս ելով) «ինչ, ոտքերնիդ չէ
բաւում»,

Այն ժամանակ սթափելով և զսպելով իմ խնդում,
Կ'ասեմ, «ոչինչ, ցաւ չեմ զգում, ջղերս են լոկ զրգուած,
Թէ կառք նստեմ աւել ցնցէ, տակաւին չեմ հանդարտած,
Հա մօրքորիկ, թող կառապանն առնէ կառքն ու տուն դառնալ,

Այս պարզ օգին ոտով պնանք, քալելը միշտ օգուտ տալ,
Մօրքորս հաճի, քաւալիւնս էլ թեմ ինձ կը առլ լրջարար,
Ու երեքս միասին երթանք, սրտիկս ի դող անբարբառ:

Եւ աչդ բոլորն աչն նպատակաւ, որ մեր տունը սովորի,
Որ եթէ լաւ կրթեմ մարդ է, շուտով դալ մեզ ալցելիս
Այն գիշերը քուն չեմ լինիլ հետեւալ օրն մէկ ժամին,

Սենեկիցս որոշ լսեմ ձալնը մեր դրան զանգակին,
Սիրտս կ'ասէ, նա է, ո՞չ նա... իսկոյն ի սրահ կը թռչեմ
Ծառան մտնէ, ձեռքին տոմսակ ասելով թէ՝ «կը հաճեմ
Բնդունել ալ անուն պարոնն, որ գրտումը սպասէ»:

«Հապա, կ'ասեմ, մի ոպտեցնէր, հրաւիրէ, շուտ, վազէ»:
Այն միջոցին, մինչև որ նա հանէ զգետն իւր հաղին,

Գաղապարտի աչք կը գցեմ ալցելութեան տոմսակին,
Մտածելով որ անպատճառ նորա անունն է կոչուար,

Արթիւր, Ադոլֆ և կամ Ալֆոնս և Ֆրէդէրիք կամ Փէրար,
Մէկ էլ տեսնեմ Ալէքսանդր է տոմսակին վրալ տպագրած,

Աչդ անունը չառ չեմ հաւնիր, ամեն տեղ կալ տարածեմ,

Բապցի եթէ ալդ կրճատելով ռուսաց ոճով թէ տաշեմ,
 Շատ համառօտ կոկիկ կերպով անունն խկոյն որոշեմ.
 Անուհետեւ միշտ հանապազ նորան կոչեմ եւ Սաշա,
 Անշուշտ, եթէ ամուսնանանք, թէ Սաշան դու առ Մաշա,
 Ի՞նչ սիրունիկ ֆուխտ կը լինենք... աշխարհք անէ թամաշա,
 Երբ մենք տան մէջ, էրիկ ու կնիկ կը խաղանք միշտ օր թիշտ
 (քծնելով կը ծծաղի)
 Աչա բոլորը կալծակնաբար խորհած ասեմնս ներս մտնի,
 Քաղաքալար ինձ ողջունէ, զլուխ ծռելով գեղանի,
 Ես էլ նորա քաղցր ողջունին պատասխանեմ կարմրելով,
 Երկուսիս էլ սիրտերը լիքն, երջանկութեան իբրեւ ծով:
 Աչն բոպէին մօրքուրիկս լուսւթիւնն կ'ընդհատեմ,
 Հարց ու փորձեր, դատարկ խօսքեր, միմեանց վրա կը բարդէ,
 Թէ հալոյն ու մալոյն ողջ են արդեօք, ի՞նչ գործ ունի, ի՞նչ վիճակ,
 Ո՞ւր առած է իւր ուսումը, միթէ չունի կին, զաւակ,
 Դիցուք ալդ հարցն աւելորդ է, թէ ամուսին ունենար,
 Միթէ աղալէս աղջկանց նալէր, նրանց հտեկից ման կը գնար,
 Աչս ամենն էլ, լաւ գիտնալով, երբ նա կարդում չեմ, կ'ասէ,
 Աշուհանդերձ չգիտեմ ինչո՞ւ, հոգոյս մէջ լուս կը մտնէ:
 Բապցի որքան սիրտս կը վշտանալ, երբ սաք ելլէ, գնալ ուղէ,
 Եւ ինձ ուժ տամ, որ արցունքը աչքերիցս չի վազէ,
 Մօրքուրիկս էլ խնդրէ անշուշտ, որ մեզ չաճախ ալցելէ:
 Ահնուհետեւ, կասեմ չի կալ, կը տեսնենք անարդել,
 Մի քանի հեղ երթալ ու գալ, դատարկ բաներ կը խօսենք,
 Մէկ էլ մի օր չանկարծ տեսնես, զանգակն հնչէ ցինկ, ցինկ,
 Երբ մօրքուրիկս էլ տանը չէ... ծառան թէպէտ դուռն բանալ...
 Իդէալս էլ կամաց, բուրուզ՝ սանդուղիներից բարձրանալ,
 Պարտական եմ բնականաբար նորան սիրով ընդունել,
 Եւ չուզմունքս չի չալսնելով՝ անփութ լինել ու ժպտիլ.
 ...Մեր աչքերի նալածքները արդէն չալտնեն շատ զգացմունք...
 Սիրոյ զգացմունք, լուս հառաչանք, սրտի դոփին եւ չուզմունք.
 Մօրքուրիկս իսկ լաւ հասկանալ, որ սրտիկս էլ իմը չէ...
 Եւ նորա հետ խօսակցելու չարմար միջոց որոնէ.
 Է՛հ... վերջապէս ի՞նչ երկարեմ, նպատակիս կը հասնեմ
 Սաշան Սաշան ալ կին դառնան, սիրելի եւ մտերիմ,
 Ասումս էլ թեղ կը պարզեն սիրոյ պատու մի մանուկ,
 Հալոյն, մալոյն արտասանէ, ձեռքով զգլէ մեզ փափուկ:
 Ես պարապեմ տան գործերով, Սաշան գնալ իւր պաշտօնին,
 Ճաշի նստենք երբ տուն դառնալ, ամեն օր ժամն երեքին,

Երեկոյին էլ ճան կը գտամ, իւր թիւի վրայ թեք ընկած,
 Մեր վիճակին շատ նախանձեն, բոլորեքեանք զարմացած:
 Երբ որ մթնէ, հա կ'երթալ կլուբ, հս էլ որդիս քնացնեմ,
 Եւ գիշերը նորան չապիկ, բաճկոն, վարսիկ կը կարեմ,
 Եւ ալս կերպով միշտ երջանիկ ապրենք ուրախ ու անդարդ,
 Եւ մեր օրերն սլտնան, անցնեն, երջանիկ և անպարտ:
 (ցաւով) Բայց եթէ հա ինձ սիրելուց չանկարծ մի օր դադարի,
 Այն ժամանակ վստիկեաները պէտք է թւեն ինձ տարի,
 Ուրախութիւնս անհետանալ, նախանձն էլ սիրտս կը կրծի:
 (խորամանկ) Ասենք զորա սրտճառ լինողն իմ ձեռքիցը
 Հի պրծնի:

Ձի վերջապէս, երբ նշմարեմ, որ գիշերներն ուշանալ,
 Արտասուքս էլ եթէ տեսնէ սառն անտարբեր կը մնալ,
 Ո՛հ, աչն ատեն... գիշեր ցերեկ գաղտնի կերպիւ կը գլխեմ,
 Ո՛ր է դնում, ինչ է անում, անդադար միշտ հետեմ,
 Ատուած չանէ, եթէ չանկարծ մի կնոջ հետ գեղանի,
 Առանձին մի սեճեկի մէջ գտնեմ նրան ես գաղտնի...
 Այն ժամանակ ո՛հ, բիւր անէծք, տալիս պէս մոռնելով
 Այնտեղ երկուսն էլ բղկտեմ, իմ դողդողուն ձեռքերով,
 (կը պատուէ բանկի տոմսակը)
 Ի՞նչ արի ես... վնդ ինձ, բիւր վալ, ան մօրքուրիկ սիրակմն,
 Դու արի տես, մի րապէտմ բոլոր չափերն իմ կորմն:
 Մնաք բարեալ, իմ ցնորքներ, մնաք բարեալ սին երնգը,
 Ձեր փոխարէն ալժմ կը զգամ սրտումս փուշ ու տատակ:
 Ել ինձ համար չի կնչ հաճուք, սէր և հրճանք հոգեկան:
 Ո՛հ դուք իմն չէք եղած բնալ, ալս թուղթն էր ձեզ պատ-
 ւանդան:

Նա խորտակեց, դուք էլ ընկաք, կործանեցաք չախտեան,
 Խեղճ սրտումս միայն թողլով հետք արտասուց և արեան,
 (ուշքի գալով) Բայց, տէր Ատուած, ինչ եմ ասում, ինչ խօս-
 քեր են անվալել:

Միթէ կեանքի երջանկութիւնն բանկի թղթով են հիմնել...
 Միթէ չունեմ ես տակաւին, առողջ էակ սիրող սիրտ,
 Միթէ քիչ կան աշխարհումս ազնիւ մարդիկ բարեկիրթ...
 (թղթի կատրն երին) Թուղթի կտոր, քուրչի կտոր, եթէ միայն
 քս չնորչիւ
 Պէտք է որ մեզ սիրեն մարդիկ և տան գորով ու պատիւ,
 Կորիք ինձնից իբրեւ մի բան վտանգաւոր և անպէտ,
 Քս ձեռքով հարս դառնալու տեղ, լաւ է լինել մալրապետ:

ԲՆԱԿԱՆ ՀԻՊՆՈՏԻՍՄ

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ԱՐՇՐՈՒՆՈՒ

(Շարունակութիւն ¹)

ԳԼՈՒԽ Բ.

ԱՄԲՈՒԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

Ամբոխը աւելի տրամադիր է դէպի
չարը, քան դէպի բարին:

ՍԷԷԷ:

Անհատը և խումբը հոգեբանութեան տեսակէտից, — Խմբային վճիռները և գործերը —
Պատահական հաւաքումներ կամ ա մ բ ո խ — Ընդօրինակումն ամբոխի մէջ: — Ամբոխի
տրամադրութիւնը դէպի չարութիւն, նրա պատճառները: — Զարագործներ և թուլակամ-
ներ: — Վաստեղանի դէպքը: — Կրթած բարոյական մարդիկ և բնածին չարագործներ
ամբոխի մէջ:

Հասարակութիւնը կազմւած է անհատներից, հետեաբար բնական էր
կարծել, որ հասարակութեան, ամբոխի բնաւորութիւնը գումարումն է
նրան կազմող մարդկանց բնաւորութիւնների, ինչպէս ջրի շատկութիւն-
ները գ ու մ ա բ ու մ ն են կաթիլների շատկութիւնների:

Այս թէօրիան աչնքան պարզ էր և հասկանալի, որ նա մինչև վեր-
ջին ժամանակներս ընդունւում էր իբրև մի անհերքելի ճշմարտութիւն
նոյն իսկ աչնպիսի խորհողներից, ինչպէս է Սպենսերը:

Եթէ այս հաշիւակէտից հաշիւու լինինք հասարակութեան գործերի, ամ-
բոխային շարժումների վրա, պէտք է նշմայրենք, որ նրանք գ ու մ ա բ ն
անհատական շարժումների: Այսպէս ուրեմն, մի խումբ գիտնականների

¹) Տես «Մուրճ» 1894 թ. № 5, 6, 7—8 և 10:

մի որ և է որոշումն նրանց կարծիքների գումարման արգասիքն է, և որքան էլ մեծ լինի ալդ գիտնականների թիւը և բարձր նրանց գիտութիւնը, ալնքան խելացի պիտի լինի նրանց որոշումն:

Սակաւն նորագոյն հետազոտողները, որոնք զբաղել են հասարակութեան, ամբոխի (massa) ստումնասիրութիւնով, նկատել են ալդ թէօրիալի թերութիւնը:

Պատահում է չաճախ, որ ալսպիսի ժողովների որոշումները զարմանալի կերպով միամիտ և սխալ են լինում և բոլորովին չեն կարող համարուել ալդ մարդկանց խելքերի գումարալին արտապատութիւնը:

Ալդ բաւական չէ: Մարդիկ խմբովին երբեմն ալնպիսի գործեր են կատարում և ալնպիսի վճիռներ են կապցնում, որոնք չեն համապատասխանում մինչև անգամ ալդ խմբի իւրաքանչիւր անդամի զարգացման:

«Միացրէք 20—30 Գեթէներ, Կանտեր, Հելմոլցներ, Նիւտոններ և ուրիշ նրանց նման հանճարներ, ասում է Նորդաու (Nordau), և առաջարկեցէք սրանց գործնական ստորեալ խնդիրներ և կը տեսնէք, որ նրանց որոշումները ոչինչով չեն տարբերուի պատահական մարդկանցից բաղկացած մի ժողովի որոշումից, թէև նրանց ճառերը աւելի իմաստալից լինէին: Ինչո՞ւ, որովհետև ալս 20—30 ընտրովի անձերից ամեն մէկը, բացի իր անձնական չափանիշները, որոնցով նա տարբերում է միաներից, ունի և մի շարք թէ ժառանգական և թէ ցեղային չափութիւններ, որոնք նրան մօտեցնում են փողոցալին դատարկաշրջիկներին: Կարելի է ասել, որ բոլոր մարդիկ բնական դրութեան մէջ ունին որոշեալ նշաններ, որոնք չստուգ են ամենին: Ալս ընդհանուր չափութիւնները, ենթադրենք, թէ հաւասար են X-ի, իսկ անհատական չափանիշները = ա, բ, գ, դ-ի և ալն, ալսինքն ալնքան տարբեր չափութիւններ, որքան մարդիկ կան մի որոշեալ ժողովի մէջ: Հիմի հասկանալի է, թէ մինչև անգամ ամենաընտիր մարդկանց ժողովում, որը օրինակ, բաղկացած կը լինի 20 անձերից, մենք կ'ունենանք 20 X և միալն մէկ = մէկ Բ, մէկ Գ և ալն: Ակներև է, որ 20 X անպատճառ կը չաղթեն ա-ին, բ-ին և ալն, որը նշանակում է, թէ համամարդկային չափութիւնները կը չաղթեն միշտ անհատականին և թէ բանւորի փոփոխը կը ծածկի բոլորի ու փրկուփալի գոակաները:

Արեւմտ, Նորդաուի մտքով, իւրաքանչիւր անհատ, ինչ զարգացման էլ հասած լինի նա և ինչ դասակարգի էլ պատկանի, ունի երկու տեսակ հոգեկան չափութիւններ,—մէկը չատու է բոլոր մարդկալին էականերին, իսկ միւսը նրա անհատական չափանիշն է, որով նա տարբերում է ուրիշներից: Հասկանալի է որ առաջին կարգի չափութիւնները գումարուելով կազմում են մի մեծ ուժ, որը մի ժողովի մէջ միշտ կը չաղթի անհատական ձգտումներին:

Նորդաուի այս խօսքերից, ասում է Սիգելէն, հէշտ է հասկանալ թէ ինչու ոչ միայն երդեալ դատաւորները (судъ присяжныхъ) և կոմիսիաները, այլ և քաղաքական ժողովները կատարում են անպիսի գործողութիւններ, որոնք անսպասելի կերպով հակասում են այս ժողովներ կազմող անդամների հալեացքներին և սկզբունքներին: Այս բանը հասկանալու համար, բաւական է Նորդաուի առաջ բերած օրինակում 20-ի տեղ զնեւ 100 կամ 200. հին առաժն ասում էր՝ Senatores boni viri, senatus autem mala bestia. (Սենատորները չարգելի անձեր են, իսկ սենատը վատ կենդանի է): ¹⁾

Եթէ այսպէս է լինում միակերպ մարդկանց ժողովներում, ինչպէս են գիտնական ժողովները, դատարանները, կոնգրեսները, ապա որքան իրաւացի է ալլ օրէնքը, երբ հարցը վերաբերում է այսպէս կոչւած պատահական հաւանքումներին: Պատահական ժողովները բաղկանում են տարբեր զարգացման, տարբեր և չաճախ հակասող գաղափարների տէր և տարբեր շրջանների պատկանող մարդկանցից, ինչպէս են թատրոնների, զանազան հասարակական տեղերի ժողովները, միախնդները, — այս տեսակ անձերից բաղկացած ժողովները լալանի և ընդհանուր կոչումով — Ամբոխ (Foule): Ամբոխը նմանում է մի վիթխարի էակի, որի մէջ կորչում են անհատների հոգիները, ինչպէս մի բարդ գոշնի մէջ կորչում են նրան կազմող սկզբնական գոյները:

Այս է պատճառը, որ չաճախ ամբոխի որոշումները ու գործողութիւնները սարսափ և զալուրթեն չարուզանում ուղն ալլ ամբոխի իւրաքանչիւր անդամի վրա, երբ սա սառնութիւնով քննում է իր մասնակցութիւնով կատարւած անմիտ և սոսկալի եղելութիւնները: Ահա թէ ինչի Սիգելէն առաջարկում է հիմնել մի առանձին գիտութիւն ամբոխաչին հոգեբանութիւն անունով, ինչպէս կալ անհատական հոգեբանութիւն:

Հաւաքական նմանողութեան օրէնքը ամբոխաչին շարժումների մեծ գործօնն է, միայն ամբոխի մէջ այս նմանողութիւնը կատարւում է զարմանալի արագութիւնով: Բոլոր հեղինակները, Բօրդէից սկսած, մատնացոյց են անում այս ֆակտի վրա: Ֆերրին, Տարդը, Սիգելէն առանձին ուշադրութիւն են դարձնում դրա վրա: Հասարակական լեզուով ալլ կոչւում է ամբոխի վարակումն, չափ չափակումն:

Այս երևութիւնները լաւ լուսաբանւած են Սիգելէի գրքում: որին մենք կը հետեւենք:

¹⁾ Ալլ և չաջորդ տողերից չափերին մենք վերաբերում ենք մեծ վերապահութեամբ: Ման. Խմբ.

Նախ և առաջ ինչպէս պէտք է բացադրել ամբոխի աչք չանկարձակի վարակումն:

Նոյն ներշնչման մեծ օրէնքը տիրապետում է աշտեղ ևս. Ամբոխի մէջ մարդս ամեն տեսակ ներշնչումներ է ստանում շատ կարճ միջոցում, ներշնչումներ լսողական (ձառեր, բացականչութիւններ, երգեր), տեսողական (զանազան շարժումներ, ժեստեր):

Այս ներշնչումները բաւական են, որ ամենասառնարիւն մարդու չափշտակման հասցնեն և նրան աչնպիսի բաներ անել տան, որոնցից: Ինչո՞ւ նա ինքն էլ կը փոշմանի: Ամենապատշաճ երևոյթը աչնպիսի խմբովին չափշտակման նկատուած է օր. Թատրոններում: Բոլորը գիտեն, որ ծափահարութիւնը վարակիչ է: — Ծափի ձայնը, մարդկանց ձեռներին շարժումները, նրանց դէմքի արտապայտութիւնը գրգռում է միտներին, ոգևորում է նրանց և նոյն գոթոգութիւնն է ներշնչում: Նոյն կերպով է բացադրում և ամբոխային գոթոգութիւնները, ինչպէս են պատերազմները, որտեղ մարդիկ ինքնամոռացման չափ չափշտակման են հասնում, և աչն:

Տարբի խօսքերով, հասարակութիւնը կարելի է նմանեցնել հանդարտ լճի, որի մէջ երբեմն քարեր են քցում: — Այլիքները լաւանում են, տարածում են, հեռանում են միշտ աչն կէտից, որտեղ քարն ընկաւ, մինչև որ հասնում են ափերին: Աչնպէս տրամադրած ամբոխի մէջ մի բաւ է ընկնում և աչգ դառնում է աչն քարը, որը ալեկոծում է ծովը:

Նոյն միտքը չաւանում են ուրիշ գիտնականներ, որոնք համեմատում են ամբոխը վառօդի հետ, որը կը բռնկի իսկոյն, եթէ նրան մի կաշի մօտեցնեն. աչս պատճառով ամբոխի որոշումները և գործերը չաճախ (եթէ ամբոխը ճախապէս պատրաստուած չէ մի որ ևէ որոշման համար) պատահական բնաւորութիւն են կրում, որովհետև կախումն ունեն պատահական դէպքերից: Քանի որ ամբոխը շատ հեշտ ենթակալ է ներշնչումների, նա կարող է չափշտակել մէկի մի խօսքով, մի շարժումով, որը կը դառնալ վառօդի պալթեցնող կաշի:

Մի երկրորդ նշանատու կէտ ամբոխի հոգեբանութեան մէջ — աչն է, որ ամբոխը աւելի տրամադիր է դէպի չարը քան բարին: Հասարակ լեզուով աչս նշանակում է, թէ ամբոխը աւելի հեշտ հետևում է չար քան բարի օրինակին:

Սիգելէն իր «Յանցաւոր ամբոխ» գրքի մէջ ուսումնասիրում է աչգ վերին աստիճանի կարեւոր փակտը:

«Մի խումբ միացնելով բարի մարդկանց, դուք երբեք չատ լաւ հետեանքների չէք հասնի, ասում է Սիգելէն, — չաճախ հետեանքը միջակ կը լինի, երբեմն էլ չատ վատ»:

«Հերոսութիւնը, առաքինութիւնը, բարութիւնը, շարունակում է նա,

կարող են միայն անհատների չափերով լինել, բայց երբեք, կամ համարեա երբեք, չեն նկատուում մեծ ժողովներում: Ամենաթեթև դիտումն ապացուցանում է մեզ այդ —ամբոխը միշտ սարսափ է ազդում, ոչ մի լաւ բան սպասելի չէ նրանից: Ամենքը գիտեն, որ չարագործութեան, խելագարութեան օրինակները կարող են ամբոխին զէպի չարագործութիւն մղել, ահա ինչ շատ հազիւ է պատահում, որ բարի մարդու ձայնը կարող լինի հանգստացնել նրան»:

Այստեղից Սիգելէն եզրակացնում է թէ՛ «Ամբոխը մի շրջան է, որի մէջ չարութեան միկրոսը չափազանց հեշտ է զարգանում, ահա ինչ բարութեան միկրոսը համարեա միշտ մեռնում է»:

Հեղինակները աշխատում են գիտնական բացաղութիւն տալ այս օտարօտի, բայց և ահապէս անհերքելի ֆակտին: Մենք կ'ամփոփենք մի քանի խօսքերով:

Ինչպէս տեսանք, ամբոխը իր գործողութիւնները կատարում է չափշտախման մէջ, մէկի կամ մի խումբ մարդկանց ներշնչումով, ուրիշ խօսքերով թովչութեան, չի պնդում մէջ. իսկ գիտութիւնը մեզ ուսուցանում է, որ հիպնոսական դրութիւնը չարութեան մէջ քնած հոգեկան դրութիւնները:

Վերջին, Բերնհեյմը, Դեպինը, Սիգելէն և ուրիշները կարող էին ուրեմն ահա եզրակացութեան գալ, թէ մարդուս հոգու մէջ պահպանւում են դեռ ևս ահա գազանութիւնները, որոնք նրան մօտեցնում են գազաններին և որոնց նա ժառանգել է իր նախահայր գազաններից:

Սակայն մարդուս մէջ կան նաև լաւ չափերով լինելներ: Ինչի ուրեմն միշտ չար չակումներն են չաղթող հանդիսանում?:

Սիգելէն ի միջի աչոյց տալիս է սրան և հետեւեալ բացաղութիւնը, որը շատ հիմնական է և չարմարում է հիպնոսական գիտութիւնների ցուցմունքներին:

«Չարութիւնը աւելի ներգործական է (actif, активный), քան թէ բարեսրտութիւնը, որովհետև չար մարդկանց դասակարգը բաղկանում է ահնայիսներից, որոնք աշխատում են ուրիշներին վնաս հասցնել, աշխարհ ներդրածական դեր խաղալ, ահա ինչ բարիները ահնայիսի մարդիկ են, որոնց ցանկութիւնն է երբեք ուրիշի վնաս չտալ, ուրիշ խօսքերով, սրանք չեզօք մարդիկ են: Ահներն է, որ միայն գործունեալ մարդը (ինչ ուղղութիւնով որ լինէր նրա գործունեութիւնը) կարող է ազդել ամբոխի վրա, հետեւաբար և չարերը պէտք է միշտ չաղթող հանդիսանան և իրանց ևստից քաշեն նոյնպէս և չեզօքներին»:

Անտաբակուս, ամբոխի մէջ գտնւում են միշտ մարդիկ, որոնք չեն

մասնակցում ամբոխի շարժմանը և մինչև անգամ աշխատում են կանգնեցնել նրան, բայց ապախոսները շատ սակաւաթիւ են և եթէ կան էլ չեն խնդգնում կատաղի, գրգռւած ամբոխին դէմ կենալ, որովհետեւ իրանք էլ զոհ կը գնան:

Վազանութիւններ կատարող ամբոխը բաղկացած է նախ շարագործներից ու շանցաւորներից և չետուլ—թուլակամներից, որոնք հեշտութիւնով ընկնում են առաջինների ազդեցութեան ներքոյ, ալոնքն հիպոսուում են նրանցից:

Նկատւած է, որ ամբոխին դէպի սոսկալի ոճիրներ զրդողները չաճախ եղել են հին շարագործների, կամ ալոնքի տնային տնային, որոնք սովոր են արիւն տեսնելու, ինչպէս մտաւաճառները, զինւորները, դաւաճները, ալոնք ինչ թուլակամների դասը կազմւում է կանանցից, թուլակազմ և հեշտ լափըշտակող երիտասարդներից: Այս վերջինները աչնպէս շուտ և հեշտ թովալթեան մէջ են ընկնում, որ չաճախ հետեւում են իրանց թովալթին, կատարում են նրա ցանկութիւնները և անկարող են դառնում փախչել նրանից: Աստեղանի դէպքը մի դարմանալ օրինակ է այս ձևի թովալթեան:

Ֆրանսիական դաւաճներից մէկում երևում է մի դարչելի, կապ 25 տարեկան մուրացկան և իշխանում մի ոմն Հիւզի տանը: Ճաշի ժամանակը իր օտարօտի ձևերով, զաղտնական շարժումներով ահ է զցում տան աղջկալ, ժողեֆինի սիրտը, որը սկսում է վախենալ նրանից: Հետեւալ օրը նախ մուրացկանը ներս է մտնում, երբ հայրը բացակա է լինում, և աղջկան մենակ գտնելով, նրա շուրջը գծեր է քաշում, խաչակնքում է և ալոն: Ախտօրին ճաշում է նրա հետ և ճաշի միջոցին Աստեղանը ձեռով նշան է անում, իբր թէ բան է զցում նրա զգալի մէջ: Այն ժամանակ աղջիկը, որը երեկանից արդէն սարսափի մէջ էր, ուշագնաց է լինում: Մուրացկանը առեւանգում է նրան, և ալո խեղճ աղջիկը անկարող է լինում զիմագրել, թէն նա զգում էր, թէինչ է կատարւում և ցանկանում է արգելել: Ժամը 4-ին թէն ուշքի է գատարւում և ցանկանում է արգելել: Ժամը 4-ին թէն ուշքի է գատարւում միշտ թովալթեան մէջ հետեւում է այս դարչելի մարդուն, անց է կացնում նրա հետ հեռեւեալ գիշերը մի ուրիշ տեղ և աչնպէս գիւղից գիւղ է անցնում նրա հետ: Ժողեֆինը ողջում է իր գրութիւնը, զլւանք է զգում դէպի իր արարքը, աշխատում է փախչել, իրան ջուրը նետել, որպէս զի փրկի, բայց բաւական է լինում Աստեղանի մի խօսքը, մի հապացքը, որ աչս սղորմելի արարածը հետի նրան: Մէկ անգամ գիւղացիք դուրս արեցին Աստեղանին, և ժողեֆինը կիսամեռ վալը ընկաւ գետին: Վերջապէս չաջողւում է նրան փախչել:

1820 թ. Հնդկաստանում ձեռքաւարեցին մարդկանց մի խումբ, որոնք

լատնի էին «երկխաչ փախցնող» անունով, վեց տղամարդ և երեք կանանցից բաղկացած։ Սրանք թափառում էին և երեխաներին տոխպում էին հետեւել իրանց, թովչութեան մէջ դցելով նրանց։ Ահա թէ մինչև որ աստիճանի կարող է կորցնել մարդ կամքը, թովչութեան ազդեցութեան ներքոյ։

Ճշմարիտ է, մեր բերած օրինակները հարաբերող օրինակներ են, բայց միթէ քիչ կան մեր մէջ ժողեֆիներ, գուցէ աւելի մեղմ արտապատկերներով։

Հասարակութիւնը լիքն է նորնանման անձնաւորութիւններով, որոնք չունեն կամք, անկունութիւն, կրիտիկական հոգի, և միշտ ընկնում են սրահնար թովչութեան (ուրիշ խօսքերով ազդեցութեան) ներքոյ, — սրանք իտալալիք են զառնում աչն ամեն մէկի ձեռին, ով կամենում է ազդել նրանց վրա։ Հիպնոսումն աչս մարդկանց մէջ ծաղրահեղութեան է հասած։ Սրանք տարուբերում են կեանքի մէջ, նաւելով թէ որտեղից է փչում քամին ու վերջ ի վերջոյ հասնում են աչն աստիճան թովչութեան, որ դադարում են որ և է դիմադրութիւն անել ստացած ներշնչման և դառնում են աչն, ինչ որ ժողովրդական բնորոշ լեզուն դրոշմել է փալատ անունով։

Աւապիսի մարդիկ մեծամասնութիւն են կազմում հասարակութեան մէջ։ Այս ողորմելի արարածներն են, որոնք կազմում են ամբոխների մեծագոյն տարրը և սրանք են, որոնք հետեւում են սրիկաներին, չարապործներին և խելագարներին և, հիպնոսած, ոճիրներ գործում։

Աւապէս, մարդկային գիտութիւնը ուսուցանում է մեզ երկու վերին աստիճանի կարեոր բան։

ա) Ամբոխի մէջ ընդօրինակումն կատարւում է զարմանալի արագութիւնով։ Աւրիշ խօսքերով. — մեծ քանակութիւնով մարդիկ մի տեղ խմբած ժամանակ աւելի արագ և աւելի հեշտութիւնով են ենթարկւում հիպնոսի, քան թէ առանձին։ Ամբոխի մէջ չուզմունքները, կրքերը ալիքների նման լալնանում են, տարածւում, ընդգրկում են ամենքին ըստ պարբերութեան։

և բ) Ամբոխը աւելի տրամադիր է դէպի չարութիւնը, դէպի չանցանքը, քան զէպի բարի գործ։

Մենք տեսնինք սրա բացատրութիւնը, կրկնելով գիտնականների կարծիքը, աչն է, թէ հիպնոսական դրութեան մէջ չարւում են մարդուս սրտում աչն զազանալին կրքերը, որոնք քնած կամ սանձած էին արթնութեան միջոցին (Բերնհայն, Բարբաստ, Լաւերն, Սիգելէ և ուրիշները)։

Հետեաբար, պէտք էր ենթադրել որ բոլոր մարդիկ ընդունակ են

հիպնոսական դրութեան մէջ ամեն տեսակ չարագործութիւններ գործել: Սակաջն ալդ օրէնքը ընդհանուր չի կարելի համարել և ալս կէտը ուսում. նախընտրել արժանի է:

Արթուն ժամանակ մարդու կրթութիւնը ծածկում է նրա ալդ գաղա-
նալին կրքերը, և ամեն անգամ, երբ մարդ գրգռման է հասնում, նրա
կրթութիւնը արգելում է նրան չարութիւններ գործել: Այս կրթու-
թիւնն է, որը սանձադարում է նրա կրքերը, Հիպնոսումն, ոչնչացնելով
ալդ ստացական լատկութիւնը, փչրում է կարծես մարդու սանձը և
հաւասարեցնում է նրան վալրենի գաղանի:

Այս է իրողութիւնը, որը ակներև է թէ արեւստական հիպնոսի
փորձերից և թէ բնական հիպնոսի դրութիւնները զխտումներից:

Սակաջն, ինչպէս ասել ենք, ալս օրէնքը ընդհանուր չէ և բաղմա-
թիւ ուրիշ օրինակներ և փորձեր ապացուցանում են, որ մարդ, մինչև
անգամ հիպնոսական դրութիւններ մէջ, չաճախ չի կա-
տարում իրան անախորժ, կամ իր բարոյականութեան
հակասող ներշնչումներ:

Այս իրողութիւնը, ակներև են արել Պարիզի գիտնականները:
Եթէ մի բարոյական կնոջ հիպնոսի մէջ հրամայենք մերկանալ, նա ալդ չի
անի, իսկ եթէ ստիպենք, կը նկատենք նրա մէջ մի ներքին կուլի արտա-
լատկութիւն, կուլի իր բարոյականութեան և ներշնչման մէջ, և եթէ մենք
առաջը չառնենք, ալդ կինը սարսափելի կարկամումն կ'ունենալ, կամ
լեթարգիաի (խորը և երկարատե քնի) մէջ կ'ընկնի:

Փորձերի հիման վրա իրաւունք կալ ասելու, որ եղեւնագործութիւն-
ներ կատարողները, եթէ ոչ միշտ, գոնէ ընդհանրապէս պիտի կամ չարա-
գործներ լինեն, կամ ինչպէս ենք, ալսինքն, թուլակամներ: Եւ մեծ
«ամբոխալին ոճիրները» պատմութիւնը ցոյց է տալիս, որ միշտ ամբոխին
զլուխ անցնողները եղել են բնածին չարագործներ, որոնք սովորած են
արիւն թափելու:

Նրկիւղալի է ալս ամբոխը, որի մէջ ալսպիսի անձնատրութիւններ
կան, նրանից լաւ բան չի կարելի սպասել և նրա վրա չի աղդի ոչ հա-
մոզմունք, ոչ սպառնալիք, ոչ աղաչանք: Աւելորդ է քրքրել պատմու-
թիւնը, բաւական է միայն չիչել ալս սոսկալի եղեւնագործութիւնները
որոնք միշտ կատարում են Մահմետի աշխարներում, որտեղ կեղեքման,
աւաղակութեան, սպանութեան վարժած գաղան քուրդը ու թուրքը
չեն դադարում XX դարու շէմքին անգամ ալսպիսի սոսկալի ոճիրներ
գործել, որոնք ալս օր ամբողջ քաղաքակրթած աշխարը սարսափի մէջ
են գցել և որոնց «գաղանութիւններ» անունն են տւել, կարծես կամե-
նալով ասել, ալդ էակները նոյն վալրենի գաղաններն են մարդու զմայակի:

Այս ալս օրէնքն է, որը բացաղրում է մեզ, թէ ինչի կրթած, լաւ

մարդկանց խումբը երբէք ընդունակ չէ թուրքերի ու քուրդերի նման ոճիրներ գործել: «Լաւ մարդկանց ամբոխը, ասում է Սիգելէն, թէն կարող է վատ ճանապարհով գնալ, բայց երբէք չի հասնի աչն աստիճան անպիտանութեան, որին կը հասնի վատ մարդկանց հաւաքումն»:

Ինչի՞?

Որովհետեւ լաւ կոչւած մարդը, աչինքն կրթւած, բարոյական, խղճով մարդու մէջ խիղճը և բարոյակոհութիւնը աչնքան արմատացած են, որ երբէք բոլորովին չեն անհետանում հիւսնալի դրութեան մէջ անգամ և, թէն նազած, բայց դարձեալ սանձում են մարդու բնածին գազանութիւնը: Այլ է աչպիսի մարդկանցից կազմւած ամբոխը մի որ և է պատճառով չուզման էլ հասնի ու պատրաստ լինի ոճիրներ գործելու, աչք կը լինի մի արեւստական չուզմունք, և աչք ամբոխին հեշտ է կանգնեցնել: Այս կարելի է նկատել եւ ոպական մեծ քաղաքներում, ինչպէս Պարիզում, Լոնդոնում, որտեղ ժողովները, միտինգները առօրեալ երևութեան են, և որտեղ աչեկոծւած ամբոխը հանդարտւում է մի խելացի խօսքով, համոզմունքով...

Պռեհիկ վալրենի ամբոխը անսանձ է, արդար ու մեղաւորը ճշմարիտ ու սուտը նրա համար միևնոյն է: Եթէ նրա միջից զուրա գալ մէկը, որը ցոյց տալ ամբոխին նրա անարդարութիւնը, նրա սխալը,—նա ամբոխի աչքին դաւաճան կը դառնալ:

Պռեհիկ ամբոխը կը զիջանի միայն զոհիկ ոյժի դէմ: Նրա գաղափարներին սահման չկալ, եթէ նա երկիւղ չունի իշխանութիւնից, կամ իր հակառակորդից: Նրբ մի խումբ անբարոյական մարդիկ զգան, որ ոյժը իրանց կողմն է, նրանց կատաղութիւնը անսանձ է:

Ամբոխային հոգեբանութիւնը առ ալժամ աչս կէտերն է միայն որոշել: Նա խոտոտանում է մօտ ապագայում շատ կիճոտ հասարակական խնդիրներ պարզել ու խիստ գիտնական ֆորմուլաների վերածել հասարակութեան քարդ կեանքը:

ՔՈՒՐԴԻ ՇՈՒԼԻՆ

(Մ'անկադան յիշողութիւնից)

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

Դաժան ձմեռաց օրերին դարձեալ
Քեզ եմ յիշում ես, իմ մանուկ անցեալ,
Երբ տասն նստած քուրսու մօտ գւարթ,
Գուլբա էր գործում—սլատմում ինձ հեքեաթ,
Եւ ձիւնը փայլուն, ինչպէս մանանայ,
Տեղում էր համր դրսում անխընայ,
Մեր բագի շունն էլ, իւր բունը քաշած,
Զիւնի իջնելուն զխտում էր ապշած.
Ես ննջում էի քուրսու մօտ ձգւած,
Քուրսու վերմակը մինչ կուրծքս քաշած,
Եւ ինչ երազներ, ցնորքներ անմեղ
Զէին զրգուում իմ մանուկ ուղեղ...
Մանկարձ սթափում աչքերս բացւում,
Տեսնում եմ տատիս—գուլբա է գործում.
Շիկնած թշերով պարկում եմ նորից,
Էլ չեմ վախենում վատ երազներից.
Պառաւր ինձ մօտ—անվերջ, անընդհատ
Նարունակում է կարծես իւր հեքեաթ. .

*
* *

Բայց ահա յանկարծ մի շարագուժ ձայն
 Լսուում է դրսից — բուռի է նման,
 Մերթ մեղմ բարակ — մերթ խիստ փրփրում,
 Կարծես այդ ժամին սիրտս քրքրում...
 Այդ մեր կատուն էր (նոր եմ հասկանում),
 Իւր հարկանի հետն էր կռւում
 Եւ ցանկապտոից իրա թշնամուն
 Զինւած շանգերով զլորել ջանում:
 — Տատիկ, ճշում եմ, այն ո՞վ է ոռնում՝
 Կարծես նա գաղտուկ ինձ է մօտենում...
 — «Քն՛իր բարս ջան, թագնե՛ր շուտով
 Քուրդի Շուլին է իրա լակոտով...»
 (Այսպէս էր տատս ինձ պատասխանում
 Որ չխանգարեմ գուլբա գործելուն):
 Բայց մեր չար կատուն — մոխրագոյն Կարօն —
 Իւր սլափազմն էր տաք շարունակում
 Եւ էլ գիշատիչ ելեէջներով
 Զարհուրանք ազդող կրքով փրփրում,
 Վախլուկ, մանկական սիրտս քրքրում...

* *

— Տատիկ, վախում եմ Քուրդի Շուլիից,
 Ինչ մօտենում է... ահա իմ կրծքից
 Նա կպաւ յանկարծ... բուկս է ճնշում...
 Եւ քուրսու տակից ինձ ուժով քաշում...
 — «Ս՛ուս, ս՛ուս, բալաս, դեռ Շուլին հեռու է,
 Ս՛ուս, թէ չէ կ'ասեմ, որ զայ քեզ տանէ...»
 Ու գրկում է ինձ, մերթ խաշակնքում,
 Ք/թի տակ ինչ որ աղօթք մրմնջում,
 Մինչ ես շնչարգել վախից կըժկւած
 Նորա գրկի մէջ մարում եմ յանկարծ...

Այլ մանուկ, անմեղ ժամանակներից
 Քանի տարիներ սահել են անցել,
 Բայց Քուրդի Շուլու ձայնը ահռալից
 Յիշողութիւնիցս զեռ չէ գնացել.
 Որպէս զարեւոր անհաշտ թշնամի
 Քուրդը ինձ համար դարձաւ ամենի,
 Եւ մինչ այսօր էլ անունը քուրդի
 Ձեմ կարում յիշել առանց զայրույթի

Նուեմբ. 18-ին 1894 թ.

Թիֆլիս:

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ

Մի լիակատար ու քիչ թէ շատ ընդարձակ մանկավարժական ձեռնարկի պակասութիւնը՝ քանի գնաց ալնքան աւելի զգալի դարձաւ մեզանում: Մինչդեռ հազկական կրթական գործի վերածնութեան կէս դարն արդէն մօտենում է իւր վախճանին, մենք տակաւին չենք հրատարակել մի աշնայիսի երկասիրութիւն, որ ժամանակակից գիտական պահանջներին համապատասխան ներկայացրած լինէր մեր ժողովրդի կրթական պէտքերն ու սրանց հասնելու միջոցները: Տողերիս գրողին երբ վիճակեց արեւմտեան հալերի մէջ գործելու, աշնտեղ ևս առաւել նա զգաց աչք ծանրակշիռ պէտքն ու ձեռնարկեց մի «Տեսական ու գործնական մանկավարժութեան»: Մենք սկսեցինք աչս ծանր գործը ամենատանջող պալմաններում և մեծ կորուստներ կրելով նորից սկսել ենք ու շարունակում ենք կատարել մեր պարտականութիւնը, որքան որ կը ներեն մեր ուժերը: Որովհետեւ մենք մանկավարժութիւն ենք գրում մեր ժողովրդական կեանքի որոշ շրջանի, նրա քաղաքակրթութեան պատմական որոշ ատիճանի համար, ուստի և չպէտքէ բաւականանալինք ընդհանուր տեսութիւններով: Կրթական գործում ընդհանրապէս և ուսուցման մասնաւորապէս ամենակարեւոր ու ծանրակշիռ խնդիրն է որոշել մի ժողովրդի անցեալ ու ներկայ քաղաքակրթութեան ատիճանները և ըստ աշնմ առաջարկել համամարդկային մտաւոր ու բարոյական բազմադարեան վատտակների արդիւնքները, որպէս զի դեռահաս սերունդն ամենակարճ ու բնական ճանապարհով հասնել կարողանար իր կեանքի նպատակին, աշսինքն՝ կատարելագործութեան լօգօտ լուսաւորութեան: Աւ ահա երբ մեր աշխատութեան բնական ընթացքը մեզ աչս խնդրի լուծման հասցրեց, մենք, զգալով նրա ծանրութիւնը և առանձին կարեւորութիւնը, առանց աչլ և աչլութեան չձեռնարկեցինք նրան: Սորանից տարի ու կէսառաջ զիմե-

ցինք լուսաւոր աշխարհներ ժանկավարժական կենտրոնի Կերմանիային և միջազգային կրթական ձգտումների գլխաւոր ներկայացուցիչ պրոֆ. Ռալֆին Նեալում և նրա „Pädagogische Studien“ հանդիսում արտաբնական ցինք ալն դժարութիւններն ու տարակուսանքները, որոնք մեզ պաշարած էին եղել այս խնդրի լուծման գործում: Բաճն ալն է որ մինչդեռ Հերբարտ-Յիլլերեան չկուան, որին հալ մանկավարժներն աննշան բացառութեամբ ու շեղումներով աշակերտել ենք ու հետեւում ենք, ուսումնասիրած լինելով գերմանական ժողովրդի քաղաքակրթութեան պատմական աստիճանները՝ արդէն բաւականին մշակել է ժողովրդական դպրոցների ծրագիրն այս տեսակէտից ու տեղ տեղ, Նան Շէէցարիայում, ուր ազատութիւն ունի, գործադրում է ազգ դասընթացը: Յէ և Հերբարտն ալս սկզբունքի չարուցման պատճառ եղաւ միջնակարգ դպրոցների (գլխաւորապէս զիմնագիտական) տեսակէտից, սակալն նրա աշակերտները նախ գլխաւորապէս ժողովրդական դպրոցների ծրագրի նիւթերն, իբրեւ ամենապարզն՝ ալս ուղղութեամբ ընտրելու և դասաւորելու ձեռնարկեցին և ողորդութեամբ աշխատում են: Եւ ահա, ազգային ու սրբազան պատմութեան դասընթացները չարմարցնելով գերմանական ժողովրդական դպրոցների ութնամեայ շրջանին, կազմեցին հետեւեալ ուրազով մի ծրագիր.

1.	Ուսումնար.	տարի՝	հէքեաթ	Նախապատրաս-
2.	»	»	»	»
3.	»	Հին կտա-	»	»
4.	»	կարան	»	»
5.	»	Նոր կտա	»	»
6.	»	կարան	»	»
7.	»	»	»	»
8.	»	»	»	»

Այս համամարդկային և հրեական տիպար շրջաններից համապատասխան ազգային նիւթեր ընտրելով, ինչպէս պիտի տեսնենք, Հերբարտ-Յիլլերեան չկուան զուգընթացաբար դասաւորում է ու կազմում երկու ասընթեք ընթացքներ համամարդկային ու ազգային քաղաքակրթութեան աստիճաններ:

Բաւց թէ արդեօք ինչպէս պէտք է որոշէին մի ազգի քաղաքակրթութեան աստիճանները, երբ սրանք պատմական անցեալում ահագին ելեէջների են ենթարկել, երբ ազգ ազգն ալսոր շատ ետ է մնացել լուսաւոր աշխարհներից, թնչպէս պէտք է բնորոշել ու առնչութեան մէջ դնել ազգ կիսա-քաղաքակիրթ ազգի պատմական շրջանները ընդհանուրի հետ, որ տարում աւարտել ազգային ու ապա, ի՞թէ հնարաւորութիւն կալ, ղեռահաս սերունդը համամարդկային քաղաքակրթութեան ու թե ան ոք ոչ գիտակցութեան հասցնել, ահա խնդիրներ

որ մեզ զբաղեցրել էին եւրոպական մամուլին զիմեւուց առաջ, կս խնդրել էի մասնաւորապէս աչն մանկավարժներից, որոնց հալոնիքի անցեալն ու ներկան մերիննին մօտ լինելու է իր գրութեամբ, ինձ լուսաբանել աչս խնդիրները, եթէ իրանք արդէն մտածել կամ աշխատել են աչս ուղղութեամբ, Բալլ բաւական ժամանակ սպասելուց լետու վերալինեալ հանդիսի խմբագիր, Նիալի մանկավ. սեմինարի զիրեկտոր ու համալսարանի մանկավարժութեան պրոֆ. Ռաչնից նամակով պատասխան ստացալ որ և ոչ մի կողմից արձագանք գտաւ աչս ծախը և որ լաւ է նախ ես անեմ իմ խորհրդածութիւնները և ուղարկեմ Pädagog. Studien հանդիսին: Ապա ևս տեսնելով, որ իմ հալոնակիցների տւած խորհուրդներն էլ քանի որ խնդիրը մանրամասնաբար չէ առաջարկւած, աչն քան զործնական նշանակութիւն չեն ունենում, վճռեցի նախ ուսումնասիրել աչն խնդիրը, ապա առաջարկել հալ բոնասակրների քննադատութեանն ու աչսպէս վերջապէս ներկայացնել գիրմ. մանկավարժական աշխարհին: Եւ աչն մի համառօտ քաղւածք անելով մեր մանկավարժական ամենաընդարձակ զլիւից՝ ներկայացնում ենք աչն բանասէր ընթերցողներին, որոնց համար թանկ է աչս խնդրի լուծումը և որոնք օգնելու կարողութիւն ունեն ու չեն զլսնալ մեզ իրանց աշակցութիւնը:

Ա. Ընդհանուր տեսութիւնը. քաղաքակրթութեան պատմական աստիճանների մասին: Ուսուցման ծրագիր կազմելը կրթական խնդիրներից ամենածանրակշիռն է, երբ մարդ լիակատար գիտակցութիւն ունի նրա պահանջների մասին և ընդհակառակը ամենազիւրին գործն է, երբ մենք գիտութեանց հարուստ աղբիւրներից կտոր կտոր և սխառեմով նիւթեր ենք առնում ու իրար ետեւից շարում զլիսաւորապէս հեշտութեան ու զժաւարթեան հանգամանքներն ի նկատի ունենալով: ¹⁾ Աչս վերջին եղանակով կազմել են ծրագիրների շատ շատ դարեր ու թերեւս ով գիտէ որքան ժամանակ պիտի նրանք տակաւին շարունակեն իրանց աչլ ընթացքը: Բալլ արդէն նախընդաչ դարում Վէօթէն առանձին ուշք դարձրեց աչս խնդրին ու շեշտեց մասնաւորապէս քաղաքակրթութեան վաստակներ ի գիտակցական իւրացուման կարեւորութեան վրա: Ապա Կանտն ու Լոցէն զբաղւեցին աչս խնդրով, որոնցից վերջինն իր «Մեկրօկոսմոսի» մէջ խօսում է պատմական զարգացման անկանոնութեանց ու նրա մեծամեծ կորուստների, մարդկութեան

¹⁾ Աչս գործում երկու սկզբունքներ—մանկավարժական նիւթ ապաշտութիւնը՝ որքան կարելի է շատ նիւթ աւանդելու ձգտումը, ձեւապաշտութիւնը, մի կամ մի քանի գիտութեանց ձեւական աղբիւրութեան շնորհով բազմակողմանի կարողութիւնների առաջացնելու ձգտումը—միմեկին հիմա էլ մրցում են միմեկանց հետ: Թէ մի և թէ միւս ուղղութիւնից մենք հեռանում ենք:

անդամների անհաւատար զարգացման մասին, որոնք ժառանգական ու ստացական ընդունակութիւններով ծանրակշիւ խոչնդոտներ են առաջացնում դասաւանդութեան առաջ:

Կարուս սկզբում չնորհիւ բնական գիտութեանց արտակարգ հոսանքին՝ քաղաքակրթութեան պատմական ատորձանների խնդիրը մի անգամ էլ մասնաւորապէս շեշտում է Հերբարտի կողմից մանկավարժական տեսակէտից, սակաւն միաշն աչա դարու վերջերում նա ուշադրութիւն է գրաւում:

Հոգեբանական ու բնագիտական գիտութիւնները զարգանալով սերտ լաւնչութիւններ ցոյց տւին մարմնի և հոգու զարգացման ընթացքների մէջ և ապա պատմութեան փիլիսոփայութիւնն ու ժողովրդների հոգեբանութիւնը մի կողմից, մարդաբանութեան ու անհատական հոգեբանութիւնը միւս կողմից միանալով՝ նմանութիւններ գտան մարդկութեան ու անհատի ֆիզիկական, մտաւոր ու բարոյական զարգացման շրջանների մէջ և ալլ համեմատական տեսութիւնն աճեցան առաջ գնաց, որ ասում են հիմա՝ ինչպէս որ անհատի ֆիզիկական կեանքը սաղմաւորից սկսած կենդանութեան աշխարհի ներկայացուցիչների անցեալ ու ներկալ կեանքի համառօտ պատմութիւնն է, նոյնպէս էլ նրա մտաւորն է մարդկութեան զարգացման պատմութեան համառօտութիւնը: Այսպէս մարդու մարմինը մի անձնան, հասարակ աչքին մինչև անկամ անտեսանելի դրութիւնից զարգանում է և հասնում, զանազան կենդանական ատորձաններից կերպարանափոխելով՝ հրաշալի կատարելութեան: Նրա մտաւոր կեանքը տարրական զգալարանական տպաւորութիւններից, մտապատկերներից, բաղադրում ու հանում է բարձր իմացականութեան: Միաշն թէ, դիտում է Պ. լանգէն, ալլ համեմատութիւնը կարելի է անել միաշն սաղմաւորն վիճակի մասին, որովհետեւ ախտաքին աշխարհի պատահական հանգամանքները ալլ ընթացքը շատ փոփոխել կարող են: Օր. հալ գիւղում ծնած մանուկը շատ երկար մնում է նահապետական դաղափարների մէջ, եւրոպական գիւղում կամ մանաւանդ քաղաքում՝ նորագոյն քաղաքակրթութիւնը շատ աւելի վաղ է ազդում մանկան վրա: «Նոյնպէս էլ, շարունակում է նա, մեծ տարբերութիւն է գուրս գալիս նախ և առաջաւն իրողութիւնից, որ մեր օրերի մանուկը բնածին ունակութիւններ է իր հետ աշխարհ բերում, ուստի չափնի մտաւոր գործունէութիւններ նրա մէջ աւելի վաղ են երևան գալիս» քան քաղաքակրթութեան առաջին շրջանների հասակաւորների մէջ: Ռաշը իր Schuljahr ների 5-4 հրատ. էջ 47 իրաւամբ դիտում է, որ ընդհանրութեան զարգացման մէջ երևան են գալիս միմեանց ևսից մտապատկերների որոշ շրջաններ իբր տիրապետող, որոնք որ և է ժամանակի մտածելու, զգալու և կամենալու վրա իրանց գրոշմն են դնում և իրանց ծուծը ներկայացնում են գրական ու

գեղարեստական վիշտակարաններում»՝ Նոյն տեսակէտն է արտապատում լանդշէն իր նոյն Apperception մինադրութեան Բ. հին հրատարակութեան 102 երեսում: Այս երեւոյթներն իհարկէ նկատել են նաև հին ու նոր ալլ մանկավարժներ ու հոգեբանները. նրանց կարծիքների տարբերութիւններն իւրաքանչիւր հասակին չատուկ գերակշիռ ձգտումները բնորոշելու սէջն է: Եթէ մեզ չաջողւի մի կողմ թողնելով անհատական ու ժողովրդական կեանքի պատահական երեւոյթները՝ նրանց մտաւոր ու բարոյական զարգացման բնորոշող շրջանները սահմանել ու զուգընթացաբար դասաւորել, աչն ժամանակ անս և պատրաստ կը լինի մատաղ սերնդի իւրաքանչիւր տարեշրջանում անցնելիք քաղաքակրթութեան աստիճանը: Եւ ալս աստիճանների համադրմամբ կը կազմէր որ և է դպրոցի ծրագիրը, նախելով թէ ալս հաստատութեան հանգամանքներն ինչ աստիճանի մանրամասնութիւն են թուլ տալիս: Այնպէս որ մի ղէպքում կարող էինք մի աստիճան ներկայացնելու համար աւելի քան մի տարի ունենալ, միւսում՝ կէս տարուց ոչ շատ աւելի:

Քաղաքակրթութեան պատմական աստիճանների խնդրով մանկավարժական տեսակէտից պարապողները, Հերբարտից զատ, գլխաւորապէս եղել են պրոֆ. Յիլլէր, ուսուցիչ Օ. Բալէր, պրոֆ. Ֆոխտ, Ղիրեկտօր Հարտման և մի շողաժողիւր «Վերմանական» ընդհանուր ուսուցչական լրագրի»: Մենք ալս համառօտ քաղաժքի մէջ չկարողանալով մի աւ մի առաջ բերել նրանց տեսութիւններն ու նրանց մասին մեր արած բաղդատական եղրակացութիւններն՝ ալստեղ շարադասում ենք միաչն կարճառօտ հետեանքները:

Ա. Նախապատմական առաջին շրջանում ժողովրդների կեանքում գերակշռում է երեակաչութիւնը, որ արտադրել է առասպելական դարը: Աչն կեանքի անգիր բանահիւսութեան արտապատութիւնն է հէքեաթը, որ բոլոր ժողովրդներին չատուկ է թէ իր գոյութեամբ և թէ իր հոգեբանական հիմնական երեւոյթներով: Հէքեաթները բազմաթիւ դարերի ընթացքում որքան էլ փոփոխւած լինէին քաղաքակրթութեան նորանոր ազդեցութեան ներքոյ՝ աչնուամենաչնիւ նրանք մնացել են և մնում են 6-7 տարեկան մանկան սրտին ու հոգուն մօտ և սիրելի, ուստի և նրանք պէտք է կազմեն առաջին տարւաչ հիմնական ու կենտրոնական նիւթը:

Բ. Նախապատմական երկրորդ շրջանում հետզհետէ սկսում է գերակշռել իրականութիւնը: Թէև երեակաչութիւնը չի դադարում դեր կատարելուց, սակաչն նա հիմա ուղղւած է ոչ թէ հմալութեանց աշխարհը, ալս ղէպի գործնականութիւնը, որով ստեղծում է իր կեանքի համար նորանոր չարմարութիւններ զանաղան արհեստների և հարադիրութեանց չնորոգել: Աչն շրջանի կեանքը լաւաղոչն կերպով արտապատում է Ռոբին-

գոնի պատմութեամբ, որ վիպական գրաւիչ ձևով մեզ ներկայացնում է անհատի և ապա ընկերութեան մաքառումը բնութեան հետ, թէև սահմանափակ ու միակողմանի պայմաններում՝ գուրկ ընտանեկան բազմակողմանի երևութներին: Քաղաքակրթութեան պատմութեան մէջ ալս շրջանը որսորդական է անանում, որի բնորոշիչ բնականիշն է թափառականութիւնը, կեանքի աստանդական եղանակը:

Գ. Մարդկութեան կեանքի զուտ պատմական շրջանը նախապատրաստում է վերջապէս գիւցազնական դարով, որի մէջ ընկերական կեանքն արդէն բաւական զարգացած է երևում մեզ, թէև գերակշռող երևութը ոչ թէ բարոյական սկզբունքներն են, այլ ֆիզիքական ուժը: Աւանդանշույտ բուսութիւնը, թոյլի լուծ կրելը զօրաւորի իշխանութեան տակ պէտք է գերակշիռ գերկատարած լինէր, ալսինքն՝ դեռ ընկերավարական (սոցիալական) քառականի (մորալի) առաջին աստիճանի երևութները: Բնական ուժերի դէմ մարդկութեան կռիւը շարունակում է ալս շրջանում: Զբաղման տեսակէտից խաշնարածութիւնը իբրև բնորոշիչ երևութ աւելին դեր խաղացած չէր կարող լինել, նա որսորդութեան հետ պիտի նախապատրաստած լինէր չնտաղաչ անապետական դարու արօտական կեանքը:

Գ. Նահապետական դարում թէև երևակաւութիւնը ժողովրդական կեանքի մէջ չէ դադարում իրականի հետ դործելուց, սակայն նա հետզհետէ տեղի է տալիս իրականութեան առաջ: Պործնական կամ բարոյախօսական տեսակէտից ընկերական կեանքի զարգացման ալս աստիճանն է երևան գալիս, երբ նա վստահութեամբ (ասում են նաև կուրօքէն), հնազանդում է գլխաւորին, ալսինքն՝ նա համակերպում է իշխանաւորի կամքին՝ առանց պատողութեան: Օրէնքի տեղ դեռ իշխում է անարդարութիւնը հեղինակութեան չնորհով: Մանուկն էլ իր 8-9 տարեկան հասակում ծնողներին ու ապա նաև դատարանների վերաբերութեամբ նոյն գիրքն է բռնում, ալսինքն հնազանդութիւն է ցուց տալիս առանց քննադատական խորհրդածութեանց մէջ մտնելու: Ուստի ալս շրջանի նկարագիրն ամենից շատ կարող է համապատասխանել նրա զարգացման աստիճանին: Ժողովրդի մէջ տիրապետող գրաղմունքն է խաշնարածութիւնը, արօտական կեանքը, որ նրան հաստատուն դրութեան չէ հասցրել: Ուսումնարանական կեանքում կենդանիներ խընամատարութիւնը պէտք է լինէր ալս քաղաքակրթական աստիճանի արտապայտիչը:

Ե. Գատաւորներին դարում աւելի բարձրանում է ժողովրդների մտաւոր ու բարոյական կեանքը, նրանց միտքն ու երևակաւութիւնը ազատ շարժել է սկսում՝ հեղինակութեան և նիւթաւ ալ շրջանում: Ընկերութիւնը հնազանդութիւն է ցուց տալիս իր աւատէր ընդ-

հանրական կամքին, որ առաջնորդում է քաղաքական արդարութեան սկզբունքով, ախինքն՝ օրինական ճանապարհով պաշտպանում է ընդհանուր իրաւունքը՝ ազատութիւն և հաւասարութիւն վաւելելու։ Այսպիսով սկսում է պատմական շրջանը և պետական կազմակերպութիւնը գործում է ընդդէմ կամաւակահութեան ու ըռնութեան։ Ձեռագմունքներից ամենագլխաւորն այս շրջանում երկրագործութիւնն է, որ հաստատուն դրութեան է հասցնում ընկերութիւնը և նրան քաղաքակրթութեան վաստակներին աւելի ընդունակ դարձնում։ Այս կեանքն ըմբռնելուն շատ կը նպաստէր դըպրոցական պարտէզը, ուր աշակերտները նաև գործնական տեսակէտից պէտք է ճանաչեն նրան ու զգան նրա քաղցրութիւններն ու դառնութիւնները բնութեան գրկում։

Զ. Քաղաքակրթութիւնը, աւելի առաջ ընթանալով, մշակում է մի նոր հեղինակութիւն՝ լանձին թագաւորի և այսպիսով սկսում է իր թագաւորական դարու շրջանը։ Ժողովուրդը հպատակւում է այդ հեղինակութեանը լիակատար ինքնագլխակցութեամբ և նրա անհատների մէջ մտածման անդրադարձ եղանակն է երեան գալիս։ Պատմական կեանքն ուրեմն շարունակւում է և ընկերական կեանքը աւելի ազդու կերպով է ղեկավարւում քաղաքական արդարութեամբ։ Պատանին 11—13 տարեկան հասակում աւելի բարձր ձգտումներով սոցորւած հասկացողութեան է հանում, նրա խորաբերութիւններն աւելի խելամոռութեամբ են առաջնորդւում, ուստի և նրան այս պատմական շրջանի մէջ մտցնելու ժամանակը հասած է։

Այս շրջանի արտապատիւն է քաղաքացիական կեանքը, որ դեռ իր արհեստներով ու առևտրով է զբաղւած ու հեռու է բազմազորոգ գործարանական կեանքից ու համաշխարհային վաճառականութիւնից։ Դըպրոցական արհեստանոցն էլ այս հասակում պատանիներին պէտք է մոցնէ աչն միջնադարեան կեանքի երևութիւնների ու աշխատութեանց տապարէզը։

Է. Եւ վերջին շրջանում ժողովուրդը հանում է փիլիսոփայական հաեցւածքների, նա հարցաւորւում է շրջապատող երևութիւններն ու առարկաներն ըստ պատճառականութեան, ըստ ծագման, վերջնական նպատակին և այլն։ Նրա կեանքը մշակման որոշ աստիճանի է հասած, Քրիստոսն էական ոգին արտապաշտւում է նրանում կատարելութեամբ ու բարեացականութեամբ։ Այս հասարակութիւնը ձգտում է դէպի մի ընդհանրական կէտ, մտաւոր ու բարոյական կատարելութիւն։ Խոհականութիւնը գերակշռւում է և քաղաքական իգէտաներն են կեանքի ուղեցոյցները։ Այս ընթացքի հետևանքն է նաև արդարութիւնը ժողովրդների անտեսական կեանքի մէջ, ախինքն՝

հարուստների ու աղքատների մէջ գտնւած անդունդը լցում է և թշուառութեան առաջն առնւում: Ժողովրդի զբաղմունքն այս քաղաքակրթական ատրիճանում հասնում է գործարանական դրութեան, որ է մեքենայի գերակշիռ դիրքը տնտեսական ասպարէզում: Այս աշխատութեան շրջանի մէջ մտնելու համար սաներին նախ պատրաստում է ուսումնարանն իր ֆիզիկական ու քիմիական աշխատանոցներում:

Քաղաքակրթութեան զարգացման ընթացքն այսպէս բնորոշ կերպով ուրազծելուց լեռնոյ գլխինք, որ, ի հարկէ, և ոչ մի ազգ անցած չէր կարող լինել այս ճանապարհներից այդպիսի անխառն երևոյթներ ներկայացնելով: Այդ ուրազիծը ցուց է տալիս միջին և իդէալական դրութիւնները, որոց վերջինն աստիճանը մինչև անգամ տակաւին չէ էլ իրադրուել ոչ մի քաղաքակրթ աշխարհում: Նա վերապահւում է ապագայ աւելի բարձր ձգտումներով տողորւած լուսաւոր զարերին:

Հաշկական քաղաքակրթութեան աստիճանն և իր որոշելու գծաւորութիւնն և բը:

Գիտենք որ հաշ բանասէրը տարակուսանքով ու կասկածներով պիտի կարդաւ այն ծանր խնդրին նւիրւած մեր տողերը, այսինքն՝ նա ճիշտ այն տրամադրութեան մէջ պիտի մտնի, ինչ արամադրութիւն որ մենք ունէինք այս գործն սկսելուց առաջ: Բայց և այնպէս այլ է տարակուսանքը, այլ է լուսահատութիւնը Միթէ ազգային և օտարազգի հաւագետների մանրակրկիտ հետազոտութիւնները՝ մեր և ընդհանուր մարդկութեան քաղաքակրթութեան մութ կէտերը լուսաբանելու համար չին: Մէք իբր մանկավարժ արտապտում ենք մեր կարծիքները կրթական տեսակէտից և հրաւիրում ձեռնհասների ուշադրութիւնը ու խնդրում նրանց օժանդակութիւնը:

Այս խնդրով մեզանում գործնականապէս զբաղւել են գլխաւորապէս Մանդինեանց, Բահաթրեանց և Աղաչեանց: Առաջինն իր «Վնտանեկան Աշխարհում» ներկայացնում է Սրուանձտեանի հէքիաթների ժողովածուից քաղւածքներ՝ իբր առաջին տարւալ նիւթ, իսկ Բահաթրեանց իր «Առաջին ընթերցարանում» Գրիմի գերմանական հէքիաթներից: Այս մասին երկու մանկավարժների վիճաբանութեանց վերաբերութեամբ մեր հայեցակէտը պարզելն այստեղ մեզ հեռուն կը տանէր: Առժամանակ այսքանս ասենք, որ մենք Մանդինեանցին համակարծիք ենք, երբ նա առհասարակ ազգային անգիր բանահիւստութիւնը նախապատիւ է համարում, սակայն ճիշտ է նաև Բահաթրեանցի այն կարծիքը, որ այդ ժողովածուի հէքիաթները շատ աղքատ են մանաւանդ բարոյական հանգամանքներով, որ ընտրութեան գործում մեր գլխաւոր ուղեցույցը պէտք է լինի: Բարբրախտաբար Աղաչեանցի, Քամալեանցի և մասամբ Սրուանձտեանի հէքիաթներն ունին այնքան նպատակաւորմար նիւթեր, որ այլ ևս պէտք չկայ

օտար աղբիւրների գիմելու¹⁾։ Սրտանձտեանի («Ստունցի Գաւիթը») կազմում է Մանգինեանցի «Գիւցսոգնական աշխարհի» նիւթը, որին համապատասխանում է Աղաթեանցի գրքում զետեղած «Տարք-Անգեղը» և «Հալկանուշ գեղեցիկը»։ Ապա Մանգինեանց իր «Հասնապետական ու հալքերի աշխարհում» Ս. Գրքի պատմութիւններից զատ ներկայացնում է Նաե հալկական կեանքից նոյն աստիճանին վերաբերեալ նիւթեր։ Աղաթեանցն իւր «Ուսումն մալքերի լեզու» ա. և բ. գրքերումն էլ նախապետական կեանքի վերաբերեալ նիւթեր տալիս է հէքիաթների հետ։ Ուրեմն նա ազատ է վարում այլ նիւթերի հետ և աւելի ազատ ընթերցանութեան համար է տալիս, քան քաղաքակրթական որոշ աստիճաններ ներկայացնելու նպատակով։

Հիմա վերանայով մի աղբի քաղաքակրթութիւն ներկայացնող գըլխաւոր աղբիւրները, բանաստեղծութիւնը, պատմութիւնն ու փիլիսոփայութիւնը, տեսնենք թէ մեր ներկա սերունդն իր աղբի նախնի կեանքի օրինակով ինչ աստիճան կարող է տեսնել մարդկութեան փոփոխութեան երևութիւնը։ Քաղաքակրթութեան արդիւնքները՝ ժողովրդական կեանքի կարգ ու կանոնները, օրէնքները, վարք ու բարքերը, սովորութիւնները, նրա անգիր բանահիւտութիւնը, գրականութիւնը, արհեստ ու զեղարեստը, առեւտուրը ներկայացնելու համար մենք գիմելու ենք վերալիշեալ երեք աղբիւրներին։ Բալց հէյն ալստեղ երևում է մեր նախնիքներից մնացած նիւթերի թերութիւնը։ Ոչ մեր անցեալն է մշակել փիլիսոփայական գրականութիւն և ոչ ներկան, անգիր բանահիւտութիւնն էլ թէև հարստութեան հետքեր թողել է, սակաւ մեր հաւաքած արտադրութիւնները գիւկցիտուր և թերակատար են, ահպէս որ մնում է գլխաւորապէս պատմական գրականութիւնն իբր քիչ թէ շատ բազմակողմանի արտադրտիչ մեր անցեալ քաղաքակրթութեան։ Հետեւաբար մեր նոր սերունդն աւելի պէտք է զգում իր աղբի քաղաքակրթութիւնն ուսումնասիրել՝ դուզնթացաբար համեմատելով աւելի լուսաւոր աղբերի հետ։ Մեր աղբն իր անցեալով կարող է մարդկութեան անգամներ իմէջ քաղաքակրթական անհաստատութեանց, կորուստների և մեծամեծ անկումների տխար հանդիսանալ, որ նաեւ աչս անկանոնութեանց պատճառով զժաւրացնում է մի չառաջի մական աստիճանացոյց կազմելու գործը։ Մենք սրտնեցինք մեր ձեռքի տակ եղած կրթական սուղ աղբիւրների մէջ մեր անցեալ քաղաքակրթութեան վերաբերեալ նիւթերը, սակաւ մենք հեռու ենք ենթադրելուց որ պիտի կարողանանք եղրագծելով ներկայացնել զուտ աղբալին բնորոշ չառկութիւնները, նաեւ մեր կեանքում բնականաբար օտարսմուտ տարրերը կամ հետզհետէ անզգալի կերպով մշակելով միացած պէտք է լինէին մեր բուն աղբալին մտքի և զգացմունքների արտադրութեանց հետ և կամ թէ չէ՝ արեւստական կերպով մուտք գործած լինելով՝ անհետեանք մնացած։

(Շարունակելի)։

¹⁾ Նորերս լսեցի, որ մեր ժողովուրդն էլ գիւղերում գիտէ «եօթը ուլերի» գեղեցիկ հէքիաթը, որ Բահաթրեանցի ժողովածուի լաւագոյն հէքիաթներից միսն է։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

(Շարունակութիւն ¹⁾)

IX

ԴԱՐՁԵԱԼ ՍՄԲԱՏԸ ԼԵՒՈՆԻՆ

Սիրելիս, քեզ ինչ պոտանեց? Ինչու չես պատասխանում նամակիս? Յագնեցիր, ինչ է, իմ անվերջանալի տրտունջը լսելով?

Քո նամակներն են միայն, որ ինձ մխիթարում են երբեմն։ Այժմ ես այնքան տխուր եմ, որ ասել չէ կարելի։ Ես անիծում եմ ամեն օրը, որ համաձայնութիւն տւի մեր զբաղոնին նրա խմբի մէջ մնալու։ Բայց միւսնոյն է։ Այս տարին մի կերպ քաշ կը տամ։ Այնուհետեւ... հեշտ է։ Ես շարունակեմ մեր դպրոցի արդի վիճակի նկարագրութիւնը։ Ես հաւատացած եմ, բարեկամս, որ մեր ուսումնարանը իւր ներկայ դրութեամբ ամեն մի մտածողի ցաւ պիտի պատճառէ։ Էլ ծիծաղի տեղի չէ մնում։ Նոյն իսկ Վադայէլի կրթարանը, որի նպատակն է ծիծաղը, այլ ևս չէ կարողանում անհող ծիծաղել, նորան մնում է միայն ազնիւ բարկութեամբ լըցուել և իւր մաղձն ու թոյնը չորս կողմը թափել։

Մեր Դրակոնի դրութիւնը այժմ տրագիկոմիկական է։ Նորա նպատակը բոլորովին հակառակ կերպով է իրագործւում։ Նա աշխատում էր յարգանք և սէր տեսնել իւր սաների մէջ, դորա փո-

¹⁾ Տես «Մուրճ» 1894 թ. № 1, 2, 3, 4 և 11—12.

խարէն նա տեսնում է օրէցօր սաստկացող յանդուգն և ըմբոստական ձգտումներ:

Նա կամենում էր աստուածավախ և բարեպաշտ սրբերի մի ժողով պատրաստել, պատրաստեց ամբարիշտների մի բազմութիւն: Նա ուզում էր երախտիք թողնել սաների վերայ,— վաստակեց իւր համար միայն ապերախտ և ռիսերիմ թշնամիներ: Յայրայեղութիւնը առաջ բերեց մի ուրիշ ծայրայեղութիւն: Աշակերները իրանց աչքմ աջնքան վատ են պահում, որ կարող եմ հաւատացնել, նոյն իսկ ես, որ աջնքան ներողամիտ եմ, պախարակում եմ նոցա վարմունքը:

Մեր Գրակոնը, ի հարկէ, տեսնելով այս ամենը, ցաւում է և, երևի, զգում, որ իւր բռնած ուղղութիւնը շատ էլ նպատակադամար չէ: Սակայն նորա ինքնասիրութիւնը և հպարտութիւնը այնքան մեծ է, որ չէ ցանկանում ոչ մի զիջում անել իւր սկզբունքներից: Ընդհակառակը, զնալով աւելի և աւելի մաղձոտ և անհամբերող է դառնում: Որքան ծայրայեղ կերպարանք է ստանում բարք ու վարքի անկումը, այնքան աւելի ծայրայեղ է դառնում և նորա յամառութիւնը:

Թող իմանան աշակերտները, նոցա հետ միասին և ծնողները, թող իմանայ և հասարակութիւնը, կարծես մոտածում էր Գրակոնը, որ նա խիստ սկզբունքի տէր մարդ է, տոկոսն է, անվհատ և աներկիւզ:

Տես, Լեւոն, և ինքդ դատիր:

Սաները այլ ևս զլուխ չեն տալիս ուսուցիչներից շատերին ոչ դպրոցի շինութեան մէջ և ոչ փողոցում. յարգանքի բացակայութիւն: Գոնէ երկիւղը հարկադրէր, որ նոքա կեղծէին: Այն էլ չէ օգնում: Յաճախ տեղի է ունենում, օրինակ, մի այսպիսի տեսարան: Մի որ և է ուսուցիչ, կը տեսնես, վիրաւորւած ինքնասիրութեամբ դալիս է տեսչի մօտ և զանգաւորում:

—Պր. տեսնուէ, մինչ այն աստիճան տներես և անպատիտ են դարձել աշակերտները, որ ուսուցչին ոչ միայն չեն բարեւում, այլ նոյն իսկ արհամարհում են: Սա կարելի բան է? Երևակայեցէք, Աղաջանեանը պատահեց ինձ երէկ փողոցում և երեսը շուռ տեց, իբր թէ չէ նկատում:

—Վերականգնու, գոչում է տեսուչը զայրացած,—Աղաջանեանին այս րոպէիս կանչիր այստեղ:

Աշակերտը գալիս է:

—Դու չդիտես, որ աշակերտը պարտական է գլուխ տալ իւր ուսուցչին?

Ապերախտ! Ազգը քեզ ձրի ուսում է տալիս նրա համար, որ դու այդպէս քինթդ վեր քաշես?

—Պարոն տեսուչ...

—Սնու, փուչ անպիտան!

—Պարոն տեսուչ, ես...

—Լաւիր, դեռ ուզում է իրան արդարացնել: Կորիւր աչքիցս! Դասարանում այսօր բոլոր դասերին կանգնած կը մնաս անկիւնում! Միւս անգամ էլ չհամարձակես, եթէ ոչ՝ դուրս կ'անեմ, հասկա՞նում ես դու?

—Պարոն տեսուչ, ես չեմ նկատել: Եթէ նկատած լինէի...

—Ես լսել չեմ կամենում. եթէ ձեզ թողնեն, դուք կ'սկսէք ձեր սոփեստութիւնը մէջ տեղ բերել... ճանաչում եմ ձեզ!... զնն կորիւր! Ան-պի-տան!

Աշակերտի ինքնասիրութիւնը վիրաւորւում է այն ածականներով, որ տեղում են վերան, և նա հեռանում է դժգոհ, դէմքը խոժորած, հազիւ զսպելով իւր անգոր բարկութիւնը:—

«Ապերախտ», «սուս», «փուճ», «անպիտան», «կորիւր»—այս խօսքերը կաթիլ կաթիլ թոյնի պէս ընկնում են աշակերտի սրտի վերայ, ուր մնում են և ապա մաղձ ու լեղի դառնում՝ ապագայում դուրս ժայթելու համար, ինչպէս թարախը հասունացած պալարից:

Այս այսպէս:

Յետոյ՝ աշակերտները վերին աստիճանի անպարտաճանաչ և անբարեխիղճ են դարձել և իրանց դասերի վերաբերմամբ:

Սակաւ չէ պատահում, որ դասի ժամանակ աշակերտը, փոխանակ ուշադրութեամբ լսելու, նկարում է դասատուի պատկերը, որպէս զի յետոյ, դասամիջոցին կամ նոյն իսկ դասի ժամանակ, ցոյց տալ իւր ընկերներին և ծիծաղացնի. նկարիչը չէ մոռանում նկարի ականջները ներկայացնել բնականից աւելի մեծ, քինթը

ահագին, և ահագին քնթի վերայ զետեղում է տաննակ պոչաւոր սատանաներ, որոնք իբր թէ պար են գալիս և թռչկոտում:—Մի ուրիշը՝ հայելին դրած իւր աւաջ, մաղերն է կոկում:—Երրորդը՝ խորասուզւած է մի որեւիցէ փիլիսոփայական գրւածքի ընթերցման մէջ, մի գրւածք, ուրից շատ քիչ բան է հասկանում և որը, ուլ գիտէ, որտեղից է ձեռք բերել: Արտասովոր բան չէ և այնպիսի մի դէպք: Ուսուցիչը կանչում է աշակերտին: Սա վեր է կենում տեղիցը և ասում.

—Դասս չեմ սովորած:

—Ինչու?

—Ժամանակ չունէի (կամ՝ գլուխս էր ցաւում):

—Նստի՛ր, անպիտան!

Ուսուցիչը բարկացած մի մեծ միաւոր է նշանակում, իսկ աշակերտը՝ իւր ընկերներին նայելով՝ ուրախ ժպիտը բերնին նստում է տեղը, այնպիսի անհոգութեամբ, որ կարծես միաւորը նրան վնասել չէ կարող:

Սիրելիս, ես կարող էի գրել քեզ աւելի զայրացուցիչ և ցաւալի դէպքեր, որ տեղի են ունենում մեր ուսումնարանում: Երեւակայի, երէկ ուսուցիչներից մէկը հրամայում է մի աշակերտի դուրս գալ դասարանից, որովհետեւ նա խանդարում էր ընկերներին իւր ծիծաղով և դէմքի ծամածուլութիւններով: Եւ այդ յանդուգն պատանին տես ինչ է պատասխանում.

—Դուրս չեմ գալիս!

—Դուրս, ասում եմ! կատաղած ոտները գետնին է տալիս դասատուն:

—Դուրս չեմ գալիս! Կրկնում է ըմբոսաը, գիրքը ծալում, նստում տեղը և անամոթաբար ուղիղ իւր ուսուցչի երեսին նայում:

—Ես վերակացուին կը կանչեմ, նա դուրս կը տանէ քեզ:

—Այն ժամանակ—դուրս կը գամ: Նորան յարգում եմ, և կը հնազանդեմ:

Ել ինչ գրեմ, սիրելիս? սորանից աւելի վատթար դրութիւն դպրոցի համար երևակայել կարող չեմ: Դրութիւնը աւելի լրիւ ապտկեցանքնելու համար արժէ տեսնել թէ ետ ընկած անկիւններում պատերի վերայ ինչեր են դրւած մատիտով, կաւիճով և ածուխով:

Դրակոնը, ի հարկէ, անշապաղ արձակում է յանցաւորներին: Նա կարծում է թէ սորան նորան հեռացնելով կարելի է արմատախիլ անել դպրոցի ներքին երկպառակութեան ոգին, մինչդեռ այդպիսով վէրքերը չ'են լաւանում, և նոր բռնկող նիւթ է աւելացնում նա վառող կրակի վերայ:

Հետաքրքրական է թէ ինչպէս է մեկնում նա այս բոլոր անբաւականութիւնների և պառակտման պատճառը:—«Կողմնակի դրդում»—ահա ինչ բան է կրակէ տաւերով նստած նորա ուղեղի մէջ: «Խեղճ աշակերտներին խելքից հանում են անբարեխիղճ մարդիկ, նոցա զրգւում և զրգում են իմ դէմ, յաճախ կրկնում է նա մեր ներկայութեամբ այս խօսքերը: Ի դէպ, վերջին ժամանակներս նա կասկածով է վերաբերում դէպի ինձ և իւր մտքումը ինձ ևս դրդիչներիցն է համարում: Բայց զեռ սպասում է և դադարակ հետեւում է իմ ամեն մի քայլին:

Մեր ժողովուրդը պատմում է մի թռչունի մասին թէ նա միշտ սիրում է փոխել իւր բունը, որովհետեւ ուր բուն է գնում, սարսափելի զարշահոտութիւն է բարձրանում, և յիմար թռչունը կարծում է թէ բունն է հոտած:—Նա չէ հասկանում, որ ինքն է հոտած, և հոտը իրանից է առաջ գալիս:

Ք ո Ս մ բ ա տ:

ԽՈՇՈՐ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

Զեռագործ արդիւնագործութիւնը խիստ սահմանափակ էր:

Երկու ձեռք տաս մասներով չէին կարող որոշ չափից աւելի արտադրել: Աշխատաւորը զօր էր տալիս իւր մկաններին, բայց մկանների լարումը որոշ սահման ունի, որից դուրս նա չի կարող անցնել: Արդիւնագործութիւնը կախած էր աշխատաւորի Ֆիզիքական կարողութիւնից, նրա ձեռքի արդիւնատ որ ոչ ժից:

Այլ են պայմանները յետագայ տնտեսական շրջանում:

Աշխատաւորի նախկին գործիքը հաստատուել է իւր սեփական ուսնների վրայ, նա ինքն իրեն աշխատում, ինքն իրեն մանում, հիւսում, գործում է:

Շոգեմեքենան ասպարէզ է եկել, մրցում է Ֆիզիկական մարդու ողորմելի ոյժերի դէմ: Արդիւնագործութեան եղանակը ենթարկեց մշանջենական յեղաշրջումների. անպադար նոր-նոր մեքենաներ էին հնարւում, հները կատարելագործւում էին:

Մինչ այս, մինչ այն՝ հաստատուեց երկաթուղային հաղորդակցութիւնը: Մարդկային հանձնարը ստորադրեց իրեն բնութեան ոյժերը և ամենուրեք ճանապարհ հարթեց: Գետերը յարմարեցան նաւագնացութեան համար. դաշտերի, հովիտների վրայից, խիստ անտառների բարձր լեռների միջից սուլեց, անցաւ մեքենան: Ստորերկրեայ խորին շերտերից հնարեց նա իւր կերակուրը—քարածուխը: Զուգակցաբար առաջ գնաց նորագոյն գիտութիւնը—մեխանիկա, քիմիա, տեխնոլոգիա, ամեն ինչ հետազօտութեան են:

1) Տես «Մուրճ» 1894 № 10 «Կապիտալիստի զարգացում» լօղածը:

թարկեց: Երկրի անշատուած մասերը յարեցան միմեանց, զարգացած հաղորդակցութիւնը առաջ բերեց բերքերի նոր աշխարհներ, արդիւնագործութեան նոր ճիւղեր:

Հին ինդուստրիան տեղի տւեց նորին: Նոր ինդուստրիան մշակում է ոչ թէ միայն տեղական, բուն երկրի հում նիւթերը, այլ նաև հեռաւոր երկիրներից ստացւածները: Եւ մշակած, պատրաստի ապրանքները սպառւում են այժմ ոչ թէ բնիկ երկրում միայն, այլ և նրանից դուրս, աշխարհիս զանազան ծոցերում: Փոխանակ հին պահանջների, որոնք լրացւում էին բուն երկրի բերքերով, առաջ են գալիս նոր պահանջներ, որոնց համար անհրաժեշտ են հեռաւոր երկիրների, տարբեր կլիմաների արդիւնքները: Այդպիսով արդիւնագործութիւնը և սպառումը ստացան «կոսմոպոլիտական» կերպարանք:

50-ական թւականներին Գերմանիայում գործում էին արդէն մանեւու մեքենան շոգեմեքենայի հետ: Ձեռքի մանեւածքը անկարող լինելով հրցումն տանելու, անհրաժեշտաբար պէտք է ընկնէր, և նա ընկաւ հետզհետէ: Ծնունդ առաւ մանեւածքի կապիտալիստական ինդուստրիան (Textilindustrie):

Շոգեմեքենաները, որքան աւելի զարգանում, նոյնքան աւելի սնունդ էին պահանջում իրենց գործունէութեան համար, քարածուխի արդիւնագործութիւնը ահազին ծաւալ առաւ:

Գերմանիայում արտադրւած էր՝ (մի տակաւ = 62¹/₂ փութի)

1848 թ. 4.400.000 տակաւ քարածուխ

1888 » 65.400.000 » »

կընշանակէ 40 տարւայ ընթացքում 15 անգամ աւելացել է (1893-ին Գերմանիան արտադրեց 73.852.000 տակաւ քարածուխ, Անգլիան 164.326.000, Ֆրանսիան 25.250.000 տ., չորրորդ տեղը բռնում էր Բելգիան: Ման. Խմբ.)

Մեքենային արդիւնագործութեան հետ աճում էր նաև մեքենաների շինութեան գործը: Մեքենաների վրայ աշխատող բանւորների թիւն էր՝

1861 թ. 98.319 1875 թ. 174.539

Ապրանքների օրըստօրէ աճող արտահանութիւնը և ներմուծումը աւելի և աւելի դիւրացրին հաղորդակցութիւնը: Երկիրը

ծածկեց, խճուղիների, երկաթուղիների ցանցերով: Պրուսական երկաթուղիների երկարութիւնն էր՝

1840 թ.	միւիայն	232 կիլոմետր
1850 »		3.869 »
1860 »		7.169 »
1870 »		11.523 »
1880 »		20.348 »

Քառասուն տարւայ ընթացքում երկաթուղային երկարութիւնը Պրուսիայում աւելացել է գրեթէ 100 անգամ!

Երկաթուղիների հետ զարգացաւ և փոստային գործը:

1840 թւականին պրուսական հին պրովինցիաներում փոստային պաշտօնեաների թիւն էր մօտաւորապէս 11.670. Իսկ 1865-ին նա հասնում էր 20.576-ի:

Փոստով ուղարկւած էին՝ 1842 . . .	34.859.000 նամակ
1865 . . .	189.911.000 »

(Իսկ ամբողջ Գերմանիայում պոստով ուղարկւած էին նամակներ և տպած բաներ 1888 թւին մօտ $2\frac{1}{2}$ միլլիարդ. Ման. Խմբ.)

Ելեքտրական հեռագրաթելերի հնարումը չափազանց դիւրացրեց ներքին և արտաքին—միջազգային հաղորդակցութեան գործը: Հեռագրաթելերի երկարութիւնն էր Պրուսիայի հին գաւառներում՝

1849 թ.	246 մղոն	1866 թ.	2.072 մղոն
-----------------	----------	-----------------	------------

Արդ, մեքենան յեղափոխեց ոչ միայն արդիւնագործութիւնը, այլ նաև հաղորդակցութեան միջոցները: Շնորհիւ արդիւնագործութեան միջոցների արագաբայլ զարգացման, շնորհիւ անսահման կերպով դիւրացրած հաղորդակցութեան միջոցներին, Գերմանիան սկսեց մեծ ծաւալով արտահանել իւր ապրանքները դէպի աշխարհիս զանազան անկիւններ: Գերմանական շուկան դարձաւ գրեթէ համաշխարհային շուկա: Արտաքին առևտուրը հասնում է՝

1860 թ.	2173 միլիոն մարկի
1880 »	5976 »

Կը նշանակէ ապրանքների քանակութիւնը (մասսան), 20 տարւայ մէջ եռապատկեւ էր: Եւ այդ ահագին քանակութեամբ ապրանքները մատակարարում էր խոշոր կապիտալիստական ինդուստրիան, որ դառել էր արդէն արդիւնագործութեան գերիշխող եղանակ:

Ի՞նչ կարող էր անել այդ գերիշխող հակառակորդի դէմ մանր արդիւնազործութիւնը: 60-ական թւականներին աշխատաւորը մեքենայի միջոցով հարիւր անգամ աւելի էր մանում, քան թէ ձեռքով մանողը: Նոյնը և արդիւնազործութեան հարիւրաւոր ուրիշ ձիւղերում: Մեքենայի հսկայական ոյժի առջև անդօր էին արհեստաւորի, անաշխատութիւն ձեռքերը:

Որքան աւելի լայնանում, կատարելագործւում են հաղորդակցութեան միջոցները, նոյնքան աւելի ընկնում է արհեստը, սահմանափակւում, փոքրանում է նրա շրջանը: Սակաւ են այնպիսի տեղեր, ուր արհեստը տակաւին քարշ է տալիս իւր խղճով գոյութիւնը: «Իործարանը տիրապետում է կատարելապէս և արհեստի օրերը հաշւած են»:

Նոյն անկման վիճակի մէջ է և գիւղացիական մանր արդիւնազործութիւնը: Այնտեղ, ուր գիւղացին սոսկ անձնական պահանջների համար է աշխատում, այնտեղ չկայ ապրանքային արդիւնազործութիւն, հետեւապէս և մրցում չի կարող լինել: Բայց այդպիսի տեղեր հազւագէտ են: Ձարդացած հաղորդակցութիւնը, տարէցտարի աճող հարկերը մղում են ամենուրեք գիւղացիներին դէպի լայն փոխանակութիւն, դէպի ապրանքային արդիւնազործութիւն: Քանի աւելի շատանում են հարկերը, գիւղացու մէջ աւելի է զարգանում արտահանելու, փող վաստակելու ձգտումը և որքան աւելի է զարգանում նրա մէջ այդ ձգտումը՝ նոյնքան աւելի ենթակայ է նա մրցութեան և, կուլ է գնում՝ խոշոր կալւածատէրերին: Այդ «կուլ գնալու» պրոցէսը քանի գնում, արագանում է որովհետեւ հեռզհեռէ զարգանում է միլիտարիզմը—19 դարու այդ խոշոր չարիքներից մինը, որ հրէշաւոր ասիերի է հասել Վերմանիայում: Այդպէս ուրեմն մանր արդիւնազործութիւնը դատապարտւած է վաղ թէ ուշ անհետանալու, նրա մահը ճակատագրական է:

—Խոշոր ինդուստրիայի կործանիչ ազդեցութիւնը նախ և առաջ երևան է դալիս նրա մէջ, որ արհեստաւորը (նոյնը կարելի է ասել և «Kleinbauer»-ի, մանր հողագործի մասին) սպառում է իւր բոլոր ունեցած-չունեցածը, կամաց-կամաց ընկնում է աղքատութեան գիրկը:

Աղքատութեան դիմադրելու համար նա լարում է իւր բոլոր

եռանդը, իւր բոլոր ոյժերը, նստում, աշխատում է մինչև ուշ գիշեր իւր ամուսնու, երեխաների հետ, չնչին վարձով աշակերտներ է գրաւում: Երկար, քրտնաջան, անդադրում աշխատանքը հիւժում է նրան, քանզի է նրա ոյժերը: Նա միևնոյն ժամանակ ծայրացեղ խնայողութիւն է մտցնում իւր անոետութեան մէջ, չափաւորում է կերակրի, բնակարանի, հագստի պահանջները... սարսափելի է արհեստաւորի վիճակը, այն արհեստաւորի, որ խոշոր ինդուստրիայի դէմ մրցութեան յուսահատ կռիւ է մղում: Այդ լարւած մաքաւման արդիւնքն այն է լինում, որ արհեստաւորը ընդմիշտ բաժանուում է իւր գործիքներից, և անհրեժաշտաբար զիւմում է գործարան. նա զառնում է «սլոյրլետար»...

Ստատիստիկայի վիպութեամբ 1848—49 թւականի չեղափոխութեան ժամանակ Պրուսիայի ազգաբնակչութեան 64 տոկոսը երկրագործութեամբ էր պարապում, մինչդեռ 1882 թ. միմիայն 42⁰/₀, և դեռ աւելի ոակաւ: Տեղի ունեցաւ մի նոր բաժանում ազգաբնակչութեան մէջ, առաջ եկան նոր պայմաններ, նոր կեանք, դասակարգերի մէջ նոր չարաբերութիւններ: Երկրագործների միահանգին մասը թողնց արօ ու արօտ, ապարդիւն մրցումից ընկճւած զիմեց գործարանական աշխարհը: Այսուց նշանաւոր գաղթականութիւնը գիւղից քաղաք, որ ներկայումս շարունակուում է տակաւին:

Մի քանի օրինակներ բերենք ցոյց տալու համար, թէ ժամանակի ընթացքում որքան աճել է քաղաքների ազգաբնակչութիւնը ի վնաս գիւղերի: Բնակիչների թիւը եղել է

	1840 թ.	1880 թ.	1890 թ. ¹⁾
Բերլին	311.491	1.122.330	1.578.794
Կեօնիգսբերգ	65.852	140.909	161.000
Դանցիգ	57.933	108.551	121.000
40 տարւայ ընթացքում գերմանական մայրաքաղաքի ազգա-			

¹⁾ Քւերը 1890 թւականի համար գրւած են «Մուրճ»-ի խմբագրութեան կողմից: խմբ.

բնակութիւնը աւելացել է դրեթէ շորս անգամ (50 տարում աւելի քան 5 անգամ, Խմբ.):

Հին պրուսական մոնարխիայում 1840 թ. ժողովրդի $\frac{1}{10}$ -ը ապրում էր քաղաքներում, այն ինչ 1880 թ.-ին կոտորակը հասնում է $\frac{1}{4}$: Ամբողջ գերմանական կայսերութեան մէջ կային

	Բնակիչն. թիւը քաղաքներում	Բնակիչն. թիւը գիւղերում
1871 թ.	14.740.798	26.219.352
1880 »	18.750.530	26.513.531

Ինն տարւայ մէջ բնակիչների թիւը քաղաքներում աճել է մօտ. 4.000.000-ով, մինչդեռ գիւղերում նա մնացել է դրեթէ անփոփոխ:

Ինդուստրիայի զարգացման հետ զգալի կերպով փոխում է քաղաքային կեանքը: Գոյութեան կռիւը ամենածոյլ մարդկանց իսկ մղում է դէպի աշխատանք: Ամեն տեղ աղմուկ, շարժում, տենդային զործունէութիւն: Կեանքը եռում է, չկայ նախկին անշարժութիւնը և միօրինակութիւնը: Աշխատաւորի վիճակը ենթարկւած է անընդհատ տատանումների: Այսօր նա կուշտ, վաղը սպառնում է, վաղը կայող է զրկւել աշխատանքից, նայած թէ որքան խիստ է կապիտալիստների փոխադարձ մրցումը, նայած թե որքան խիստ է նոյն իրենց բանւորների փոխադարձ մրցումը և այլն և այլն և այլն:

Պարբերական կրիզիսները (ճգնաժամ), որոնք բնական անհրաժեշտութեամբ պարբերաբար երևան են գալիս առևտրի և արդիւնաբերութեան մէջ, սպառնում են ոչ թէ միայն աշխատաւոր, այլ և բոլոր միւս դասակարգերի գոյութեան: Իրամատէրը, բուրժուան ենթակայ է նոյն կենսական տատանումներին, նա ևս ապահով չէ սնանկանալու վտանգից:

Ի՞նչ է կրիզիսը և ինչից է նա առաջ գալիս:

Նախքան կը պատասխանենք այդ հարցին, քննենք մի ուրիշ երևոյթ, որի անունն է «Աւելորդ արդիւնագործութիւն» (Ueberproduction):

Լինում են մոմէնտներ կապիտալիստական արդիւնաբերութեան մէջ, երբ մի որ և է ապրանքի առաջարկը անցնում է պահանջից, ուրիշ խօսքով՝ երբ արտադրւում է աւելի քան

հարկաւոր է, աւելի քան կարիք է զգացուում հասարակութեան մէջ: Այդպիսի զէպքերում ապրանքի զինը իջնելով հասնում է իւր մինիմո մ'ին, իւր ստորագոյն կէտին, այնպէս որ արդիւնաբերող կապիտալիստները՝ զոնէ նրանց մեծագոյն մասը՝ դադարեցնում են արդիւնագործութիւնը, քանի որ շահ չունի նրանից, քանի որ ծախու հանած ապրանքները նոյն իսկ իր (զրամամառէրի) սեպհական ծախքերը չեն ծածկում:

Անընդհատ զարգանում է մաշինիզմը, տեխնիքական յեղափոխութիւնը օր աւուր լացն ծաւալ է բռնում: Բացւում են հետզհետէ նոր տեղեր, արդիւնագործութեան նոր ճիւղեր, միւսնոյն ժամանակ բազմապատկւում է աշխատանքի արդիւնարար ոյժը (Produktivität): Կապիտալները ամբարւում, կենսորոնանում են: Արքան աւելի է աճում տոանձին բանւորի շահագործումը, նոյնքան աւելի են աճում հարստութիւնները, որոնք ամեն տարի այնու զոյնու ստանում են կապիտալի (զրամագլխի) բնաւորութիւն:

Կապիտալիստական արդիւնագործութեան հակումն է մշտնջենաբար լայնանալ և լայնացնել միաժամանակ իւր շուկաները: Անընդհատ լայնացող արտահանութեան պահանջը դրդում է բուրժուազիային (զրամատիրական գասակարգ) պոտել երկրագնդի շուրջը, ամեն տեղ ձգտում է նա թանգացնել, ամեն տեղ բուն դնել, ամեն տեղ յարաբերութիւններ հաստատել:

Սակայն, ինչպէս վկայում են վերջին երկու տասնեակ տարիները, արդիւնագործութեան լայնացման միշտ անպայման չէ հետեւում շուկայի լայնացումը: Արքան առաջինը աւելի արագ, նոյնքան երկրորդը աւելի դանդաղ է զարգանում: Պատճառները հասկանալի են: Եւրոպական ինդուստրիայի (լինի զերմանական, անգլիական և այլն) ապրանքները մուտք գործելով անտեսապէս աւելի ստոր աստիճանի վրայ գտնուող երկիրների մէջ, մեռցնում են այնտեղ մանր, «պատրիարխալ» արդիւնագործութիւնը (ինչպէս այդ տեսանք Գերմանիայում 30-ական, 40-ական թւականներին, երբ անգլիական մեքենային արդիւնքները, ներմուծւելով, մրցում էին զերմանական ձեռագործ արդիւնքների դէմ), զիւղացիներին և արհեսաւաւորներին «պրոլետար» է դարձնում: Այդ հանդամանքը ինքն ըստ ինքեան մեծ դեր է խաղում եւրոպական ապրանքների արտա-

հանութեան գործում: Նախ՝ չիշած երկիրների ազգաբնակչութեան մէջ սակաւանում է զինելու ոյժը, ապա ուրեմն խանգարում է վաճառանոցի, շուկայի լայնացումը: Երկրորդ՝ և ամենագլխաւոր հետեանքը՝ որ պարոխարիատի ծնունդ առնելով, սկիզբ է դրւում այդ երկիրներում կապիտալիստական արդիւնազործութեան: Նրա հողը արդէն պատրաստ է:

Այդպէս ուրեմն, Եւրոպան իր սեպհական ինդուստրիան ուրիշ, անքաղաքակիրթ ազգերի մէջ ներմուծելով, արտադրում է նոր-նոր մրցակիցներ, հարւածում է իւր սեփական ինտերեսներին: Քեւրուպական ինդուստրիան ինքն է փորում իւր սեփական գերեզմանը: Եւ այն ձակատաղրական բառերը, որ տակաւին կէս դար առաջ բարձր արիւթնից արտասանեց նորագոյն տնտեսական շկոյլի մեծ հիմնադիրը:

Մենք տեսնում ենք այսօր, որ Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգների արդիւնաբերութիւնը ոչ թէ միայն ինքն իրեն է բաւականութիւն տալիս, այլ նա ձգտում է նւաճել բովանդակ Ամերիկան: Ռուսական ջահէլ ինդուստրիան սկսում է արդէն իւր սեփական արդիւնքները տարածել իրեն չարկատու լայնատարած երկիրների մէջ: Հնդկաստանը, Նապոնիան, Աւստրալիան կրում են արդէն ինդուստրիական պատկեր: Այդպիսով կը գայ ժամանակ, երբ եւրոպական ինդուստրիայի շուկան կ'սկսէ փոխանակ լայնանալու, անձկանալ, սահմանափակել, իսկ դա հաւասար է համայն կապիտալիստական հասարակութեան սնանկութեան:

Մենք բացատրեցինք, որ ժամանակի ընթացքում արդիւնագործութիւնը աւելի է լայնանում, քան թէ արտահանումը: Այդ թիւովից դժուար չէ եզրափակել, որ տնտեսական աշխարհում պարբերաբար կրկնող աւելորդ արդիւնագործութիւնը երևոյթը ճակատագրական է, անխուսափելի: Նա չատուկ է արդիւնագործութեան «կապիտալիստական» եղանակին, որի բնորոշ չափութիւնն այն է, որ ամեն մարդ արդիւնագործում է «ուրիշի» համար: Նա չատուկ է կապիտալիստական մրցման:

Զարիքի արմատական պատճառը նրանում է, որ սպասող հասարակութեան պահանջները, նրա կարիքները կանխապէս չեն որոշւած, կամ թէ որոշւած են մօտաւորապէս միայն: Սկսւում է կորս-

տարից մրցումը առանձին կապիտալիստների մէջ, սկսւում է մի կատարեալ զոյուլթեան կռիւն ուր բնականաբար յաղթում են ուժեղները—աւելի խոշոր կապիտալիստները,—իսկ թոյլերը անդունդ են գնում... Ազատ մրցումն է, որ ղեկավարում է աշխատանքի տնտեսական կեանքի անիւը, անընդհատ մղում է նրան զէպի դործունէութիւն, ազատ մրցումն է, որ ծնեցնում է աւելորդ արդիւնագործութիւն, իսկ աւելորդ արդիւնագործութիւնից անհրաժեշտաբար բխում է այն քառասական վիճակը, որ տնտեսագիտութեան մէջ «կրիզիս» անունն է կրում: Կրիզիսը տեղի է ունենում այն ժամանակ, երբ կորում է հասարակչութիւնը արդիւնագործութեան և պահանջի մէջ: Աովորարար նախ քան նրա երեւալը տիրում է արտասովոր լիութիւն տնտեսական կեանքի մէջ:

Արդիւնաբերութիւնը, առևտուրը չափազանց բարձրանում են, բարձրանում է նոյնպէս բանւորի վարձագինը (Lohn), սատիկ լացնում է արտահանումը: Ապա այդ բոլորին հետևում է կատարեալ լճացումն, շուկաները լցւում, ծանրաբեռնւում են: «Դուրս է վիժում մի կատարեալ հասարակական համաճարակ, մի եպիդեմիա, հասարակութիւնը բուկաբար յայտնւում է բարբարոսական վիճակի մէջ, թւում է, թէ սովը, կամ ընդհանուր մի աւերիչ կռիւ զրկել է մարդկանց կենսական միջոցներից, թւում է, թէ խաղառ անհետացել են առևտուրը և արդիւնաբերութիւնը»...

Արդիւնագործութեան մէջ «անարխիա» է տիրում: Ահա ձեզ մի կողմից արդիւնագործութեան առատ միջոցներ (Produktionsmittel) անհուն հարստութիւններ զիջւած անօգուտ, ապարդիւն շռայլւում են... Բնա ձեզ միւս կողմից անհամար քանակութիւն աշխատաւոր ոյժերի պարապ, զուրկ աշխատանքից, —անթիւ լեզէօններ աշխատանքից զուրկ բանւորների, որոնք օրւան հացի կարօտ՝ բաղդի կամայական հարւածներին են մատնւած... Պատկերը չիրաւի տխուր է: Շատերը մեռնում են զոյուլթեան օրհասական կռի մէջ, մեռնում են արւեստական մահով, շատ շատերը մուրացկանութեան են զինում: Կանայք ստոր կացութեան անդունդն են գլորւում, զարգանում է քարհետում պոստիստուցիան, աճում են հարիւրաւոր ուրիշ մոլութիւններ:...

Յրիգրիխ Էնգելս գեղեցիկ կերպով նկարագրում է արդէն սկսւած

կրիզիսի ընթացքը: «Հաղորդակցութիւնը կանգ է առնում, շուկաները լի են: Այստեղ և այնտեղ զիգւած են ապրանքները առանց արտահանելու: Առձեռն դրամը աներևոյթ է, կրեդիտը անհետանում է: Գործարանները զաղարել են: Աշխատաւորների բազմութիւնը կանգնած է առանց կենսական միջոցների: Սնանկութիւն սնանկութեան ետեւից: Տարիներով շարունակում է լծացումը: Արդիւնագործութեան միջոցները և արդիւնքները ահագին քանակութեամբ վատնւում են բուրժուական դասակարգից, մինչև որ վերջապէս սպառւում են ապրանքների հսկայական կոյտերը, որ արդիւնագործութիւնը և փոխանակութիւնը փոքր առ փոքր նորից մտնում են իրենց կանոնաւոր ընթացքի մէջ: Հետզհետէ արագանում է ընթացքը, նախ ընդոստ, ապա սրարշաւ բարձրանում է սանձարձակ, հասնում է գաղաթնակէտին, որպէս զի նորից ցած դիւրւէ»:

Պ Ր Ո Ւ Ե Տ Մ Ր Ի Ս Տ

Անշատաւ ընդ միշտ իւր աշխատանքի գործիքներից, զաւրկամէն սեփականութիւնից, միմիայն իւր ձեռքերի ու ոտների տէրը՝ այդ դասակարգն է, որ անխոնջ աշխատելով անցնում է կապիտալը, նրա աշխատանքն է, որ պահպանում է բուրժուական դասակարգի գոյութիւնը:

Նա կազմւում է ազգաբնակչութեան բոլոր խաւերից: Մանր արդիւնագործող, վաճառական, արհեստաւոր, գիւղացի—բոլորն էլ անխուսափելի կերպով անցնում են դէպի պրոլետարիատի շարքերը: Անողորմ մրցումը վաղ թէ ուշ բնաջինջ է անում նրանց ինքնուրոյն գործունէութիւնը և մղում է դէպի հլու հպատակութիւն:

Վերև մենք բացատրեցինք, թէ ինչպէս խոշոր ինդուստրիան կենտրոնացնում է սեփականութիւնը փոքրաթիւ անհատների ձեռքում: Նա պահանջում է հսկայական կապիտալներ, որպէս զի կառուցանէ իւր վիթխարի հիմնարկութիւնները և ստորադրէ իրեն բնութեան ոյժերը:

Աշխատանքի բաժանումը, շոգիի և ջրի ոյժը՝ նրանց գործադրութիւնը, վերջապէս մաշինիզմը, —հաւաստիկ այն երեք հզօր ֆակտորները, որոնք նախորդ դարի միջից սկսած ձգտում էին տալն ու վրայ անել ամբողջ աշխարհը:

Մանր արդիւնագործութիւնը առաջ բերեց այսպէս կոչւած միջին դասակարգերը. խոշոր ինդուստրիան քայքայեց այդ դասակարգերը և արտադրեց պրոլետարական բազմութիւն զասակարգը: Կապիտալի հետ սկսեց կենտրոնանալ նաև ազգաբնակչութիւնը: Աշխատանքի բաժանումը շտեմնւած ծաւալ առաւ:

Խոշոր ինդուստրիային հարկաւոր էին մեծ քանակութեամբ բանւորներ, որոնք պէտք է աշխատէին միասին, միեւնոյն հիմնարկութեան մէջ: Արդիւնագործութիւնը (produktion) այդպիսով հաստատւեց համայնական («collectif») հիմունքների վրայ, այն ինչ արդիւնքների սպառումը (Konsumtion) մնում է անհատական, կամ կապիտալիստական:

Եթէ գիւղացին կամ արհեստաւորը տէր են իրենց աշխատանքի գործիքներին, նոքա տէր են միեւնոյն ժամանակ և իրենց աշխատանքի պտուղներին: Պրոլետարի աշխատանքի արդիւնքները իրեն չեն պատկանում, այլ պատկանում են կապիտալիստին՝ նրան, որ գնում է բանւորական ոյժը, նրան, որ տիրում է արդիւնագործութեան միջոցներին: Բանւորը արդարև ստանում է իւր վարձագինը, բայց վերջինս երբեք չի կազմում նրա արդիւնքների իսկական արժէքը: Եւ այդ արժէքի մի մասը միայն դրամի ձևով տրւում է բանւորին, միւս մասը, «աւելորդը» (աւելեւալ արժէքը—mehrwerth) մնում է կապիտալիստին:

Որքան աւելի է աշխատում բանւորը, այնքան աւելի է արտադրում նա, այնքան աւելի է աճում «յաւելեւալ արժէքը» — դրամատիրաջ հարստութեան սկզբունքը: Այդ է պատճառը, որ դրամատիրական (կապիտալիստական) հասարակութիւնը ամեն միջոց գործ է դնում աւելացնելու աշխատանքի ժամանակամիջոցը:

Ի վնաս բանւորի առողջութեան՝ երկարացնում է աշխատանքի օրը, ոչնչացնում է տօն օրերը, մոցնում է գիշերային աշխատանք և այլն և այլն:

Դրանք են այն «բարոգութիւնները», որ կապիտալիստական ինդուստրիան սահմանում է աշխատաւոր ընդհանրութեան համար:

Բանւորական օրավարձը, ինչպէս ստացինք, երբեք չի հաւասարւում և չի էլ կարող հաւասարւել նրա արտադրած ապրանքի բուն արժէքին. նա (օրավարձը) չաճախ ընկնում է, և ընկնում է

մինչև իր ամենաստոր աստիճանը: Այդ դեպքում բաները հազիւ է կարողանում լրացնել իր ամենաանհրաժեշտ կարիքները: Սրա վարձը անընդհատ տատանւում է երկու շատ թէ քիչ որոշ սահմանների մէջ և այդ տատանումը մեծ մասամբ առաջ է գալիս մրցում ից: Մրցում առանձին կապիտալիստների մէջ, մրցում նաև առանձին բանւորների մէջ: Առաջին դեպքում բանւորի օրավարձը հասնում է իւր maximum-ին, երկրորդ դեպքում—minimum-ին:

Բայց կրճատել բանւորի վարձագինը, հասցնել նրան minimum-ի—այդ էլ ձեռնառու է է կապիտալիստին: Նրան հարկաւոր են աշխատաւոր ձեռքեր, աշխատելու ընդունակ մարդիկ, ապա ուրեմն նա պէտք է հոգայ նաև բանւորի համար, որպէս զի վերջինս գէթ ոչ ունենայ շարժելու մեքենան... Այդ կողմից կապիտալիստը կարիք չունի անձամբ հոգալու: Տնտեսական զարգացումը ինքն ըստ ինքեան նպատակաշարմար միջոց է տալիս նրան կրճատելու բանւորական ապրուստի ծախքերը և քսացնելու միլիոնոյն ժամանակ բանւորի վարձագինը:

Կար ժամանակ, երբ Ֆիզիկական ոչժը և ճարտկութիւնը աշխատաւորի առաջնակարգ արժանաւորութիւններն էին կազմում: Երկարատեւ էր արհեստաւորի ուսման շրջանը—և մեծ ծախքեր էր պահանջում նրանից այդ ուսումը: Այսօր աշխատանքի բաժանման և մեքենաների զարգացումը դրեթէ բոլորովին աւելորդ է դարձրել վերոյիշեալ ցատկութիւնները արդիւնագործութեան մէջ: Այսօր մեքենաների կատարելագործման շնորհիւ թուլակազմ կանայք ևս ուրք են կոխում գործարանական կեանքի մէջ, հետզհետէ զուրս են մղում մարդկանց, բայց իրանք էլ զուրս են մղում երեսկաններից: Այդպէս ուրեմն այսօրւայ օրը բանւորական ընտանիքի բոլոր անդամներն էլ կարող են ինքնուրոյն կերպով աշխատել իրենց զգուխը պահել: Բանւորը՝ ընտանիքի հայրը—թեթեւանում է հոգսերից, նա այժմ միայն իւր գլխի աէն է: Բուրժուական անողորմ յղիկան դրդում է կապիտալիստին իջեցնել նրա վարձագինը մինչև minimum (ստորագոյն աստիճանը):

Կնոջ անմիջական մասնակցութիւնը կապիտալիստական ին-
դուստրիայի մէջ նշանաւոր եղաւ իւր հետեւանքներով: Այն օրից
երբ կինը սկսեց գործարան յաճախել, այն օրից սկսուեւ ի արդէն
բանտորական ընտանիքի քայքայման պրոցէսը, այն օրից նա ան-
կախ է (կինը), ազատ ամուսնու կաշկանդող շղթաներից, տէր և
անօրինող իւր սեփական ոյժերի, իւր աշխատանքի արդիւնքների:
Նա թողեց «Hausfrau»-ի աննախանձելի պաշտօնը, որը կայանում
է սոսկ եփելու, թխելու, կարելու, լւանալու մէջ և այլն և այլն.
մոտա հասարակական ասպարէզ: Դա առաջին և նշանաւոր քայլն
էր դէպի անտեսական և հասարակական ազատութիւն, դէպի լիա-
կատար էմանսիպացիա:

Կինը սակայն չթողեց ընդմիշտ ստրկութեան կապանքները:
«Տնային ստրկուհուց» նա դարձաւ «վարձկան ստրկուհի» (Lohn-
sklavin):

Գործարանում կինը ենթարկւեց գործարանատիրոջ կամայա-
կանութիւններին: Որքան ուզում է հարստահարում է նրան կա-
պիտալիստը, միշտ աւելի և աւելի կրճատում է օրավարձը,—բո-
ղոքի ձայն չկա՞ց կնոջ կողմից, բողոքելու ընդունակութիւն չկա՞ց:
Դարերից ի վեր տան չորս պատերի մէջ փակւած, ենթակաջ բռնա-
կալ ամուսնու քմահաճութիւններին՝ նա վաղուց արդէն ընտելա-
ցել է ստրկական գոյութեան... Հէնց այդ պատճառով էլ այնքան
էժան է դնահատում կանացի աշխատանքը, չնայելով կինը շատ
անգամ աւելի գործունեաց և համբերատար է քան տղամարդը:

Փամանակի ընթացքում ձուլւեց սեփականազուրկ կանանց դա-
սակարգը—կին պրոլետարիատ: Ընտանիքի լուծման (Auflö-
sung) պրոցէսի հետ զուգակցաբար առաջ եկաւ կանանց
համայնացումը:

Մայրացեղ ստրկական հնազանդութիւնը, կապիտալիստների
անխիղճ կեղեքումները և օրաւուր անող կենսական ապահովութիւնը
մղեցին աշխատաւոր կանանց դէպի յօժարակամ «մարմնավաճառու-
թիւն» դէպի պրոստիտուցիա...

Որքան աւելի է կատարելագործւում կապիտալիստական ար-
դիւնագործութեան եղանակը, նոյնքան աւելի է անում լուծւող
ընտանիքների թիւը, նոյնքան աւելի է բազմանում կին պրոլե-

տարիաւոր, նոյնքան աւելի է զարգանում պրոստիտուցիան... Մի անվերջ զանգւած դառն, բայց ճակատագրական երեւոյթներ...

Պրոստիտուցիան հնադարեան ախտ է: Նա այնքան հին է, որքան հարստի և աղքատի մէջ եզոզ տարբերութիւնը: Սակայն նախկին դարերում նա այն չէր, ինչ որ այսօր է ներկայացնում: Այն ժամանակ նա տարածւած էր հասարակութեան «մոլորացկան», անգործ խաւի մէջ՝ նրանով զբաղւում էր այսպէս կոչւած ձրիակեր, հացկատակ պրոլետարիաւոր (Lumpenproletariat). այն ինչ մեր օրերում այդ ախտով վարակւած են աշխատաւոր կանսքը, որոնք արիւն քրախնքով են վաստակում իրանց հացը, և որոնք ծայրայեղ աննպաստ պայմաններից դրդւած թշուառ գոյութիւնը պահպանելու համար վաճառում են իրանց մարմինը, և այդ վաճառումը քանի զնում՝ խոր արմատ է ձգում...

Կանանց և երեխաների ասպարէզ դալը մի կողմից, օտարերկրեայ բանւորների հոսանքը միւս կողմից՝ օր աւուր իջեցնում են բանւորական վարձագինը: Արդիւնադործութեան զարգացման հետ զարգանում է արտահանման և ներմուծման գործը: Նրկաթուղիները և շոգենաւերը կրում են անընդհատ ոչ թէ միայն ապրանքները, այլ և ահադին բազմութիւններով մարդիկ աշխատաւորներ: Ոչ թէ միայն բուն երկրի գիւղական բնակիչները, այլ և հեռաւոր երկրներից խումբ-խումբ դաղթում են մարդիկ դէպի արդիւնագործական կենտրոնները, և այդ հոսանքը, քանի զնում, աւելի լայն ծաւալ է բռնում: Շւէդ, Սլաւոն, Իտալացի, Բէլգիացի բանւորները ճանապարհորդում են դէպի Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա: Զինացի, Յոյն, Սլաւոն, Հայ և այլն գաղթում են Ամերիկա—Միացեալ-Նահանգները:

Այդպէս, պրոլետարը թողեց տուն, տեղ, հայրենիք, աստուծոյական կեանքին անձնատուր եղաւ: Նա զարձաւ հայրենազուրկ կոսմոպոլիտ... Ubi bene, ubi patria (ուր շահ ունիմ, այնտեղ իմ հայրենիքն է)—այս եղաւ նրա կեանքի նշանաբանը:

Այդ գաղթականութիւնը ամենամեծ չարիքներից մէկն է տեղական բանւորների համար, իսկ կապիտալիստների համար—ամենամեծ բարիք: Սկսում է անհաւասար մրցումը երկու բոլորովին տարբեր աշխատաւոր էլեմենտների մէջ:

(Հարունակելի):

ՎԵՐՋԻՆ ԽՕՍԲ

Խ. ԱՐՍԷՆԻ

Տեսնում է Աստուած — պատերազմեցի
Անօրէնի դէմ, որքան կարացի...
Բոլոր ունեցած երկաթ կամքիս ոյժ,
Թարմ, ջերմ եռանդ, ջանքեր և աշխոյժ —
Պատերազմի մէջ բոլոր գործ դրի,
Սակայն կոյր բաղդը դէպ ինձ չդարձրի,
Եւ զերեզմանիս ինձ սպասող ավին,
Զարից փրկութիւն՝ սիրած հայ ազգին՝
Մաղթելով Տէրից, կանգնած եմ ահա:
Եւ մի միտք միայն վշտալի ժամին
Իոյս է տալիս ինձ պատող խաւարին,
Մխիթարելով կարօտ մնացածիս, —
Այն միտքը թէ իմ ազգային պարտքիս
Մնացի սրբութեամբ հնազանդ անասան,
Եւ վախկոտութեամբ չեղայ դաւաճան.
Որ դառն բաժակ ես ամբողջ խմեցի,
Եւ պատերազմում ինչպէս ապրեցի,
Նոյն պատերազմում մեռնում եմ ահա:

Ս Ա Ս Ո Ւ Ն

(ԴՄ՝ յիշատակարանից)

ՆԻԹԵՐ ՀԱՅՈՑ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ս Է Յ Լ Ա Ն Ի

(Շարունակութիւն ¹)

Մ Ի Ր-Հ Է Պ Օ.

Սորա ժամանակ սկսում է թշնամութիւն հայերի և քրդերի մէջ, ուստի ծագում է պատերազմ: Միր-Հէյօ իւր պապերի պատմութիւնը պատմելով, ոչ միայն իւր ցեղի, այլ և ուրիշ հայերի մէջ բորբոքում է մարդասիրական և ազգասիրական հուրը, անկախութեան գաղափարը:

Միր-Մարտի ժամանակ ներքին և արտաքին խաղաղութիւն վայելելով Հօլոյեանք՝ գրեթէ մարած էր նոցա մէջ պատերազմի սէրը, այնպէս որ հեռզհեռէ ստրկական գաղափարներ մուտք էին գտնում նոցա մէջ. Հէյօ որ մի կարծուկ կրակ ու բոց, անվախ Սասնիկ էր, յորդորում է իրեն հետեւիլ և քաջաբար կռւել բռնաւորների դէմ, անաղարտ պահել վաղեմի հպարտ ընտանիքի փառաւոր անունը, դիմագրաւ լինել թշնամուն, ընկնել հերոսական փառքով կամ դիակներով ծածկել Սասնոյ կիրճերը: Հէյօի ձայնը լսում է միայն իւր առիւծասիրտ ցեղը, ծեր, կտրիճ, միանուկ, կին, հարս, աղջիկ զինւում են իսկոյն թշնամու դէմ:

Հաճի-Խատր Հէյօի թշնամին էր:

¹) Տես «Մուրճ» 1891 թ. № 10 և 11—12:

Սկսում է պատերազմը կատաղութնամբ:

Միր-Հէպօ փառաւորապէս զինւած անթափանց ասպարով, պողպատ զրահով ծածկւած իբրեւ յանդուգն զօրավար, առաջնորդում է իր ցեղը կռւի դաշտ, ընդ ամենը 800 հոգի, որոց կէսն կանանց գունդն էր. սոցա հրամանատարութիւնը յանձնւած էր իւր անդրանկին:

Հէպօի գունդը զինւած էր ոչ նւաղ թշնամի զօրքից, լաւ վահաններ, ճապուկ, ճոճուն հեղաբէն (? Խմբ.) նիզակներ, պատրոցկաւոր հրազենք, լահորի ջիւհէրտէր թրեր, լաջնալիճ նետեր, որոց նմուշը ունին տակաւին, Տիգրանակերտի դաշոյններ, հատու նաճախներ կռում էին Սասնեայք: Իւրաքանչիւր մարդ ունէր երկու հրացան, օրիորդներ և մանկաիք լեցնում և կարկատում էին կռուող սիրականներին:

Հաճի-Խատր 3000 զորքով և, որ աւելին է, իւր սոսկալի անունով ոււսած հնդուհաւի կամ տիտանեան Բէլի գողոզութեամբ, Միր-Հէպօին յանդուգն համարելով՝ յարձակեց:

— ԲՅՕ, ճժիր, — ձայնը բարձրացուց Միր-Հէպօ, — ձի կ'իշխմ, հըյրան ըզձըր հոգուն, Հօլօի, Գորգէի անուն ու բազմ կի թալիմ զձեզ... գարկինք յանօրան, .. եւն, սըբ-խաչ, եւն, սպիտակերես սըրբ-Աղբիւրից, ըզձըր բազմն իմ...:

Սարսափելի դողում, գոչում, լաց, աղաղակ լուտանք, աղաւանք, զայրոյթ խառնւելով իրար, միանում են հրազինոց գողոցին և թնդացնում սարերը: Հայք ուժգնակի, իրենց յատուկ, ոսոռստելով զարնում են թշնամու աջ թևը՝ ձախը սրի ճարակ տալով: Վիթխարի սասնցիք անխնայ ողողում են ձոր ու հովիտ արիւնով և Միր-Հէպօի նշանին համեմատ յարձակւում շեշտակի Հաճի-Խատրի վերայ, որը անմիջապէս հարիւրաւոր մեռեալ ու վիրաւոր թողնելով դաշտին վրայ փուսած, հետեւում է իւր փախստական զօրաց օրինակին նահանջելով:

Հէպօ կապուտ կողոպուտ ստանալով, իւր քաջերին բաժանելով, թաղում է իւր 10-ի չափ մեռեալները, ապա հրամայում գաղթել:

Սասնեայք քրդի նման յատուկ հաստատութիւն չունին, կապւած չեն մի գիւղի մէջ. իբրեւ խաշնարած, իբրեւ հնազանդ զին-

ւորներ՝ իսկոյն անասունների երամները առած, հուր ու մուր (գոյք) եղներին բարձած, հետեւում են զօրավարին, որ առաջնորդում է նրանց Գաթով-Արտից այժմու բնակավայրերը, Շատախ: Հիմնում է Գալէ-Կուզան գիւղը, ուր կային երեք տուն քրդեր և կան տակաւին առանց բազմանալու: Միր-Հէպօի հրամանաւ ապա հիմնում են Սէմալ, Շէնիկ գիւղերը: Այս նահապետը մեռնում է առանց ուրիշ պատերազմի, չգիտեմ քանի տարի իշխելուց չետոյ:

Պ Ո Ղ Ի Կ Ն Ե Ր

Միր-Հէպօին յաջորդում է իւր անդրանիկ որդին Պողիկ, գրեթէ 1769 թւին, որի կեանքը լի է մոռացւած արկածներով, կռիւներով, սակայն այժմ միայն անունն է յիշուում: Մի օր՝ ազգացին գործերի համար ճանապարհորդած ժամանակ ձիան հիւսի տակ կը մնայ... Այդ ժամանակ յղի էր նորա կինը, մի քանի ամիս յետոյ ծնում է մի որդի, հօրը անունը տալով նորան անւանում են Պողիկ: Մանկիկը հուշակում են Միր, բայց՝ մինչև նորա մեծանալը, իբրև խնամակալ կառավարում է ցեղը, մանկան հօրեղբայր Սրգօն: Պողիկ 18 տարեկան հասակին ստանձնում է միրութիւնը, բայց՝ թոյլ բարքերի տէր, ծոյլ, դանդաղ լինելով, ցեղը առնում է միրի պատիւը նորանից և նախկին խնամակալ Սրգօին հուշակում իշխան:

Մ Ի Ր-Ս Ր Գ Օ

Պողիկի անկումը առանց մեծ պատճառի չէր, հարկաւոր էր այդ ժամանակ ոչ թէ դանդաղ, այլ Գորգէի, Հէպօի նման Միր-զօրավար, քանի որ ուժեղ թշնամին մերկացնում էր սուրը պատեանից:

Հաճի-Խատրի թոռ՝ Հաճի-Աղա-բէկ՝ լսելով Գրբըրցոց (Գաբըվարտոց) ներքին շփոթութիւնները, կարծում է կաշառելով Պողիկը ներքին խռովութիւն առաջ բերել, բայց՝ Պողիկ, որ ամենեւին ցաւած չէր հօրեղբօրից, Աղա-բէկի դիտաւորութիւնը յայտնում է նորան: Քուրդ իշխանը իւր հարւածի վրիպումից զայրացած, Հաճի-Խատրի պարտութեան վրէժը լուծելու համար, անմիջապէս զօրաժողով անելով, 2000 հոգւով յանկարծ յարձակում է Գալէ-Կուզան,

1813—15 թւին, յուլիսին, մի սաստիկ մուլթ, անձրևոտ գիշեր մոտում է Գալէ-Վուզան, ուր բնակւում էր ինքը, միրը:

Ամառ լինելով գիւղացիք զոզան (սարերը) էին ելած, այնպէս որ գիւղի մէջ մի քանիներ կային:

Գիւղացիք Անտքի բարձունքը, Կամքի ստորոտները միմեանցից հեռի վրաններ բացած բոլորովին ապահով տոմաստ, իւզ, պանիր էին պատրաստում, Միրը ինքն էլ գիւղում չէր: Որովհետև գիւղում մարդ չկար, Հաճի-աղա-բէկ առիթից օգտւելով հրամայում է կողոպտել, մարդիկը գերել, սպանել զիմադրողին, միով քանիւ անել ամեն չարիք, բայց կիներն ու աղջիկները, մանաւանդ տէրտէրի աղջիկը անպատճառ գերել՝ եթէ տանն է:

Տակաւին գիշեր էր, հազարաւոր հրացաններ սարէ սար արձագանք տալով որոտացին միանալով: Զարթում է անվախ տէրտէրը, ծերունազարդ Ասատուր քահանայն, որը «շատ անգամ,—ասում են պատմողները,—իջել էր ասպարէզ իբրև զօրավար խաչով ու սրով, արիւնաթաթախ մատուցել պատարագ իբրև քահանայ հայոց Աստուծոյ»:

Տէր-Ասատուր միայն թուրը մերկացնելով, առանց հանդերձի, շապկանց յարձակւում է դէպի դուռը. մինչդեռ մի քանի վիթխարի բրդեր զիտապատ կ'ընկնէին նորա սրով, Հաճի-աղա-բէկի ատրճանակը վերջ կը տաջ երէցի կեանքին... Իւր շէմի առաջ գլորում է ծերունի զօրավար-քահանան իւր սպիտակ ալիքը արիւնով ներկւած: Տէր-Ասատուրի գեղանի աղջիկը, Հէւա՝ (Յւա) գալիս է հօրը օղնութեան, նորա անկումը տեսնելով, թողնում է հրացան սարպիլը, սաւառնում ալեորի դիակին վերայ: Աղա-բէկ անձամբ հրացանը խլում, դիակից հեռացնում, տանամեայ գեղանուշ մանկամարդի ձեռները շղթայում, հրամայում է դերիվարել այդ անգին զանձը:

Առիւծների որրանը, որջը, կականաց թատերավայր է դառնում, որովհետեւ՝ երեք այր մարդիկ կային, 2 ծերեր և հանգուցեալ քաջ—տէրտէր: Քահանան մեռած, ծերունիք շարած, կանայք զիմադրակու անկարող, զէնք չունէին, միայն քարերով ինչպէս յաղթէին 2000 հրոսակի:

Խորտակում են դռները, հարսներ, աղջիկներ իրար մօտ հաւաքելով պատրաստում են գերութեան...

Սակայն՝ Աղա-բէկ կասկածելով թէ մի գուցէ հրազինաց ձայնն առնելով յանկարծ վրա տան հայք, ինքն ու իւր թիկնապահ թոռունները հապճէպով տէր-Ասատուրի գոչքն ու զուտորը ուղարկում են գիւղից դուրս, անդ՝ ուր ինքն պիտի սպասէր զօրքին. իսկոյն հրաման կ'արձակէ շուտով կողոպտելու և հեռանալու:

Գիտենալով իւր կացութեան անապահովութիւնն, իսկոյն կը գոչ դուրս, իւր զինակիրներով շրջապատուած սպասում է գիւղի անկիւնը շինուած մի գոմի առաջ:

Իրաւունք ունէր կասկածելու:

Յանկարծ գոռում են հրացանները, նոյն գոմից սլանալով զընտակներ՝ զոր տերւնների պէս թոթափում են Աղա-բէկի ոտներին տակ օ զինակիր: Աւագակապետը զարհուրած, ահաբեկ հրաման կը տայ: Իսկոյն զուռնացի ձայնը պատառում է ազմուկի խորերը. յական թոթափել թողնում են աւար, կողոպուտ և խուճապում ի փախուստ: Բայց՝ փախուստով չազատիր հրոսակի խումբը:

Տակաւին լուսացած չէր, գիշերը մութ է ու միգամած: Հինգ խոր թեր (կարիճներ), միր-Սրգօի կրտսէր որդին Տօնէ, Մըքօ, Կրպէ, Ազօ, Կրպէի-Տօնէ կատարելապէս զինուած մտած են եղել գոմը վրաններից գալիս. սոքա են սպանել Հաճի-աղա-բէկի զինակիրները: Տեսնելով նորա սահանջը, ծաղրում ու թքնում են Հաճի-բէկին:

—Շնիր, իմը՞ կիկնիր կի վախիցուն, զխորթեր հիէտ տեսնելուն կ'ելես իմը՞ կատու աւայ գլուխն ուրանց ասուկ մկան ծակ կոլրտին: Իսկոյն անվախ Հորեանք հետեւում են փախտականներին: Քաջածանօթ լինելով ձորակներին, բլուրներին և ամեն մի ժայռերին, ծածկւելով հետեւում ու գլորում են դիպից վերայ: Այս անհաւատալի իրողութիւնն պսակում է մեր կարիճներին «քաջ» (քաջ) տիպոսով:

Ի վրէժ տէր-Ասատուրի, երկու մեծամեծ բէկեր, 4 թուռններ, որ վիրաւոր մնացած էին ճանապարհին, հաւի նման կը մորթոտեն, ձորակներն ու կիրճերը դիակներով կը ծածկեն: Հաճի-Աղա-բէկ 4օ գոհնր կը տայ:

Կարիճները լսելով Հէւաչի գերութիւնը, կարճ, կարուկուղիով, տակաւին Հաճի-Աղա գիւղ չմտած, կ'երթան՝ զինու. զօրութեամբ

երեք պատուաւոր քրդուհիներ գերի կը վարեն, որ ՚ի վերջոյ փոխարինում են Հէւայի հետ:

Միր-Սրգօ լսելով իրողութիւնը կը բորբոքի, կը հրամայէ պատրաստել ու արշաւել Աղա-Բէկի երկիրը: Ռազմական պատրաստութեան համար քիչ ժամանակ էր պէտք: Ինքը և մանուկներն ապահովելու համար բարձրանում են լեռները:

Հաճի-Աղա լաւ ուսումնասիրած լինելով Հայոց կեանքը, բարքն ու բնոյթը, զօրքերի մի մասը իւր երկրին պահապան թողնելով, մնացածով ղիմաւորում է հայկական գնդին:

Սասնոյ Սլօ-Բէկը, Սլեան (Սլկունի) ցեղի իշխանը, աճապարում է արիասիրտ զինակիրներով իբրեւ միջնորդ իջնել կռւի դաշտ, հաշտեցնել, կամ միանալով Միր-Սրգօի հետ՝ ջախջախել Հաճի-Աղայի զօրութիւնը, որովհետեւ՝ Հօլօցեանք ևս իբրեւ աւագ-իշխան, միւս հայոց նման, յարգում և մեծարում էին Սլօ-Բէկին մասնաւոր նւէրներով, քանի որ նա՝ գիտենալով իւր հայկական ծագումը սիրում և օգնում էր Հային, պատուում էր աւելի բոլոր քրդերից:

Երբ Սլօ-Բէկի միջնորդութիւնը չէ ընդունում Հաճի-Աղա, նորա հայասիրութիւնը «մեղք» համարելով նախատում է երբեմն Սլկունի իշխանի արարքը, իսկոյն Սլօ, միանալով հայոց, դաշնակից զօրքով խաղում են առաջ: Աջ թևի զլուխն անցնում է Սլօ, ձախինը Միր-Սրգօ, ուժգնակի հարեւածներով ցրւում են Հաճի-Աղայի բանակը, գրաւում պաշարն ու ռազմամթերքը, սաստիկ ջարդ տալով հալածում նորան Շատախից:

Բայց Հաճի-Աղա չէ մոռանում, մի քանի ամիս յետոյ կրկին մի քանի հազարներով արշաւում է Շատախ: Հայք, արթուն, սպասում էին կարծես. այս անգամ քուրդ իշխանը քաջերի հետ դործ ունէր: Ուստի զեպան ուղարկելով առաջարկեց հաշտել խնդրելով խելահաս պատգամաւորներ: Հայք միամտաբար թակարդն ընկան: Հաւատացին օձաքիւմ Հաճի-Աղա-Բէկի առաջարկին:

Միր-Սրգօ՝ Տէր-Ասատուրի որդուն և երկու ուրիշ պատուաւոր մարդոց ուղարկում է հաշտութեան դաշն կապելու: Ներկայանում են և Տէր-Ասատուրի որդին յայտնում է Միրի պայմանները, այն է՝ Ա. պատերազմի փնտաւց փոխարէն վերագարձնել հայոց 40 քիսա (4000 մանէթ): Բ. Վերագարձնել բոլոր գերիները: Գ. Խոյթի

կողմերից չյանդգնել անցնել իրանց սահմանը, յարգելով հայոց զէնքը:

Բէկը լսում է այս ամենը և անմիջապէս հրամայում շղթայի զարնել. իւր դեսպանը հեռուից իմացնում է հայերին այդ բանը և աւելացնում՝ Ձեր մարդիկը կսպանւին եթէ չվճարէք իբրեւ փրկանք 400 զուրուշ (37 մանէթ): Միր-Աբրգո ճարահատեալ ժամացիր է լինում բանակներից հեռի մի բլրի վերայ, այնտեղ երկու թշնամի հաշտում են և դաշնակից լինում: Հայեր վճարում են 400 զուրուշ և ստանում իրենց զերինները: Կարծում ենք թէ այս Հաճի-Աղա-Բէկի թուն է հռչակաւոր Մուսա-Բէկը, որդի վայրազ Միրզա-Բէկի:

Միր-Աբգոի իշխանութեան ժամանակ շարունակ սպանութիւններ, կռիւներ կը լինեն, ոչ մի տարի Սասնիկի զէնքը չի մնում պատեանի մէջ: Այս կռիւների մէջ նշանաւոր է 1829 թւին Պշար-Բէկի դէմ՝ մղւած կռիւը:

Պարսից—Ռուսաց պատերազմից ի վեր Միր-Աբգո իբրեւ ծածկաբար օգնող իշխան Մատաթովին ¹⁾ և Ներսէս ե. ին արդէն ընկած էր քրդերի աչքից: Ռուսո-թուրք պատերազմը և Կարնեցոց զաղթականութիւնը զրգսեցին մահմեդականի կառաղութիւնը, ամեն ուրեք հրդեհ ու սուր լափում էին հայի ինչնքն ու կեանքը: Քրդեր ևս մասնակցեցին իսլամական շարժման, վասնորոյ Պշար եղաւ կրօնական կռւի հեղինակ, իւր մեծաբանութեամբ լառաջադրեց ջնջել Սասնոյ բնակիչ հայ տարրը:

1826 թ. Գալէ-Վուզան բաւական չլինելով ցեղին, երկունոր զիւղեր ևս շինում է Միր-Աբգո՝ Շէնիկ և Ազըրմը. Պշարի կռից յետոյ, վերջնոյն բնակիչները, Գալէ-Վուզանի արևելեան կողմը, Շէնիկի մօտ, հինեցին Սիմա, որ քրդեր անւանում են Սէ-մալ, (երեք տուն): Այժմ Գալէկուզան, Սիմա, Շընիկ, որք իրար մտերմապէս կապւած, բոլորն էլ Հօլօցեան լինելով, պատերազմի բաղդից հաւասար դաշնակցական բաժին ստա նալով, մի սիրտ, մի կամք, մի խորհուրդ ունենալով՝ տակաւին չեն

¹⁾ Հաղիւ թէ Մատաթովին, քանի որ սա միայն 1826-ին սեպտեմբերի գործ ունեցաւ պարսից հետ, լաղթելով սոցա շամքորի մօտ, ուր և սպանւեց Սմիրխան-Սարգարը: Արդէն լաջորդ 1827 թ-ից նա շմառնակցեց կռիւներին, կանչւած լինելով Պետերբուրգ, Ման. Խմբ.

խոնարհած բռնաւորաց լծերի տակ, ոչ մի աշխարհային փառք, ոչ մի շլացուցիչ խոստում կարողացան որոշել Հօլօի քաջ-արի զաւակներին մի երկպառակիչ, մի մասնիչ, մի վատ... հետեւապէս՝ ահագին ընտանիքի մէջ սէր, մտերմութիւն, միութիւն ընդունւած են իրենց պաշտած ամենասուրբ երրորդութեան պատուով: Գուցէ աչքի առաջ ունենալով իրենց համաբնակ հայ-եղբարց վիճակը՝ անխախտ հետեւում են Հօլօ նահապետի աւանդութեան...:

Արդ՝ Պշար-Բէկ, իշխան Սասնոյ ամրոցին, հայր հուշակաւոր Զէյնալ-Բէկի, որի պատմութիւնը աւարդած եմ երկու (Ֆէրիտ, Գորպէ) գործերի մէջ, օգուտ քաղելով քաղաքական տաղնապետերից, հայերի ստոր կացութիւնից՝ իբրեւ իշխանապետ Սասնոյ ուզում է իւր հօր սիրած Հօլօյի ցեղը հարկատու անել, ջնջել Աւտալ-Բէկի հրովարատակի զօրութիւնը եւ այլն:

Սակայն՝ ուղղակի Միրին դէմ ելնել ծանր նկատելով, պատգամաւոր է ուղարկում Աւգըրմը, ուր հազիւ տասը տուն բնակիչ կար, պահանջում է 10 քիսա ոսկի. հայեր մերժում են այդ անիրաւ պահանջը: Իրենց ցեղից հեռի լինելով հանդերձ, քաջաբար մերժեցին. երբ բռնացան, զայրոյթով պատասխանեցին պատգամաւորներին, ասելով:

«Մինք, կղտուտ քուրդ, զուր հը մկայ, հուհու վէրկի աւուկ
« չինք, դու ինչ կիգաք միրնէ հարկ ուզիլ, դացի, հըյրօ, տացի,
« ասի գքոյ Պշար աղին կուու. միջ կիտենք միրն թըհուրն արնով»:

Պշար արդէն գիւղից հեռի չէր, մի ձորակի մէջ բանակ դրած սպասում էր գիշերւան: Երբ իւր պատգամաւորք վերադարձան, բառ առ բառ հաղորդեցին Հոլոյեանց պատասխանը, զայրացաւ, սակայն՝ իւր ոյժը անբաւական գտնելով, իսկոյն ազդարարեց կատաղութեամբ եւ քաջութեամբ ականաւոր փնճնարցոց Ղասմ-բէկին եւ Խսուֆ-էրմէնի մեծ աղայի սուլարաթիւ աշիրէթներին, որ իրենց վերադարձին Աւգըրմը ջնջելով անցնեն. իսկ ինք կորկոր վերադարձաւ Սանասարի բերդ, կամ Քաղքիկ:

Հայք ապահով լինելով մինն այս, միւսն այն սարի գլուխը զոգան էին ելած, գիւղը գրեթէ անմարդի էր:

Փնճնանցի Ղասմ-բէկ, Խսուֆ-աղա, աշնան եղանակին, 2000 մարդով, մի գիշեր պաշարում են Աւգըրմըն:

Պէյերը գիտէին արդէն՝ որ հայեր գիւղը չեն, լրտեսած լի-

նեղով իւրաքանչիւր վրանի վրա ուղարկում են ութսուն մարդ և 1200 մարդով պաշարում են գիւղը:

Պիպւածով մի քանի կորիճներ գիւղ կ'երթան եղել, տեսնելով քրդական սուլարաթիւ խումբը, պահւում են ժայռերի տակ, անդադար հրագէնք պարպելով տապալում:

Քրդեր վատ և թուլասիրտ ազգ լինելով՝ չեն համարձակում իբրև Բագրանցի մեկնազէն յարձակւելով ջնջել մի բուն քաջերը... անմիջապէս փախտական են դառնում, առանց գիւղի աւարը տանել կարողանալու: Վրանները պաշարողք հապճեպով յափշտակում են բոլոր ոչխարները և միանում մեծ խմբին: Այսուամենայնիւ՝ խաւարի մէջ քաջերը եօթը ժամ, մինչև լոյս, հալածում են առանց երկելու կամ վնասելու: Երեսուն քրդեր սպանում, 50—60 մարդ վիրաւորում, նոյն իսկ Խսուֆ-էրմէնի ծանր վէրքեր ընդունելով՝ մի քանի ամսից յետոյ հազիւ ազատւում է մահաանից:

Քիւրդերը անդադար դնդակ տեղալով, կատաղում են, բորբոքւում, հաչոյում, մինչդեռ մահաբեր խումբը միշտ ծածուկ, իբրև ոգիներ պնդում էին շարունակ անզալ հարած հարածի ետեւից:

Քրդեր կարծում էին թէ «Ալէքնցոց Աստուածը, Իսա (Յիսուս) մեծ փէղէմպիրը, ինքն է հալածում իրանց:

Մեր կորիճների ամենամտերիմ զաշնակիցը սովալի քամին էր, խաւարն էր, երբ արշալուսի շառաւիղները ամպիկի արանքներից որոշեցին սարերի գագաթները: Կորիճները յոսահատած, այլ ևս չկարողացան հալածել, թողին 3000 ոչխար, որ վրաններից էին յափշտակած իբրև աւար, քրդերին ձեռք, զրեթէ ամօթապարտ վերադարձան գիւղ, ինկառ շառնելով այն քաջապործութիւնը, կոտորածը, ուր երեսուն գիականեր ընկած էին իրենց դնդակներով: Նոքա չէին համարձակում մեծերին երևիլ:

Սոքա եօթ հոգի էին, որոց գլխաւորը այժմ քահանայ է: Սա յարաբերութիւն ունէր անմահ անուն Ներսէս արքեպիսկոպոս Շահազիգեանի (Ներսէս Ե.) հետ... գտնւած է նորա հետ պատերազմների մէջ մի փոքրիկ խմբով, Ներսէս կաթողիկոս յանձնարարած էր գիտնական Մկրտիչ Էմինի հայր պ. Յովսէփ Էմինը իւր նամակներով տէր-Քաղէին: Յ. Էմին սորա խորհրդով գրում է իւր տեղե-

կազմութիւնները Լոնդոն, իւր բարեկամ լորդին Սասնոյ մասին: Սա իւր խոհեմութեամբ, քաջութեամբ պաշտելի է դարձած սասնոցոց: Այս քահանայն սիրած է և երջանկաշնչատակ Գէորգ Կ. կաթողիկոսից իւր քաջութեամբ, առանձին իմն խնամքով, հոգածութեամբ ի արիտուր իւր անթիւ զոհաբերութեանց խրախուսած ամենայն հայոց վեհ. կաթողիկոսից... Ճերունի, պատկառելի, անձնէր ազգի և կրօնի, տէր-Ղազար աւագ քահանայ Նոյնեանցն է դա՛ հովիւ Գալէ-կուզան գիւղի, յաջորդ տէր-Ասատուրի, որի նւիրական ձեռը համբուրելով պատմութիւնս իւր մօտ սրբազրեւու բաղդն ունեցայ, շնորհիւ իւր քեռորդի արժ. տէր-Յովհաննէս քահանայի, ձեռնասունին հայոց Հայրիկին:

Այս դէպքից յետոյ, երկնչելով քրդերի վրէժխնդրութիւն/ց, ըստ նախնի սովորութեանց, իրենց մասնաւոր գոյքը եզների վերայ բարձած, եկան, հիմնեցին Սիմա 1829 թւին:

(Շարունակելի):

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆՅ.—*Հներսիսեան հոգեւոր դպրոցի սաների առաջին դպրոցական ճանապարհորդութիւնը յաւելած ով:* Տիփիս, 1894 թ., տպ. Նարաձէի:

Այդ 128 փոքրագիր էջերով գըրքովի բովանդակութիւնը չառաջաբանից զատ կազմում են հետեւեալ կէտերը. ա. համառօտ տեղեկագիր Ներսիսեան հոգեւոր դպրանոցի սաների առաջին դպր. ճանապարհորդութեան, բ. Տեղեկագիր, գ. Տնտեսական, դ. Մի հատուած առաջին դպր. ճանապարհորդութեան ընդարձակ նկարագրութեան և ե. Յաւելած դպր. ճանապարհորդութեան տեսութեան:

Նիւթերի զաստորութեան մասին ալն գիտողութիւնը պիտի ածենք, որ ալս վերջին հատուածը՝ «չաւելածը» որ գրքովի մէջ թէ իր ծաւալով և թէ իր նշանակութեամբ ամենակարևորն է, պէտք է առաջին տեղում դասէր, որպէս զի ուրա ընթերցողները տեսնէին, թէ տեսութիւնն ինչպէս է գործադրուել մեղադրում: Այս տեսութեան մէջ հետաքրքրական էր կարդալ դպրոցական ճանապարհորդութեան գաղափարի

ծագման ու զարգացման մասին պատմական գլխաւոր տեղեկութիւնները: Յալոնի է որ ալս միտքն առաջին անգամ ծագել է բնութեան սերտ բարեկամ Ռուսոյ մէջ մի դար առաջ: Նա անւանում է ալս գաղափարի «հոգեւոր հալը», իսկ գերմանացի Բաղէդով Փիլանտրոպիստ մանկավարժը անցեալ դարում՝ նրա առաջին գործադրողը: Թէև ալս ճանապարհորդութեանց նպատակը մասամբ կամաւական էր, սակայն պ. Յարութիւնեանցի տուած տեղեկութեան (էջ 79) համեմատ «միմիայն մարմնական կազդուրումն և առհասարակ առողջապահական տեսակէտը» չէր «աչդպիսի ուղեւորութեանց նպատակը»: Ֆիլանտրոպիստներն էլ ուզում էին բազմակողմանի նպատակներ իրագործել, թէև իրանց ուղեւորութեանց ծրագիրն աչնպիսի առնչական սերտ շարաբերութիւն չունէր կրթական հաստատութեան ամբողջ ծրագրի հետ:

Ռազնի մանկավարժական սեմինարի 1891 թ. տետրում է միջին աչլոց կարգում ենք էջ 93. «Այս առաջին մեծ փորձը պարունակում է աչն ամեն էական մոմէնտները, որ մենք աչսօր յաւ կազմակերպած դպրոցական ճանապարհորդութեանց մէջ տեսնելու սովորած ենք, մի քանիսը նախ հատ ու կտոր, միւսներն աչլակերպած, մեծամասնութիւնը դեռ աչսօր վերին աստիճանի ուշադրութեան արժանի են և օրինակելի: Հարցատիրութեան համարեա բոլոր տեսակները՝ ընկերական, անհատական, կրօնական, հաշիւողական (սպեկուլատիւ) և փորձնական՝ ուշադրութեան են առնւած եղել, սակաչն երկու վերջին տեսակները գերակշիւ դեր են կատարելիս եղել: Նաև Ֆիլանտրոպիստները, մանաւանդ Բէնդէրի ուսումնարանական հաստատութիւնը, դպրոցական ուղեորութիւնը ուսուցման հաւ կապակցութեան մէջ էր դնում: Սրանք էլ ունեցել են աչխատանքի բաշխում, կանոններ, «պաշտպին բժիշկ», չիտատադոչն (? Խմբ.) ու նկարագրութիւն: Պր. Յարութիւնեանցն իր ներկայացրած տեսութեան գաղափարները քաղել է գլխաւորապէս Շտոլի ու Յիլլերի և սրանց աչլակերտների կազմած գրականութիւնից ու արած փորձերից. և պէտք է ասել՝ բաւականին ընդարձակ կերպով ու որոշ համակարգութեամբ ներկայացրել է նպատակն ու սրան հասնելու պաւմանները: Ռազնի սեմինարի վերաջիշալ տետրում Շտոլի ընդարձակ աչխատութիւնը աչ մասին կարող էր ինչ-ինչ կետելի վրալ աւելի լոյս

գցել: Իպրոցական ուղեորութեան երեք գլխաւոր նպատակներն են. ա. Ուսուցչի և աչլակերտի աւելի սերտ կարաբերութիւն, բ. Աչլակերտի բնաւորութեան գաւգացումը մոտապատկերների ագատ շարժման և գործելու առիթների միջոցով, որոնք ընկերական կեանքում են ներկայանում և գ. Սանին օգնել աւելի շատ բան տեսնել, զիտել և աւելի բաղմատեսակ հաղորդակցութեան մէջ գտնել: Այս նպատակներին հասնելու գլխաւոր պաւմանն է առանձին հոգաժութեամբ նախապատրաստելը, որ երկու տեսակ պէտք է լինի. մինը ամբողջ դպրոցական կեանքին և միւսը մի տարալ շրջանին վերաբերեալ: Մինչդեռ կարողացի աչլակերտները գլխաւորապէս աչխարհագրական, բնապատմական ու պատմական (նաև աւանդութեան) տեղեկութիւններ պիտի ստանան, մերոնք նաև գիտաւորութիւն պիտի ունենան ինքեանք ուսուցչինների առաջնորդութեամբ աչլակիսի նիւթերի հաւաքելու, ժողովրդին մօտեանալու, նրա կեանքն ուսումնասիրելու: Համառօտ տեղեկագրի նպատակն ու բացատրութիւնն ընգհանուր տեսութեան սիստեմին համապատասխան չէ մշակւած, ուստի աչս կողմից թերի է: Ուղեորութեան վաւրին վերաբերեալ գլխում առաջարկւում է մի հաստատուն կենտրոն ընտրել, սակաչն մենք չենք կարծում, որ աչս տնքան էլ օգտակար լինի, քանի որ շարունակ նոչն տեղը վերադառնալը ժամանակի կորուստ պէտք է համարել: Ուղեորութեան կարեոր միջոցների վերաբերեալ

հատաճում պ. Թ. ասում է որ «ան-
ձամբ փորձած մանկավարժ է հար-
կաւոր» դպր. ուղեւթեանց համար.
թերեւ աչս բաւելը մի քիչ խրո-
նեցնեն շատ ուսուցիչներին և ալդ
պահանջը շատ քչերը կարողանալին
լցուցանել: Մենք կարծում ենք, որ
գործը սիրող իւրաքանչիւր ուսուցիչ,
որ օրինակ՝ աչս դրքովով լաւ նա-
խապատրաստուել է և տեղական հան-
գամանքներն էլ նախապէս անձամբ
կամ կարեւոր տեղեկութեանց հիման
վրայ չափել, կշռել, կարող է ձեռ-
նարկել մի աշակերտ գործի: Խնչպէս
պ. Թ. տեղեկագրից երևում է, ճա-
բաւականին լաւ պատրաստած է և.
դել ճանապարհորդութեան պիտուքը
տեղական հանգամանքներին չարմա-
րացնելով, միայն թէ ուղեորութեան
նպատակը սաներին նախընթաց
երեկոն պարզելը շատ ուշ է. ալդ
պէտք է աւելի վաղ կատարւէր և
խօսւէր աչն ամենի մասին, ինչ որ
պիտի տեսնւէր. աւելի հեշտ է ասել,
ինչ որ առաջնորդը գոնէ չոյս ունէր
տեսնել: Խնչպէս երևում է, մի որ
և է վաղ կամ շինութիւն նկարա-
գրելիս, աչս ընկերութիւնը դիտաւո-
րութիւն է ունեցել, որքան կարելի
է, քիչ ժամանակում շատ նիւթեր
հաւաքել, աշխատանքը բաժանւած

է եղել ու աշակերտով իւրաքանչիւր
անհատ աւելի հաւաքելի՝ քան ու-
սանողի դեր է կատարելիս եղել, որ
նպատակաւարմար չէ: Երևում է, որ
բաւականին մօտեցել են սաները
գեղջուկի կեանքի մտաւոր, բարոյա-
կան ու տնտեսական հանգամանք-
ներին, աշակերտների մէջ դէպի հա-
րենիքն առաջացած հարցասիրու-
թիւնը փոխադարձ ազդեցութիւն է
ունեցել նաև գիւղացիների վրայ:
Վերջապէս «առաջին դպրոցական
ճանապարհորդութեան ընդարձակ
նկարագրութեան մի հատւածը», որ
բաւականին մանրամասն է (43—76
երես) կարող է թէ՛ իւրեւ օրինակ և
թէ՛ իւրեւ օժանդակ միջոց համարւել
ալ ուղեորների համար:

Մնում է մեզ ուրեմն առաջար-
կել իւրաքանչիւր հարցասէր ուսուց-
չի ձեռք բերել աչս ուղեցուցը և
գործադրել, որքան հնարաւոր է, նրա
գեղեցիկ գաղափարները չօգուտ սա-
ների և հալընագլխութեան: Մենք
կարող ենք պ. Թարութիւնեանցին
միայն մեր գոհունակութիւնն չափ-
նել աչս դարեւոր գործը մեզանում
առաջին անգամ փորձելուն և աչս
ուղեցուցը հրատարակելուն համար:

Թ. Տ. Միրաք.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՈՐ

II ¹⁾

Սասունի կոտորածի դէպքով նորից արթնացաւ հայկական խնդիրը, բայց այնպիսի ուժգնութեամբ, ինչպէս երբէք մինչ այսօր եղած չէր, և ոչ իսկ Բերլինի կոնգրէսի ժամանակ: Տաճկա-Հայկական խնդիրը անցեալ տարւոյ նոյեմբերից սկսած դարձաւ գերիշխող քաղաքական խնդիր ամբողջ լուսաւոր աշխարհում: Հասարակաց կարծիք և կառավարութիւններ—հաւասարապէս սկսեցին մասնակցել հայկական գործերին, դարձնելով այդ գործերը իրանց զբաղմունքի կենտրոնական առարկայ: Երբէք տաճկա-հայր այդպիսի բացառիկ ուշադրութեան արժանացած չէր, և այդ բացառիկ ուշադրութիւնը հարկաւ դնւած էր բացառիկ զոհաբերութիւնով—տասնեակ հազարների թափած արիւնով: Բաւական չէ այդ. մի մեծ միւրթարութիւն այն է, որ հայկական դատը պաշտպանուում է յանուն մարդկութեան, յանուն քրիստոնէութեան, յանուն յառաջագիւծութեան, և,—գործնական տեսակէտից այդ մանաւանդ շեշտելու արժանի է,—այդ դատը պաշտպանուում է մի հզօր և լուսաւորեալ պետութեան կողմից իբր քաղաքական անհրաժեշտութիւն, հայկական նահանգներին ինքնավարութիւն տալու մտքով:

Մեր անցեալ յօդաւորում ցոյց տւինք խնդրի ծագումը և թէ ինչ ծաւալ ստացաւ նա շնորհիւ Անգլիացի եռանդուն միջամտու-

¹⁾ Զօդւած առաջին տես «Մուրճ» 1894 № 11—12 միացեալ համարը

Թեան. այդ առաջին յօդաժողով մեր գլխաւոր ուշքը դարձրած էր այն բանի վրայ թէ ինչպէս վերաբերեցին դէպի խնդիրը մեծ ազգերը—Եւրոպայում և Հիւսիսային Ամերիկայում, դատելով մեծ թերթերի բռնած դիրքից, թէ ինչ գործունէութիւն ցոյց տւին Եւրոպայում և Ամերիկայում հաստատուած հայկական կամ հայասիրական ընկերութիւնները, ինչ և որքան որոշ դիրք բռնեցին մեծ պետութիւնները դէպի խնդիրը, ինչպէս ծաղեց Սասունի կոտորածը քննելու համար եւրոպական մասնաժողով կազմելու խնդիրը և ինչպէս նա իրականութիւն ստացաւ. ապա մենք հետեւեցինք քայլ առ քայլ, թէ ինչպէս Անգլիայում խնդիրը կերպարանափոխեց աւելի լուրջ քաղաքական խնդրի, Տաճկա-Հայաստանին ինքնավարութիւն տալու մտքով, և թէ վերջապէս ինչպէս անգլիական ճնշումը հասցրեց Բ. Գոուըր այն քայլին, որով վերջինս որոշեց հայկական նահանգները մի ինքնավար նահանգի վերածել:— Մեր անցեալ տեսութիւնը վերջացրինք Պոլսից ստացուած հեռագրով Տաճկա-Հայաստանի ինքնավարութեան մասին, որով լրանում էր հայկական խնդրի նորագոյն զարգացման մի շրջանը:

Սակայն, որքան էլ հրապուրիչ թւէր տաճկական կառավարութեան այդ որոշումը, հարց էր զարթնում տաճիկ կառավարութեան անկեղծութեան մասին այդ խնդրի վերաբերմամբ: Բայց արդէն այն, որ Բ. Գոուըր թոյլ տւեց որ այդ լուրը պտըտի և լուրը թողեց առանց հերքման, —այդ ցոյց տւեց թէ ինչ յուսահատութեան էր հասած նա, և որքան մեծ էր նորա ցանկութիւնը՝ դադարեցրած տեսնել ամբողջ քաղաքակիրթ աշխարհը յուզող հայկական խնդիրը: Ձեռացնելով թէ ինքնավարութիւն է խոստանում, —այդ նշանակում էր դէմն առնել Եւրոպայի կողմից շարունակել խուզարկութիւններ անելու, գաղտնիքներ բացանելու, այդ նշանակում էր հանգստացնել հասարակական կարծիքը, զայրոյթների արտայայտութեանց դէմն առնել, բայց միանգամայն նաև ժամանակ վատակել՝ փոթորիկի դէմ միջոցների ձեռնարկելու համար:

Հայկական խնդրի գլխաւոր յարուցանող անգլիական Daily News օրաթերթը, ստանալով հեռագրական լուրը ռեֆորմների մասին, ուրախութիւն յայտնելով հանդերձ՝ նախազգուշացրեց հա-

յերի բարեկամներին՝ ձեռքները ծալած շնորհել և ահա թէ ինչ խօսքերով։

Այ. Պոլսից մեր ստացած հեռագիրը ամենքը մեծ հետաքրքրութեամբ կը կարդան։ Մենք միայն կասկածում ենք որ մեր թղթակցի հաղորդած լուրերը չստուգւին։ Բայց եթէ ճշմարիտ Բ. Գուռը պատրաստում է փոխել Փոքր-Ասիայի չորս գաւառների վարչութիւնը, առաջին երեք տարուց չետոյ ալդ գաւառների կառավարիչ նշանակելով քրիստոնեայ նահանգապետ և հեծեւազոր կազմել, որի կէսը բաղկացած լինի քրիստոնեաներից, ալդ նշանակում է որ արեւմտեան պետութիւնների զիպլումատիան նշանաւոր չաղթութիւն է տարել։

Մենք զրանով չենք ուզում ասել, թէ ալդ տեսակ մի զիջումն արդէն բաւական է և կամ թէ որ և է պատճառ կալ ալժմէն իսկ քրիստոնեայ կառավարիչ նշանակելու. բայց եթէ ալդպիսի մի բան ուզում են անել սուլթանը և իւր պաշտատեանները, — նշանակում է որ Հալաստանում տեղի ունեցած խռովութիւնները չափազանց լաւ հետեանքներ ունեցան։ Գլադստոնի ճառը, որ արտասանեց Կիմբերլէյի չալտարարութիւնից և սըր Ֆիլիպ-Կէլրի՛ի պահանջից չետոյ, (Կէլրիի պահանջին ձայնակցեցին է պաշտպանութիւն ցոյց տւին Նրա ուռու և ֆրանսիացի պաշտոնակիցները), ալդ ամենը միասին Սուլթանից իշխանաբար ընթերցման կատարելու խոստումն խլեցին։ Բայց ուրիշ բան է խոստացածը կատարելը։ Սուլթանի անցեալ քաղաքականութիւնն ահնայէս է որ կարիքի է չուսալ թէ նա կը ցանկանալ գոհացնել Եւրոպային ոչ միայն անցեալում ալ և ապագայում։ Այն ու ամեն աշխարհի հաշիւի բարեկամները չպէտք է որ ձեռքները ծալեն ու շնորհն. ուստի մենք ուրախութեամբ ենք ողջունում ալս երեկոյ Էդինբուրգում կաշնալիք միտինգը։ 1876 թւին Շոտլանդիան Անգլիայից պակաս չէր վրդոված բողոքարկան սարսափներով։ Ալժմ ևս նա չի ուզում չետ մնալ Անգլիայից՝ Հալաստանում կատարած անգթութիւնների դէմ բողոքելու գործուն։

Գերմանական մեծ թերթերից մէկը՝ «Vossische Zeitung» պակաս կասկածամտութեամբ չվերաբերւեց դէպի տաճկական խոստումները։ Առաջ բերելով Ա. Պոլսից ստացւած հեռագիրը՝ չորս վիլաչէթներից մի մեծ վիլաչէթ կազմելու ծրագրին, ալդ թերթը յայտնեց։

«Ճշմարիտ է, ալս բոլորը հնչում է զեղեցիկ, բայց ով ծանօթ է Թիւրքիայի ներկալ դարու սկզբից ունեցած գործունէութեանը բեֆորմների վերաբերութեամբ, նա գիտէ, որ ալդ բոլոր բեֆորմները միում են թղթի վրա և միշտ կը մնան, երբ երկիրը չի ոտանում ինքնավարութիւն կամ չի ենթարկում օտար հսկողութեան։ Ամեն մարդ, որ ծանօթ է Ս.

մանեան գործերին, գիտէ որ այդ զուտ ճշմարտութիւն է: Բայց Հայաստանը միայն մի փոքր փորձաքար է: Մակեդոնիայում գործերը գրութիւնը աւելի լաւ չէ: Մեզ հասնում են Բուլղարիայից լուզիչ լուրեր մակեդոնական շարժման մասին, որ կարող է մեծ հետեանքներ ունենալ:

Կասկածի այդ արտայայտութիւնները միակ չէին, անշուշտ: Եւ զարմանալի էլ չէր այդ. դեռ նորերս թիւրքաց կառավարութիւնը յայտնեց թէ 1880 թւականին պատրաստած բարենորոգման ծրագիրը կորած է, արխիւում չի գտնում! Եւ այս անգամ էլ, բարենորոգման մասին լուրը շրջեցնելուց յետոյ՝ տաճիկ կառավարութիւնը իսկոյն ոչ մի գործունէութեան չկալաւ՝ իւր դիտաւորութեան լրջութիւնը ակներև դարձնելու և կասկածները փարատելու համար: Այդ խոստումը մի զիջումն էր անգլիական հասարակաց կարծիքին և կառավարութեան, որովհետև ակներև է որ անգլիական պահանջների մի խուլ արձագանքն էր այն խոստումը: Անգլիական դեսպան միտր Կերրին Կ. Պոլսում, Ռոզբէրին, իբր անգլիական մինիստրութեան գլուխ, Փլադստոն, իբր հեղինակաւոր արտայայտիչ հանրային խղճի—գործել և խօսացել էին գեկեմբերի 17-ից (նոր տոմարով գեկեմբերի 29-ից) էլ առաջ, և խօսացել ու գործել էին ազդու լեզուով: Կանգ առնել այդ առերես զիջումի վրա—կը նշանակէր խնդրի ծանրութիւնը ուրանալ, այդ կը նշանակէր ապացոյց տալ որ բարձրացրած աղմուկը Սասունի կոտորածի առիթով օգտյին էր, զուրկ իրական հողից և որ խօսքից դէպի գործն անցնելու հաստատ դիտաւորութիւն չկար, կամ որ գոնէ այդ պահանջները հաստատ կամքի, հասուն դիտակցութեան արգիւնք չէին:

Տաճիկ կառավարութեան խոստումը, սակայն, իւր իրական արժէքի չափ միայն զնահատուեց Եւրոպայում: Պէտք էր ուրեմն ձեռները ծալած չնստել, ինչպէս այդ խորհուրդ էր տալիս Բէյլի Նիւսա-ը որպէս և տաճիկ կառավարութիւնը հէնց այդ խոստումից յետոյ՝ ձեռքերը ծալած չնստեց: Հայերին մեծ կոտորած տալուց յետոյ, սուլթանի կառավարութիւնը իւր բոլոր եռանդը գործ դրեց կորցնել կոտորածի հետքերը, այն կոտորածի, որի իսկութիւնը և չափ ու սահմանը որոշելու և քննելու համար սուլթանը ստիպւած էր թոյլ տալու որ իւր նշանակած

Թրքական քննիչ մասնաժողովին մասնակցեն Անգլիայի, Ռուսիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները: Մի կողմից ամբողջ լուսաւորեալ աշխարհը զնալով աւելի ու աւելի համոզմունք կազմեց որ անհաւատալի Թւացող իրողութիւններին «պէտք էր հաւատալ», նա համոզւեց որ Սասունի կոտորածը իւր այն ահռելի գոյներով, ինչպէս նա ներկայացնւում էր հայասէրներին, կատարւած իրողութիւն է. միւս կողմից՝ պետութիւնները, որոնք օժտւած են գործելու համար սզգու օրգաններով, ստիպւած են պաշտօնական վկայութիւններին սպասել և ապա թէ վճռական խօսքը արտասանել: Քննիչ մասնաժողովը հետևապէս պիտի դառնար այն մեքենան, որից ամեն ինչ կախած է և որը, ընթացիկ քաղաքականութեան ուղղութեան վրայ, հայկական խնդրում, պիտի ամենից մեծ ներգործութիւնն ունենար:

Այսպիսով համոզւած լինելը կատարւած իրողութիւնների մէջ մի կողմից, քննութեան սպասելու հանգամանքը միւս կողմից, իսկ երրորդ կողմից թիւրք կառավարութեան ջանքերը՝ քննութիւնը անհետանք և կամ՝ իւր օգտին դարձնելու, — ահա այն դրութիւնները, որոնք շարունակեցին, նաև դեկտեմբերի 17-ից յետոյ, զրդել հանրային կարծիքը: Թիւրք կառավարութեան ցանկութիւնը, ուրեմն, մի խաբուսիկ խոստումով առ ժամանակ հանգստացնել յուզւած մտքերը և դորանով ինչիւրը ինքը մոռացնել տալ — չաջողեց: Բոլորովին ընդհակառակը. հասարակաց կարծիքի ակեկոծ հոսանքը շարունակեց և աւելի ևս սպառնալի կերպարանք ստացաւ, թէև այլ և այլ պետութիւնները իրանց բռնած դիրքով հաւասարապէս չէին խոնարհոււմ համոզեցուցիչ Ֆակտերի առաջ:

Այս ամենով բնորոշւում են այն բոլոր անցքերը որ կատարւեցին դեկտեմբեր 17-ից յետոյ: Այդ անցքերը կազմում են նիւթ ներկայ տեսութեան. բայց այդ նիւթը արդէն այն աստիճանի հարուստ է, որ հարկ ենք տեսնում առանձին գլուխներ յատկացնել ինչիւրի մէջ դեր կատարող ամեն մի մեծ փակտորին:

Տեսութեան առնենք, թէ այդ ժամանակամիջոցում ինչի մէջ կայացան սուլթանի կառավարութեան գործողութիւնները, ինչպէս կազմեց և գործեց քննիչ յանձնաժողովը, ինչ նոր հաստատութիւններ եղան Սասունի և այլ հայերի կոտորածի մասին, ինչ-

պէս վերաբերւեցին դէպի խնդիրը կաթոլիկ հայերը և նոցա Պոլսի պատրիարքը, ինչպէս գործեց հայոց պատրիարքը, և թէ վերջապէս թէ ինչ զրութեան մէջ է հայկական խնդիրը»:

Այս ամենը մեռք կը ներկայացնենք այն տեղեկութիւնների հիման վերայ, որ տուեց եւրոպական մամուլը, աշխատելով կարեւորագոյն յօդածները նոյնութեամբ առաջ բերել: Որ այդ պայմանով մեր տեսութիւնը արտասովոր ընդարձակութիւն կը ստանայ, ինչ փոյթ. պէտք է մտածել որ այդ նիւթերը մեզ համար պատմական կարեւորութիւն ունեն:

ՏԱՃԿԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քանի որ քննիչ յանձնաժողովի վկայութիւնները վճռողական կարեւորութիւն պիտի ներկայացնէին, տաճիկ կառավարութեան զլխաւոր ջանքը ուղղած էր դէպի այն, որ հայ ժողովուրդը սարսափի մէջ պահւի, շատ անձերին ասպարէզից հեռացնի և օտար մասնաժողովի անդամներին զրկի օտար թերթերի թղթակիցների օգնութիւնից, որպէս նաև հեռացւեն կոտորածի մասին պաշտօնական թղթերը: Յունւարի 4-ին Պոլսից մի հեռագիր յայտնում էր թէ «Հաւաստիացնում են, որ Զէքի-Վաշայի (Սասունի կոտորածի ղեկավարողը, տաճկաց 4-րդ զօրաբանակի հրամանատարը Նրզնկայում») զեկուցումները Սասունի գործի մասին, դրանց թւում և նորա այն հեռագիրը, որ հաղորդում էր թէ վերջին ժամանակ Սասունում սպանւել են 1720 հոգի, բարձրագոյն կարգադրութեամբ վերցւել են զինւորական մինիստրութիւնից»:

Որ տաճիկ կառավարութիւնը հայերին ընդհանրապէս սոսկման դրութեան մէջ է պահում, այդ մասին լիովին վկայութիւններ տւին թէ եւրոպական և թէ տեղական հայ թերթերի թղթակիցները այս ամբողջ ամսւայ ընթացքում: Ահա մեզ հասած ամենավերջին տեղեկութիւններից մէկը, որ հեռագրով հաղորդեց Դէյլի-Նիւս թերթին Կ. Պոլսից, նոր տոմարով 25-ից (մեր հին տոմարով յունւարի 13).

«Ալատեղ հասել է մի դանդաղագիր, որով լուսաբանում են ամբողջ Փոքր-Ասիայում հայերի դէմ կատարւող հալածանքները: Հալածանքի զոյ

են դառնում հայերը մինչև անգամ և անպիսի գաւառներում, ուր ոչ մի խռովութիւն չի պատահել: Տարոնի հալ ժողովուրդն ունի մի հանգստարան, որի հողը նա գնած էր երեսուն տարի առաջ մի անգլիացի հպատակից: Գերեզմանոցը չըջապատւած է: Տաճիկները, առարկելով թէ հալը կարող են անտեղ գէնքեր պահել, արգելեցին նոր շինեցեալներ թաղելու գերեզմանոցի մէջ: Հայերը տրտունջ ցատնեցին տեղացի իշխանութեան, սակայն հետեանքն ալն եղաւ, որ թուրքաց զօրքերը մասն գերեզմանոց, քանդեցին վրաի քարը, որի վրայ փորագրած էր թէ դա «Հալոց գերեզմանատուն» է, տապալեցին գերեզմանի խաչերը և բոլորն էլ աղբով ծածկեցին: Նդելութեան մասին հայերը տեղեկագիր ուղարկեցին Պատրիարքարան, սակայն թուրք իշխանաւորներից բաւարարութիւն տանալու չոյս չունին»:

Գորանից դեռ շատ օրեր առաջ Կ. Պոլսից գրում էին Indépendance Belge յայտնի բելգիական օրաթերթին, թէ «թուրքաց կառավարութիւնը վճռել է խանդարել հայոց շարժումների որ և է արտայայտութիւն: Իսկ Daily News-ին (Նէյլի Նիւս) Կ. Պոլսի թղթակիցը մեր հին տոմարով յունւ. 6-ին հեռագրում էր թէ՝ ճնայելով Փոքր-Ասիայից ուղարկած գրաւոր տեղեկութիւններին, այնտեղ բոլոր գործերը կատարելապէս կանգ են առել հայերի հալածւած իրենց ապստամբութիւն: Սըւազում բոլոր գլխաւոր առեւտրականները կամ բանտում են հեծում և կամ չեն համարձակում որ և է գործի ձեռնարկել: Կոստանդնուպոլսում բոլոր նամակները բացւում են, մինչև անգամ բեռնակիրների անունով ստացւած նամակները: Մայրաքաղաք եկող հայերը սահմանազլխի վրայ բանտարկւում են ու ետ ուղարկւում»:

Նոյն աղբիւրից իմացւեց մահմետականների գրգռմունքի մասին հայերի դէմ, և ահա ինչ խօսքերով.

Հալասաանից ստացւած մասնաւոր նամակներից երևում է, որ մահմետական բնակիչներն անտեղ խիստ գրգռւած են զանազան ֆանատիկոսների հակաքրիստոնէական քարոզութիւններով, ալ և ալն պատճառով, որ կառավարչական պաշտօնեաները զաղտնի կերպով զրգում են նրանց հայերի դէմ գործելու: Շատ գաւառներում մահմետականներին դժարութեամբ են կարողանում զսպել, որ նրանք չցարձակեն հայերի վրայ: Նրկիւղ են կրում, թէ նոր անկարգութիւններ կը ծաղկն և աւելի կատաղի կերպով:

Այդ ամենով որոշւում է ընդհանուր դրութիւնը: Սակայն երզնկայի դատապարտւածների գործը եկաւ ցոյց տալու

Թէ որ աստիճանի վճռողականութեամբ տաճիկ կառավարութիւնը ձգտեց սարսափը սաստկացնելու, Սասունի գործերի մէջ խառը հայերի մասին իւր դատաստանը կտրելով:

Իրողութիւնը այս է, որ Երզնկայում դեռ ևս նոյեմբերին 1894 թ. կալանաւորած էին բազմաթիւ հայեր Սասունի գործերում խառը: Երզնկան, որ գտանւում է Կարինի (Երզերումի) վիլայէտում (նահանգ), Կարասու գետի ափին, 15.000 բնակիչներով, Սասունի կոտորածի տխուր հերոս Զաքքի փաշայի, տաճկական չորրորդ գլխաւոր զորաբանակի հրամանատարի նիստն է: Մեղադրուողներէից, եւրոպական թերթերի տեղեկութիւնների համեմատ, 24 հոգուն Երզնկայի դատարանը դատաւարտեց մահւան պատժի, համաձայն տաճկական քրէական օրինագրքի 52 և 54-րդ յօդւածների, իբրեւ հայրենիքի դաւաճանների, 34 հոգու դատաւարտեց տաժանակիր աշխատանքների զանազան ժամանակամիջոցներով: 1)

Դատարանը ոչ մի վկայութիւն էր ընդունում յօգուտ դատաւարտեալների:

Նէլլի-Նիւսի թղթակցի ասելով՝ «այդպիսի խիստ և արիւնածարաւ վճիռ դեռ չէ եղած նոյն իսկ Երզնկայում»:

Թէ ինչ մարդիկ են այդ դատաւարտւածները, այդ մասին «Նէլլի Նիւս» իւր №-ում առ 28 (մեր հին տոմարով 16) յունւարի «Եւրոպան և Հայաստանը» խորագրով յօդւածի սկզբում ասում էր.

Հաւկական խնդիրը շատ ծանր կերպարանք է ստանում, հարկադրելով մտածել եւրոպական դիւանագէտներին, թէ ինչ պէտք է անել «հի-

1) «Մուրճ» ին Երզնկայից հասած մի լատուկ թղթակցութիւն, թւագրած 21 լունւարի, դատարանի վճիռը աչպէս է հաղորդում. «Ախալեանի և իւր բնկերների վերջնական վճիռը տրեց. 21-ը գլխատում, վարդապետին երեք տարի, քահանան 5-ի (?) տարի, 3 մարդ ալ ազատւեցին»: Ապա լաջորդ բառերից մենք կարողացանք փոքր ի շատե պարզ կարգաւ ալ, թէ՛ «ղլխատումների կարգին է նաև Տրդատ Միւշալեանցը»: Եւ ապա՝ «Մենդեան ճրագալոյսի գիշերը երկու մէցի սղաք տաճկացողին...» վերջը թէ՛ «գողութիւն և մարդասպանութիւն առօրեալ հարցեր են դառած»:

ւանդ մարդու» ժառանգութեան հետ: Վճռաջինջ ատեանը, որ բարձրագոյն դատարանն է, արդէն հաստատել է Նրդնկալի ատեանի մահւան դատակնիքը զաւաճանութեան լանցաւոր համարւած քսանեւորս հայերի դէմ: Տաճկական դատաստանի ալդ նոր զոհերը՝ ալդ մարդկանց կոտորող, կանանց լիող և անդէն ու հաշտ ժողովրդին կեղեքող գաղանամիտ հրէշներ չեն, ինչպէս որ կը կարծեն ամանք: Նրանք սնմեղ և հալրենաւեր հալեր են, որոնք զուր ջանացել են ազատել ատելի և անտանելի բռնակալութիւնից: Յոյս ունենք սակաւն, որ սըր Ֆիլիպ Կերրիի միջամտութիւնը վերջ կը դնէ ալդ մարդազոհութեան:

Մահւան դատաւճիռը, որ Անգլիայի արտաքին գործերի մինիստր լորդ Կիմբերլէյ, իւր տեղեկութիւնների համաձայն, իբր շեղած յայտնեց, մինչ այժմ յամենայն դէպս գործադրւած չէ:

Տաճիկ կառավարութեան մի այլ միջոցը՝ Սասունի գործի քննութեան համար բացասական դատաւճիռ ապահովելու համար, կայացաւ օտար թերթերի թղթակիցներին արգելք դնելու մէջ:

Տաճիկ կառավարութիւնը առհասարակ սկսեց արգելել թղթակիցներին մուտք գործել Տաճկա-Հայաստան: Այդ արգելքը նա տարածեց նոյն իսկ Թիւրքիայի շահերը պաշտպանած և յամենայն դէպս ոչ հայասէր ճանաչւած օտար թերթերի թղթակիցների վրայ: Որովհետեւ նա համոզւած էր որ քաղաքական խնդիրներում նոյն իսկ իրան համար նպաստաւոր դիրք բռնող եւրոպական թերթերը իրողութիւնները դիտմամբ չեն յեղաշրջիլ և տեսածն ու լսածը կը տպեն, իբրեւ բարեխիղճ թղթակիցներ: Այդ վերջիններիցն է աշխարհահռչակ Times (Թայմս, Ժամանակ) թերթը, որի թղթակցին արգելք դնելը մեծ աղմուկի տուիլ տուեց, ակներեւ դարձնելով որ սուլթանը ուզում է սիստիմատիկապէս խեղդել ամեն մի անաչառ վկայութիւն Սասունի կոտորածի մասին: «Թայմս»-ի այդ մասին իւր համարում առ. 25-ն (մեր տոմարով 13) յունւարի զրած յօդւածը արժէ նոյնութեամբ այստեղ առաջ բերել: Յօդւածի խորագիրն է «Սուլթանն և Հայաստանը»:

Յաւով սրտի չայտնում ենք, որ մեր ջերմ ու տեսական ջանքերը՝ Սասունի դէպքերն անաչառ քննելու նպատակով մեր չատուկ թղթակցի համար Հալատտան մտնելու իրաւունք ստանալու մասին՝ ապարդիւն անցան: Մենք լաւ գիտէինք, որ Հայաստանի թիւրք պաշտօնականներն ամեն տեսակ արգելքներ կը դնեն: Սակայն տրամադիր էինք չուալու,

թէ բարձր շրջաններում կը գտնւին մի քանի լուսամիտ պետական անձեր, որոնք կը սանձահարեն դաւառական աստիճանաւորների կարծա-տես զինադրութիւնը: Այդ լուսն էլ ի դերն ելաւ Թիւրքաց կառավարու-թիւնը, մինչեւ աջմ կուր մնալով, ամենեւին չի ուզում տեսնել անկախ քննութեան կարևորութիւնը և հասկանալ, որ դա միայն կարող է բաւա-կանութիւն տալ Արևուտքի հասարակաց կարծիքին: Կ. Պլսում տիրող գործավարութեան եզանակին ծանօթ անձերից ամեն մէկը քաջ գիտէ, որ ոչ ոք չէր համարձակուի վերոյիշեալ իրաւունքը մերժել, բացի միայն Սուլթանից: Մենք լուս ունէինք սպասելու Նորին Մեծութիւնից, թէ նա տեղեակ լինելով եւրոպական մտածութեան, մի աշնպիսի որոշում կ'անէ, որ աւելի չարմար լինէր մեր դարու պահանջներին և աւելի նպաստաւոր իւր իսկ պետութեան շահերին: Մենք առիթ չենք տւել նրան կասկածի ենթարկելու մեր անկեղծ վստիքը լիովին արդար լի-նելու իւր կառավարութեան նկատմամբ: Մենք երբէք չենք ձայնակցել որ և է վաղահաս դատապարտութեան, նոյն իսկ և աշն զիպաւածում, երբ դէպքերը թույլ էին տալիս աղպէս անել: Ընդհակառակն՝ մենք ջանացել ենք, թերևս չափից աւելի—որպէս կարծում են ոմանք,—առկախ պա-հել մեր կարծիքն և միայն ազատ ու լիովին քննութիւնից լետու վճիռ դնել: Թիւրքաց կառավարութիւնն աշնքան շատ բարեկամներ չունի մեր երկրում և կամ Եւրոպայում, որ կարողանալ բանի տեղ չդնել իրեն լաւ խորհուրդ տաղներին: Եթէ Սուլթանը կարծում է, թէ շատերը անշափ հակամէտ են, առանց կանխաւ քննելու, դատապարտել սաճկաց վարչու-թիւնը, հաւատ ընծայելով դրա դէմ կարուցւած մեղադրանքներին, ուրեմն քանի աւելի սաստկանում ու վիրաւորիչ են դառնում այդ մեղադրանք-ները, աշնքան էլ նա պարտաւոր է մի աշնպիսի հետազոտութիւն անել տալ, որ միանգամ անաչառ լինէր: Նորին Մեծութեան չափնի է հար-կաւ, որ Արևմտեան աշխարհը՝ շահակից կողմերի պնդումներն ու հեր-քումները լսելիս՝ միշտ աւելի կշիռ կը տալ խառն բերած մեղադրանքներին, քան թէ Թիւրքաց պաշտօնական հերքումներին: չափնի է և աշն, որ եթէ հասարակաց դատաստանը որ մի նախապաշարմունք էլ չունենալ, դար-հձեալ հաւատ չի ընծայիլ աշն կողմին, որ ձգտում է խեղդել վրձնել հարցի անկախ և ազատ քննութիւնը:

Թիւրքիայի ինքնապաշտպանութեան համար երկու ճանապարհ կալ, աշն է՝ կամ հաստատել, թէ հրատարակած զաղանութիւնները երբէք տեղի չեն ունեցել և կամ ասել, թէ նրանք սաստիկ չափազանցրած են, և որ եթէ մասամբ կատարել են, պատճառը նոյն իսկ հայերն են: Արդարացման աղք երկու տեսակներից որ մէկն էլ ճիշտ լինի, կառավարութեան բուն օգուտը կը պահանջէ, որ նա մի տողք և լիակատար քննութեան հաւանութիւն տալ, Ներելի չէ նրան՝ ոչ ասիական, ոչ էլ եւրոպական տեսակէտից, տրտուճ

լալտնել, եթէ անկախ քննութիւնից թաքցած իւրաքանչիւր իրողութիւն արդար դատաստանին զիմադրելու անգոր ճանաչել: Այլ Սոսանեան վարչութեան ղէմ լառաջ բերած մեղադրանքները հիմնաւոր չեն, ալ ժամանակ նա օգուտ կունենալ անկողմնակալ քննութիւնից. իսկ եթէ հիմնաւոր են, նա ոչինչ չի կորցնիր ճշմարտութիւնը պարզ խոտովանելուց, որ լամենայն դէպս աւելի լարդելի է, քան թէ լամառ ուրացութիւնն և անդղջութիւնը: Հետեաբար մեր լատուկ թղթակցին մերժելու վճիռը վերին աստիճանի միջասակար բան է նոյն իսկ թիւրքական շահերի տեսակէտից: Կրանով թիւրքաց կառավարութիւնը ցուց է տալիս իւր երկրւոյը ցերեկաւ լուսից և անմխաւի իրաւունք է տալիս անաչառ քննիչին կարծելու, թէ աղալիսի փութով ծածկող գործերն անշուշտ խաւարի գործեր են: Թիւրքիայի ղէմ ղինւած անաչառ կրիտիկոսների թիւը սակաւ չէ, և նոյն իսկ Թիւրքիան, ամեն բան ծածկելու և թաղցնելու ջանքեր անելով, մի շատ զօրեղ փաստ է տալիս՝ թէ նրանց ամենածանր մեղադրանքներն անգամ ճշմարիտ են: Անք կը շարունակենք սառն անկողմնակալ դատարարի ղիրք բռնել թիւրք վարչութեան ղէմ լանդիման, թէև դա շատ դժւար գործ է:

Այս էլ պէտք չէ մոռնալ, որ Սուլթանն արդելք ղնելով անկախ քննութիւնների ղէմ, վերին աստիճանի խախտում է հասարակական հաւատը ղէպի Սասուն գնացող կոմիսիան: Այլ Սուլթանի կառավարութիւնը շատ բան ունի ծածկելու անկախ քննիչներից, ուրեմն թնչալս հաւատանք, թէ ճշմարտութիւնն ստուգելու ամեն հնար կը տրւի հիւպատոսներին, որոնք կուչւած են վերահսկել կոմիսիայի քալերը: Նրանց ղիրքը շատ կախւած կը լինի թիւրք պաշտօնեաների հաճուքից: Միակ երաշխատուութիւնը, թէ նրանք լծարութիւն կ'ունենան երկու կողմերն էլ անկեղծ լսել, ալ կը լինէր, որ Սուլթանը բացարձակ ցալտնէր, թէ կամենում է ամեն բան մերկացնել աշխարհի առջև: Բալց երբ տեսնում ենք, ընդհակառակն, որ նա անկախ քննութիւնը խափանելու համար է գործ ղնում իւր հեղինակութիւնը, ալ ժաստակ ակամալ ստիպում ենք կարծել, թէ կոմիսիային և ղրան ուղեկցող հիւպատոսներին միալն ալ բանը թուլ կը տրւի տեսնել և լսել, ինչ որ ցանկալի կը լինի լշխանութեան:

Տաճիկ կառավարութեան ալս թաքթաքուր ընթացքը, որ հակառակ է մեր ճշմարտութիւնն իմանալու ձգտումներին, շատ և շատ կը նաղացնէ կոմիսիայի եղրակացութիւնների վարկն ու կշիռը: Հալոց Պատրիարքը որոշել է մի լատուկ նւիրակ ուղարկել Սասուն: Նա հարկաւ մի հաստատուն բնաւորութեան տէր անձն է, և Սուլթանի հետ մի ալնալիսի լեղուղ է լսուել, որ Վահագնը սակաւ է առիթ ունեցել լսելու: Բալց չենք կարծում, թէ նա մեղնից աւելի լաշողութիւն կ'ունենալ մի ներկալացուցի առաքելու Սասուն: Սուլթանի կամքին հակառակ: Ալնու-

ամենաչնչիւ նրա համարձակ որոշումը մի նոր վարսնք կը պատճառէ Սուլթանի կառավարութեան, և եթէ Պատրիարքին ընդիմանան, աչն ժամանակ ամբողջ հալ աղգն և զրան համակրողները բաւական ծանր քաղաքագիտական հարց կը շինեն աչն հանգամանքից, որ Բ. Դուռը վերստին թող չէ տալիս հաւաքել և աշխարի առջև հրապարակ հանել մի անկախ վկայութիւն և կամ աչնպիսի վկայութիւն, որ ազատ լինէր թիւրք պաշտօնատարների միջամտութիւնից ու խժբժանքից:

Թղթակիցներին դէմ ուղղած արգելքը ազգեցութիւն գործեց նաև դիպլոմատիական շրջանների վրայ, որպէս և հասկանալի էլ է: Այդ առիթով Daily News-ին ահա ինչ գրեց Կ. Պոլսից.

«Բ. Դրան յաճառութիւնը, որ նա մերժում է և չի թող տալիս օտար թղթակիցներին գնալ Փոքր-Ասիայի և մանասանդ Սասուն, չափազանց անախորժ տպաւորութիւն գործեց դիպլոմատիական շրջանների վրայ, որովհետև դա առիթ տւեց Թիւրքիայի համար շատ աննպաստ եզրակացութիւններին՝ Հայաստանի գործերի դրութեան մասին: Կարծում են, որ եթէ Թիւրքիան ոչինչ ծածկելու չունէր այդ կողմից, նա ինքը պէտք է ցանկանար, որ աւելի անաչառ դիտողներ լինէին Հայաստանում, որպէս զի նրանք տեղեկութիւններ կարողանային տալ գործերի իսկական դրութեան մասին: Թիւրքիայի այդ բռնած դիրքը ստիպում է ենթադրել, որ քննիչ յանձնաժողովի գործունէութեան հետեւանքները, վերջ ի վերջոյ, բացասական կը լինեն»:

Թիւրքիան սակայն, նաև այս դէպքում հարկ համարեց պաշտօնական հերքում հրատարակել. նա, որ «հերքումներ» տպելուն այնքան վարժուել է: Բ. Դուռը պաշտօնապէս «հերքեց» թղթակիցներին արգելք դնելու լուրը, պնդելով որ նա միայն մերժել է թղթակիցների համար պահանջներ նշանակել: Այդ խօսքերը ի հարկէ, միայն ծիծաղ կարող էին չարուցանել, եթէ միայն ինչպիսիք այնքան լուրջ բնաւորութիւն չկրէր:

Թիւրքիան, կարծես, առանձնապէս զայրացած էր այն ամենի վրայ, որ անգլիական է: Թիւրք կառավարութիւնը ձեռքաւարել տւեց նաև Կ. Պոլսի բրիտանական դեսպանատան թղթատարին, և իբր թէ (այդպէս էին ասում թիւրք աղբիւրները) այդ թղթատարի ձեռքին Ղալաթիայի (որ Կ. Պոլսի մի թաղն է) կամուրջի վրայ բռնած պայուսակի մէջ գտնւել են նամակներ, որոնք ապա-

ցուցանում են թէ յարաբերութիւններ կան Անգլիայի հայասէր ազիտատորների, հայ յեղափոխականների և Վերիտասարդ Թիւրքիայի կուսած ընկերութեան անդամների միջև: Կ. Պոլսի անգլիական զեսպանի բողոքի պատճառով, զեսպանատան թղթատարին ձեռքա-կալող ոստիկանական պաշտօնեաներն արձակեցին պաշտօնից:

Այս ամենի հետ միասին տաճիկ կառավարութիւնը մի յայանի գործունէութիւն ցոյց տւեց զիպլոմատիական ասպարիզում, որպէս նաև իւր երկրի սահմաններում հաւատարմութեան ցոյցեր առաջ բերելու համար: Գիպլոմատիական գործողութիւններից այն, ինչ առանձին ուշադրութիւն պրաւեց, այդ՝ սուլթանի դիմումն էր Հոռմի պապին, որի մասին անգլիական Daily Chronicle օրաթերթի Հոռմի թղթակիցը հետևեալը հաղորդեց.

«Սուլթանը մի շատ երկար գրութիւն ուղարկեց պապին, որի մէջ խնդրում է նրան Թիւրքիայի կողմը բռնել և բարեխօսել Թիւրքիայի համար մեծ պետութիւնների առաջ, որոնք այդքան զրգուած են հայոց անցքերի պատճառով, յայտարարելով նրանց, որ այդ բոլոր պատմութիւնները Սասունի կոտորածների մասին հնարած և սուտ են: Եւ այլ շատ անորոշ պատասխան տւեց սուլթանին. նա հաւատացրեց սուլթանին թէ ինքը կաւենում է օգնել նրան. բայց որ նախ քան որ և է վճռական քայլ կ'անէ ինքը՝ պիտի սպասէ միջազգային քննիչ յանձնաժողովի զեկուցմանը:»

Հոռմի պապի օգնութեանը դիմելու համար արդէն հող պատ-րաստել էր թրքահայ կաթողիկոսների պատրիարք Աղա-րեանը, որը մի առանձին տխուր դեր կատարեց թրքահայերի ներկայ քաղաքական ճգնաժամի մէջ, առանց սակայն կարենալու արտագրել իւր համար այլ բան, քան մի տխուր հռչակ թէ Կ. Պոլսու թէ նոյն իսկ իւր կաթողիկ համայնքի մէջ և թէ Եւրոպայում և վաստակեց նոյն իսկ արհամանք: Բարեբախտաբար, Աղաբեանը, ուղեւորւով փնտսել հայկական գործին, չկարողացաւ նաև այդ փնտք հասցնել, այլ միայն մերկացրեց ամենքի առաջ թէ ինչ զգացում-ներով է սնւելիս եղել հայ կաթողիկոսների զլուխը հայ ազգի ամբողջութեան նկատմամբ, և, ի հարկ է, ոչ միայն այժմ, այլ և միշտ: Թէ ինչպէս նա դատեց Եւրոպայում, այդ կը տեսնեն մեր ընթերցողները այն յօդածից, որ տպեց գերմանական նշանաւոր .

«Kölnische Zeitung» օրաթերթը. բայց նախ քան այդ՝ յիշենք մի հանգամանք, որը առկա մեծ առնչութիւն ունի տաճիկ կառավարութեան ներքին գործողութիւնների հետ. այդ այն է թէ Ազարեանը ինչ ծառայութիւններ պիտի մատուցանէր տաճիկ կառավարութեանը՝ քննիչ չանձնաժողովի նկատմամբ, թէև մենք, չնայած Ազարեանի քաղաքականութեան մերկացրած լինելուն, այնուամենայնիւ, իսկութեան նկատմամբ, մի յայտնի վերադահութեամբ ենք վերաբերում դէպի Վիեննայից անգլիական Standart-ին յունվարի 9-ին ուղարկած հետեւեալ հեռագիրը.

«Հաստատ հիմք կալ հաւատարմ, որ Բ. Դուռն ամբողջ եռանդը ներկայումս լարած է մի նպատակի համար, այն է՝ ապահովել բացասական դատավճիռ Սասունի քննութեան գործում: Մենք լսել ենք անվիճելի աղբիւրից, որ այդ նպատակի համար ղրմել են հալ կաթոլիկների պատրիարք Ազարեանի ծառայութիւններին, որը ամեն կիւն բարի համբաւ չունի թիւրքաց մալրաքաղաքում: Մեզ հաղորդել են որ նա հրահանգ է ուղարկել Մուշի իր ներկայացուցչին, որպէս զի նա աշխատի, որ հալ կաթոլիկները չանձնաժողովին տաճիկների համար նպատատուր ցուցմունքներ տան: Քանի որ նրանք նոյն ցեղից են և ըստ երևութիւն նման լուսաւորչական հաւերին, որոնք և՛ միաջն ենթարկւել են կոտորածներին, կարծում են որ օտար դելեգատներին կարելի կը լինի խաբել այս եղանակով: Այդ կողմից դելեգատները պէտք է շատ զգուշութեամբ վերաբերին հալ կաթոլիկների վկայութիւններին. բացի դրանից, ի միջի այլ պատրաստութիւնների, քննիչ չանձնաժողովի այցելութեան պատճառով, կոտորածների լուսաւորչական-քրիստոնեակ վկաները հեռացրած են այդ գաւառից կախրութեան ուրիշ մասերը:

Թէև Ազարեանի զեկուցումը պապին Սասունի կոտորածի մասին ուղղակի չի վերաբերում տաճիկ կառավարութեան գործողութիւններին, բայց առանձին գլուխ չյատկացնելու համար նորան, մենք այստեղ էլ կը զետեղենք գերմանական «Kölnische Zeitung» (Կեօլնի լրագիր) օրաթերթի անցեալ դեկտեմբերին տպած յօդւածը, որի վրայ դարձնում ենք մեր ընթերցողների ուշադրութիւնը: Յօդւածի խորագիրն է «Ազարեան պատրիարք և հայկական խնդիր»:

«Մի քանի ժամանակ առաջ եւրոպական թերթերից լմացել էինք, թէ Հռոմում հրատարակող Osservatore Romano» լրագիրն ուրանում է Հայաստանում կատարւած գաղանդութիւններն և պնդում, թէ չարիք գոր-

ծողները թիւրքերը չեն, այլ օտարամուտ զրդիւնների թիւադուրսեմը գրգռած հաւերը:

Թէև այդ լրագրի լօղւածն անստորագիր է, բայց և այնպէս Կ. Պոլսում ամեն մարդ համոզւած է, որ լօղւածի հեղինակն ոչ այլ ոք է, բայց եթէ «կիլիկիոյ պատրիարք Նորին երանութիւն ամենապատիւ հայր Ազարեանը»:

Եւրոպական մամուլի մեծ մասն այնքան անտեղեակ է թիւրքիայի հանգամանքներին, որ անշուշտ հաւատ կ'ընծալէ այդ «հոգեւոր պետի» խօսքերին, կարծելով թէ նա, որպէս հաւ մարդ, բաւական լաւ կ'իմանայ իւր ազգակիցների արդի վիճակը, որով գրաււած է ալժամբողջ Եւրոպան:

Կաթոլիկ հաւերի թիւը, Զիլբերնագէլի վկայութեամբ ¹⁾ հասնում է 40,000: Եւ եթէ ենթադրենք անգամ, թէ նրա գրքի լոյս տեսնելու օրից ի վեր, այսինքն՝ քսանիկն տարիների ընթացքում այդ թիւը կրկնապատկել է (որ սակայն հաւանական չէ), — դարձեալ դա շատ չնչին կը լինի $2\frac{1}{2}$ միլիոն հաւերի համեմատութեամբ: Մինչդեռ Կ. Պոլսի լուսաւորչական հաւերի պատրիարքը մօտ 300,000 հաւա տացեալներ ունի իւր հովւական զաւազանի տակ և ի պահանջել հարկին այնպիսի իշխանութիւն է բանեցնում, որ Նոյն իսկ Բ. Գոռն ստիպւած է հաշիւ տեսնել նրա հետ, հ. Ազարեանի հետեղ կաթոլիկ հաւերի թիւն ալստեղ (Պոլսում) հաղիւթ է 20 25000-ից աւելի լինի:

Եւ որովհետեւ գրանք ըստ մեծի մասին փոքր ի շատէ արտօնեալ զիրք վաղելող աստիճանաւորների, վաճառականների և այլն լինելով, միւս հաւերի չափ չեն հալածւած թուրքերի բռնութիւնից, ուստի հակական խնդիրը քննելիս հարկաւ նրանք ոչ թէ չեն ձաջնակցում ճնշւածներին, այլ դեռ պատրաստ են ամեն բան անել, որպէս զի դժգոհութեան առիթ չտան և հանդիստ հետամուտ լինին իրենց նիւթական շահերին: Հաւոց հալքնասիրութեան վրաջ խօսելիս մի որոնէք այդ սէրը կաթոլիկ հաւերի չըջանում: Գրանց մեծ մասը երբեք տեսած էլ չէ Հալաստանը: Եւ արդեօք Նոյն իսկ ամեն, հ. Ազարեանը երբ և իցէ ոտք դրած է հակական հողի վրաջ — այդ էլ դեռ շատ կասկածելի է ինձ համար: Նրա գերդաստանը բնակւում է Կ. Պոլսում շատ փարթամ վիճակի մէջ, և պատրիարքն իւր «երջանկութեան» մեծագոյն մասը պարտական է եղբայրների ճարպիկութեան, եղբայրներն էլ իրենց հերթին մեծ օգուտ ունին հոգեւոր հօր բարձր զիրքից, ուստի փոխադարձ համերաշխութիւնը կատարեալ է: Ազարեան եղբայրների մոտեմութիւնն այնքան սերտ է, որ նրանց հարստանալու հանգամանքները քրքրելով կարելի է շատ բան հետեցնել և պատ-

¹⁾ «Verfassung des gegenwärtigen Bestandes der Kirchen des Orients» — Արեւելեան եկեղեցիների ներկայիս սահմանադրութիւնը:

րիարքի բնաւորութեան մասին: Մէկ եղբայրը բարոն Հիրշի արժանաւոր ընկերն է և նրա արբանեակը թիւրքական երկաթուղիների շինութեան «մաքուր» գործում. աւել ընկերակցութիւնը դեռ աւօր էլ տեսւմ է, թէն փոքր ինչ թուլացած կերպով: Նոյն եղբայրը չափնի է Կ. Պոլսի սուստրական աշխարհում իբրեւ շատ ճարպիկ միջնորդ, որ կարող է ամեն տեսակ բաներ զլուխ բերել: Վալով երկրորդ եղբորը, որ երկար ժամանակ նոր աշխարհում գտնուելու պատճառով ամերիկացի է կոչւում, նա անգլիական ձև է տակ իւր անուան և դարձել է «Էգերիկն»։ Բաց երբ որ նա ուզեց, որ թիւրքաց կառավարութիւնը ամերիկական փոխ հիւպատոսի պաշտօնի մէջ հաստատէ նորան,— պատրիարք եղբոր միջամտութիւնն անգամ անօգուտ մնաց. կառավարութիւնը բացէ ի բաց մերժեց նրա խնդիրը:

Բ. Դուռը չէր մոռացել, որ պատերազմի ժամանակ ահագին գնով գնւած Մարտինիի և Ուինչեստրի հին և անպէտք հրաշանները աւել իսկ պարտի ձեռքից էին անցել: Միևնոյն չրջանի մարդ է և նորին գերապատուութիւնը: Բոլոր եղբայրներն էլ մի ոգու տէր են: Բան չկալ, որի մէջ իստոն չլինէր ամենապատիւ հօր ճարտար մատը: Նորերս մի շատ նշանաւոր զիւանազէտ առաց, թէ Կ. Պոլսում հազիւ թէ մի առևտրական ձեռնարկութիւն գտնուի, որի մէջ մաս չունենար աւել բարձրաստիճան հոգևոր հալըր:

Անժխտելի ճշմարտութիւն է, որ Կ. Պոլսի հացերը, բացի հարկաւ ալն խմբակից, որ քծնում է Բ. Դուռն առջև և օգուտ է սպասում նրանից,— ոչ միայն չեն սիրում ամենապատիւ Ազարեան պատրիարքին, այլ և ուղղակի իրենց դատին շարաչար ֆլեասող դաւաճան են համարում: Պնդում են մինչև անգամ, թէ նա նպաստում է ևս աւելի վատթարացնել Հալաստանի հացոց դառն վիճակը, եթէ ոչ անմիջական միջամտութեամբ ի ֆլեաս աւել հալերի, գոնէ իւր անտարբերութեամբ, որ լաւաջ է գալիս կարդինալի աստիճան ստանալու ջերմ ձգտումից: Երբոր երկու տարի առաջ ամեն Ազարեանը Հռոմ էր գնացել պապի լոբելիանին մասնակցելու, աջնուղ նա մի ուրուջ գեր խաղաց իւր փափագած կարդինալութեան ճանապարհը հարթելու համար: Պապը երեի թէ լաւ ծանօթ չէր ազատիկ հանգամանքներին, ալլապէս թող չէր տալ ամեն. Ազարեանին աչնպէս չքիղ գոջներով պատկերացնել պատրիարքի զիրքը, որ ոչ մի կերպով չէր նման իսկութեան: Ալն ժամանակ ամեն Ազարեանը բազմադիմ լրագրական գործունէութիւն ցուց տուց, *ubi et orbi* հռչակելով, թէ ինչ փառաւոր ընդունելութիւն է դտել Հռոմում և թէ ինչ մեծախորհուրդ պաշտօն պիտի չանձնէ նրան սրբազան պապը եկեղեցիների միացման գործի մէջ:

Սակալն ամենապատիւ հալըր իւր հաշիւներն առանց Վ. Կ. Սուր

թանի հաճութեան էր արել։ Սուլթանը բնաւ չէ սիրում, որ իւր հպատակներին մէկը, աչն էլ իրենից կախումն ունեցողը, շատ խօսէ և խօսել տալ իւր մասին։ Այս տեղի լրագիրներին արգելեց բան զրեւ պատրիարքի վրայ, և նա վերադարձին անձամբ ստուգեց, որ բարձրագոյն չըջաններում շատ հաշտ աչքով չեն նայում իւր վրայ։ Այս անախտորդութիւնից դուրս զաւու համար ճարպիկ պատրիարքը մինչև այս օրս աշխատեց Բ. Գռան կողմը բռնել աչն ամեն դիպածներում, երբ պէտք էր հրապարակ հանել հաշկական խնդիրն և ջատագով կանգնել հաւոց դասին։ Պատրիարքը հասաւ իւր նպատակին, իւր մասին եղած կասկածները փարատեցան։ Բաւց և աչնպէս նա չկարողացաւ թողտուլիւն ստանալ սուլթանից։ Հռոմ զնալու արեւելեան եկեղեցիների միացման նպատակով պապի գումարած ժողովին մասնակցելու համար։ Աչն ինչ Ազարեան պատրիարքն աչնքան վտահ էր թէ Հռոմում մեծամեծ բաներ կ'անէ և գուցէ նոյն իսկ սուլթանից շատ կարեոր պատուէրներ կը ստանալ, որ արդէն առաջուց տարածել էր, թէ անպատճառ պիտի ուղեորուի։ Սակաչն կատարեց, ինչ որ ամեն մի հեռատես մարդ կարող էր գուշակել։ Կառավարութիւնը ոչ միայն թուլ չուեց պատրիարքին Հռոմ գնալ, այլ և մի ազգու լանդիմանութիւն արաւ նրան, որից չհտու մի պաշտօնական հեռագիր առաքեց ամենուրեք, թէ հաչր Ազարեանի Հռոմ զնալու մասին ոչ միայն խօսք չէ եղել, այլ լինել անգամ չէր կարող։

Ահա դա է աչն մարդը, որին աչժմ օգնական է կանչել Գուռը հալածած հաչերի դէմ վկայելու համար։ Եթէ Եւրոպայում գէթ վեր ի վերոց գիտենալին, թէ ո՞վ է իսկապէս ամեն. Ազարեանը և չխաբէին նրա մեծահնչիւն տիտղոսից, աչն ժամանակ ոչ միայն բանի տեղ չէին դնիլ հռովմէակն թերթում հրատարակած նրա բացատրութիւնը, այլ և կ'արհամարէին հեղինակին, որ թէև հաշկական անուն է կրում, թէև իրեն հաչ է անանում, բաւց աչնքան մարդավարութիւն չունի, որ իւր հաչրեակիցների անբախտութեան ծանր բոպէին գոնէ լուութիւն պահպանէ։ Եթէ ամեն. Ազարեանը գէթ մի անգամ խօսակցէր, ինչպէս որ ես եմ անում, մի կտոր հաց վաստակելու համար տուն և տեղ թողնելով Հաչատանից Կ. Պոլիս եկած խեղճ մարդկանց հետ, որոնք ոչինչ չգիտեն «օտարամուտ զրդիներին» և աչ տեսակ նուրբ բաների մասին, և նրանց չըթունքից լսէր, թէ ինչ ողբալի դրութեան մէջ է նրանց հաչրերիքը—աչն ժամանակ գուցէ փոքր ինչ ամօթ զգար և աւելի զգուշ լինէր»։

Սակաչն աչդ նոյն Ազարեան պատրիարքը, տեսնելով որ ոչտաճիկներից ինքը միայնակ է մնում իւր ուրացումով Սասունի կոտորածի մասին, յունւարի սկզբներին, որպէս մի հերքում եւրոպական թերթերում իւր հրատարակածների, իւր օրգանի մէջ մի քանի

տողով շտապեց հաստատել Մուշի և Սասունի մէջ եղած կոտորածները և խոսովարար հայերի զէմ՝ եղած բռնութիւնները: Ազարեանը աշխատեց նաև հաւատացնել թէ Լուրդական թերթերում հրատարակած հակահայկական յօդածները իւր զրածը չեն կամ իւր թելադրութեամբ չեն եղել գրւած:

Բարեբախտաբար կարող ենք արձանագրել, որ հայ կաթողիկոսները իրանց համերաշխ ցոյց չաւին իրանց պատրիարքի հետ. նոքա վիրաւորեցին ազգային արժանապատուութեամբ և սկսեցին աշխարհ դատաւեալ Ազարեանին, հայհոյել, սպառնալիքներ կարդալ: Ազարեանը, տեսնելով այդ, շտապեց իւր օրգանումն ունի իսկ ձեռքնել թէ իբր նա դիպլոմատիական ներկայ բանակցութիւնների մէջ հայկական խնդրի օգտին է ծառայել և որ այդ պատճառով նա նոյն իսկ սուլթանի աչքից ընկել է:

Մենք մի աւելի լաւ տեղ չենք գտնում քան, ինչ, Ազարեան պատրիարքի մասին հաղորդածի հետ, դնել այն ուղեբձը, որ Ազրիանապոլսի (Էտիրնէի թեմի) հայոց (լուսաւորչական) առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոսը, մի քանի հայ քահանաներով և մի երկու տասնեակ հայ աշխարհականների ոտորագրութեամբ մատուցեց տաճիկ կառավարութեանը, որը հրատարակեց այն հետեւեալ նախաբանով.

Էտիրնէի Հայոց առաջնորդն ու երևելիք տեղւոյն կուսակալութեան միջոցաւ չոտս կալսերական պահուից մատուցած են հետեւեալ ուղերձը, որով երեստագիտութիւն չալտնելով կալսերական ալն չնորհաց համար, գորս կը վալելեն կալսերական բոլոր հաւատարիմ հպատակները, բարեմաղթութիւններ կընեն վասն կենաց Վեհ. Սուլթանին, նոյնպէս ցաւ կը չալտնեն Անատոլուի մէջ մէկ քանի կարճամիտ հալերու խռովարարական ընթացքներուն համար:

Ահա ուղերձը:

«Բարձրեալն Աստուած, որչափ որ աշխարհս գոյութիւն ունենալ, ամենալն փառօք պահպանէ ու անսասան պահէ Վեհ. Սուլթանն, որ իբրեւ աշխարհի կարգապահութեան միակ կապն հանրութեան անդորրութեանը պահպանման համար ստեղծւած է:

Լրագրաց մէջ մեծ ցաւով տեսնւած է թէ Անատոլուի կողմն և կաշս. նահանգաց մէկ քանիսն երուն մէջ հայ հասարակութենէն անհատ ոմանք, որք ինքզինքնին չեն պիտեր և չեն կարող ըմբռնել հասարակութեան

օրինաւոր ու ճշմարիտ շահերը, անվազել ընթացքներու մէջ գտնելու համարձակած են:

«Հաջ հաւատարիմ հպատակ ձեր ծառաները հինգ հարիւր տարիներէ ի վեր Ձեր վեհափառութեան Օգոստոսփառ Նախնեաց բարձր հովանւոյն տակ պահած են իրենց կրօնքը, լեզուն ու ազգութիւնն և բարեբաստիկ կեանքի մը արժանացած են: Այս վիճակին իբրեւ երախտագիտութիւն՝ իրենց համար ամենանւիրական պարտականութիւն համարած են հաւատարիմ մնալ օտմ, կալս, կառավարութեան, ինչ որ պարտք մէ: Ասոր փոխարէն արժանացած են վստահութեան ու պաշտպանութեան օտմ, կալս, կառավարութեան, որուն դուրսիւնը չափոնական ըլլալ: Նամանաւանդ վեհ. Ստէթանի այս արդարատէր կայսրութեան օրով չառաջ եկած օգտակար և բարերար արդիւնքներէն, որք Ն. Կ. վեհափառութեան բարեբաստիկ գահակալութենէն ի վեր ցալսօր կալս, բոլոր հպատակաց նիւթական ու բարոյական զարգացման համար առանց բացառութեան մեծ ողորդութիւն մը տւած են կալս, հաջ հպատակներն ալ օգտւած են, ինչ որ արեգական նման պաշտառ կերեի: Անտարակոյս են թէ վերջիշեալ անձանց աչդ արարքն իրենցմէ զատ և ոչ մէկ հալու մը հաւատարմական զգացմանց պիտի մնասէ, ուստի կը խնդրենք մեր վրալն անպակաս ընել կալսերական այն դորովագութ ակնարկն, որուն կարօտ ենք ամեն տեղուց և ամեն պարագայի մէջ:

20 ընէպ 1312

Ս տ ո Ր ա գ Ր ու թ լ լ ը չ

Լտիրնէի հայոց առաջնորդ աղօթարար Մեսրոպ արքեպիսկոպոս, Մկրտիչ աւագ քահանայ, Արսէն քահանայ, Խորէն քահանայ, Մարկոս քահանայ, Արիստակէս քահանայ, Մկրտիչ Բեաթիպեան, Ալէքսան Բիւշիւքեան, Յովսէփ Սանտալճեան, Սիւքիաս Եաղուպեան, Ստեփան Թաթևոսեան, Սահակ Պարոնեան, Տիգրան Բիւշիւքեան, Պօղոս Ալթունեան, Աբրահամ Փափագեան, Կարապետ Փորթուգալեան, Պօղոս Կարապետեան, Արթին Ունճեան, Գէորգ Փափագեան, Կարապետ Մօրալըլեան, Արթին Նազարեան, Մկրտիչ Աղասեան, Գէորգ Աղասեան, Յոհաննէս Էսմէրեան, Ստեփան Եաղճեան, Մազսուտ Սարկաւագեան, Միքայէլ Թուրշունեան, Շնորք Փափագեան, Թազուր Գոյունճեան, Ռուբէն Փանոսեան, Արթին Կարապետեան, Սարգիս Կարապետեան, Գրիգոր Չաքըլըլեան, և Նշան Սարկաւագեան:

Ինչպէս յետոյ իմացուց, հայոց արքեպիսկոպոսի այդ արարքը կատարւած է տաճիկ կառավարութեան ստիպմամբ, թէև, չնայած դորան, նա ստացաւ խիստ յանդիմանութիւն պարտաճանաչ պատրիարք Իզմիրլեանի հողմից:

Յիշենք տաճիկ կառավարութեան գործողութիւնները թէ այն

որ, ինչպէս Լոնդոնից հաղորդւում էր «Новое Время»-ին, սուլթանը, զայրացած Գլադստոնի ծառից, (որի մասին տես յօդաճիւս «Գլադստոն» գլուխը), պահանջեց որ անգլիական կառավարութիւնը պաշտօնապէս յայտնէ որ ինքն համակարծիք չէ նախկին պրեմիէրի հայեացքներին, և թէ այն լուրը, որի համաձայն սուլթանը բոլորովին ենթարկել է Գերմանիայի քաղաքականութեան ազդեցութեանը և շուտով նոր մինիստրութիւն է նշանակելու անգլիացիներին բոլորովին թշնամի անձերից, իսկ Լոնդոնի օսմանեան դեսպան Ռուստէմ փաշային պիտի ետ կանչէ, քանի որ նա չի կարողանում անգլիական ազգի և կառավարութեան վրայ իւր ցանկացած ճնշումը գործ դնել:

Ինչպէս գործի սկզբում, այնպէս էլ այս վերջին ամսում տաճիկ կառավարութիւնը շարունակեց «հերքումները» իբր զէնք գործածել, թէև ոչ սկզբի ամսում ցոյց տւած եռանդով, այդ սուրը արդէն նորան էլ ժանդոսած էր թւում: Բայց չի կարելի անցիշատակ թողնել նախ Agence Ottomane թերթի հրատարակած մի պաշտօնական գրութիւնը, իսկ ապա մանաւանդ դր. Հեմլինի դէպքը Agence Ottomane թերթի հրատարակածը այս էր՝

«Մի քանի լրագիրներ, խօսելով Սասունի դէպքերի մասին, պնդում էին, որ հայերի թիւը Թիւրքիայում հասնում է մի քանի միլիօնի և որ նրանք ենթակաջ են խիստ հալածանքների: Այդ բոլորը հիմնովին սուտ է: Ամենաճիշդ վիճակագրութիւնը (?) կայսրութեան մէջ բնակւող հայերի թիւը որոշում է 900,000, որոնցից 200,000 բնակւում են Պոլսում: Փաւառներում հայերը ցրւած են փոքր թւով ամեն տեղ, այնպէս որ ոչ մի տեղ մեծամասնութիւն չեն կազմում, այլ միայն փոքր մասը ազգաբնակչութեան: Նոյն իսկ այն տեղերում, որտեղ հայերը ամենաբազմամարդ են, նրանց թիւը չէ անցնում 250/0: չդ ապացուցանում է վիճակագրութիւնը: Այն հանդամանքը, որ թիւրքահայերը ունեն—այդ խոստովանւում են բոլոր լրագիրները—ուսումնարաններ, դրականութիւն և լրագիրներ, ապացուցանում է, որ ոչ միայն նրանք չեն հալածւած, այլ և որ կառավարութիւնը հովանաւորում է նրանց հիմնարկութիւնները և աշխատում է, որ նրանք պահպանեն իրանց լիզուն և ազգութիւնը և ապահովում է նրանց կեանքը:

Շատ չէ անցել այն օրից, երբ ինքը հայոց պատրիարքը, Ազարեան եպիսկոպոս (!?) շնորհակալութեան թուղթ ուղարկեց կառավարութեանը այն բարեքննչի համար, որ նա շնորհում է հայերին: Իսկ դր. Հէմլինի դէպքը ահա թէ ինչու՞ն էր:

Թրքական կառավարութիւնը, նեղն ընկած, իւր արարքները արդարացնելու համար, հրատարակել տւեց դ-ր Կիրոս Հէմլինի մի գրութիւնը, գրւած մէկ ու կէս տարի առաջ, որով Հէմլինը, պաշտպան հանդիսանալով Օսմանեան պետութեան, հրապարակ էր հանում Ամիրիկայի մի հայի պատմածը Թիւրքիայում ապստամբութիւնն առաջացնելու դիտաւորութիւնների մասին: Սակայն այդ նոյն դ-ր Հէմլինը, կարդալով տաճիկ կառավարութեան այդ հրատարակութիւնը, ուղղեց Ղէյլի-Նիւս-ին մի հեռագիր, որ տպւեց այդ թերթի դեկտ. 22-ի համարում. ահա այդ հեռագիրը:

«Տաճիկական տէրութիւնն իր սարսափելի անդթութիւններն արդարացնելու համար օգտւեց մէկի թոյլ և յիմար դաւադրութեան մասին իմ գրած նամակից: Տաճիկական տէրութիւնը քաջ զիտէր, որ Հայաստանում ոչ մի ապստամբական շարժում չկայ: Թէ աւագակութիւնները, թէ սպանութիւն—նորա սեփական գործերն են:»

Թէ ով է Հէմլին ու թէ ինչ տպաւորութիւն գործեցին հասարակաց կարծիքի վրայ տաճիկ կառավարութեան հրատարակութիւնը մի կողմից և Հէմլինի այդ հեռագիրը միւս կողմից — այդ մասին թող ընթերցողները կարդան «Ղէյլի Նիւս-ին» Պոլսից գրած հետեւեալ թղթակցութիւնը, տպւած թերթի համարում առ 4-ն յունւարի, «Հայկական սպանութիւններ» խորագրով:

Ձեր լրագրի էջերում հրատարակւած դ-ր Կիրոս Հէմլինի (Dr. Cyrus Hamlin) հեռագիրը շատ աւելի մեծ նշանակութիւն ունի, քան թէ այդ առաջին հազ կարող է երևալ: Խրիմի պատերազմին նախընթաց տառնետութեամբ չըջանի միջոցին շատ քչերն էին այնքան քաջ ճանաչում Կ. Պոլսի և տաճիկներին, որքան Պ. Հէմլինը: Ռուսերտեան կողմէի հիմնադիր, Թիւրքիայի մասին գրւած շատ լօգաւորների և դրքերի հեղինակ, նա ամեն մի դէպքից օգտւում է տաճիկների մասին մի լաւ բան ասելու համար: Մէկ և կէս տարի սորանից առաջ դ-ր Հէմլինը, որ արդէն շատ տարիներից ի վեր ապրում է ալժմ Ամիրիկայում, հանդիպել է մի հայի, նոցանից մէկին, որոնց ճնշումները վրդովում են և զայրացնում. աչս հալը ասել է դ-ր Հէմլինին, որ ինքը և Ամերիկա գաղթած իւր հայրենակիցներից մի քանիսը որոշել են տաճիկական Հայաստանում անկար-

գութիւններ գործել ացն նպատակով, որ նոյնպիսի շարժում առաջ բերեն նաև մահմեդական ազգաբնակութեան մէջ: Դ-ր Հէմլինը իրան չատուկ եռանդով, խկոյն Նիւ-Սօրկի առաջադէմ թերթերից մէկին (կարծեմ *Independent*-ին) մի նամակ ուղղեց, որի մէջ նա այս ծրագիրը կոչեց «զօխալին»: Հաւանականօրէն ոչ մի խոհեմ մարդ և անշուշտ հաջերի ոչ մի բարեկամ չէ կարող չհամաձայնել նորա հետ:

Նրբ տեղեկութիւններ ստացեցան հաշկական սպանութիւնների մասին, այս նամակը նորից տպագրեց և սկսեց ձեռքէ ձեռք պտտել թէ Միացեալ Նահանգներում թէ կ. Պոլսում: Բայց հէնց որ դ-ր Հէմլինը տեղեկացաւ թէ ինչ նշանակութիւն է տւել տաճիկ կառավարութիւնը ազգ նամակին, օգտւելով դուրանից իբրև իրեն արգարացնող մի վաւերագրից, նա անմիջապէս հեռագրեց ձեզ և ամեն քուտեղ խօսքերով ամբողջ պատասխանատւութիւնը դրեց իսկական լանցաւորների վրայ: Այս բացատրութիւնը օրնշարտն է կացուցանում հեռագրի ամբողջ նշանակութիւնը իբրև աշխարհի մարդու գրածի, որի ազնուութիւնը ամեն կառավարանքից բարձր է և որ միշտ տաճիկների բարեկամ է համարել:

II

Փ Ն Ն Ի Չ Յ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ը

Մեր անցեալ ամսւայ տեսութիւնից արդէն յայտնի է, որ քննիչ մասնաժողովի մէջ մտնում են, բացի տաճիկական անդամներից, նաև Մեծ Բրիտանիայի (Անգլիա), Ֆրանսիայի և Ռուսիայի ներկայացուցիչները: Այժմ՝ զիտենք որ բրիտանական ներկայացուցիչն է՝ պ. Շիպլէյ (անգլիական փոխ-հիւպատոսը եւրոպական Թիւրքիայի Մանասիր քաղաքում), Ֆրանսիականն է՝ Ֆրանսիական փոխ-հիւպատոսը Տրապիզոնում՝ պ. Վիլբէրո, իսկ Ռուսիայի կողմից՝ Ռուսիայի փոխ-հիւպատոսը Էրզնուրում՝ պ. Պրժեւալսկից: Թրքական անդամների անունների հետ չի կարող կապւած լինել որ և է հետաքրքրութիւն, որովհետև հաստատ է, որ ինչ անուններ և աստիճաններ նոքա կրում լինեն՝ Աբդուլլա փաշա, Շէքի բէյ, Ջէլալէդդին բէյ թէ ուրիշ անուններ, նոքա չեն ուղարկւած քննութիւն կատարելու, այլ, հնարաւոր եղածին չափ, քննութիւնը խափանելու համար:

Քննութեան գործի համար Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների կողմից քննիչ ուղարկելու մասին թէ ինչ բանակցու-

Թիւններ եղան և թէ ինչպէս այդ խնդիրը խափանւեց, — այդ մենք տեսանք մեր անցեալ յօդաժողով: Հետաքրքրական է որ նաև Իտալիան կամեցել է քննիչ մասնաժողովին մասնակցել, բայց սուլթանը այդ առաջարկը չի ընդունել: Յիշատակելու է և կարևորութիւն է ներկայացնում նաև տաճկա-հայոց նորընտիր պատրիարք Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրեանի պահանջը, որի մասին Կ. Պոլսից Ռէյ-տերի հեռագրական գործակալութեանը հետևեալը հաղորդեցին.

«Քրքա-հայոց պատրիարք գեր. Մատթէոս եպիս. Իզմիրեանը դիմել է Թիւրքիայի արդարադատութեան մինիստրութեանը յատուկ գրութիւնով, ուր, հիմնւելով մինչ իւր գահ բարձրանալը Հայաստանում կատարւած բարբարոսութիւնների մասին եղած տեղեկութիւնների վրայ, յայտարարում է, որ տիրող կարգերի նկատմամբ բողոքելու իրաւունքը ապագային թողնելով, ամենից առաջ իրան պարտական է զգում կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրել Սասունի անցքերի վրայ: Ինկատի ունենալով Մուշի և այլ տեղերի եպիսկոպոսների քաջած տառապանքները բանտերում, անհնարին է այդ գաւառներից ուղարկել ուրիշ հոգևորականներ: Գործերի դրութիւնը քննելու համար պատրիարքը որոշել է Սասուն ուղարկել իւր ներկայացուցիչը»:

Մատթէոս պատրիարքի այդ պահանջը ունէր իւր նշանակութիւնը լոկ իբրև բողոք տաճիկ կառավարութեան դէմ, որովհետև լոյսի պէս պարզ էր, որ հայոց պատրիարքի պահանջը՝ իւր կողմից քննիչ ուղարկելու Սասուն՝ ոչ միայն չպէտք է ընդունւէր թիւրքացի կառավարութեան կողմից, ինչպէս այդ ասում էր նաև Լոնդոնի Times լրագիրը, այլ և սորան մեծ զայրոյթ պիտի պատճառէր, մի զայրոյթ, որ նա ստիպւած պիտի զսպէր, սրովհետև հայոց ազգի համարձակ ներկայացուցչի համար այս անգամ Եւրոպան իբրև վահան էր ծառայում Թիւրքիայի ամեն մի սպառնալիքի դէմ:

Գործի սկզբում այն, ինչ ամենամեծ անհանգստութիւն էր պատճառում մանաւանդ հայ և հայասէր շրջաններին, այդ այն էր, թէ քննիչ յանձնաժողովը պիտի կարողանայ արդեօք քննութիւնը, ինչպէս հարկն է, կատարել, քանի որ տաճիկ կառավարութիւնը ամեն կերպ պիտի աշխատէր կարևոր վկաներին վաղօրէք հեռացնել, իսկ ընդհանրապէս ժողովրդին սարսափի մէջ պահել: Ինչ երաշխա-

ւորութիւն էր տրուում ապահովութեան համար այն անձերի, որոնք կը կամենային կոտորածը հաստատող որ և է վկայութիւն տալ: Բնական էին ուրեմն այն քայլերը, որ արեցին Պարիզում և Լոնդոնում բնակող հայերը կառավարութիւնների առաջ, վկաներին ապահովութիւն տալու խնդիրքով: Այսպէս, օրինակ, անգլիական Morning Post-ին Պարիզից տւած հեռագրի համաձայն, այնտեղ բնակող հայերը վճռեցին ուղարկել արտաքին գործերի մինիստր Հաննոօին մի գրութիւն, որով յայտնում են, թէ եւրոպական քննիչ յանձնաժողովը պէտք է ոչ միայն խօսքով պահանջի, այլ և գործով երաշխաւորի, թէ ցուցմունքն'ը տւող վկաները, քննութիւնից յետոյ, կառավարութեան կողմից նեղութիւնների չեն ենթարկուի:

Բայց մի՞թէ հնարաւոր էր այդ շատ արդարացի պահանջին բաւարարութիւն տալ. ապագայում եթէ տեղական իշխանութիւնները հալածեն վկայութիւններ տւած անձերին, ռւս պէտք է դիմեն սոքա, քանի որ, չնայած տաճկա-Հայաստանի Անգլիայի կողմից հովանաւորւած լինելուն՝ Վիպրոսի դաշնադրութեամբ, չնայած Բերլին կոնգրէսի 61-րդ յօդւածի գոյութեան, կարող էր մի այնպիսի սոսկալի անցք պատահել, ինչպիսին էր Սասունի կոտորածը: Պարզ է որ այդպիսի ապահովութիւն պէտք է արւէր ոչ թէ Բ. Դանից խած մի խօսքով, այլ նա պէտք է ստեղծէր արմատական բարեփոխութիւնով տաճկա-Հայաստանի կառավարութեան:

Քննիչ յանձնաժողովը, Times լրագրի մի հեռագրի համեմատ, նոր տարւաց օրը պէտք է ծանապարհ ընկնէր դէպի Մուշ՝ քննութիւնը սկսելու համար. քննութեան գործը դժւարացնելու համար ի միջի այլոց մեծ յոյս էր զրւած ձմեռւայ խիստ եղանակների վրայ օսմ. կառավարութեան կողմից: Բայց, ինչպէս «Թայմս»-ը իւր համարում առ 21-ն յուն. (9 յուն.) ստում էր, հիմնւելով Լոնդոնում ստացւած տեղեկութիւնների վրայ, չնայելով սաստիկ ձմրան, որ մեծ ձի նով պատել է ամբողջ Անատոլիան, հայկական քննիչ յանձնաժողովը արիւթեամբ շարունակում է ձեռնարկած գործը և ետ չի կանգնում որ և է դժւարութեան առաջ: Յանձնաժողովի տաճիկ սնդամները և երեք եւրոպական ղեկգատները ուղեւորեցին Մուշ, ուր նոքա յոյս ունէին ժամանելու 17-ին կամ 18-ին: Հեռաւորութիւնը Երզնրումից (Վարին) մինչև Մուշ

ընդամենը 105 անդլիական մղոն է, որ ասել է թէ մօտ 169 կիլոմետր կամ 158 վերստ. բայց երկիրը այնքան լեռնային է և այնքան դժուար անցնելի, որ հաղորդակցութիւնները միշտ դժարութիւններ են ներկայացնում, մանաւանդ տարւայ այս ժամանակ: Իսկ Սասունը Մուշից միայն 11 անդլիական մղոն, ուրեմն մօտաւորապէս 16¹/₂ վերստ հեռաւորութիւն ունի: Այլապիսով յոյս էր տաժուում, որ յանձնաժողովի անդամները կարելիութիւն կ'ունենան Մուշի մէջ հարց ու փորձ անել շատ անձերի, որոնք թէև ակնհայտապէս վկայ չեն եղած Սասնում պատահածին, բայց լսել են Սասունի անցքերի մասին մասնակցողներին և ակնհայտեսներին և որ այս կերպով յանձնաժողովը կարող կ'ըլինէր հաւաքել շատ կարեւոր մանրամասնութիւններ:—

Իսկ ինչ վերաբերում է բուն Սասունին, այդ երկիրը, որպէս տեղեկացրին նոյն իսկ ամերիկական լրագրները, ծածկւած է վեց ուսուչափ խորութիւն ունեցող ձիւնով և այդ պատճառով գրեթէ անմատչելի է և կատարելապէս կտրւած է դրսի աշխարհից, որի հետ յարաբերութիւնները ենթարկւած են այժմ ամենախիստ հսկողութեան:

Բայց մի՞թէ յանձնաժողովը կը բաւականանայ միայն Մուշում հաւաքած տեղեկութիւններով, և չպէտքէ արդեօք շրջէ բոլոր աւերւած և հրդեհած տեղերը: Պէտք է կարծել որ նա Սասուն կը մտնի, եթէ միայն յանձնաժողովի ղեկուցումից պիտի կախւած լինի պետութիւնների բռնելիք շիրքը:

Ան այժմ յանձնաժողովի գործունէութիւնից աւելի մեծ բան չունինք հաղորդելու, քան թէ միայն այն, որ յանձնաժողովի առաջին գործն է եղած պահանջել Բիթլիսի նահանգապետ Թեքսին փաշայի հեռացումը իւր պաշտօնից՝ մինչև յանձնաժողովի քննութեան վախճանը, և որ այդ պահանջին բարարութիւն տրւեց սուլթանի կողմից, թէև ոչ առանց տատանումի:

ԿՈՏՈՐԱԾԻ ՆՈՐ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ:

Մեր այս յօդւածի սկզբում մենք արդէն տեսանք որ քննիչ յանձնաժողովի քննութիւնը նշանակւած էր լոկ նորա համար, որ պաշտօնական քանկցիա տրւի այն ամենին, ինչ ամբողջ աշխարհքի

համար արդէն սրարդ է: Քննիչ յանձնաժողովի ղեկուցումը պէտք է հիմք ծառայի քաղաքական գործողութիւնների, բայց մամուլը և հայասիրական ընկերութիւնները չեն սպասում յանձնաժողովի քննութեանը, նոքա իրանց տեղեկութիւնները ստանում են բոլորովին անկախ կերպով և հրատարակում են, համոզմունք կազմած լինելով որ նոքա իսկապէս կատարւած իրողութիւնների հետ գործ ունեն: Մեր առաջին յօդւածում արդէն բերւած էին բաւականաչափ հաստատութիւններ կոտորածի, բայց դորանից յետոյ նորանոր հաստատումներ եղան հեղինակաւոր թերթերի և ընկերութիւնների կողմից: Այդ վկայութիւնների գործին իսկապէս մասնակից է Նւրոպայի և Ամերիկայի բովանդակ մամուլը, սակայն առանձին ուշադրութեան արժանի են մի քանի հեղինակաւոր վկայութիւններ, որոնցից մի քանիսը կարողենք առաջ բերել:

Times (Թայմս) անգլիական աշխարհահռչակ օրաթերթը տպից այդ մասին «Հայաստանում տեղի ունեցած կոտորածները» խորագրով հետեւեալ յօդւածը.

Երբ որ Հայաստանում կատարւած կոտորածների լուրերն Անգլիա հասան, մի քանի ժամանակ շատ մեծ հաւատ չէին ընծալում նրանց, որովհետեւ նրանք գալիս էին անանուն ողբերկներից և տարածւում մի ընկերութեան ձեռքով, որ համակրում էր հայերի մէջ աղատութեան շարժումն ձգտողներին և արդէն լացոնի էր առաւել իւր հայրենասիրական, քան թէ քննադատական ոգով: Բայց այժմ մենք կատարեալ հիմք ունինք կարծելու, թէ լուրերը շատ ճիշդ են: Թէ և մանրամասնութիւնների մէջ կարող են մի քանի անստույգ բաներ լինել, սակայն այլ ես ոչ մի տարակոյս չկալ որ Հայաստանում դարչելի գազանութիւններ են կատարել, և կատարել են ոչ միայն մոլեռանդ գեղջուկների և կամ վալերների բաշխուղակների, այլ կանոնաւոր զօրքերի ձեռքով և թիւրք զօրավարի հրամանով՝ հակառակ գաւառապետի բողոքին: Եւ ամենավատն ալ է, որ զօրավարը ոչ միայն պատիժ չէ ստացել, այլ դեռ արքայական պատուաշանով վարձատրւել է իւր գործած սպանութիւնների համար:

Մեր ունեցած տեղեկագրին հաջելով, որի մասին չի կարելի ասել թէ «հայրենասէր» հայերից ենք ընդունել, վերոյիշեալ գեղքերն իբրեւ ստույգ պատի նկատւին, թէ և վրդովմունքի պատճառները զեռ փոքր ինչ մութ են մեզ համար: Եւ այդ շատ հաւաստի տեղեկագրի համառօտութիւնը հետեւեալն է.

Սասունի գեղջուկ հայերն ըստ մեծի մասին ճորտեր են տեղական քիւրդ բէլերի ձեռքի տակ, և այդ բէլերը պաշտպանում են նրանց աւա-

զակ քիւրդերի չարձակումներէն և օսմանեան պաշտօնակալներէ կեղեքումներէն, Գլա փոխարէն գիւղացի հայերը վարձատրում են իրենց պաշտպաններին ցորենով և աշխատանքով, և ի հարկէ, չեն սիրում չաւելածական հարկեր վճարել օսմանեան պաշտօնաւորներին, որոնք ոչ մի հովանաւորութիւն չեն ցուց տալիս նրանց: Մի քանի ժամանակ առաջ, ինչպէս երեւում է, նրանք որոշում են տոնենին չվճարել ալդ հարկերը, և քաջալերութիւն են զտնում իրենց պաշտպաններէն: Այն ժամանակ օսմանեան կառավարութիւնը կարգադրում է տալամամբ ժողովել հարկերը, բայց ալս նպատակով Սասուն ուղարկւած զնդիրը հաւածում են միացած հայերի և քիւրդերի կողմէն: Առաջին անգամից կարող է զարմանալի թել, որ գալլի ու զառի չարաքերութիւններէ մէջ գտնող քիւրդերն ու հայերը միաբան են կուել միեւնոյն դատի համար: Սակալն ճշմարտութիւնն ալ է, որ քիւրդ բէլը, թէն իրօք մի գալլ է, և շատ վարկենի գալլ իրեն անհնազանդ հալի համար:—աւելի պատրաստ է իբրեւ պահապան չուն վարել իրեն հպատակ և հարկատու հալի հետ: Ներկալ զիւլածում պահապան չներն ալնպէս են հաւածում զրոյից եկած գալլերին, որ զրանցից մի քանիսը դաշտի վրալ են մնում: Ալդ բանը լսելուց լետոյ մի քանի մոլեռանդ օսմանեան պաշտօնակատարներ լաւ իմանալով թնչ գաղափարներ և թնչ անվերջ ինտրիգներ են թագաւորում Խլղիգ-քիօսքի կալսերական պալատի մէջ և շուրջը, փափագում են աչքի ընկնել, անուն հանել, և ալս նպատակով մի ծանր հալկական ապստամբութեան կերպարանք են տալիս գործին և բաղմամբիւ կանոնաւոր զօրք պահանջում: Անուհետեւ հրաման է տրւում Երզնկալի զօրքերի մուշիր Զէքի փաշալին՝ գնալ Սասուն մի ստար գնդով և ընկճել իւռութիւնը: Ալդ սաստկաբարոյ փաշալին տրւած հրահանգները դեռ ճշդիւ չալտնի չեն մեզ և գուցէ երբէք զուրս չգան թիւրքաց պաշտօնական աշխարհից: Սակալն թնչ էլ լինէր հրահանգների խառտը, փաշան հարկ համարեց իսպառ ոչնչացնել ըմբոստ հայերին, և անպիսի բարբարոսութիւն գործ զրեց, անքան տղամարդիկ և կանալք կոտորեց, որ ամբողջ լուսաւորւած աշխարհի գատապարտութեան արժանացաւ: Առժամանակ ձեռնալահ ենք մնում քստմնելի մանրամասնութիւնները պատմելուց, թէն զրանք հասել են մեզ շատ վտտանելի և ոչ-հալկական աղբիւրներէն: Բաւական է ասել, որ թիւրք զինւորները հրօթարում են կատարել փաշալի անգութ հրամանն անպաշտպան կանանց և չընդլիմացող մարդկանց դէմ, և կատարում են միայն ալն ժամանակ, երբ որ փաշան պատիժ է սպառնում անհնազանդութեան համար: Միւթեսարիֆի, ալսինքն քաղաքական ճանաչապետի բողոքները փաշան ի նկատ չէ առնում: Ալս բողոք ֆակտերը հաղորդւում են սուլթանին մեծ Բրիտանիալի դեսպան Փիլիպ Կերրիի ձեռքով:

Նոյն «Թալմն»-ում տպւած էր.

Սասունից փախած տասներկու հազեր եկել են Աթէնք, և մի թղթակից ալսպէս է նկարագրում նրանց փախստեան պատճառ եզոզ դադանութիւնները:

Տալուրիկից փախածները պատմում են, թէ իրենց հետ միասին ազատել էին կոտորածի տեղից և մի քանի կանաչք, բայց մեռել են ստացած վէրքերից՝ դեռ էրգերում հասնելուց առաջ: Նրանց ասելով բազմաթիւ հազեր փախուստ էին տւել տներից իրենց երկրում տիրող ահ ու սարսափի պատճառով, բայց տաճիկ զօրքերը լռենել են շատերին և բանտարկել: Մուշից, Բիթլիսից և Սասունից փախչող մի քանի հազեր, ռուսաց սահմանն անցնելով, գնացել են Նրեան և Էջմիածին, ուր նստած է հաւոց եկեղեցու հոգեւոր Պետր:

Փախստականները պատմում են թէ 18 ամիսներից ի վեր Սասունի գաւառն ահնայէս չըջապատւած էր տաճիկ զօրքերով, որ ոչ ոք չէր կարող ոչ ներս մտնել, ոչ դուրս գնալ: Մօտ չորս ամիս առաջ թիւրքերը լսում են, թէ Սասունի չըջանից դուրս գտնուող Վարդենիս գիւղի բնակիչները պաշար են հասցնում պինդ պարփակւած Տալուրիկ գիւղին: Այս լանդգնու թեան համար, զօրքերը հիմնադատակ են անում գիւղը և բնակիչներից շատերին չարաչար կոտորում: Սասունի գաւառը չըջապատելուց ի վեր աղղալիս կոտորածներ շատ էին արել զօրքերը: Փախստականներից մէկը, որի անունը Փաջիկ է, ասում է, թէ իւր հօրեղբայրն սպանւած է, իսկ նաև մօրաքույրը նախ բռնահարւած և չիտոյ սպանւած: Նա պնդում է թէ Դէորդ անունով մի հազ քահանայ մորթեց ահն պատճառով, որ թույլ չէր տւել տաճիկան պաշտամունք կատարել իւր եկեղեցում: Գիւղն ունէր 325 հազ տուն: զրանցից միայն 25 են անաւեր մնացել:

Այս խուժողուժ գործերի լուրն տունիւրն պէս Տալուրիկ գիւղի բնակիչներից ոմանք չարձակում են սահմանի վրա կանգնած թուրք զօրքի վրա: Թուրքերն ուղարկում են Տալուրիկ 12 զինուոր՝ իմանալու, թէ ինչ է պատահել: Հաջերը բոլորին էլ սպանում են: Այն ժամանակ մի դունդ զօրք է ուղարկւում Տալուրիկ թնդանօթով հանդերձ, և սկսում է մի ընդհանուր ջարդ ու կոտորած: Մարդաշատ գիւղի բոլոր տները կործանւում են:

Սէլօ բէլը, որ Խնիցումի իշխանն է, և քուրդական հեծելազօրին պատկանող մի քիւրդ, թուրք զինուորների հետ միասին, մտնում են Սեմալ գիւղը և բռնի դուրս են քաշում եկեղեցուց հազ քահանային: Նրանք ապականում են սրբազան անօթները և քահանայի ձեռքը գնելով՝ կապում են նրան մի էջի վրայ, և փոքր ինչ առաջ քշելուց չիտոյ՝ քահանային էլ էջին էլ սպանում են: Միևնուցն գիւղում մի քանի զինուորներ մտնում մի հալի տուն և մի կին և նրա 14 տարեկան աղջկան բռնահարելուց չիտոյ՝ մորթում են թէ մէկին և թէ միւսին: Սէլօ բէլն ութը հազ աղջիկ է ուղարկում իւր Խնիցումի հարեմը:

Յալտնի քիւրդ աւագակ Զիրբանցի Իբօ բէն և կանոնաւոր զօրքի մի գնդապետ մտնում են Բաղլու, Հատագինթ և Կոմս կոչւած հալարնակ գիւղերը և սոսկալի ոճիրներ են գործում աչնտեղ: Նրանք հալածում են տղամարդկանց, իսկ կանանց և երեխայոց, թւով 200, քշում բերում են Բաղլու, և այդտեղ կանանց վրա բռնաբարութիւն գործելուց լետոյ՝ բոլորին էլ սրամա՜ն տնում: Աչնուհետե սկսում են քէֆ անել հալերից չափշտակւած գինով և պաշարով: Խիզանի և Բահրանի կանոնաւոր քիւրդ վաշտերը ասպատակում են հալոց Ալիանցիկ և Աղբեզ գիւղերը, մորթում են բնակիչներին և աւերակ են դարձնում նրանց տները: Բոլոր 32 գիւղերն էլ քանդւած ու այրւած են:

Մի այլ անդլիական օրաթերթ, Speakar, տպեց Պոլսից հետեւեալ թղթակցութիւնը, որը կարեւոր է այն տղբիւրների պատճառով, որոնցից թղթակիցը քաղել է իւր տեղեկութիւնները. այդ տղբիւրների չիշատակութիւնը մենք ինքներս ենք ստորագծում: Այդ նոր թղթակցութեան մէջ մի կարծ և ընդհանուր նկարագիր է տրւած հայերի վիճակի մասին Սըւազում, Նիկոմիդիայում և Փգքր-Ասիայի զանազան տեղերում: Զողւածի խորագիրն է Անդթուլթիւններ հայերի դէմ: Ահա այդ կարեւոր թղթակցութիւնը:

Ես կարծում եմ որ գլխաւոր, էական փաստերի վերաբերմամբ ոչ մի կասկած չի կարող լինել: Մեր ձեռքում են եղել Վանի, Էրզրումի, Սըւազի և Գիարբէքի (Տիգրանակերտ) հիւպատոսների պաշտօնական հաշիւները—զեկուցումները, որոնք դեռ չեն տպագրւած, բայց որոնք, մենք աչդ գիտենք, հաստատում են լրագրիւրների հաղորդած սոսկալի տեղեկութիւնները: Մեր ձեռքում կան հալ փախստականների վկայութիւնները, որոնք անգթութիւններին ականատես են եղել: Մենք ունինք այն զեկուցումները, որ ստացել է այս տեղի հալ պատրիարքարանը և Սասունի գաւառի կաթողիկ և բողոքական միսիօնէրների զեկուցումները: Բացի այդ ամենից և որ ամենից սարսափելին է—աչդ այն տաճիկ զինւորների պատմածներն են, որոնք մասնակցել են կոտորածներին: Աչդ զինւորները՝ Էրզրումի, Նրզնկալի, Վանի, Բիթլիսի, Խարբեքի և Սըւազի կանոնաւոր զօրքերից են: Կոտորածից վտոյ նրանք վերադարձել են իրենց տեղերը, հրապարակաւ շնորհակալութիւն ստանալով Սուլթանի անունից իրենց գործած գաղանթիւնների համար: Նրանք բոլորովին ազատ խօսում էին հրապարակական տեղերում, մեծ անորոշանօք պատմելով իրենց գործողութիւնները ամենփին, ով որ ցանկանում էր նրանց լսել:

Հարիւրաւոր տաճիկ զինւորների բերանից մենք լիակատար մանրամասն հաշիւներ ենք ստացել աչն բոլորի մասին, ինչ որ պատահել է Հապատանում: Դրանց բոլորի ցուցմունքներն ընդհանուր նկարագրութեամբ միանման են, թէև իհարկէ զինւորների պատմածները չափազանց են: Օրինակ՝ նրանցից մէկը պարծենում էր թէ իր սեփական ձեռներով սպանել է քսան լլի կանանց. միւսը—թէ ինքը մասնակցում էր կոտորածին, եկեղեցում, որի դռներից հալերի արիւնը առուի պէս էր հոսում: Այդպիսի պատմութիւնների վրայ թէև և չկարելի նայել ինչպէս կատարեալ ճշտութեան վրայ, բայց դրանք ազապուցանում են որ աչք տեսակ գործողութիւններ կատարուել են:

Այս բոլոր վկայութիւնները և ապացոյցներն ի նկատի ունենալով մենք կարողենք դրականապէս պնդել, առանց ուրիշ ապացոյցների սպասելու, թէ աչն անգթութիւնները, որոնց մասին խօսում են, իսկապէս կատարւել են Սասունում և կատարւել են կանոնաւոր զօրքերի ձեռքով աչն անձի հրամանով, որին չետոյ չքանչանով պարզեատրել է Սուլթանը:

Տասն օր սրանից առաջ Կ. Պոլսի լրագիրներում տպագրւած էր պաշտօնական լիկուցումն աչդ շքանշանի հանդիսով մատուցանելու մասին. հանդէս, որ կատարւել է Երզնկայի զօրաբանակի ներկայութեամբ: Եւ աչպէս, պարզ է որ Սուլթանը քաջաւերում է բոլոր կատարւած եղելութիւնը:

Ամբողջ երկրի վիճակը տխուր է և մառախլապատ: Այս մինչև ալժմ չեմ կարողանում Սըւալից ինձ հասած տեղեկութիւններն ոտուզել և լուսաւոր նրանք ճիշտ չեն, բայց արդէն լուրեր կան թէ հաւանական է որ խռովութիւններ լինին Կ. Պոլսի մօտիկ լինելու պատճառով Նիկոմիդիայի վիլայէթում, ուր գտնւում են շատ նշանաւոր հուլիական քաղաքներ և գիւղեր և որոնք միշտ նոցնպէս խաղաղ և հանգիստ են եղել, ինչպէս և Տաճկաստանի միւս քաղաքներն ու գիւղերը: Բայց զինւորական նահանգապետը, որ մի վերին աստիճանի վտանգաւոր մարդ է, պնդում է թէ ապստամբութեան երկիւղ կալ, ուստի արդէն նոր հեծելազնդեր է կազմում չէրքէզներից, տաճիկներից և չանցաւոր քրիստոնեաներից: Այդ ոտոխականական հեծելազօրը արդէն ցրւած է գրեթէ բոլոր քաղաքներում և գիւղերում և արդէն սկսել է իր գործողութիւնները:

Եթէ մինչև ձմեռաւ վերջը դրանք իսկական կամ երեսկաչական ապստամբութիւն չառաջացնեն—դա մի հրաշք կը լինի: Տխուր տեղեկութիւններ են հասնում ինձ Փոքր-Ասիայի զանազան տեղերից և Հիւսիսային Ասորեստանից աստիճանաւորների գործ դրած ճնշումների մասին և, իհարկէ, ամէն կողմ, որ տեղով անցել են տաճիկ զինւորները Սասունից վերադառնալու, իրենց պատմութիւններով վրդուել են տաճիկ ժողովրդի մոլեռանդութիւնը և հալերի մէջ սարսափ են ձգել: Մինչև անգամ օտա-

րահատակները մեծ վտանգի են ենթարկւած: Ինչ որ պետութիւններն անելու են, պիտի արագ և շուտ անեն: Ի հարկէ հարկաւոր կը լինի, մի որոշ ժամանակամիջոց մասնաւոր ինդիւստրիեր կարգի բերելու, բազմ անհրաժեշտ է շուտով հարկադրել Սուլթանին համոզել որ նրա կաշարութեան անբողջութիւնը կը պահպանուի միայն աչն ժամանակ, եթէ նրա հրապարակները համոզեն որ նա բւլտրովին փոխել է իր քաղաքականութիւնը և որ ազտահետ ոչ թէ պարզեցատրելու, այլ պատժելու է իւրաքանչիւր աստիճանաւորին, որ կամ ճշշում է կամ հաւածում է հաշերին, կամ գրգռում է թուրքերի փանատիկոսական թշնամութիւնը քրիստոնեաների դէմ:

Ֆրանսիական «Ֆիգարո» օրաթերթը իւր համարում 2-ից յունւարի (նոր տոմար) տպագրեց Լուի Լամբէր'ի մանրամասն յօդւածը «Հայկական հարցը և Սասունի կոտորածները» խորագրով: «Ֆիգարո»-ի խմբագրութեան վկայութեամբ, պ. Լամբէրը մի օր առաջ եկած է Պոլսից Պարիզ և հիմնաւորապէս ծանօթ է Փոքր-Ասիայի տաճկական զաւառների դրութեանը: Եւ յօդւածագիրը պատմում է եղելութիւնը, հաստատելով Բիթլիսի նահանգապետ Թաքսին փաշայի և Երզնկայում բանակ դրած չորրորդ զօրաբանակի հրամանատար Զեքքի փաշայի սխրագործութիւնները և Սասունի կոտորածը:

Ֆրանսիական «La Marine Française» (Ֆրանսիական նաւատորմ) ամսաթերթը, հայկական խնդրին նւիրած տողերի մէջ, Սասունի կոտորածում սպանւած հայերի թիւը որոշում է 15,000-ի Պարիզում ստացւած տեղեկութիւնների համեմատ:

Կարևոր ծառայութիւններ մատուցեց եղելութիւնները մերկացնելու գործում գերմանական «Kölische Zeitung» (Կոլնի լրագիր), որի թղթակիցների ձեռքով մատակարարած տեղեկութիւնները նաև ընդհանուր ուշք դարձրին իրանց վրայ:

Անգլո-Հայկական ընկերութիւնը շարունակեց իւր եռանդուն գործունէութիւնը Լոնդոնում. նա շարունակեց յատուկ տեղեկութիւններ ստանալ լաւագոյն աղբիւրներից և նոցա հասցնել անգլիական հասարակութեան, կառավարութեան և մամուլին: Առաջ բերենք Անգլո-Հայկական ընկերութեան պատուաւոր զանձապահ միտոր Մ. Պոլ'ի նամակը, ուղղած «Daily News»-ի խմբագրութեան և տպւած այդ թերթի համարում 26-ն յունւարից (մեր հին տոմարով 14 յունւարի):

«Սասունից վերջին զեկտեմբերին գրած և թիւրք աստիճանաւորների կողմից բազմաթիւ արգելքների հանդիպելով ալթմ մեզ հասած նամակները մանրամասնօրէն պատմում են, թէ ինչ կոտորածներ և աւերմումքներ է արել տաճակական զօրքն ալդ նահանգում: Ալդ նամակները հաստատում են «Kölnische Zeitung»-ի չատուկ թղթակցի հուաքած լուրերը, որոնք հրատարակած են ալդ նշանաւոր գերմանական լրագրում: Առաջ ենք քերում նամակներից հետեւալը. «Թիւրք իշխանաւորները մի կանոնաւոր պատերազմ են չալտնել Հալաստանի ալդ թշառ զաւուների դէմ: Երգեկանի, էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբէքլիի, Բաբերդի բանակները կանոնաւոր գնդեր են ուղարկել ալջնոեղ, որոնք միանալով բազմակիւ քիւրդ հրոսակների, անկանոն վաշտերի և հռչակաւոր Համիդիէ հեծելազնիի հետ, կազմել են աւելի քան չիտուն հազարի հասնող զօրք և Զէքի-փաշայի հրամանատարութեամբ դրաւել են Շէնիկ կոչւած աւանը: Նրանց առաջին շարժման նպատակն է եղել փակել գէպի Սասունի լեռները աանող անցքերը և ալդպիսով արգելել լալնատարած դաշտավալրի գիւղերին չարաքերութիւն սուենալ լեռները փախած հալերի հետ:

Առաւօտեան օգոստոսի 18-ին անկանոն զնդերն ու Համիդիէ քիւրդերը հրաման են ստանում զանազան կողմերից չարձակելու լալնատարած դաշտում ցրւած բազմաթիւ գիւղերի վրա: Միացած հալերը, վերցնելով ինչ հին գէնք որ կարողանում են գտնել, չամառ կուում են մինչև որ քիւրդերը, բաւական չատ մարդ ու գէնք կորցնելուց չետու, ստիպւում են չետ նահանջել և փախուտ տալ գէպի իրենց բանակը: Այս անպատելի պարտութեան լուրն աւանելիս Զէքի փաշան միանգամայն կատաղում է և իսկոյն պատէր է տալիս բոլոր կանոնաւոր գնդերին չառաջ խաղալ թնդանթներով հանդերձ:

Բլուրների և լեռների վրալ հսկող հալերից շատերը, թիւրք զօրքերի շարժումը տեսնելով, վալք են իջնում դաշտաբնակ եղբայրներին օգնելու, և ապա թէ մի սոսկալի և անհաւասար ջարդ է սկսում զանազան տեղերում, որ տեսում է մի քանի օր: Մի կողմից մի քանի հազար վատ սոլառազինւած հալ գիւղացիք, որոնք մարտնչում են իրենց կեանքի, իւենց կանանց և մանկանց համար,—միւս կողմից՝ մուլեռանդ թիւրքերի կանոնաւոր հզօր վաշտերը, զինակից ունենալով արիւնուռչտ քիւրդերի վալքների հրոսակները, սպառազինւած ամենալաւ նոր գէնքերով ու թնդանթներով և վճռած՝ խաղառ ջնջել հալերին:

Ալդ անհաւասար կռւի ելքը զժւար չէր գուշակել և սեպտեմբերի 5-ին Զէքի փաշան արդէն տէր էր լալնածաւալ դաշտերի, որոնք ծածկւած էին հալ գիւղերի աւերակներով ու մոխրով և մարդկալին էակների արեան լճերով ու գիւղերով—էակների, որոնց չանցանքն ալն էր միալն, որ նրանք հալ են: Բացի ալն հալերից, որոնք կարողանում են լեռներն ու կիրճերը ճողոպրել, բոլորն էլ ընկնում են աւազմի դաշտում:

Անկարելի է ձիշդ ստուգել զոհերի թիւը, սակայն ալրւած և քանդ-
ւած գիւղերի թւին նախելով՝ պէտք է ասել, թէ շատ հազարների կը հաս-
նի: Քսաններեք գիւղ իմնովին դարձած են հրոյ ճարակ. ալնքանից էլ
շատ աւելին՝ կողոպտւած ու աւերւած: Զէքի փաշան հեռագրով աւետեց
սուլթանին իւր զօրքերի քաջութիւնը և զրա փոխարէն իւր միապետի
շնորհակալիքն ստացաւ և մի լուր, թէ սուլթանը մի բարձր պատուանշան
է շնորհում նրան:

Էրզրումի անգլիական հիւպատոսն ալդ պատահարների լուրն առնե-
լուն պէս՝ իսկոյն փութաց կոտորածների տեղը հասնել, բազմ թիւը աս-
տիճանաւորները բռնեցին նրան Մշում և պատճառելով թէ չեն կարող պա-
տասխանատու լինել նրա ապահովութեան մասին, արգելեցին նրան չա-
ռաջ գնալ: Այն ժամանակ հիւպատոսը որոշեց մի քանի օր Մուշ մնալ
ստուգ տեղեկութիւններ հաւաքելու համար և երբ որ ուզեց տեսնել հաշ-
եպիսկոպոսին, որին առաջուց ճանաչում էր, իրեն չաշտնեցին, թէ ալդ
եկեղեցական հովիւն արդէն ամիսներէ ի վեր ձեռքակալւած է Բաղէշի
բանտումը, բազմ թէ ինչո՞ւ—ոչ ոք չգիտէ և չի համարձակում հարցնել:
Ալնուհետեւ հիւպատոսը դիմեց Մուշի կաթոլիկ եպիսկոպոսին, և ոստիկան-
ները չըջապատեցին եպիսկոպոսի բնակարանը, աշխատելով որ ոչ մի հաշ-
չանդգնի խօսել հիւպատոսի հետ: Բազմ և ալնպէս ալս նամակները գրող-
ներից մէկը, որ զարհուրելի կոտորածների ականատես վկա էր եղած,
կարողացաւ տեսնել անգլիական հիւպատոսին:

Բելգիական «Indépendance Belge» շշանաւոր օրաթերթը, որ
առաջ չայտնի էր իբրեւ տաճկաց կառավարութեան կուսակից և որ
Սասունի կոտորածի լուրերին կասկածով էր վերաբերւում, վերջերս
կրակոտ լեզու է բանեցնում ճանկաստանի դէմ, հիմնւելով իւր
ստացած տեղեկութիւնների վրայ:

«Ներքնկալի զինւորական հրամանատարը (Զաքի փաշա), ասում է
լրագիրը Սասունի կոտորածի մասին խօսելով—հարիւր միոնի ճանապարհը
կատաղութեամբ անցնելով հասել է Սասուն և զօրքի առաջ կարդացել
մի հրովարտակ Պոլսից եկած, որ հրամայում էր հսկերին ջարդել և ար-
մատից ջնջել ի սէր սուլթանի և կառավարութեան... Զաքի-փաշան ալդ
հրովարտակը կարդալուց լստոյ նրան համբուրեց և իր կրծքից կախեց...
Ահլ հասած տեղեկութիւններն—ասում է լրագիրը—ամենահաստատ աղ-
բիւրներից են և ալնքան ոստիկան են որ մարդ մինչև անգամ ամաչում է
պատմել: Կանաչք և աղջկերք հարիւրներով բռնաբառւել են, լլկւել և
մորթւել: Հինգից մինչև 10 հազար հոգի կոտորւել են: Աթէ ալս տեղե-
կութիւնները բուն հաշիւից ստացած լինէինք, կարող էինք կասկածել և
չափազանցութիւն համարել, բազմ զրանք ապացոյցի և բացատրութիւն

Ների կարօտ չեն: Լրագիրը սաստիկ զայրացած բացականչութիւն է.—«Այս բոլորը պարզ ապացուցանում են թէ տաճիկ կառավարութեան վախճանը հասել է, պէտք է վերջ տալ այն վարչութեան, որ իր ձեռքին գործիք է շինել աշխարհիստամենաբարբարոս տարրերը, որոնք աւելի վատ են քան Աֆրիկայի հարաւային մասի ամենավայրենի ցեղերը: Բաւական է, որ վանի անգլիական հիւպատոսը հաստատել է այդ գաղաճութիւնների լուրը... Այժմ սուլթանի խորհրդականները կը հասկանան թէ այլ ևս անպապաղ պէտք է արմատական միջոցներ ձեռք առնել և գործադրել շատ շուտով: Ամենքը, որոնք պատասխանատու են այդ հրովարտակի համար, թուրք լինին նրանք թէ քուրդ, կառավարիչներ թէ փաշաներ, ղինորականներ թէ, այլ պաշտօնեաներ—անպատճառ պէտք է պատժելն, ապա թէ ոչ ճաճկաստանի օրերը համարւած են և Եւրոպան կը մտնի և ինքն իւր ձեռքը կ'առնի այն երկիրը և նրա կառաւարութիւնը, որ ամենահարուստ երկիրներից մէկն է, բաց մնացել է սպէս և կատաղի բռնակալութեան լծի տակ»:

Մենք առաջ բերինք Սասունի կոտորածը հաստատող կարեւորագոյն վկայութիւնները, որ աւեց մեզ եւրոպական մամուլը վերջին մօտ ամիս ու կէսում: Այդ ամենը, միասին այն տեղեկութիւնների հետ, որ մենք աւինք «Մուրճ»-ի անցեալ տարւոյ № 10 և 11—12-ում, բոլորովին անկասկածելի են կացուցանում կոտորածի եղելութիւնը: Այդ ամենի վրայ մենք կարող ենք աւելացնել «Մուրճ»-ին հաղորդած պ. զնդապետ Յակոբ Դաւթեան Լազարեանի հետեւեալ նոր տեղեկութիւնը, որ նա քաղել է Սասունի կռւի մէջ մասնակցած և այժմ Թիֆլիսում դանտող անհատների ցուցմունքներից: Այդ մանրամասն հարց ու փորձից երևացել է հետեւեալը. 19 օգոստոսի կռից յետոյ երրորդ օրը սկսել է կոտորածը և տևել է 40 օր մինչ հոկտեմբերի 1-ը. հրամանը եղած է անխնայ կոտորել հայերին լեռներում, կիրճերում, անտառներում, այրերում. որոնք են և կոտորել այր, կին ու երեխայ. հոկտեմբերի 1-ին յայտարարւել է կոտորածի դադարումն: Գորանից յետոյ սասունցիք հաւաքւել են և սկսել հաշւել կորուստը: Յայտնւել է, որ այրւել են և հիմնադատակ կողոպտւել 74 մեծ թէ փոքր զիւղեր (գոցա մէջ կան նաև 5—6—10 տուն ունեցող մանր զիւղակներ, отсельки). այդ 74-ից 15-ը միայն կողոպտւած են հիմնադատակ կերպով, իսկ մնացեալ 59՝ ուղղակի հրոյ ճարակ են դառնել: Սառն գելուց յետոյ յայտնւել է որ սպանւած են 12.850 հոգի, բացի կանանցից և երեխաներից:

Բոլոր վկայութիւնները այսպիսով գալիս են ապացուցանելու որ կոտորածը եղել է անխնայ, ահագին չափերով, երկար տևողութեամբ և որ զոհերի թիւը, եթէ կանանց և երեխաներին էլ հաշուենք, երևի եղած է ոչ պակաս քան 15 հազար, գուցէ և 20 հազար կամ աւելի:

ԳԼԱՄՍՏՈՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Սասունի կոտորածը, որ յուզեց ամբողջ լուսաւոր աշխարհը, յուզեց ու իւր միայնակութիւնից դուրս հանեց նաև այդ լուսաւոր աշխարհի ամենապայծառ և մեծ զաւակին՝ Գլադստոնին, որը, իւր զաւառմալ հասակի պատճառով, քաղաքական գործօն դերից հրաժարւեց մի-երկու տարի առաջ, յանձնարարելով Անգլիայի Թագուհուն իւր տեղակ նշանակել լորդ Ռոզբերիին իբր զլուս անգլիական մինիստրութեան: Մեր անցեալ յօդւածում մենք առաջ բերինք Գլադստոնի այս խօսքերը՝ «Անգլիան չի հանդարտւիլ մինչև որ Սասունի գործերի վերաբերմամբ տեղի չի ունենալ տմենահանգամանօրէն քննութիւն»: Անգլիական կառավարութիւնը, իրօք, հանդարտեց և եռանդուն կերպով շարունակեց գործը: Հանդարտեց նաև Գլադստոնը, որին նորա ծննդեան 85-ամեայ յօբելեանի առիթով ներկայացաւ նաև հայկական պատգամաւորութիւնը՝ Անգլո-հայկական ընկերութեան նախագահ Ստեֆենսոնի առաջնորդութեամբ: (Գլադստոնի ծննդեան օրն էր նոր տոմարով դեկտեմբերի 29-ին): Ահա այդ առիթով է որ Գլադստոնը արտասանեց մի նշանաւոր ճառ, որը փոթորկեց ամբողջ Անգլիան և Եւրոպան: Հայկական պատգամաւորութեան ներկայանալը նկարագրեց և Գլադստոնի ճառը առաջ բերւեց «Դէյլի Նիւս»-ի մէջ, որ և ահա.

Շաբաթ առաւօտը հայկական պատգամաւորութիւնը, որը Ստեֆենսոնի առաջնորդութեամբ գիշերը Չեստըր էր հասել և իջնանի «Queens Hotel»-ում, գնաց Հովարդէն, նւիրելու Հովարդէնի եկեղեցուն մի գեղեցիկ արծաթեալ ոսկէջրած սկիւն, ի չիշատակ ահա ծառայութիւնների և համակրութեան, որ Գլադստոն իր կեանքի ընթացքում ցուց է տւել հազարին: Պ. Ստեֆէն Գլադստոնն ընդունեց պատգամաւորութիւնը և առաջնորդեց դէպի եկեղեցու հանդերձարանը:

Այստեղ նրանց ներկայացրին պ. և տ. Գլադստոնին, որ զգեակից ալոյտեղ էին իջել արթ. Հարի և տ. Գրիւլի, օր. Գիլէն Գլադստոնի և տ. Ստեֆէն Գլադստոնի ուղեկցութեամբ: Պատգամաւորութեանը, որի գլխաւորն էր

հայր Սուքիաս Պարոնեան, Լոնդոնի հալ համալսարանի գլխավոր քահանայ, առաջնորդում էր պ. Ստէֆենսոնը, որը պ. Ստէֆէն Վաղատոնին ներկայացրեց մի ուղերձ:

Պ. Ստէֆէնսոն ասեց. «Ինձ խնդրեցին մի պատգամաւորութիւն ներկայացնել ձեզ աչն հալերից, որոնք Պարիզում և Լոնդոնում ապրող հալերի առաջնորդներն են և ցանկանում են իրանց բերած մի արծաթեալ սկիհ թողնել Հովարդէնի եկեղեցում գործածելու համար: Հալոց եկեղեցին քրիստոնէական ազգային եկեղեցիներից ամենահինն է. վերջնականապէս հաստատուելով ոչ ուշ, քան 302 թւին, դեռ Կոստանդին Մեծի քրիստոնէութիւնը ընդունելուց առաջ, սկսած ալ օրից նա պահպանել է իր անկախ գոյութիւնը: Այս նկերը բերողների կարծիքով ուրիշ աւելի չարմար առիթ չէր կարող լինել ընծան ներկայացնելու համար, քան ձեր մեծանուն հօր ծննդեան տարեդարձի օրը, աչն մարդու որ իր համակրութեամբ դէպի հալոց եկեղեցին և հալոց ազգը, համաձայն է վարել իր կեանքի սկզբունքներին, ուստի և հալցում են նրա համար՝ Ամենակարողի օրհնութիւնը»:

Պարիզաբնակ հալերի կոմիտէաի ներկայացուցիչն ասեց, որ նա, չանուն ալը հալերի, իր շնորհակալութիւնն է չափում պ. Վաղատոնին, որ նա բարեհաճել է ընդունել պատգամաւորութիւնը և խնդրում է ընդունել Պարիզում և Լոնդոնում ապրող իր հալեանակիցներից մի արծաթեալ սկիհ, որը նրանք ցանկանում են դնել Հովարդէնի եկեղեցում, իբրև չարգանքի չափունական լիշատակ դէպի Հովարդէնի հռչակաւոր ծխական Վաղատոնը, որը ոչ միայն քառասուն տարի առաջ օգնել է Նէապոլիտանցի բանտարկեալներին՝ ազատուելու բանտից, ալ և որի ձայնը և դրիչը արտաշափել են համակրանք դէպի հալական ժողովուրդը, սկսած աչն օրից, երբ ալը գրիչն ու ձայնը գործ են ածել մարդկութեան և արդարութեան ծառայելու համար (լսեցէք, լսեցէք):

Ապա պատգամաւորութիւնը բերած ընծան սեղանի վրա դրեց և քահանան չափոնց իր ծխականների կողմից շնորհակալութիւն:

Երբ նրանք վերադարձան հանդերձատուն, Վաղատոն ասեց.

«Պ. Ստէֆէնսոն, գեր. Սուքիաս Պարոնեան և պարոններ.— Ինձ համար միանգամայն անսպասելի, բայց խիստ ուրախացող առիթ էր իմանալ, որ այսօր ինձ հրաւիրելու էին այստեղ ձեր հետ հանդիպելու: Ես ոչինչ չեմ արել, պարոններ, բացի ընդհանուր սկզբունքները պաշտպանելուց. ոչինչ չեմ արել յօգուտ Հայաստանի, որով, իմ կարծիքով հնարաւոր լինէր արժանանալու ձեզ ինձ ցոյց տաւ համակրանքին. բայց ես վերին աստիճանի շնորհակալ եմ ձեզանից ոչ միայն ալի համակրութեան համար (ծա-

փահարութիւններ), այլ և այն ձևի համար, որով դուք մտածել էք արտայայտել այդ համակրանքը:

«Մի ուրիշ աւելի նպատակադրմար, աւելի սրտալից բան դժւար եմ երեւակայւմ, և ես հաստատ համոզւած եմ, որ այն խօսքերը, որ իմ որդին, այս ծուխի կառավարիչը, արտասանեց Հովարդէնի բազմաթիւ ծխականների անունից, որոնց մէջ նա քսան տարուց ի վեր գործում է, այդ խօսքերը, ճշմարիտ, խորը զգացմունքի արտայայտութիւն էին: Եթէ մենք այս ընծային նայենք արտաքուստ, պարոններ, սա մի փոքր աննշան իր է: Սա մի գեղեցիկ առարկայ է, որ բռնել ենք մեր ձեռքում և այժմ դրած է սեղանի վրա: Մենք չենք գնահատում այն յատուկ միտքը, որ պարունակում է նրա մէջ:

«Սա մի նշան է, պարոններ, և այն՝ ձեր համակրանքի շատ խորհրդաւոր նշան, և համակրանքն է, որ յաղթող պիտի լինի քրիստոնեաների մէջ, որ պէտք է տիրէ բոլոր մարդկային էակների վրա, որոնք ցրւած են երկրագնդիս երեսին: Դուք մեզանից բաժանւած էք, պարոններ, հազարաւոր աշխարհադրական մղոններով, բայց դուք չէք բաժանւած ոչ մեծ և ոչ փոքր տարածութեամբ քրիստոնէական զգացմունքներով, քրիստոնէական սիրով: Դուք ընտրել էք այս՝ իբրև քրիստոնէական սիրոյ նշանակ, որի միջոցով արտայայտուում է քրիստոնէական սիրոյ մեծ սրբագործութիւնը:

«Կարծում եմ իմ կողմից հարկաւոր չեն շատ խօսքեր, պ. Ստէֆէնսոն և պարոններ, պարզ կացուցանելու, թէ որտեղ ենք մենք գտնուում: Մենք, այստեղ գտնւածներս, պարտաւոր ենք բռնն և անկեղծ զգացմունքներով ներշնչւել ձեր ակնյայտնի համակրանքի համար:

«Այժմ դառնում եմ յատկապէս ձեզ, պ. Ստէֆէնսոն, և իմ հայրենակիցներից իւրաքանչիւրին, ով կը ցանկայ յարգել այս պատգամաւորութիւնը:

«Անգլիայի և Պարիզի հայ կոլոնիաների կողմից ինձ արած անսպասելի ցոյցին ես ոչնչով չեմ արժանացել: Ես ոչինչ չարեցի ձեզ համար ներկայ շատ դժւար հանգամանքներում, բայց, համարձակւում եմ ձեզ հաւատացնել, զա իմ անտարբերութիւնիցը

չէր: Ես կը բացատրեմ այդ մի քանի խօսքերով: Վերջին ժամանակներս արտասահմանից սկսեցին լուրեր հասնել, որոնք գնալով աճում էին և աւելի ու աւելի ճշմարտութեան բնաւորութիւն էին կրում:—Լուրեր սարսափելի, աննկարագրելի բարբարոսութիւնների մասին Հայաստանում: Իւրաքանչիւր մարդու առաջին դըր-դումը այդպիսի դէպքում—զգացմունքների ուժգնութեան ենթարկւելն է, բայց ես համոզւած էի որ այդպիսի մեծ նշանակութիւն ունեցող դործում իւրաքանչիւր ազգի ամենից լաւ և յուսալի ներկայացուցիչը պէտք է լինի իր կառավարութիւնը, որը ազգի օրգանն է և որը իրաւունք ունի խօսել ազգի հեղինակաւոր լեզւով: Բայց ինձ կարող են պատասխանել, որ մի ազգ ոչինչ հեղինակութիւն չունի ուրիշի վրայ: Դա ճիշտ է, իւրաքանչիւր ազգ և մինչև անգամ, եթէ ուղում էք, իւրաքանչիւր մարդկային էակ հեղինակութիւն ունի այն ամեն բանի մէջ, ինչ որ մարդասիրութեանը և արդարութեանն է վերաբերում (լսեցէք, լսեցէք): Այդ սկզբունքները ընդհանուր են ամբողջ մարդկութեան համար, և նրանց խախտումը կարող է,—երբ ժամանակը կը գա,—բանալ մինչև անգամ մեզինց ամենահեղի շրթունքները: Բայց միւս կողմից այդպիսի դէպքերում մենք պէտք է ձգտենք անարդարութիւններ չանել ոչ ոքի: Որքան աւելի սարսափելի են տեղեկութիւնները, այնքան աւելի մեծ է մեր պարտաւորութիւնը նախօրոք չպնդել նրանց ճշդութեան վրայ, սպասել դործի քննութեանը և հսկել որպէս զի այն ամենը, ինչ որ մենք խօսում ենք, հիմնւած լինէր վկայւած ֆակտերի վրա:

«18 տարի առաջ ինձ վիճակեց,—այդպէս է երևի իմ բաղդը,—եռանդուն մասնակցութիւն ընդունել այն անցքերում, որոնք վերաբերում էին ուրիշ անգլթութիւններին,—անգլթութիւններ, որոնք հասան մեզ՝ առաջ լուրերի ձևով, իսկ յետոյ չափազանց սարսափելի ճշմարտութեան կերպարանք առան.—ես խօսում եմ բոլգարական դաշանութիւնների մասին: Սակայն ես ոչ մի քայլ չարեցի, մինչև որ, նախ և առաջ, անգլթութիւնների հաւաստիութիւնը և բնաւորութիւնը չճշգրտեցին անկասկածելի աղբիւրից և մինչև որ, երկրորդ, ես յոյսս չկորցի այն բանից, որ անգլիական ժողովրդի զգացմունքների պատշաճաւոր արտայայտիչը կա-

բող է լինել կառավարութիւնը, որը աջն ժամանակ իր ձեռքում ունէր իշխանութիւնը: Սրանից դուք կարող էք տեսնել որ իմ վարմունքը ներկայ դէպքում չի հակասում աջն բանին, ինչ որ ես արեցի աջն ժամանակ, և չի ցոյց տալիս, որ խորին ծերութեան պատճառով մեռել է իմ մէջ զգացնութիւնը դէպի այդպիսի սարսափները (ծափահարութիւններ):

Ես մինչև այժմ լռում էի, որովհետև կատարելապէս հաւատացած էի, որ թագուհու կառավարութիւնը կը կատարի իւր պարտաւորութիւնը, և այդ համոզմունքը մինչև այժմ էլ պահպանում եմ:»

«Ես համոզւած եմ, որ շատ երկիրներում, ուր, դժբաղդաբար, դեռ չի քարոզւած Քրիստոսի խօսքը, օրինակ, մեր սեփական հպատակների մէջ՝ Հնդկաստանում, ես համոզւած եմ նոյնպէս Չինաստանի մէջ, Եսպոնիայի մէջ և միւս ոչ-քրիստոնայ երկիրներում, այդ նոյն վրդովմունքով կը վերաբերեն այժմ տեղի ունեցած աջն զարհուրելի բարբարոսութիւններին, որ կատարում են մարդիկ իրանց նման էակների դէմ. և հէնց վիրաւորեալ մարդկութեան այդ միացեալ ձայնի մէջ է մեծ ոյժը:

«Ի՞նչ էր պատահել Բոլգարիայում: Սուլթանը և նրա պաշտօնեաները հերքում էին, պնդելով, թէ որ և է անարդարութիւն չի պատահել: Այո, բայց նրանց հերքումը նսեմացաւ փաստերի առաջ: Ճշմարտութիւնը յայտնւեց աշխարհին: Աջն ժամանակ օտարոտի էր թւում իմ միտքը, երբ ասում էի. «Ժամանակ է, որ տաճիկները իրանց հետևորդներով, իրանց ունեցած շուքեցածով դուրս գան Բոլգարիայից»: Նրանք Բոլգարիայից դուրս գնացին և հեռու քշւեցին:

«Սակայն եթէ մինչև անգամ թիւրքերը զուրկ լինէին միանշանակ արդարութեան, ճշմարտութեան կամ մարդկութեան զգացմունքից, առողջ խելքը և պարզ մտածողութիւնը պէտք է արդելէր նրանց կրկնելու 1876 թ. քառմեկի դէպքերը, որոնց պատճառով Թիւրքիան խաղաղապէս ֆինու թեան հետևանքը մեզ դեռ յայտնի չէ, բայց և այնպէս ամեն տեսակ հաւանականութիւն կայ ընդունելու, որ 1876 թ. Բոլգարիայի սարսափելի դէպքերը կրկնւել են 1894 թ. ին Հայաստանում: Եւ եթէ կ'ապացուցուի, որ

այդպէս է, ժամանակ է, որ ընդհանուր անէծքի աղաղակ, այլ և գործի բարձրաձայն անէծք ուղղւի այդ դաժան չարագործութեան դէմ: Վիրաւորւած մարդկութիւնը պէտք է ձայն բարձրացնէ և այդ ձայնը հասցնի Տաճկաստանի սուլթանի ականջին և նրան զգացնել տայ, եթէ առհասարակ որ և է բան կարող է նրան զգայուն կացուցանել, տեսնելու իր բռնած սոսկալի ընթացքը:

«Պարոններ, Թիւրքիայի պատմութիւնը տխուր և չար գործերով լի մի պատմութիւն է: Այդ ցեղը զուրկ է եղել աչքի ընկնող, մինչև անգամ նուրբ յատկութիւններէից, բայց շատ տեսակէտներից նա աշխարհի համար եղել է մի պատուհաս, որ ուղարկւած է եղել, անկասկած, իմաստուն Նախախնամութիւնից աշխարհիս մեղքերի համար:

Եթէ այդ սպանութիւնների, բռնաբարութիւնների և անպատուութիւնների պատմութիւնները ձիշդ են, այն ժամանակ այլ ևս ոչինչ չէ կարող անտես առնել, աննկատելի մնալ: Ես իմ կեանքիս ընթացքում ականատես եմ եղել, թէ ինչպէս Թիւրքիան համարեա կիսել է այն մեծութիւնից, որի մէջ ես նրան տեսայ մանուկ ժամանակս: Եւ ինչի համար: Պարզապէս նրա վատ կառավարութեան համար: Ես համոզւած եմ, որ մեր թագուհու իշխանութիւնը գործ կը դնի ամեն միջոց գործերի գաղտնիքի հիմքը բացանելու աշխարհին: Եթէ ստացած լուրերը կամ հերքեն կամ մեղմանան, այն ժամանակ պէտք է շնորհակալ լինենք Աստուծուց, իսկ եթէ դրա հակառակ հաստատուեն, այն ժամանակ, ասում եմ, այդ անպատուութիւն է քաղաքակրթութեանը, լայն մտքով, դա մի ապտակ մարդկութեանը: Սա, պարոններ, մի խիստ լեզու է, և խիստ լեզու պէտքէ գործ ածել, երբ անխիղճ գործեր են կատարւում, և նա պիտի գործ դրւի այդ տեսակ ֆակտերի ժամանակ: Եւ քանի որ ես ձայն ունեմ, ես յուսով եմ, որ ամեն ժամանակ այդ ձայնը կը բարձրացնեմ յանուն մարդկութեան, յօգուտ մարդկութեան և ճշմարտութեան (սեցէք սեցէք):

«Նորից շնորհակալ եմ, պարոններ, ձեր ընծայի համար, որը նաև ինձ առիթ տւեց այս խօսքերը ասելու:

«Դուք բարի եղաք լիշերու, որ հայոց եկեղեցին քրիստոնեայ եկեղեցիների մէջ ամենահինն է և որ նա սկսում է 302 թւականից:

լաւ, պարոններ, չեմ ցանկանում ձեր այդ պատիւը վիճելի կացուցանել, բայց այս երկրի (Անգլիայի) եկեղեցին էլ շատ քիչ ժամանակով է տարբերում ձերինից, որովհետեւ, եթէ ես լաւ եմ յիշում, երեք բրիտանական եպիսկոպոսների անուններ են յիշում, այն ժողովի մէջ, որ կայացաւ Ֆրանսիայում 310 [թ.-ից: Սա մի երջանիկ մրցութիւն է:

«Եւ թող այն երկիրները, որոնց պատկանում ենք մենք, և այն եկեղեցիները, որոնց անդամներն ենք մենք, շարունակեն միշտ այդ երջանիկ մրցութիւնը բարի և արդար գործերի մէջ: Ամբողջ սրտից, պարոններ, ձեզ ցանկանում եմ ամենայն բարիք:» (Մաքահարութիւն):

Այդ բոլորը միասին գնացին դղեակը և սեղանակից եղան պարոն և տիկին Գլադստոնին:

Գլադստոնի այդ ճառը նոր դրաւական էր որ անգլիական կառավարութիւնը մինչ վերջը կը տանէ սկսած գործը: Եւ թէ որքան զօրեղ էր այդ ճառի ազդեցութիւնը, այդ մենք այժմ կը տեսնենք նորա առիթով յայտնւած մի քանի հեղինակաւոր կարծիքներից: Times-ը 1894 թ. վերջին թիւում այդ մասին մի երկրորդ առաջնորդողով (Գլադստոն և Հայաստան) յայտնեց.

«Գլադստոնի վերջին (իրլանդական ինքնավարութեան վերաբերմամբ) քաղաքական արշաւանքի ամենածայրայեղ հակառակորդներն անգամ ի բոլոր սրտէ կը միանան այն պատկառելի շնորհաւորութիւններին, որոնցով նոքա ողջունում են այն եռանդը, որ նա երևան հանեց Հովարդենում արտասանած ճառում իւր ծննդեան 85-ամեայ տարեդարձի օրը: Անմտութիւն կը լինէր այս ճառը համեմատել այն ճառերի հետ, որոնցով նա հռչակեց իւր անունը իւր քաղաքական ասպարէզի սկզբում. բայց այդ ճառը, անկասկած, մի այնպիսի դիմումն է հանդիսանում ազգի բարոյական զգացմունքին, որին այժմ ապրող մարդկանցից՝ թէ ծերերից և թէ երիտասարդներից և ոչ մէկը ընդունակ չէր լինի: Առանց մանրամասն քննելու այն վերին աստիճանի ընդարձակ և բարդ խնդիրը որ վերաբերում է տաճիկ կառավարութեան և նորա քրիստոնեայ հպատակների յարաբերութիւններին, կարելի է առանց որ և չափազանցութեան ասել, որ, Հայաստանում կա-

տարւած վերջին անգթութիւնների խնդրի նկատմամբ, Գլադստոնի կողմն է անգլիական ազգի ահագին ամենատար մեծամասնութիւնը:

«Եթէ տաճկական, իշխանութիւնները շանցաւոր են Սասունում կատարւած սոսկալի անգթութիւնների գործում և եթէ պատասխանատու մինիստրները ոչ միայն թոյլ են տւել այդ սարսափները, այլ դեռ մինչև անգամ նոյն իսկ պարգևատրում են այդ գազանութիւնների հեղինակներին, այն ժամանակ միմիայն ամենախակական բաւարարութիւնը կարող է ազատել Տաճկաստանը Անգլիայի և ամբողջ Եւրոպայի բարկութիւնից:

«Գլադստոնը վերջնականապէս հեռացել է հասարակական կեանքից և հաւանական է որ նա շատ քիչ գործնական մասնակցութիւն կ'ունենայ քաղաքական ընդհարումներին: Բայց անհրաժեշտ է որ սուլթանի կառավարութիւնը, իւր սեփական շահի տեսակէտից, մտածէ որ անգլիական նախկին նախարարապետը եթէ մի փոքր անձնական ջանք գործ դնի, նաև առանց որ և է անձնական փառասիրութեան կարող է նա սոսկալի the blind old Dandolo (ծեր կոյր Գանդոլօի) դեր խաղալ: Կրկնում ենք որ այժմ անհրաժեշտ պահանջ չի ծագիլ կրկին զարթեցնել այն բոլոր բազմութիւ հարցերը, որոնք առաջ բերին և հերթական հարցեր դարձրին 1876 թ. ի բոլշարական կոտորածները և հարկ չի լինիլ այդ կերպով եւրոպական պետութիւնների մէջ այնպիսի դիպլոմատիական յարաբերութիւններ ծագեցնել, որոնք հեշտութեամբ կարող են ընդհանուր պատերազմ առաջացնել: Մենք շատ ուրախ ենք որ Գլադստոնը հակառակ չէ այս կարծիքին, թէև ասում է որ, եթէ նրա հիմնական ենթադրութիւնները իրականանան, այն ժամանակ Տաճկաստանը կը կրի իւր արժանաւոր պատիժը:

«Ճիշտ է այն որ, եթէ Հայաստանում տեղի տնայնացած անգթութիւնների մասին տեղեկութիւններն ստուգւին, այն ժամանակ նրա հրաւերը կարող է անսպասելի հեռեանքներ առաջ բերել, որովհետև եւրոպական status quo-ն այժմ աւելի դժուար է պահպանել, քան այն ժամանակները, երբ Բիսմարկն աւելի ոյժ ունէր. Գլադստոնը այժմ հոգում է որ լինիլիք գործողութիւնների սահմանները որոշէ այնպէս, ինչպէս նա ստիպւած էր որոշել 18 տարի սրանից առաջ: Նա իր ճառի մէջ ասաց թէ ինքը չէր ձեռնարկիլ այդ գործողու-

թիւներին, եթէ ամենից առաջ համոզւէր որ հաղորդւած տեղեկութիւնները անպայման ճիշդ են և երկրորդ՝ եթէ նա անպայման հաւատացած չլինէր թէ ինքը ներկայ հանգամանքում կատարելապէս արտայայտիչ է բրիտանական կառավարութեան կարծիքների:

Այժմ քննութիւն է նշանակւած, որ կ'ապացուցանէ թէ արդեօք ճիշդ են թէ սուտ հաղորդւած տեղեկութիւնները և Վլադստոնը դեռ չի շտապում ձևակերպել իր առաջարկութիւնները, մինչև որ հրատարակեն այն մասնաժողովի քննութիւնների հետեանքները, որոնց մասնակցում են նաև եւրոպական պետութիւնների հիւպատոսները:

Նոյն այն ճառի ազդեցութեան մասին ահա թէ ինչ խօսքերով հեռագրւեց Պետերբուրգի «Նովոե Վրեմյա» օրաթերթին.

«Հալ պատգամաւորութիւնն ընդունած ժամանակ Վլադստոնի արտասանած ճառը սքանչացրեց հասարակութեան՝ իւր տոնի վճռողականութեամբ և այն սպառնալիքներով, որոնք ուղղւած էին կատարած չարագործութիւնների հեղինակներին: Վստահութեան արտապայտութիւնը կաշանում է նրանում, որ մինիստրութիւնը կը կատարէ իւր պարտականութիւնը, իսկ հակառակ պարագայում՝ ինքը Վլադստոնը բարձրացնելու է իւր ձայնը.—կարծւում է որ նա կը հարկադրէ կառավարութեան՝ վճռողաբար ներգործելու: Անգլիական ժողովրդին հետաքրքրում և շուքում է այն միտքը, թէ Վլադստոնը կարող է վերադառնալ հասարակական գործունէութեան և իւր հովանաւորութեան տակ կ'առնէ բրիտանեաներին, խաչակրաց արշաւանք հրատարակելով մահմեդականութեան դէմ»:

Անգլիական մամուլի մէջ Վլադստոնի ճառի վերաբերմամբ միակ դիտմանա կազմողը, որքան մեզ յայտնի է, եղած է Morning Post: «Ռէյլի Նիւսի» յօդւածը, տպւած իւր անցեալ տարւայ վերջին համարում և որ կրում է «Վլադստոն և Հայաստան» խորագիրը, գրւած է այն ոգով, որին մեր ընթերցողները արդէն ծանօթ են այդ թերթից յաճախ բերւած քաղաքներից: Իսկ «Բիրմինգհամի պոստ» անգլիական թերթին Լոնդոնի թղթակիցը յայտնեց այդ թերթում թէ՛ «Վլադստոնի ակտիւ միջամտութիւնը հայերի օգտին չի սահմանափակւիլ միայն իր ծննդեան օրը արտասանած սաստիկ զգացւած ճառով: Վլադստոն յատուկ ցանկութիւն է յայտնել ստանալ բոլոր տեղեկութիւնները, որ գալիս են Լոնդոն Հա-

յաստանի համակրողներին, նոյնպէս և շատ ուրիշ տեղեկութիւններ, որ հասնում են բուն Հայաստանից: Եւ եթէ անհրաժեշտ կը գտնի, նախկին պրիմիէրը կ'անի իր երկրորդ քայլը, որ լինելու է մի հրաւեր Վիրատորւած մարդկութեան ընդհանուր կարծիքին, ինչպէս նա ասել է: Գլադստոն յայտնել է այն կարծիքը, որ գրաւոր հրաւերը աւելի մեծ ազդեցութիւն կ'ունենայ Թիւրքիայի վրայ, քան թէ մի ծառ:

Բնական է որ Գլադստոնի ծառը և սորա գտած ընդունելութիւնը հասարակաց կարծիքի մէջ՝ մեծապէս պիտի յոգէր Բ. Գուռը: Այդ առթիւ անգլիական «Standart» օրաթերթին հեռագրեց Կ. Պոլսից.

«Գլադստոնի ծառը, որ նա ասաց հայոց պատգամաւորութեանը, մեծ տպաւորութիւն թողեց Իլդիզ-Կիօսկում: Այդ ծառի հեռագրական համառօտութիւնը, որը հասել էր Կ. Պոլիս, փոքր ինչ թերի էր. սուլթանի անհամբերութիւնը այնքան մեծ էր, որ փոխանակ մի կամ երկու օր սպասելու Լոնդոնի լրագիրներին, համայնեց հեռագրել Լոնդոնի Թիւրքաց ղեսպանին, որ նա հեռագրի ամբողջ ծառը: Սուլթանը սաստիկ զայրացած է և թշնամութիւնը դէպի Անգլիան նրա մէջ աւելի զօրեղացել է»:

Այս յօդւածի մի այլ տեղում (տես «Տաճիկ կառավարութեան գործողութիւնները»), մենք արդէն հաղորդեցինք որ, «Standart»-ի տեղեկութեան համեմատ, Բ. Գուռը պահանջել էր որ անգլիական կառավարութիւնը յայտարարէ թէ ինքը համերաշխ չէ Գլադստոնի ծառում յայտնած մտքերի հետ: Ար այդ պահանջը պէտք է անհետեանք մնար՝ ինքն ըստ ինքեան է հասկանալի:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Կանգնած ենք արդեօք մի քաղաքական խնդրի առաջ թէ ոչ? Կարելի է զայրոյթ արտայայտել անիրաւութիւնների մասին, կարելի է բարձրագոյ բողոքել նոյն խնդրի խնդրածի պէս սարսափի դէմ, բայց և այնպէս լուրջ խնդիր չյարուցանել: Հայկական խնդիր ասելով՝ պէտք է հասկանալ հայկական նահանգներին ինքնավարութիւն տալը, անջատելով այդ նահանգները օսմանեան պետութեան ընդհանուր վարչական կազմից: Այդպէս են հասկացել

խնդիրը նորա, որոնք կամենում են որ անհնարին լինեն Սասունի պէս կոտորածները, դէմն առնւի մի ազգի գլխովին ջնջումին իրանց մայր-հայրենիքում:

Այդ տեսակէտից, որը միակ թոյլատրելի և ճիշդ տեսակէտն է, ցաւօք սրտի պէտք է վկայենք որ հայկական խնդիրը իւր կողմը չունի այն ամենքին, այն բոլոր երկիրները, որոնց մամուլը, սակայն, գրեթէ միաբերան վկայեց Սասունի կոտորածի եղելութիւնը և զայրոյթ յայտնեց այդպիսի բարբարոսութիւնների դէմ, պահանջելով հանգամանօրէն քննութիւն:

Եւրոպական ազգերից, լաւ կշռելով ամբողջ մամուլի արտայայտութիւնները, միակը, որ հայկական խնդիրը լրջօրէն կամենում է ըմբռնել վարչական ինքնավարութեան մօքով՝ դա Անգլիան է իւր մամուլի մեծամասնութեամբ և իւր այժմեան կառավարութիւնով: Մնացած եւրոպական մամուլը չի յայտնում այդ պահանջը, լռութեան է տալիս այն, և կամ չատ թէ քիչ պարզ կերպով ընդդիմութիւն է ցոյց տալիս հայկական ինքնավարութեան գաղափարին: Այդ նոյնը մենք տեսանք նաև մեր անցեալ ամսւայ յօդւածում, և դժբանքից դէս եղած արտայայտութիւնները Անգլիայից դուրս երկիրների մամուլի կողմից՝ ոչնչով աւելի մխիթարական չեն հայկական դատը պաշտպանողների համար:

Եթէ ի նկատի առնելու լինենք, որ հայկական խնդրի մէջ ամենաանմիջապէս հետաքրքրւածները Անգլիան է, մի կողմից, և Ռուսիան, միւս կողմից, և որ այդ պատճառով միւս մեծ պետութիւնները միայն պէտք է համակերպւեն այդ երկուսի մէջ կոյսացնելի համաձայնութիւններին, ակներև կը լինի այն նշանակութիւնը, որ պէտք է տրւի այդ երկու երկիրների մամուլի բռնած դիրքին դէպի հայկական խնդիրը: Անգլիայի ներկայ կառավարութիւնը կամենում է հարկադրել թիւրքիային ինքնավարութիւն մտցնել՝ որս հայկական նահանգներում: իսկ այդ անում է՝ անմիջապէս ներգործելով թիւրքիայի վրայ, բայց յաջողութիւնը երաշխաւորւած կը լինէր՝ եթէ Ռուսիան այդ դիտաւորութեամբ կատարելապէս միանար Անգլիային: Պահանջ անելու համար կը միանայ արդեօք Ռուսիան:

Ռուսաց մամուլի մի մասի համար իսկապէս անսկսկալ էր անցեալ դեկտեմբերի 17-ին Պոլսի հեռագիրը, որով ճիշդ թէ սխալ յայտն-

ւում էր թէ Բ. Գուռը որոշել է հաշկական չորս նահանգները միացնել մի առանձին կառավարութեան ներքոյ: Բայց որքան էլ այդ բանը լոկ Անգլիայի քաղաքականութեան յաջողութիւն նկատէր, այնուամենայնիւ բողոքել զորա զէմ անկարելի էր. պէտք էր ողջունել:

Ողջունողներից մէկն էր և Պետերբուրգի „Норое Время“ չափոնի մեծ թերթը: Մանօթանանք ու տեսնենք, սակայն, թէ ինչպէս արտայայտւեց այդ ողջոյնը!

Նիթէ միայն ճշտեն՝ Վ. Պոլսից եկող լուրերը, թէ Բ. Գուռը վճռել է տաճկական Հայաստանի մէջ ընթերցման մտցնել, այն ժամանակ կարելի կը լինի շնորհաւորել Սուլթանի կառավարութիւնը, որ նա վերջապէս նպատակաւարմար ելք է գտել այն դժարութիւններից, որ մինչև այժմ Ռամանեան կառավարութեան լիշեալ մասում իրերի անբնական զրուծիւն էին ստեղծում: Կարելի է և մինչև անգամ հաւանական է որ տաճկահայերի քաղաքական առաջնորդները, մանաւանդ Նրանք, որոնք արտառահման են ապրում, չեն բաւականանալ այդ տեսակ լարենորոգմամբ և կը փորձեն շարունակել իրենց ագիտացիան, որի հիմքն է, ինչպէս չափոնի է առանձին և անկախ «հայոց թագաւորութիւն» ստեղծելու մտորմունքը: Սակայն Բերլինի զաջնապիւրը ստորագրող տէրութիւնների աչքում այդ նոր զրուծիւնը այն անուրանալի օգուտն ունի, որ Նրանք աւելի հեշտ կարող են հետեւել և պարզել հայերի պարբերական գանգատները «տաճկական անդթութիւնների» մասին:

Հազարնակ չորս վիլայէթներ ի՞նչ են ձուլում պահպանելով «վիլայէթ» համետ անունը, որ պիտի կառավարւի վեց տարի ժամանակով սուլթանից նշանակւած նահանգապետով և այն էլ պարտաւորութեամբ որ այդ նահանգապետներից միայն առաջինը պիտի լինի մահմեդական, իսկ Նրանից փոսոյ երկրի կառավարութիւնը կ'անցնի ոչ հաշկական ծագումն ունեցող քրիստոնեաների ձեռքը. այդ հանգամանքը Հայաստանի հողալին և վարչական կազմակերպութեան կըտալ այնպիսի մի փոխադրութեան կերպարանք ինքնավարութեան իրաւունքներով, ինչպիսին Բարձրագոյն Գուռը դեռ եօթնասնական թւականներին եւրոպական պետութիւնների ճշման տակ տեւց Վրետէին և դեռ Նրանից առաջ՝ Լիւքսեմբուրգ: Նրկիրը կ'ունենալ տեղական ժանդարմերիա սուլթանից նշանակւած զօրաբանակի Երոմանատարի իշխանութեան տակ և Նրա եկամուտները կը գործադրւին տեղական կարիքների համար, բացի որոշեալ գումարից, որ պիտի չափացնւի ընդհանուր պետական պարտքերի վճարման կամ համարւի իբրեւ պետական եկամուտ ծխախոտի մենաւաճառութեան: Բացի դրանից արգարագատութիւնը կ'անցնի ընտրեալ դատաւորների ձեռքը և միայն զա-

տարանի նախագահներն առաջաւան պէս կը նշանակուին օտմանեան պետութեան մէջ տիրող օրէնքների հիման վրայ:

Ի հարկէ միայն ապագան ցոյց կը տալ թէ ալդ Նոր կարգերը ինչ գործնական հետեանքներ կ'ունենան, բայց, Բերլինի դաշնագրով Բ. Դոան իր վրայ առած պարտաւորութեան տեսակէտից, զրանց չի կարելի անբաւարար կամ նոյն իսկ քիչ համարել:

Տաճկական կառավարութիւնը, երկար տատանումներից չետոյ ըստ երեւութին վճռում է խոտտովանել, որ հալերն ունին նոյն իրաւունքները, ինչ որ Կրեաէ և Լիբանանի քրիստոնեաները: Տեսականապէս աչգալիսի մի զիջումն չի կարող որ և է ընդդիմախօսութեան առիթ տալ և մենք բոլորովին չենք զարմանում որ Լոնդոնում աչգ բանի առիթով ուրախանում են՝ համարելով աչգ լորդ Ռոզբերիի մինիստրութեան մի մեծ չափութիւնը, որ սակաւն կատարել է Բերլինի կառավարութեան կողմնակի օժանդակութեամբ, որ իբր թէ սուլթանին խորհուրդ է տւել համաձայնել զիջումներ անել:

Սակաւն «ճակական րէֆորմներն» ինչ ծագում էլ որ ունենան, նրանց ի հարկէ Եւրոպայում ուրախութեամբ կը հանդիպեն բոլոր կառավարութիւնները և քաղաքական շրջանները, որոնք զգում են թէ ընդհանուր խաղաղութեան և պետութիւնների միջազգային հաստատութեան համար բոլորովին ցանկալի չէ որ հակական օգիտացիան պարբերաբար կրկնւի, մանաւանդ այն ձևով՝ որ այս անգամ նրան կարողացան տալ աչգ շարժման առաջնորդները: Բ. Դոանը որքան քիչ առիթներ տալ օտար պետութիւններին իր ներքին գործերին միջամտելու, այնքան աւելի լաւ կը լինի թէ իր և թէ Եւրոպայի հանգստութեան համար: Մեզ մօտ, Ռուսաստանում, աչգ բանում դոնէ համոզւած են բոլոր ողջամիտ մարդիկ և ուրախանում են որ երկմասնի քաղաքական խնդրի դ՛ «Հալաստանում կատարւած տաճկական անգթութիւններին» վրդովեցուցիչ աստառով արձագանք չգտաւ մեր կառավարչական շրջաններում, որոնք իմաստուն հանգստութիւն էին պահպանում, հանգստութիւն, որ ամենալաւ ապացոյց է թէ սուլթան Աբդուլ-Համիդը մեր կողմից որ և է փառասիրական մտադրութիւն ունենալու կասկած չպիտի ունենայ: Թող միայն որ տաճկաց կառավարութիւնն ապացուցանէ որ ինքը բոլորովին անկեղծ ու առանց որ և է վատին մոքի վճուել է բարեօրէն իր հալ հպատակների դրութիւնը: Դրանից աւելին նրանից չեն պահանջում ոչ Պետերբուրգում և ոչ այն քաղաքական կենդրոններում, որոնք Պետերբուրգի պէս ամենին չեն ցանկանում, որ նորից ծագի արեւելեան խնդիրը և այն էլ այն ձևով թէ եւրոպացի պիտի պաշտպան կանգնեն Տաճկաստանի քրիստոնեաներին:

Դեռ աչգալէս էր խօսում „Новое Время“, երբ հաւատացած էր թէ Բ. Դոան որոշումը մի կատարւած իրողութիւն է և որ

ահա Թիւրքա-Հայաստանում ստեղծւում է արդէն մի ինքնավար երկիր: Բայց անցան մի քանի օրեր, լուրի իրադործւելու մասին բան չէր լսւում: Ընդհակառակը լուրեր եկան որ Թիւրքիայի և Անգլիայի յարաբերութիւնները վատանում են, լարւում: Եւ ահա „Новое Время“-ն արդէն սկսեց գրել թէ «ինչու իսկապէս Ռուսիային հաճելի չէ Թիւրքա-Հայաստանը ինքնավար նահանգի վերածելու ծրագիրը» և թէ ինչու «ոչ մի պատճառ չունենք հայկական խնդրի համար միայն մեր յարաբերութիւնները վատացնելու Բ. Գռան հետ»: «Նովոե Վրեմյա» այդ առաջնորդող չօղւածը, սակայն, արժէ ամբողջապէս ընթերցողների առաջը դնել: Ահա այն.

«Լոնդոնի մեր թղթակիցը հեռագրով հաղորդում է մեզ թրքական դեսպան Ռուստամ փաշայի ցետս կոչւելու հաւանալութեան և նրան փոխարինող թուրք ուրիշ զիպլումասի մասին, որը Լոնդոն է գնալու բրիտանական կառավարութեան անելիք «վճռական» պահանջներով: Վերջ դնելու համար հայկական ազիտացիային, որ մինչև այժմ էլ զօրաւոր պաշտպանութիւն է գտնում Անգլիայի կողմից: Այս լուրի վրա՞ աւելացնելով նաև թուրք կառավարութեան մի քանի մերժումները, որ նա արած է անգլիական ամենից աւելի ազգեցիկ թերթերին՝ Հայաստան թղթակիցներ ուղարկելու վեբաբերութեամբ, անշուշտ, զիւրին է, իրաւամբ համոզւելու, որ Անգլիայի և Թիւրքիայի յարաբերութիւնները հետզհետէ լարւում են, ինչպէս այդ հաղորդում է մեր («Նով. Վրեմյա»-ն) թղթակիցը: Բացառապէս է, որ Կ. Պոլսում ներկայումս կարելի են համարում չծածկել ինչպէս առաջ, այն դժգոհութիւնը, որը առաջ է գալիս բրիտանական կառավարութեան չօգուտ հայկական խնդրի գործելու եղանակից, անգլիացիներին անսովոր երեսացող թրքական բարձրագոյն չըջանների ցոյց տւած այդ համարձակութիւնը Լոնդոնի քաղաքագիտական չըջաններին արդէն սկսած է ներշնչել կասկածներ՝ Թիւրքիայի կողմից Ռուսիային եղած ինչ-որ «գաղտնի առաջարկութիւններին» մասին. դրա հետ միատեղ, վերոյիշեալ քաղաքական չըջանները չոյս են չալտնում, թէ Բ. Գրան կողմից մեր (ռուսաց) կառավարութեան եղած առաջարկներն ոչ մի դէպքում կարող չեն խանգարել Անգլիայի և Ռուսիայի «բարի յարաբերութիւնները Ասիայում դրացիութիւն պահպանելու վերաբերմամբ»:

«Այս ամենը փոքր ինչ առեղծւածալին է թւում: Ամեն բանից սուաջ, դժւար է որ և իցէ կասկածութիւն նշմարել Անգլիայի կողմից չամառ կերպով ուռեցրած հայկական հարցի և անգլո-ռուսական «դրացիական յարաբերութիւններին» միջև Ասիայում: Եթէ Կ. Պոլսում վերաւի որ և իցէ պատճառ ունին ենթադրելու, որ Ռուսիան սգեւորութեամբ չէ վերաբերւում դէպի անգլիական հայաստանների ազիտացիան, մեզ անհասկանալի է:

թէ ինչու համար մեր (ռուսաց) կառավարական շրջանների հալեացքները պիտի փոփոխւին աչն հիմունքների վերաբերութեամբ, որոնց վերալ կարող էին հաստատուել Ռուսիայի դրացիական «բարի չարաբերութիւնները» Անգլիայի հետ՝ Ատիալում։ Որքան մեզ չափն է, ալդ չարաբերութիւնների համար առաջին անգամ աշխատողն եղել է ինքը՝ բրիտանական կաբինետը, որ կարճ ժամանակի մէջ հնարաւորութիւն ունեցաւ համոզուել, թէ Ռուսիան իրենց դէմ ոչինչ չունի, բալց՝ և ալնպէս, կարող է առանց որ և իցէ փոփոխութեան՝ յաղաղութեամբ տանել իրերի նախկին դրութիւնը։ Ուստի դժուար է ենթադրել, որ հակական խնդրի վերաբերմամբ մեր (ռուսաց) կողմից Թիւրքիային ցուց տրւած փոքրիկ պաշտպանութիւնը, եթէ մինչև անգամ դրանով բացատրւի Բ. Գրան ցուց տրւած ալժմեան համարձակութիւնը, հարկադրած լինի անգլիական զիպլոմատիալին՝ փոխել տալու իր հալեացքը անգլո-ռուսական դրացիութեան մասին՝ Ատիալում։

«Այս չարաբերութիւնը կախումն ունի խորին համոզմունքից, և անգլիական հալսէրները չաժառ կերպով ուսեցնելով Թրքա-Հայաստանում կատարւած բարբարոսութիւնների ինչիւրը, զաղտնի կերպով հետևում էին մի ալնպիտի նպատակի, որ բոլորովին անհամապատասխան է ռուսական շահերին։ Վերջին տարիներս, շատ անգամ առիթ ենք ունեցել կրկնելու, թէ ինչու իսկապէս Ռուսիային հաճելի չէ Թրքա-Հայաստանը ինքնավար ճահանգի վերածելու ծրագիրը, որ Անգլիան առաջարկում է Բ. Գրան։ Սուլթանի հալ հպատակների որ և իցէ գործին միջամտելուց պիտի խոչ տալ Ռուսիան ալսուհետեւ, ինչպէս խոստալած է մինչև ալժմ։ Նիթէ Կ. Պոլսում ալդ բանին հաստատ կերպով համոզւած լինելու պատճառով է, որ ալժմ հնարաւոր են համարում չլուել անգլիական հալսսէրների կատարած ազիտալիալի դէմ, ալդ արդէն սուլթանի և իւր խորհրդականների զիտնալու բանն է։ Յանկանալով հանդերձ մեր (ռուսաց) և Անգլիայի միջև աղրացիական բարի չարաբերութիւնների» չարատեւումը, միևնույն ժամանակ ոչ մի պատճառ չունինք հալոց խնդրի համար միալն մեր չարաբերութիւնները վատացնելու Բ. Գրան հետ։

«Ճատ օգտակար կը լինէր ցուել աչն մարախուղը, որ անգլիական մամուլը անցեալ աշունից սկսած իւր լօղածներով տարածած է անգլո-ռուսական համաձայնութեան վրալ։ Ալդ լօղածներից, հակառակ մեր բոլոր ջանքերին, մինչև ալժմ ոչ մի որոշ եզրակացութիւն չենք կարողացել հաճել։ Ինչպէս երևում է, Անգլիան իւր բարդ շահերի տեսալէտից՝ Ռուսիայից սպասում է մի խիստ «օգտակար» բան. սակալն բոլորովին անչալտ է, թէ բրիտանական կառավարութիւնն ինչ դնով է կամենում գնել ալդ սպասւած օգուտները, որոնք անգլիական ներկալ միւնիստրութեան համար մի տեսակ կէտ նպատակի են կաղմում, և որոնց համար խիստ պէտք է զգացում 1895 թւի պարլամենտական նոտալըջանին»։

Նոյն «Նովոե Վրեմյա»-ն, մի այլ յօդաճում, աւելի ևս հեղ-
նական լեզու է բանեցնում թէ հայերի վերաբերմամբ, և թէ ուղ-
ղակի հայկական ինդրի վերաբերմամբ. և հէնց այն ժամա-
նակ, երբ ամբողջ լուսաւոր աշխարհը սասափով խօսում է տա-
նեակ հազարաւոր հոգու կոտորածի մասին, նա ժամանակ է
գտնում խորհրդածութիւններ անելու Տաճկաստանի հայ կապալա-
ւունքերի և այլ այդ կարգի մարդկանց մասին և դոցա հետ կա-
պել հայերի հայրենասիրութեան գործը: Այդ լրագիրը, մի ակ-
նարկ գցելով Տաճկաստանի անցեալի վրայ, գտնելով որ քրիստոնեա-
ները այդ երկրում հարստանում էին և իրանց քաղաքակրթու-
թիւնը զարգացնում, պնդելով որ Յոյների 1821 թ. ապստամբու-
թիւնից յետոյ հայերը զրաւեցին Թիւրքիայի հաւատը, իրանց ձեռ-
քը գցեցին երկրի Ֆինանսները և դառան բարձր աստիճանաւոր-
ներ, պնդելով թէ 1877—78 թ.թ. ռուս-տաճկական պատերազմի
ժամանակ հայերը Ֆինանսապէս օգնեցին տաճիկ կառավարութեանը,
շարունակում է այսպէս.

Նոքա ցու ունէին պատերազմից չեաող իբրև վարկ ստանալ նոր
կապալներ և նոր ձեռնարկութիւնների իրաւունքներ, բայց Բերլինի վեհա-
ժողովի ժամանակ մի ջաղգացին հրէութիւնը անպիտի մի ուժեղ
ճնշումն դործեց Տաճկաստանի վրայ, որ հայերը կորցրին իրենց արտո-
նեալ զրութիւնը և աղքատացան: Անդլիական, գերմանական, ատտրի-
ական, հոնգարական հրէաները, չանուն իրաւունքների հաւաստութեան և
քաղաքակրթութեան, իրենց ձեռքն են ձգում բոլոր շահաւէտ գործերը
և սկսում են Տաճկաստանի վերջին կենսական հիւթերը ծծել: Մի թէ
զարմանալի է որ դրանով վերաւորւում է հայերի հաւ-
րենասիրութիւնը:

Ֆրանսիական թերթերն ևս, որքան էլ որ նոքա իրանց վրդո-
ված են ցոյց տալիս Սասունի դէպքերի պատճառով, բայց ոչ մի-
այն ինքնավարութեան մասին չեն խօսում, այլ և նոյն իսկ մեծ
ջանք են գործ դնում «սուլթանի բարձր իրաւունքներին չփայլելու»
մասին շեշտելով խօսել: Թող մեր լ'թերցողները յիշեն մեր անցեալ
յօդաճի մէջ ասած բերած (Մուրճ 1894, № 11—12, էջ
1713) Temps-ի խօսքերը. հարկ համարելով հանդերձ եւրոպական
միջամտութիւնը, նա ասում էր

«Եւրոպան չի կարող սուլթանին անհանդստութիւն պատճառել:

Նրան չաչանի է, որ աղ ահագին մարմինը (կերպան) բաւական ծանր է եւ որ նա չի կարող ձգտել աջնալիսի գործերի, որոնք հակառակ են միջազգային իրաւունքին եւ դաշնագրերին: Կատարելապէս հանգիստ լինելով միջամտութեան վերաբերեալ, Բերլինի 61-րդ լողածի մէջ նախատեսուած շարժառիթները մասին, Աբդուլ-Համիդը ոչ մի պատճառ չի ունենալ թուլ չտալու, որ խառն չանձնաժողովը անպաշտան անաչառ քննութիւն կատարի, որը կարող է նախապատրաստել վերացնելու միլեոնաւոր աշխատասէր եւ խաղաղ բնակիչները տրտունջները, որոնք—ալը բնակիչները—ցանկանում են միաջն կեանքի եւ ջորի ապահովութիւն ունենալ ուղղափառների պետի գալիսների տակ:

Ինքնավարութեան մասին ուրեմն ոչ մի խօսք:

Բայց ահա եւ Journal des Débats, մանաւանդ Ֆրանսիական արտաքին քաղաքականութեան համար ալը կարեւոր թերթը իւր դիկտեմքերի 27-ին տպած «Հայաստանի գործերը» խորագրով լողածում, որի մէջ մանրամասն նկարագրելով Սասունի դէպքերի առիթով եղած միջազգային բանակցութիւնները, ուրախութիւն է յայտնում քննիչ չանձնաժողով նշանակելու մասին եւ սակայն վերջացնում է այսպէս՝

«Մնում է միայն սպասել քննիչ չանձնաժողովի եւ դիկտեմքերի դիկտեմքերին: Այն ժամանակ կ'ունենանք հաստատահղեկութիւններ ալն արիւնահեղ դէպքերի մասին, որոնք տեղի են ունեցել Հայաստանի մի մասում: Գուցէ նրանք չափազանցած են: Բայց ինչպէս էլ որ լինի, Անգլիայի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի յոյց տաւած արամադրութիւնը եւ եղած բանակցութիւնները ապացուցանում են, որ բոլոր պետութիւններն էլ հաւասարապէս ցանկութիւն ունեն հսկել Բերլինի դաշնագրի 61 լողածի գործադրութեան վրա, առանց մասնաւոր շահեր որոնելու եւ առանց զիպչելու սուլթանի բարձր իրաւունքներին»:

Ֆրանսիական արտաքին քաղաքականութեան համար ալը երկու կարեւորագոյն թերթերն, ուրեմն, կատարելապէս միատեսակ լիզու են բանեցնում, թէ եւ համոզւած ենք որ, եթէ որ ե իցէ բան կատարելու լինի ինքնավարութեան օգտին՝ նոքա եւ, Новое Вре-мя-ի պէս չեն զլանալ սուլթանի կառավարութիւնը շնորհաւորելու յաջողակ մտքի համար...

Բոլորովին ալ տոն է բանեցնում անգլիական մամուլի մի նշանաւոր մասը:

Անգլիական թերթերը խօսում են այնպէս, որ պարզ երեւում

է որ անդլիացիք նոյն իսկ Բերլինի 61-երորդ յօդածը արդէն հնացած են համարում, և նորանից միմիայն ուզում են օգտել որպէս զի Եւրոպան կատարէ այն, ինչ Թիւրքիան չկարողացաւ կատարել: «Ռէյլի Նիւս»-ի մէջ տպւեց նորա Կ. Պոլսի Թղթակցի մի ընդարձակ յօդածը «Յանձնաժողովը Հայաստանում և նրանից յետոյ», գրւած նոր տոմարով՝ 12 յունւարի և տպւած յիշեալ Թերթի 17 յունւարի համարում: Այդ յօդածի մէջ առաջ են բերւած շատ թանկագին տեղեկութիւններ անգլիական հիւպատոսների զեկուցումներից և թէ ինչ քայլեր են արւած Սնդլիայի և միւս պետութիւնների կողմից՝ ազդելու Բ. Ղաւան վրայ՝ Հայաստանում բարեկարգութիւն մտցնելու համար, և թէ որքան զուր անցաւ այդ բոլորը: Մեր այս յօդածի շատ մեծ ընդարձակութեան պատճառով ցաւում ենք որ, գէթ այս անգամ, չկարողացանք այդ յօդածը ամբողջապէս այստեղ առաջ բերել: Արդ, պատմական ակնարկից անցնելով ներկային և ապագային, նա ասում է:

«Այդ ամենով ապացուցւում է թէ Հայկական ինդիքը չի վճռւիլ մինչև որ չմտցնեն բէֆորմները, որոնք միանգամայն կարողանան երկրին տալ աւելի վաւերացումներ»:

Թղթակիցը, թէև քաղաքականապէս անհնարին է դնում ինքնավարութիւնը «անկախ կամ կիսանկախ պետութիւն կազմակերպելու տեսակէտից», բայց առաջարկում է վարւել այսպէս՝

«Հայաստանից կազմել մի կամ երկու նահանգ, ուր հայերը թերեւ մեծամասնութիւն չեն կազմիլ, սակայն նոքա այնքան բազմութիւ կը լինեն, որ պետութիւնները իրաւունք կ'ունենան պահանջել՝ սրաշտպանել նոցա առանձին կազմակերպութեամբ և օրէնսդրութեամբ: Այն նահանգը, որ ձգւում է Խարբերդից դէպի հարաւ և վանաչ լճից դէպի Արարատ լեռուը և Խարբերդից հիւսիս Բայբերդի այն մեծ մասը, որի բնակիչները տանջւում են տաճիկների անդթութիւններից և անիրաւութիւնից, դոցա թիւը հաւասարւում է Տաճկաստանի արող բոլոր հայերի թւի կէսին»:

Թղթակիցը առաջարկում է այդ նահանգի համար նշանակել

նահանգապետ եւրոպական մեծ պետութիւնների հաւանութեամբ, ինչպէս նշանակում է Լիբանանի նահանգապետը:

Անգլիական ներկայ լիբերալ կառավարութեան ամենամօտ թերթը, ուրեմն, անհրաժեշտ է համարում հայկական ինքնավարութիւնը որոշ չափով և սահմաններով:

Մենք այս բուպէին կը տեսնենք, որ տաճկա-հայկական նահանգները իրանց ներկայ վարչական դրութեան մէջ թողնելը անհնարին է գտնում Անգլիայի առաջին մինիստր լորդ Ռոզբերին, հետեւապէս և Անգլիայի թագուհու ներկայ կառավարութիւնը: Յունւարի 24-ին մեր հին տոմարով (նոր տոմարով փետրւարի 5-ին) բացւեց անգլիական երկու պալատների (պարլամէնտի) ներկայ նստաշրջանը զահական ճառով, որի գրեթէ սկզբում յիշատակութիւն է արւած Սասունի կոտորածի և քննիչ մասնաժողովի մասին: Այդ առիթով լորդերի պալատում խօսեց ի միջի այլոց պահպանողականների պարագլուխ լորդ Սոլսբերի և իբր պատասխան տրան՝ այժմեան կառավարութեան գլուխ լորդ Ռոզբերի, մի պատասխան, որի մէջ նա արտասանեց որ եթէ Սասունի կոտորածի մասին իւր ունեցած տեղեկութիւնները ձշտեն՝

«այն ժամանակ անկարելի է այդ քրիստոնեաներին
« իրանց այժմեան պայմանների մէջ թողնել, որովհետեւ
« եթէ թողնեն՝ նոքա այնպիսի վրէժխնդրութեան կը
« հանդիպեն, որ նոցա ապագայ վիճակը ներկայից
« էլ վատ կը լինի»:

Իւր մեծ կարեւորութեան պատճառով՝ այստեղ լինում ենք զահակալ ճառի, լորդ Ուէլբլի, լորդ Սոլսբերիի և լորդ Ռոզբերիի խօսքերը, ըստ «Դէյլի Նիւս»-ի:

Գահական ճառի մէջ աււած էր.

«Իմ լորդեր և ջէնտլմէններ! Փոքր-Ասիայի մի մասում կանոնաւոր կամ անկանոն թիւրք զօրքերի ձեռքով հայերի դէմ գործւած բռնութիւնների լուրն իմ կառավարութեան հասնելուն պէս՝ ևս հարկաւոր համարեցի, միւս պետութիւնների հետ միասին, ազդարարութիւններ անել Բ. Դաան: Սուլթանը դիտաւորութիւն յայտնեց խստիւ պատժելու այն սպաներին կամ զինւորներին, որոնք յանցաւոր են եղած այդ գործում, և մի կոմիսսիա ուղարկեց տեղն

ու տեղը քննութիւնն անելու համար: Երգրումում հիւպատոսներ ունեցող պետութիւնների նւիրակներն ուղեկից են կոմիսիային»:

Այդ ճառի առթիւ լորդերի պալատում խօսող անձերից լորդ Ուէլլին ասաց՝

«Ես գոհ եմ Հալաստանի վերաբերմամբ պետութիւնների բռնած ընթացքից և կալծում եմ, թէ մեր ազգը կարող է վստահ լինել, որ ամեն զգուշութիւն գործ կը դրի հարցն արդարութեամբ վճռելու համար:

Ահա Սոլսբերի խօսքերը:

«Գալով Հալաստանում կատարած անդթութիւններին, ցաւում եմ, որ չեմ կարող պէտք մի վերջնական բան ասել այն հասարակ պատճառով, որ գահական ճառի ալս նիւթին վերաբերեալ կէտը մեզ չպտնում է, թէ խնդրը ներկալ րոպէիս քննութեան տակ է (sub judge), ուստի անպարմար և գրեթէ անպատշաճ կը լինէր որեւէ կարծիք չպտնել այն առարկաների մասին, որ կոչւած է քննել կոմիսիան և ապա թէ իւր զեկուցումը տալ:

Ես կը ցանկանալի նկատել թէ շատ եմ կասկածում— արդեօք քննութիւնը պէտք եղածին չափ լիակատար կը լինի, եթէ նա զբաղւի միայն սուլթանի սպաներին և կամ զինւորներին վերագրւած չանցանքներով: Եթէ ձիշտ է մեր լսածը, չանցանքներ գործել են շատ մարդիկ, որոնք սուլթանի ոչ սպաներն են, ոչ էլ զինւորները, և չամենայն դէպս պիտում են— թէ և չգիտեմ՝ արդեօք ալ ստոյգ է,— թէ չանցանքները չեն առանձնացած մի կամ միւս կրօնական համայնքի մէջ, ուր որ կատարւել են: Ես ոչինչ չունիմ առարկելու կառավարութեան արած քալի դէմ, ալ միայն վստահանում եմ չիչեցնել նրան, որ նա գործ ունի մի շատ ծանր խնդրի հետ, շատ զւարագրելու հպատակների հետ, մի ազգաբնակչութեան հետ, որ հիմնովին բաժանւած է ցեղի և կրօնի տարբերութիւններով: Եթէ կառավարութիւնն ալք ազգաբնակչութեան մի կողմն անցնի և նրան հաւատ ներշնչէ, թէ նրա պահանջները զրոյց պաշտպանութիւն կը գտնեն, ալն ժամանակ թող նա չմոռանայ, որ ահագին պատասխոտնատուութեան տակ կ'ընկնի, եթէ որ և է լուս արծարծէ, որ մտադիր չլինէր իրագործել: Կան շատ տեսակ քաղաքագիտական հալեացքներ, որոնց կարելի էր հետեւել ալ աղետալի զիպւածում, սակայն մենք ամենավատին հետեւած կը լինէինք, եթէ ալք — արեւելեան ժողովուրդների մէկ մասին մի ազգալիսի զգացմունք ազդենք, թէ հզօր կերպով օգնելու ենք նրա ձգտումներին և պահանջներին, և երբ որ ճգնաժամի րոպէն հասնի՝ բարձի թողի անենք նրան մի քանի սիրտական խօսքերով և թող տանք որ նա ինչպէս գիտէ՝ ալնպէս էլ զիմադրէ իւր գրգռւած հակառակորդի բարկութեան:

Լորդ Ռոզբերի.— Մի լորդներ, ես լիովին համաձայն եմ ազնիւ մարքիզի կարծիքների հետ արտաքին քաղաքականութեան

նկատմամբ: Վստահ եմ որ նա վեհանձնութիւն կ'ունենայ, ասելու թէ ես էլ, երբ հակադիր կուսակցութեան կողմն էի, նրանից պակաս զգուշութիւն չէի բանեցնում, և եթէ նա զգում է, թէ զգուշութեան և լուրթեան կարիք կայ Հայաստանի հարցը քննելիս, ես նրանից էլ աւելի եմ զգում՝ այդ բանը, որովհետեւ այժմ իմ պատասխանատուութիւնն ունի ծանր է, քանի որ խօսում եմ մեր ազգի կառավարութեան անուանով: Ես կ'ասեմ միայն, որ այս խնդրում մենք հնար ունեցանք ամենից աւելի շահակից մեծ պետութիւնների հետ մոտերմական համերաշխութեամբ զործ տեսնելու, այն է՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Իտալիայի: Մեր ամենաջերմ ցանկութիւնն էր՝ հնար տալ Եւրոպայի հասարակաց կարծիքին, որ նա մի ճիշդ գաղափար կազմէ այս աղէտալի լուրերի մասին. և թէպէտ Թիւրքիան մերժեց Իտալիայի մասնակցութիւնը, որովհետեւ սա հիւպատոս չունի Երզերումում, — այնու ամենայնիւ հաւաստի եմ, որ նւիրակներ ունեցող երեք պետութիւններն այնպէս արթուն և ազդու հսկողութիւն կ'անեն կոմմիսիայի վրայ, որ դա անշուշտ ճշմարտութիւնը երևան կը հանէ: (Լսեցէք, լսեցէք):

Արդ՝ եթէ ճշմարիտ է, որ մեր ամենաջերմ համակրութիւնը պատկանելու է Փոքր Ասիայում բնակւող մեր քրիստոնեայ եղբայրակիցներին, որոնք նորերս անտանելի վշտեր են կրել, և, երկրորդ, եթէ այդ լուրերը ստուգւին — երանի թէ ունենայի ձեռիս տակ զէթ մի հատ պաշտօնական զեկուցումն, որ հնար տար ինձ հերքելու նրանց — այն ժամանակ անկարելի է այդ քրիստոնեաներին իրանց այժմեայ պայմանների մէջ թողնել, որովհետեւ, եթէ թողւին, նրանք այնպիսի վրէժխնդրութեան կը հանդիպեն, որ նրանց ապագայ վիճակը ներկայից էլ վատ կը լինի»:

Այսպիսով ուրեմն անգլիական կառավարութիւնը յայտնեց որ նորա համար կայ ոչ միայն Սասունի կոտորածի խնդիր, այլ և «Հայկական խնդիր»:

Ահա այդ հանգամանքին պէտք է վերագրել, որ մեր անցեալ յօդաճում հաղորդած Բ. Դուան դիտաւորութիւնը՝ տաճկա-հայկական նահանգներում առանձին ինքնավարական վարչութիւն մտցնել,

խօսարու չքնեց և որ այդ մասին այժմ իմացւում է որ սուլթանը չանձնել է Կարաթէոյորի փաշին՝ ներկայացնել իրան մի ծրագիր Հայաստանի ինքնավարութեան:

Պէտք է սպասել որ մինչ «Մուրճ»-ի գալ համարը այդ մասին աւելի որոշ զործողութիւններ տեղի ունեցած կը լինեն:

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

ԶԱՆԱԶԱՆ 1 ՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ սորանով չափնում է իւր խորին շնորհակալութիւնը աչն բոլոր անձերին, որոնք, ամսագրիս 7-դ տարեշրջանը մտնելու առթիւ, չնորհաւորել են հեռւից նամակով, հեռագրով կամ այցեստմով:

«ՄՈՒՐՃ»-Ի ՆԵՐԿԱՅ ՀԱՄԱՐԸ լոյս է տեսնում իւր ժամանակից տասը օր աւելի ուշև սովորականից աւելի մեծ (196 էջ): Ուշացնելու պատճառը ներկայ համարի մէջ տպւող «Հայոց խնդրի նորագոյն զարգացումը» լօղւածի արտասովոր ընդարձակութիւնն է:

Այդ լօղւածին, որը ըստ իւր հերթին շարունակութիւն է անցեալ դեկտեմբերին տպւած լօղւածի, մի ամբողջութիւն տալու համար, մեզ հարկաւոր էր սպասել եւրոպական տեղեկութիւնների՝ մինչ չունաւրի վերջերքը կատարւած կարեւոր անցքերի մասին, և նկատի ունենալով աչն բացառիկ նշանակութիւնը որ ստացել է հայկական խնդիրը, մենք աշխատել ենք չափնի սխտեմով ներկայացնել և պարզարանել մեր ընթերցողներին աչն բազմաթիւ և բազմակողմանի ֆակտերը, որոնք վերաբերում են պետութիւնների գործողութիւններին, հանրաւիւ կարծիքի արտապատութիւններին, կարեւորագոյն թերթերի բռնած դիրքին և այլն: Դորանով ամսագիրը կատարում է իւր դերը, որ սպասելի չէ օրաթերթերից, մանաւանդ հայկական օրաթերթերից, որոնց սակաւն մենք մեծապէս պարտական ենք աչն թարգմանական դերի համար օտար թերթերի նկատմամբ, որ նոքա կատարում են, թէև ոչ հաւասար չաջողակութեամբ և լիակատարութեամբ, և որից մենք օգտւում ենք մեր լօղւածի համար:

Այդ լօղւածի ընդարձակութեան պատճառով մենք ստիպւած եղանք մի շարք արդէն շարւած լօղւածներ կամ իսպառ անտիպ թողնել և կամ նոցա տպագրութիւնը չհրաժեշտել:

Այսուհետև մենք ամեն ջանք դրած կը դնենք «Մուրճ»-ի համարները ամեն ամսաւ վերջը հասցնել:

«ՄՈՒՐՃ»-Ի ներկայ 1895 թ. ր ա մ ա ն ո Ր գ ա գ Ր Ո Ւ Ն Ը, համեմատած

անցեալ տարիների հետ, զգալի չափով աւելի առաջ է: Մինչ չունաւրի վերջը «Մորճ»-ին գրած են այս տարի 38 սովոս աւելի քան անցեալ տարի նոյնպէս մինչև չունաւրի վերջը: Եթէ նաև փետրուար և չաջորդ ամիսներին բաժանորդ գրուողների թիւը այս տարի նոյն համեմատութեամբ աւելի լինի քան ինչ գրեցին անցեալ տարւոյ փետրուարին և չաջորդ ամիսներին, աչն ժամանակ «Մորճ»-ը մօտ կը լինի զգալի գեֆիցիտ չունենալու գրութեանը: Եւ դեռ անցեալ 1894 թւականը մօտաքի կողմից գերազանցեց նախորդ չորս տարիներին:

«ՄՈՒՐՃ» ՆԻՒՐՈՂՆԵՐ: 1895 թւակ. համար: (Սկիզբը տեսէք «Մորճ» 1894 № 11—12): Օրիորդ Գալանէ Շահնազարեանց (Թիֆլիսում) 4, Լազոդեիսի պահեստի հետեակ գնդին (խմբագրութեան ընտրութեամբ). — պր. Արսէն Կրասիլնիկեան (Բաքուում)՝ 5) Շուշուայ Զաչոց բարեգ. ընկ. ճիւղի գրագրանին. — պր. Մինաս Շորշորեան (Մոսկուայում)՝ 6) Գորալ պահեստի հետեակ գնդին, 7) Նոր Բալազէղի հետեակ գնդին Երեւանում (խմբ. ընտրութ.). պր. Յովհաննէս Բաղդուկեանց (Թեւաւում)՝ 8) Թեւաւի հաչոց եկեղ.-ծխական դպրոցին. պր. Ալեքսանդր Մամաջանեանց (Ղզլարում)՝ 9) Ղզլարի հաչոց տղայոց դպրոցին. պ. Եղիա Տէր-Խաչատրեան (Թիֆլիսում)՝ 10) Աղա գիւղի հաչոց ծխական ուսումնարանին:

ՆՈՐ ԲԱՍՍՆՈՐԴՆԵՐԻՆ: Նորա, որոնք անցեալ տարի բաժանորդ չեն եղած և այս տարի նոր բաժանորդ են գրում Մորճին, անշուշտ մի պակաս կ'ըզան, գտնելով այս առաջին համարի մէջ անցեալում սկսած չղաժների շարունակութիւններ: Սակայն այդ մեր մեղքը չէ. չարմարեցնել աչնպէս, որ միեւնոյն տարում սկսած գրածքները վերջանան — այդ մի անհնարին բան է: Միմիաչն արհեստական կերպով նիւթերը ընտրելով և տպելով կարելի է չաջողցնել որ ոչ մի գրածքի շարունակութիւն չմնալ չաջորդ տարւան: Ալդպիսով մենք վարւած կը լինէինք նիւթերի բնական հոսանքի դէմ և ստիպւած կը լինէինք նոյն իսկ անկարևոր գրածքներ տպել ի հաշիւ լաւագոյն գրածքներ: Նոր բաժանորդներին, այդ պատճառով, խորհուրդ ենք տալիս, ալժամ շարունակող գրածքների սկիզբները կարդալու համար գիմել աւելի հին բաժանորդներին, եթէ միայն նոցա միջոցները չեն ներում «Մորճ»-ի 1894 թւականի համարները ձեռք բերել:—

ՄՈՒՐՃԻ ՏԻՍՄԸ:—Մորճը, որպէս ցատնի է, առաջին տարւանից սկսած, կրկնելով նոյնը ամեն տարի, խոստացած է եղել տալ իւր բաժանորդներին 8-ից մինչև 10 թերթ ամեն ամիս, որ նոյնն է թէ սկսած 128-ից մինչ 160 էջ և կամ տարին 1536 էջից մինչ 1920

էջ և կամ միջին հաշուով 1728 էջ։ Այժմ, երբ Մուրճը բոլորել է վեց ծանր տարեշրջաններ, հետեւեալ եզրակացութիւններն ենք դուրս բերում մեր ցայժմեան տւածից՝ համեմատելով մեր արած խոստումները հետ։

1. Մենք տւել ենք միշտ աւելի քան մեր խոստացածի փոքրագոյնը, որովհետեւ Մուրճը առանց բացառութեան ամեն տարի տւել է աւելի քան 1536 էջ։

2. Մենք տւել ենք, բացառութեամբ մի տարւալ, միշտ աւելի քան մեր խոստացածի միջինը, որովհետեւ, բացառութեամբ 1891 թւականի, բոլոր մնացած հինգ տարիներում տւել ենք ամեն անգամ աւելի քան 1728 էջ։

3. Մենք տւել ենք երկու տարիներում աւելի քան նոյն իսկ մեր խոստացածի մեծագոյնն էր, որովհետեւ մեր խոստացածի մեծագոյնն է եղել 1920 էջ, մինչդեռ 1889-ին և 1893 ին մենք տւել ենք դորանից աւելի։

4. Մենք տւել ենք բոլոր վեց տարիներում միասին առած 1788 էջ աւելի քան մեր խոստացածների փոքրագոյնը, և տւել ենք 750 էջ աւելի, քան մեր խոստացածների միջինը։ Մեր խոստացածի փոքրագոյնի չափով Մուրճ-ը վեց տարիներում պիտի կազմէր 9216 էջ, միջին չափով՝ 10.344 էջ, մինչդեռ Մուրճ-ը այդ վեց տարիներում տւեց 11094 էջ, որ արդէն չափ մօտ է 11.100-ի։

5. Կարող ենք աւելացնել, վերջապէս, որ «Մուրճ» ը այդ նոյն վեց տարիներում ունեցել է դեֆիցիտ զգալի չափով աւելի ռուբլի քան նորա վեց տարիների էջերի թիւն է...

«ՍԱՍՈՒՆ» լօգոածը պ. Սէլանի, որ սկսեց տպագրւել «Մուրճ»-ի 1894 թ. № 10-ից, կը շարունակւի տպագրւել հաւանականօրէն մինչ մարտի համարը։ Սէլանի այդ աշխատասիրութիւնը, իւր վրա ունի է դարձրել նաև հալոց, մանաւանդ տաճկա-հալոց, պատմութիւնով զբաղւած անձերին։ Այդ լօգւածի «Մուրճ» ում տպագրւելու համար մենք պարտական ենք սիրալիբ առաջարկութեանը պ. Ստեփան Լիւիցեանի, որի մօտ էր գտանւում ձեռագիրը։

ԼԵՐՄՈՆՏՈՎԻ «ԳԵԼ» պոէմայի մասին «Մուրճ» 1894 № 11—12 միացեալ համարներում տպւած պ. Յովհ. Դնունու կրիտիկական լօգւածը, ինչպէս այդ ակներև է կացուցանում Յ. Ճ. Արճապանքում առ 22 լուսն. № 9, գրած էհետևողութեամբ Գ. Կոնդրի «Новая Любовь» գրածքի (Психологический анализ трагической поэмы М. Ю. Лермонтова Демонъ).

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՐ, Նոր տարւաւ օրը շնորհաւորելու համար Նորին Վեհափառութեանը երկրիս կառավարչապետի կողմից՝ եկել էր տօրա աղիւտանտը: Եւքը կառավարչապետը ալ օրն ընդունելութիւն չունէր, տկարութեան պատճառով: Հիւանդութիւնից կազդուրւած պ. կառավարչապետը ալցելութեան գնաց Վեհափառի մօտ չունւարի 3-ին օրւալ $1\frac{1}{2}$ ժամին:

Նոյն չունւ. 1-ին օրւալ ժամ $2\frac{1}{3}$ -ին Նորին Վեհափառութեան շնորհաւորելու եկաւ Վրաստանի էքզարքոսը: Նորին Վեհափառութիւնը չաջորդ օրը. չունւ. 2-ին, օրւալ ժամ $1\frac{1}{2}$ -ին փոխադարձ ալցելութեան ղնաց Նորին բարձր սրբազնութիւն ս. էքզարքոսի մօտ, որից չետոյ Վեհափառը ալցելեց Սիոնի մալր-եկեղեցին:

ՎԵՀ. Կաթողիկոսը փետրւ. 6-ին մեկնեց Թիֆլիսից դէպի Բաթում, աջնտեղից Նոր Նախիջևան ուղևորւելու համար:

ՆՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ. Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճել է 12-ին սոյն չունւարի արքութիւն շնորհել Կ. Պոլսի Նորընտիր պատրիարք Իզմիրլեան Մատթէոս եպիսկոպոսին և չունւ. 14-ին՝ Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանցին:

ԿԱՐԱՊԵՏ ԵՊ. ԱՅՎԱԶԵԱՆԸ, Ղարաբաղի թեմի առաջնորդը կանչւած է Վեհափառ Կաթողիկոսի մօտ. Վեհափառը թեմի կառավարութիւնը չանձնել է Պանձակի չաջորդ Գարեգին վարդապետ Սաթուհեանին:

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ, Վեհափառ Կաթողիկոսի առաջարկութեան համաձայն, Թիֆլիսի թեմի դպրոցների տեսուչ Մեսրոպ քահանայ Մեքեան չունւարի 13-ին մի տեղեկագիր է ներկայացրել ուր, ի միջի ալլոց, կան հետեւալ հետաքրքրական թւանշանները և զիտողութիւնները:

1894—95 ուսման տարեշրջանում թեմի դպրոցների ընդհանուր թիւն է 89. ուսուցիչների և ուսուցչուհիների թիւը 221, որոնցից կրօնուսուցիչներ 21, երգեցողութեան ուսուցիչներ 8, ձեռագործութեան ուսուցչուհիներ 10, ազգային դպրոցներում ուսած և չետոյ պետական դպրոցներում աւարտած կամ քննութեամբ ուսուցչական ցէնզ ստացածներ՝ 27, պետական դպրոցներում ուսած և ցէնզ ունեցողներ 64 և ցէնզ չունեցողներ 91:

Ուրեմն կրօնի, երգի, ձեռագործութեան և միւս առարկաների դասատուութեան իրաւունք ունեցողների ընդհանուր թիւն է 130, որից 61 հոգի զետեղւած են Թիֆլիս քաղաքի 16 դպրոցներում և Պանձակ, Ախալցխա, Ախալքալաք քաղաքների 9 դպրոցներում. մնացածները միւս քաղաքների կամ գիւղաքաղաքների դպրոցներում:

Գիւղական և միջոց չունեցող մօտ 30—35 դպրոցներ չունեն ցէնզով և ոչ մի ուսուցիչ:

Զհաշուելով կրօնի, երգի և ձեռագործութեան ուսուցիչներին, իսկական ցէնզ ունեցողներին թիւը 91 է. սրանցից միայն 27 համապատասխան են հաշոց դպրոցների ծրագրին. մնացած 64-ը կարող են միայն ուսուցիչ լինել և թւարանութիւն դաս տալ: Այդ 27 հոգուց 12 ուսուցչուհի են, 15 ուսուցիչներ: Վերև ցիշած 64-ից 33-ը ուսուցչուհիներ են, 31 ուսուցիչներ:

Տեղեկագրի մէջ նկատողութեան է առնւած, որ քաղաքի հարուստ դպրոցները կը գրաւեն բոլոր ցէնզով ուսուցիչներին ի վնաս աղքատ գիւղական դպրոցների, որ ալժմեան ցէնզ ունեցող 91 ուսուցիչները և ուսուցչուհիները բաւական չեն նոյն իսկ Թիֆլիսի, Գանձակի, Ախալցխայի, Ախալքալաքի 25 դպրոցներին:

Վեհափառ Կաթողիկոսը չափանել է, որ հեռագիր պէտք է ուղղի միւս թեմական տեսուչներին, որ նրանք էլ ներկայացնեն տեղեկագրեր:

ՇՈՒՇԻԱՅ ԴՊՐԱՆՈՑԻ ՏԵՍՈՒՉ, համաձայն վեհ. Կաթողիկոսի կոնդակի, նշանակւած է պ. Եղիշէ Մաղաթեան, որը երեք տարի առաջ նոյնպէս տեսուչ էր նոյն դպրանոցում՝ երկու տարի շարունակ. դորանից չետոյ նա վարել է ուսուցչական պաշտօններ Ներսիսեան դըպրանոցում, ապա Գէորգեան ճեմարանում և ալս ուսումնական տարում մինչ լուսնարի վերջը՝ կրկին Ներսիսեան դպրանոցում:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՔ ԵՒ ՐԱՅՅԻՆ, Այրի տիկին Բաֆֆին հրատարակեց տիպական հաշ թերթերում մի նամակ, որի սկիզբը հետևեալն է.

«1884 թ. Բաֆֆիի լօբելեանի առթիւ Վանի հաշ երիտասարդութիւնը պատրաստել էր արծաթեալ թանաքաման ու մի արծաթեալ գրիչ. բալց զանազան հանգամանքների շնորհիւ մինչև հիմա չիշեալ նւէրը մնում էր Վանում: Սալմաստի թեմական տեսուչ պ. Ա. Աւետիսեանի հոգատարութեամբ այդ իրերը ձեռք են բերւած Վանից Սալմաստ, և ահետեղից նա ուղարկել է Ս. Էջմիածին, և ալս երկու օրս ստացանք պ. Խորէն Խրիմեանի ձեռք: Յիշեալ կաղամարը նուրբ, գեղեցիկ ճաշակով է շինւած, որի շրջաններից քարշ է ընկել երկու շղթալ... մի երեսի վրա փորագրած է ծաղկազարդ տառերով «Վանի հաշ երիտասարդներից Բաֆֆիին, լօբելեանի առթիւ», միւս երեսին փորագրած է՝ «1884 թ. փետրւար 16»:

ՆՈՐ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՆԵՐԻ Թիֆլիսի օրաթերթերի չափաւարուած թիւներէից և լուրերից իմացանք, որ ղեկավարների վերջերքը Թիֆլիսում լոյս տեսաւ «Հորիզոն» անունով հրատարակութեան առաջին գիրքը և որ ներկայ 1895 թւականից սկսելու է հրատարակել Մոսկուայում «Խօսք» անունով մի վեցամսեալ հանդէս: Այդ առթիւ «Մշակ» լրագրի սոյն տարւալ № 7-ում տպւեց «Մեր ոլթերը չլա-

տում ենք» խորագրով և «Բ. Մատ.» ստորագրութեամբ շատ բարի մտքով գրած մի չօղւած, ուր չօղւածագիրը խորհուրդ է տալիս վեց-ամսեալ գրական հանդէս հրատարակողներին կամ միանալ «Մուրճ»-ի հետ և կամ եթէ ոչ՝ իրար հետ միանալ։ «Այն ժամանակ մենք կ'ու-նենանք քիչ, բայց ընտիր հրատարակութիւններ՝ խմբած ոգեերով լաւ մշակւած»։ Որքան բարի մտքով է գրւած այդ չօղւածը, այն-քան էլ, կարող ենք ասել, նա լաւ չի մտածւած։ Մեր միտքը այդ մասին կը չափոնենք «Մուրճ»-ի № 2-ում։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ։ Յունւարի 12-սն Թիֆլիսում առաջին անգամ ներկա-լացրին հանգուցեալ Պարոնեանի «Բաղդասար աղբար կամ Ապա-հարզան» թատրոնական պիեսը, մեր բեմին չարմարեցրած պպ. Սար-դարեանի և Վրոյրի աշխատութեամբ։ Պիեսը գրւած է երգիծաբա-նական ոգով, մոլիւիական ուղղութեամբ։ Բաղդասար աղբարի դերը կատարեց պ. Վրոյր մեծ հմտութեամբ, գերազանցելով ամեն ոպասելիք։

Յունւարի 22-ին բեմ գրեց Շիլլէրի «Աւագակները», որի մէջ Ֆրանց Մօօրի պատասխանատու դերը կատարեց պ. Լ. Մանուէլեան, կարլ Մօօրի դերը՝ դերասան պ. Պետրոսեան։ Հասարակութեան ուշադրութիւնը բացառապէս դարձրած էր դէպի պ. Լ. Մանուէլ-եանը, որը, իբր սիրող, նոյն դերում հանդէս էր եկած մի տարի ա-ռաջ մի գիւղական փոքրիկ բեմի վրայ, Վաղարշապատում։ Պ. Մա-նուէլեանը խաղաց իւր դերը ոչ այնքան որպէս դերասան, որքան իբր նուրբ գրականագէտ, որը ուսումնասիրած էր Ֆրանցի տիպը սորա բոլոր նրբութիւններով։ Եւ իբրեւ այդպիսին՝ պ. Մանուէլ-եանցը մեծ լաջողութեամբ անցկացրեց իւր դերը, իսկ դատելու համար նորա գերասանական ընդունակութիւնների մասին, մենք մեզ չենք թույլ տալիս ալօմ արդէն այն պատճառով, որ նա առաջին անգամ խաղում էր մի մեծ բեմի վրայ։ Մենք սպասում ենք նորան տեսնել երկրորդ անգամ նոյն դերում։

ՆԻԻՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ. Իշխանուհի Մարիամ Բէգթաբեգեան, ծնեալ Զի-թախեան, նւիրեց Յունւարի 1 ին վեհափառ կաթողիկոսին 1000 ու-լոգուտ տաճկա-հալ գաղթականներին։

Բաքւեցի հանգուցեալ Բ. Մելիքեանի աջին, տիկին Շողակաթ Մելիքեան, ի չիչատակ իւր հանգուցեալ ամուսնու նւիրել է էջ-միածնի ձեմարանին 12000 ուրբլի, որպէս զի այդ տոկոսով սաներ պահեն։

Նոյն տիկին Շողակաթ Մելիքեան նւիրել է վեհափառ կա-թողիկոսին 2000 ուրբլի։

Նղբ. Թումանեանների, Թաւրիզում, 1894-ի դեկտ սկզբին նւի-

րեցին 500 թուման (մօտ 1500 ռ.) թաւրիզի Բերդաթաղի և 500 թուման ևս Լիւլապի ուսումնարաններին:—

Նոյն թումանեանցներից պ. Գ. թումանեանց իւր ծախքով լանձն է առել թաւրիզի Լիւլաա թաղում օրիորդների դպրոց շինելու:

Հանգուցեալ տիկին Եւփեմէ Սուրենեանի զաւակները, Թիֆլիսում ներկալ չունւարին նւիրեցին 1) 200 ռ. Վեհափառ Հայրապետին, 2) 100 ռ. Կովկասի Հաջոց Բարեգ. Ընկերութեանը, 3) 100 ռ. Թիֆլ. հայ հոգևորականների ապահովութեան գանձարանին, 3) 50 ռ. Թիֆլիսի Հայուհեաց բարեգործ. ընկերութեան:

Բուդաղեան եղբայրներ (Բաքու), նւիրեցին չիտուն (50) հաղար ուռլի, որով Բաքուում պիտի բացւի ձրի ընթերցարան, ժողովրդական ուսումնարան և տեղական հիւանդանոցին կից կանանց բաժին:

Ալրի տիկին Մարիամ Պապովեան իր հանգուցեալ ամուսնու Փրիդոնի վիշտակի համար նւիրել է 10,000 ռուբլի Յիսնւալի հայոց դպրոցին, որից 4000 ռ. նոր շէնք կառուցանելու, 6000 ուլ մի անշարժ կալք գնելու դպրոցի պահպանութեան համար:

ԱՐՀԵՍՏԱՌԱՐԱՅ «ՄՈՒՐՃ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ, որի կանոնագիրը տպագրեցինք անցեալ նոյեմբեր-դեկտեմբերի միացեալ համարի մէջ, մեր հաստատ տեղեկութեան համաձայն՝ հիմնւել է 26 յունիսի 1894, ունի Թիֆլիսում ներկայումս արդէն 22 անդամ, որոնց ցալթման խնայողութիւնները հասնում են մօտ 300 ռուբլու: Կարեոր է որ այդ ընկերութիւնը ունի արդէն մի ձիւղ Բալախանում, որը հաստատւած է անցեալ դեկտեմբերին 13 արհեստաւորների մասնակցութեամբ. այդ թիւը հարկաւ կ'աճի:

ՌՈՒՍԱՅ ԳՐԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՒ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ, Թագաւոր Կալսր Նիկոլայ II, չունւարի 14-ին Բարձրագոյն հրամայել է աչսուհետե ամեն տարի պետական գանձարանից 50.000 ռուբլի չառկացնել՝ օգնելու համար գիտութիւնների, դրականութեան և պարբերական մամուլի ասպարէզներում գործողներին և նոցա աչրիններին ու որբերին, ըստ որոյման Գիտութիւնների Ակադեմիայի նախագահի:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ՍԻՆԴԻԿԱՏ: Մինչև անցեալ 1894 թ. դեկտեմբերի վերջը Ռուսաստանի լրագիրներին և ալ և ալ հիմնարկութիւններին հեռագրաւորբ հայթալթողն էր «Հիւսիսային գործակալութիւնը» (Объединённое агентство), որից սակայն շատ դժգոհ էին: Անցեալ տարի միաք էր չղացել Պետերբուրգի և Մոսկւայի լրագրական խմբագրութիւնների մէջ միանալ ի մի ընկերութիւն (սինդիկատ), որպէս զի այդ սինդիկատը իւր վրայ առնի հեռագրական գործակալութիւնը

ամբողջ Ռուսաստանի համար: Այդ միտքը իրագործեց և ալժմ Հիւսիսային գործակալութեան տեղ գործում է չլեւալ ընկերութիւնը «Росси́йское телеграфное агентство» (Ռուսական հեռագրական գործակալութիւն) անունով:

ՄՈՒԼԱՆԻ ԱՆԱՊԱՏՆ ոռոգման գործը: Երկրագործութեան և պետական հողերի մինիստրութեան կողմից սկսելու են գիտական հետազոտութիւններ ինժեներական և գիւղատնտեսական բնաւորութեամբ, Գուռ և Արաքս գետերի հովիտներում, Բաքալ Նահանգի սահմաններում, Մուղանի անապատի (մինչ 600.000 գեսեատին) ոռոգելու կարելիութեան խնդրի համար: Այդ նպատակով մինիստրութիւնը կազմել է մի խումբ ինժեներների, տեխնիկների և ագրոնոմների, գլխաւորութեամբ ինժեներ Մ. Ֆ. Ռըպէլի: Խումբը ներկայ լուծարի սկզբին պիտի սկսէր իւր գործը, Խմբի մէջ են Մ. Ս. Նաւրոցկի, Ֆ. Ի. Պիրոցկի, Իոնկին և ուրիշներ:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԵՎԱՄՈՒՏՐ: Անդրկովկ. երկաթուղու վարչութեան մէջ նորերս ստացւած հաշիւց, որ կազմել է ուսաց երկաթուղիների դեպարտամենտը, երևում է, որ Յունւարի 1-ին 1894 թ. մինչ 1-ն Սեպտեմբերի նոյն 1894 թ., Անդրկովկասեան երկաթուղին (Բաթում և Փոթի-Թիֆլիս-Բաքու) ստացել է՝ ճամբորդական տոմսերի վսծառուովից 955,429 ռ., ապրանքներ փոխադրելու համար՝ 9.302.241 ռ. և ապրանքները բեռնելու վարձ եղել է 4.284-896 ռուբլի: Պետական երկաթուղիների մէջ Ռուսաստանում Անդրկովկասեան երկաթուղին, իւր երկարութեան համեմատութեամբ, եկամտի կողմից առաջին տեղն է բռնում:

ՎԻԵՆՆԱՅԻ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՆ» իւր ալս տարւալ լուծարի համարի մէջ «ս է մի բառ» չի գետեղել հաշկական գործերի մասին, և ոչ իսկ իւր քաղաքական տեսութեան մէջ:

ԻՇԽ. Մ. Ի. ԽԻԼԿՈՎ նշանակւած է հաղորդակցութեան ճանապարհների մինիստր:

ԳՐԻԲՈՆԵՌՈՎԻ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԸ: Գրիբոնեդովը հեղինակն է «Խելքին պատուհաս» (Горе отъ ума) գրամալի, որը ամենանշանաւոր գրամատիկական գրւածքն է ուսաց գրականութեան մէջ: Ծնեց 1795 թ-ին լուծարի 4-ին, սպանեց Փեհրանում 1832 թ. լուծարի 30-ին: Ներկալ տարւալ լուծարի 4-ին լրացաւ մեծ գրողի ծննդեան հարիւրամեակը, որ և սօնեց ամբողջ Ռուսաստանում: Գրիբոնեդովը թաղւած է Թիֆլիսում, վրաց Սբ. Դաւիթ եկեղեցու բազում, ուր և հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց: Հանդիսին ներկալ էին Նաւ Վեհափառ. կաթողիկոսի ներկայացուցիչները:

ՊՐ. ԲԱՇԻՆՋԱՎԵԱՆԻ Նկարահանդէսը Բաքում, սկուեց նոյեմբերի 23 և

վերջացաւ. դեկտ. 11-ին կլուրի դահլիճում: Ի ցոյց դրած էին 24 նոր նկարներ: Այցելուների թիւը հասաւ 1,400, մուտքը արժէր 30 կոպ., աշակերտների համար 15, չքաւոր աշակ. ձրի: Ծախւեցին 15—16 նկարներ: Պր. Բաշինջաղեանը ալժմ մասնակցելու է САНКТ-Петербург. Общество художников-ի կոչւած ընկերութեան սարքելի պատկերահանդիսին, որ կը բացւի փետրւ. 13-ին, Գրտութեանց Ակադեմիայի շինութեան մէջ:

Գր. ՌՈՒԻ և ԲԵՐԻՆԳԻ հակադիֆուսերիտային սիճուկներ ստացւած են Թիֆլիսում:

ԵՂԱՆԱԿԸ ներկայ 1895 թ. չունար ամսին Թիֆլիսում մօտ էր վար. նախնին տաք եղանակներին: Ձիւն եկաւ միայն 31-ին չունարին: ՀՐԳԵՆ ԲԱՔԻՈՒՄ. Յունարի 30-ին ալրւեց Բաքում Վալանթարեանի պատժը երեսնաչափ խանութներով, որոնցից փոքրագոյն մասը միայն ապահովացրած էր: Շինութիւնը ինքը ապահովացրած էր 200.000 ռուբլով:

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՈՒՇԱԿԻՈՒԹԵԱՆԸ! Հալոց Բարեգործական ընկերութեան վերջին ընդհանուր ժողովի արիթով «Մուրճ»-ի Նոյեմբեր ու դեկտեմբերի միացեալ համարում (№ 11—12), լուրերի մէջ, չափանել էինք մեր սպաւորութիւնը աչգ ժողովից և նկատողու. թիւններ էինք արել թէ արձանագրութիւններ կազմողի, թէ ընդհանուր ժողովի նախագահի, թէ խորհրդի մի անկանոն վարւողութեան և թէ ընդհանուր ժողովի մատին: Ինչ վերաբերում է չափաւոր ընդհանուր ժողովի նախագահին, որ բժշկ. պ. Բաղրատ Նաւասարդեանն է, ահա թէ ինչ էինք ասել. «Ժողովի նախագահը, ըստ երևոյթին, հէնց առիթների է սպասում՝ ժողովի աչս ու աչն անդամի հետ կուր բռնելու, դիտարեալ և անտեղի խօսքերով լուրւմներ առաջացնելու թէ քննադատող անդամի և թէ ժողովի մէջ և աչգպիսով կերպարանափոխելով անդամների պարզ և օրինաւոր առաջարկութիւնները՝ կիսա-սկանդալներին»:

Անշուշտ, մեր աչս խօսքերը խիստ և նոյն իսկ շատ խիստ էին: Սակայն մենք աչգ տողերը կշռել էինք խղճի և համոզմունքի կշռով Բժշկ. Նաւասարդեանցի նախագահական ձևերի հետ մենք առաջին անգամ չէինք ծանոթացել դեկտեմբերի 25-ի նիստում. և երբ աչն տողերը գրում էինք—մենք ի նկատի ունէինք նաև նախկին ժողովի ներում պատահած դէպքերը, որոնց մասին, սակայն, մենք ոչ մի չիշատակութիւն չէինք արել «Մուրճ»-ի մէջ:

Ալժմ բժշկ. պ. Նաւասարդեանցը բերում է և դնում մեր ձեռքը նաև մի գրաւոր վկայութիւն, ապացուցանելու համար որ նա իբրև նախագահ ընդհանուր ժողովների, ոչ միայն դիտաւորեալ և

անտեղի խօսքերով ընկերութեան քննադատող անդամի և ժողովի մէջ չուզումներ առաջացնելու տրամադրութիւններ և ընդունակութիւններ ունի, ալ և դիտաւորեալ ստեր խօսել և զրպարտութիւններ անել գիտէ և որ նա իւր աչդ չատկութեամբ նոյն խկ հռչակել է կամենում: Կարդալով մեր նկատողութիւնը «Մուրճ»-ի մէջ, բժշկ. Նաւասարդեանցը, Կովկասի Հալոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովների նախագահը, մի նամակ է ուղղում ամսագրիս խմբագրին, թւագրած 25 չունւարի 1895 թ., հետեւեալ ծանօթութեամբ՝ «Եթէ լօժար էք, կարող էք տպել Ձեր օրգանի մէջ»: Այդ զարմանալի նամակը սկսում է այսպէս.

«Ես Ձեզ հասկանում եմ, ժողովին Դուք հարցրիք աչն աստիճանի զալացման, որ նա ստիպեց արտաքսել Ձեզ ժողովից, աչն, բալց Դուք այսպէս... չպէտք է ռիս առնէիք՝ հաչհոչելով և ժողովին և նախագահին և քարտուղարին... և ալն:

Կարդալով այդ տողերը, մենք մնացինք աչն հարցի առաջ՝ առողջ դատողութեան տէր մարդու հետ դործ ունենք արգեօք, թէ մի խանգարած ուղեղի տիրոջ հետ: Ուրեմն Հալոց Բարեգ. ընկերութեան ընդհանուր ժողովի նախագահ բժշկ. պ. Բ. Նաւասարդեանցն չանդգնութիւն ունի մասնաւոր նամակներով ընկերութեան անդամներին չաչտնել մի բան որ չի եղած, ստեր հաղորդել, զրպարտութիւններ անել քանի որ ալիսիսի դէպք բնաւ չի եղած: Մենք ասել էինք, թէ պ. Բ. Նաւասարդեանցը իւր վարմունքով, իբր նախագահ ընդհանուր ժողովի, անդամներին և ժողովին զրգուում է և կիսա-սկանդալներ է ստեղծում. խկ աչթմեզ ուղղած նամակով նա ապացուցանում է որ կիսա-սկանդալների չէ դիմում, ալ ուղղակի սկանդալների, աչկարա ստեր գրելով և զրպարտութիւններ անելով: Մենք կ'սպասենք և կը տեսնենք թէ Հալոց Բարեգործական Ընկերութիւնը Կովկասում ինչ դատաւճիռ կը կարդալ իւր ընդհանուր ժողովների զրպարտող նախագահի վրա: Միաժամանակ չաչտնում ենք, որ պ. Բ. Նաւասարդեանցի վերը չիշած նամակը տեսնելու և կարդալու համար «Մուրճ»-ի խմբագրատան դռները բաց կը լինեն Հալոց Բարեգործական ընկերութեան բոլոր անդամներին համար, իցէ թէ նոքա կամենան իրանց աչքով տեսնել Բ. Նաւասարդեանցի զրպարտախօսութեան գրաւոր գովումէնտը:

ՅՐԱՆՍ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ, հրաժարական տւած Կազմիր-Պերիէ'ի, տեղ ընտրեց Ֆելիքս Ֆոր:

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԸ, 15 չունւարի հեռագրի համաձայն, կազմակերպւած է այսպէս. Ռիբօ-մինիստրների խորհրդի նախագահ և Ֆինանսների մինիստր, Տրարիէ—տրդարտողատեութեան

մինիստր, Հանոստ՝ արտաքին գործերի, Լէյզ-Ներքին գործերի, Պուանկարէ՝ ժողովրդական լուսավորութեան, դեներալ ժէմոն-գին-ւորական մինիստր, ծովապետ Վեսնար՝ ծովային մինիստր, Դիւպլէք Դիւտէման՝ հասարակական աշխատանքների, Լըբոն՝ առևտրի, Գաղօ՝ երկրագործութեան, Շոսան՝ կոլոնիաների մինիստր:

ԷՆԹԵՐՅԱՍԻՐԱՅ ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ ԹԱՌԻԶՈՒՄ,

Մենք ստացանք փշեալ ընկերութիւնից հետեւեալ գրութիւնը:

Մեծապատիւ պարոն խմբագիր «Մուրճ» ամսագրի.

Մի տարուց հետէ Թաւրիզում գոչութիւն ունեցող «Ընթերցասիրաց գրադարանական ընկերութիւնը», որի նպատակն է ժողովրդի չափապէս չքաւոր զստակարգի մէջ ընթերցասիրութիւն ստարածել, ներկայ չունարից բաց է անում Թաւրիզում ժողովրդական ձրի գրադարան:

Ուստի ընկերութեանս վարչութիւնը սորանով զիմում է արգոյ հայ հասարակութեանը և պ. պ. հեղինակներին, հրատարակիչներին և խմբագիրներին, որ բարեհաճեն իրենց նւիրատուութեամբ քաջալերել և նպաստել աշխարհնպատակ ձեռնարկը:

՚ի զիմաց վարչութեան { Նախագահ Յ. Յովհաննէսեան:
Քարտուղար Ա. Շահբաշեան:

Թաւրիզում մեր հասցէն է՝

Société de cabinet de lecture populaire.

† ԳԻՐՍ, Նիկողայ Կարլովիչ ռուսաց մինիստր արտաքին գործերի, վախճանւեց 14 չունարի: Ժամանակաւոր կառավարիչ արտաքին գործերի Նշանակւած է Շիշկին, որ ցալմ Գիրսի օգնականն էր:

† ԼՈՐԻ ՌԱՆԴՈՒՅ ՉՈՐՉԻԼ, մէկը անգլիական Նշանաւոր քաղաքական գործիչներից, վախճանւեց նոր տոմարով 24 չուն: Լոնդոնում: Նա պատկանում էր Մալբորո դուքսերի արխտոկրատական տոհմին: Չորչիլը պատկանում էր տորիների (պահպանողական) կուսակցութեան և պարագլուխ էր պահպանողականների մի խմբի, որը անկախ էր գործում: 1885 ին նա հնդկական գործերի մինիստր էր իսկ 1886-ին, Սոլսբերի կաբինետում, դանձարանի կանցլէրն էր և և պարագլուխ տորիների ստորին պալատում: Գուշակում էին թէ Չորչիլը նոր հոսանք կը մտցնի պահպանողական կուսակցութեան մէջ և մեծ ապագայ կ'ունենայ: Այդ գուշակութիւնը չիրագործւեց: 1886-ին նա հեռացաւ մինիստրութիւնից և նորա աստղն էլ դրանից չետոյ մարեց:

† ՄԱԴԱՌԻՏ ՍԻՄՈՆ-ԲԷՅ, որի վրայ երկու տարի առաջ ատրճանակ խփւեց, վախճանւեց ներկայ չունարին:

ՏԻՐԱԺ առաջին ներքին փոխառութեան տանումներով, 2-ին չունարի 1895. գլխաւոր ճանումները հետեւեալը եղան:

Սերիաների №-ներ	Տոմսերի №-ներ	Տարած գումար	Սերիաների №-ներ	Տոմսերի №-ներ	Տարած գումար
15795	4	200000	5108	6	1000
2640	40	75000	17751	7	1000
6153	35	40000	3331	47	
10071	6	25000	18173	24	
19664	47	10000	287	12	
3022	47	10000	14796	43	
13955	34	10000	18777	5	
2790	37	8000	8831	46	
1561	8	8000	11549	30	
1414	42	8000	11895	8	
8343	21	8000	16163	35	
13146	17	8000	413	1	
13400	38		14733	31	
7109	21		5501	42	
16920	28		8922	36	
10242	24		16877	41	
7112	43		16218	39	
14334	10		18839	18	
18904	8		2810	37	
16742	45		1441	17	

5000-ական սուր.

1,000 ո. իւրաքանչիւրը

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐԻՆԵՐ.

- 1) ԽԱՏԻՍԵԱՆ Մարիամ: Նոր ճանապարհի վրալ. վէպ. 1893, Պետ. Գ. 60 կ.
- 2) ԳԱՐԱԳԱՇԵԱՆ, Ա. Մ.—«Քննական պատմութիւն հայոց» ըստ նորագոյն պատմական, լեզւաբանական և բանասիրական տեղեկութեանց: Մասն բ. պատմական ժամանակ—Արշակունիք ի ժամանակի հեթա, նոսութեան: Հրատարակութիւն Թիֆլիսի Հ. հրատ. ընկեր. Թիֆլիս-տպարան Մ. Գ. Ռոսինեանցի, 1895 թ. Գինն է 1 ռուբլի:
- 3) ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, Էմին.—«Բարեգործութեան դիմակի տակ. դրամա հինգ գործողութեամբ: Երևան, 1895:
- 4) ՀՈՒՂՈՒՐԵԱՆ, Յ., սարգաւադ.—«Մոռացած աշխարհ». Ա. գիրք: Թիֆլիս, տպ. Շարաձէ, 1895, գինն է 60 կոպ.
- 5) ԾԵՐԵՆՅ.—«Երկունք IX. դարու Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1879: Կենսագրական տեղեկութիւնով և դամբանականով Ա. Եզեկեանցի ու երկու ոտանաւորով հեղինակի և Թագուհի Շեշմանեան-Մե. րենցի. Նւէր Աղբւր Տարաղի 1895 թ. բաժանորդներին:
- 6) ՐԱՅՅԻ.—«Պարոյր Հակոբջն» (Պրոլերետիստ), հրատ. ալրի Բաֆֆիլի—Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեան, 1895, գինն է 20 կոպէկ:

Խմբագիր-հրատարակիչ՝ ԱԻՆՏԻԲ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

Անդրկովկասեան Երկաթուղի:

Ճամբորդական դնացք № 1. Թիֆլիսից Բաթում, դուրս է գալիս առաւ. ատան 9 ժ. 30 ր., հասնում է Բաթում Երեկ. 9 ժ. 45 րոպէ:

Ճամբորդական դնացք № 2. Բաթումից Թիֆլիս, դուրս է գնում առաւօտ. 9 ժ. 40 ր., հասնում է Թիֆլիս Երեկ. 9 ժ. 55 ր.:

Պոստային դնացք № 3. Թիֆլիսից Բաթում, դուրս է գնում Երեկոյեան 6 ժ. 50 ր., հասնում է Բաթում առաւ. 8 ժամ 15 րոպէ:

Պոստային դնացք № 4. Բաթումից Թիֆլիս, դուրս է գնում զիշերաւ 11 ժ. 20 րոպէ, հասնում է Թիֆլիս ցերեկաւ 12 ժ. 25 րոպէ:

Պոստային դնացք № 3. Բաքուից Թիֆլիս, դուրս է գնում զիշերը 11 ժ. 5 ր. հասնում է Թիֆլիս Երեկոյեան 5 ժ. 50 ր.:

Պոստային դնացք № 4. Թիֆլիսից Բաքու, դուրս է գնում ցերեկ. 1 ժ. 10 ր. հասնում է Բաքու առաւ. 7 ժ. 30 րոպէ:

Ապրանքա-Ճամբորդական դնացք № 24. Թիֆլիսից Վանձակ, դուրս է գնում Երեկեան 7 ժամ 27 ր., հասնում է Վանձակ առաւ. 7 ժ. 40 ր.:

Ապրանքա-Ճամբորդական դնացք № 25. Վանձակից Թիֆլիս, դուրս է գնում Երեկոյեան 6 ժ., հասնում է Թիֆլիս առաւ. 7 ժ. 35 րոպէին:

Թիֆլիս Վլադիկաւկազի տրակտ:

Երթեկու թիւն ց1-ն նոյեմբերի 1894 թ.

ԹԻՖԼԻՍԻՅ հինգ տեղանի կարեալը դուրս է գնում առաւօտեան 7 ժամին և 9 ժամին, զիցտեղանի օմնիրուսները կէսօրից լետու 3 ժամին և 5 ժամին: Հասնում է Վլադիկաւկազ հետեւեալ օրերը կէսօրից լետու՝ կարեալները 7 ժամին և 9 ժամ 50 ր., օմնիրուսները 6 ժ. 50 ր. և 8 ժ. 50 րոպէ:

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻՅ հինգտեղանի կարեալները դուրս են գալիս առաւ. 8 ժ. և 9 ժամին, զիցտեղանի օմնիրուսները կէսօրից լետու 3 ժամին և 5 ժամին: Հասնում են Թիֆլիս հետեւեալ օրը կէսօրից լետու՝ կարեալները 7 ժամ 25 ր. և 9 ժամին, օմնիրուսները 6 ժ. 40 ր. և 8 ժամ 25 ր. պէին:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՈՒԺԱՐԱՆ

(Городская лечебница)

Մուխրանսիացա փողոց, տուն Կուղանեանի № 15:

Հիւանդների բնդունելութիւն ամէն օր, բացի կիրակի օրերից, ձմեռը ստատական ժամ 9-ից մինչ 1-ը (ամառը՝ բաժնի, բաժնի և օդատանի ստաւ. 8-ից մինչ 12-ը):

1) Ա թ ռ ու Ն ի (Վ. Ա.)—ներքին, երկամեց և ջգալին հիւանդութիւնների, ժամ 10¹/₂—12, ամէն օր: 2) Ղ ո ն ի եւ (Կ. Ա.)—ներքին և երկամեց, ժամ 10¹/₂—12, ամէն օր: 3) Գ աւււղանց (Վ. Գ.)—խիւրդ զիւղան և մէղի անդ. ժամ 11—12, ամէն օր: 4) Կին-բժիշկ Ի ս ա հ ա կ ե ա ն ց (Մ. Ա.), կանանց հիւանդութիւնների, ժամ 9—11, ամէն օր: 5) Կ ա ս ու մ ե ա ն (Ն. Գ.)—ներքին և երկամեց, ժամ 12—1, ամէն օր: 6) Մ ի բ ա ք ե ա ն (Մ. Ա.)—ներքին և վիճակաւ, ժամ 12—1, երկուշ. չորեքշ. և չար. օրերը: 7) Մ սւրդաեւ (Ա. Գ.)—ականջի, կոկորդի և քիթի, ժամ 9—10 ամէն օր, բացի հիւանդներից: 8) Կին-բժիշկ Մ սւ խ ա ը ի ն ս կ ա չ ա (Լ. Ա.)—կանանց, ժամ 11—12 ամէն օր: 9) Ռ ա զ ա մ ա ա (Ա. Ա.)—ներքին, երկամեց և աղամբ, ժամ 9—10, ամէն օր: 10) Ս ա ե վ ա ն ե ա ն (Վ. Ն.)—կաւաւարիչ քաղաք. բաժնի—ներքին, մէղի անդ. և վիճակաւ, ժամ 11—12 ամէն օր: 11) Ռ ա ը խ ա ն ե ա ն (Վ. Ա.)—ներքին և խիւրդ զիւղան, ժամ 11—12 ամէն օր: 12) Կին-բժիշկ Շ մ ի ց (Ս. Ա.)—աչքի և կանանց, ժամ 11—12 ամէն օր: 13) Ատամնարոյթ Ո ը ե լ ի (Ա. Ո.)—ատամների, ժամ 10—11 ամէն օր:

Բժշկական խ ս ը սււրդեւ (կոնսուլտացիա) երեքշաբթի և ուրբաթ օրերը, ժամ 11—12: Մ ա զ կ ի աղատատան—չորեքշ. և չարաթ օրերը, ժամ 9—1:

ՀԱՎԱՐԱՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Կախեթիսիացա փողոց, տուն Տէրտէրեանի

1) Ք աււա ը խ ա ը ի ե ա ն (Մ. Ա.)—ժամ 11—12, ամէն օր: 2) Կին-բժիշկ Ի ս ա հ ա կ ե ա ն (Մ. Ա.)—կանանց, ժամ 11—12 երեքշաբթի և ուրբաթ օրերը:

ԽԱՐԵՈՒԹԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Բաներեա վորտա, տուն Կնիխանի

1) Վ ե ը-Ա ս ա ս ու ը ի ե ա ն (Վ. Վ.)—ժամ 11—12, ամէն օր: 2) Կին-բժիշկ Ի ս ա հ ա կ ե ա ն (Մ. Ա.)—կանանց, ժամ 11—1 երեքշաբթի և ուրբաթ օրերը:

Մ ա ն օ թ սւ ը իւն: Չքաւոր անձերին բժշկական խորհուրդ և դիզեր տրամ են ձրի:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՈՒՐՉ“ ԱՄՍԱԳՐԻ ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԸ

Վաճառում էն հետեւեալ գներով

(Նշանակած գները անփոփոխ պահպանելու են մինչեւ վերջը 1895 թ.)

«ՄՈՒՐՉ» 1889 թ. անկազմ.		4 ռ. — կ.
«ՄՈՒՐՉ» 1890 թ. անկազմ.		5 » — ռ
«ՄՈՒՐՉ» 1891 թ. (սակաւաթիւ) անկազմ.		10 » — »
«ՄՈՒՐՉ» 1892 թ. անկազմ.		9 » — »
«ՄՈՒՐՉ» 1893 թ. անկազմ.		10 » — »
«ՄՈՒՐՉ» 1894 թ. անկազմ.		7 » — »
ԲՈՒՈՐ ԵՍՏԱՐԻՆԵՐԸ		45 ռ. — »

ՎՃԱՐԸ ԿԱՆԽԻԿ

Ճանապարհածախքի համար ուղարկւում է մի-մի ռուբլի ամեն տարւոյ համար:

Կազմի համար վճարւում է վերադիր 60 կոպ. ամեն կիսամեակի համար (այսինքն 1 ռ. 20 կ. ամեն տարւոյ համար):

Դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала „Мурчъ“.
Tiflis, Rédaction de la Revue „Mourtsch“.

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՐՈՍՍԻԱ“ „РОССІЯ“

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏԻԱԾ 1881 թ.

Ս. Պետերբուրգում, Большая Морская № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍԻ ԳՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ՐՈՒԲԼԻ
(Ընկերութեան տոկոսարեւ թղթերը պահւում են պետական բանկում)

Ընկերութիւնը ընդունում է՝

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ապինքն դրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեփական ծերութիւնը, բաժինքը աղջիկներին համար, թոշակները աղաներին համար և այլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ Ընկերութեան օգուտներին:

1894 թվի չունարի 1-ին «Բոսախ» ընկերութեան մէջ ապահովագրած էին 28.246 անձ 75,621,010 ռուբլի դրամագլխով:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱՂԴ ԴԷՊԵՆԻՅ

առանձին անձների, և թէ համագումար ապահովագրութիւններ դործարաններում ծառայողների և բանւորների,—պակասեցնելով ապահովագրական վճարները՝ գլխիցէնդի փոխարէն:

ՀՐԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ չարժական և անչարժ կալաւածքների (շինութիւնների, մեքենաների, ապրանքների, կահկարասիքի և այլն):


ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, դամաքային և ծովային, ապահովագրութիւն նաւերի:

Ապահովագրութեան մասին չափաբարութիւնները ընդունւում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդւում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37). Ասիական շրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ՝

ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիւսկալա փ. տուն № 6. և բոլոր դործակալութիւններում կապութեան բոլոր քաղաքներում:

Ապահովագրական ստանակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար դժբաղդ դէպքերից՝ երկաթուղիներով և չողեւաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրւում են նոյնպէս երկաթուղիների կապարաններում և չողեւաւային նաւահանգիստներում:



„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1895 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Բ Ա Յ Ի Ա Ծ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ըՄուրճի բաժանորդագրինն է 10 ուրբլի Ուսուցիչները, ուսանողները, որպէս նաեւ արհեստաւորները վայելում են 2 ուրբլու զիջում, վճարելով 8 ուրբլի: Բաժանորդագրինը կարելի է վճարել նաեւ մաս-մաս, սկզբում 5 (կամ 4) ուրբլի, մնացեալը լրացնելով առաջին կիսամեակում:

Բաժանորդ գրւում են, զիմելով

ԽՐԵԱԴՐԱՏՈՒՆԸ, Թիֆլիս, Վելեամինեան փողոց, տուն № 8:

Тифлисъ. Въ Редацію журнала „МУРЧЪ“.

Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

և կամ զիմելով հետեւեալ անձերին կամ հիմնարկութիւններին:

ԹԻՖԼԻՍ — } Բոլոր գրավաճառանոցները:
ԲԱՔՈՒ — }

ԲԱԹՈՒՄ — պ. Սարգիս Մակարեան, Ծովխանեանի բանկ. գրասենեակի
ԿԱՐՍ — պ. Աբէլ Ապրեսեան:

ԱԽԱԼԲԱԼԱՔ — պ. Զալալ Տէր-Գրիգորեան:

ՆՈՒԽԻ — պ. պ. Աբրահամ Բունիաթեանց և Խաչատուր Խոջամիրեանց:

ԱԳՈՒԼԻՍ — պ. պ. Ստեփան Արասխանեանց և Աւետիս Գալթեանց:

ՆԱԽԻՋԵԻԱՆ (հին) — Արսէն վարդապետ Ղլտճեանց:

ՂԶԼԱՐ — պ. պ. Հմայեակ Մաժինեան և Կոստ. Գիւլնազարեան:

ԵԿԱՏԵՐԻՆՈՒՄ — պ. Արամ Շապովալեան:

ՄՈՍԿԻԱ — պ. Ալեքսանդր Մատուրեան: